

ԷԶՄԻԱԾԻՆ



Ա
2009



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Յ « Լ Ն « Լ « ը
2009

ՆՐԱՄԱՆԱԲ

S. S. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՆԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ

Билээн үзүүлэлт
2009

У
2009

У
2009

У
2009

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ
ԱՍՏՎԱԾՆԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ**

(Սուրբ Էջմիածին, 6 հունվարի 2009 թ.)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. Ամեն»:

*«Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի
Որդիք մարդկան օրհնեցէք,
Զի վասն մեր մարմնացաւ»*

(Շարակնոց):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս աշխարհի
Օրհնեցությամբ եւ գոհաբանական աղոթքներով այսօր փոխում ենք մեր Տիրոջ՝ Հիսուս
Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայրնության փոքր՝ ավերելով Աստծո մարդկություն-
յան եւ Փրկչի հայրնության բարի լուրը:

Մեր Եկեղեցու աղոթասեր հայրերը Սուրբ Ծնունդը կոչել են «խորհուրդ մեծ եւ սքանչե-
լի»: Այդպես են անվանել, քանզի անհնար է բացատրել, թե ինչպես անբավելին՝ հավիտե-
նականն ու անսահմանը, խանձարուրի մեջ պարուրվեց, ինչպես Աստծո Խոսքն ու Իմաս-
տությունը ծնվեց ոչ բանական կենդանիների մտություն: Մարդկային մարքին անհասանելի է
մնում, թե ինչպես Աստծո Միածին Որդին, Արարչի Փառքի Լույսը արարած եղավ, Տերը
ծառայի կերպարանք ստացավ:

Աստծո այս մեծ հրաշքի ինչպես լինելը չգիտենք եւ չենք կարողանում բացատրել, սա-
կայն գիտենք այդ հրաշքի պարճառը. «Զի վասն մեր մարմնացաւ», «Որովհետեւ մեզ հա-
մար մարմնացավ»: Իրավամբ, այս մի քանի բառերը բացատրում են Սուրբ Ծննդյան եւ
Աստվածհայրնության Բարձրյալի նախախնամական փնտրիչությունը:

Աստված Տերն է եւ Արարիչը «երկնի եւ երկրի, երևելեաց եւ աներևութից»: Նրա փառքն
են պարմում Իր նյութեղեն եւ հոգեղեն ստեղծագործությունները՝ փիեզերքը, մարդիկ եւ
հրեշտակները: Աստված համայնի կարիքը չունի ոչ մարմնի, ոչ ժամանակի: Աստծո հավի-
տենական գահին բազմած Փրկչին պետք չէր երկնքի բարձունքներից իջնել մեղսակորույս
աշխարհ: Խաղաղության Իշխանին պետք չէին հալածանք, չարհարանք, խաչելություն,
պետք չէին փշե պսակը, մահը կամ հարությունը: Բայց այս բոլորը Փրկիչը հանձն առավ
մեզ համար: Մերն Աստծո՝ մարմին առավ, որպեսզի ազատի մեզ մեղքի ու մահվան իշխա-
նությունից եւ արժանացնի երանությանը հավիտենական կյանքի: «Սրանում է սերը, մենք
չէ, որ սիրեցինք Աստծուն, այլ Նա սիրեց մեզ եւ ուղարկեց Իր որդուն մեր մեղքերի բավույթ-
յան համար» (Ա Հովհ. Դ 10): Մեր պաշտելի Աստված չի ցանկանում մեր մահը կամ դա-
րապարտությունը, դրա համար իսկ եկավ մեր մեջ բնակվելու, եկավ վերափոխելու մեր
կյանքը, պարզեցրելու հույսը փրկության, կյանքը հավիտենական:

Արդարև, մեր փառաբանական երգերը և գոհաբանական մաղթանքները արժեք չունեն, եթե մեր հոգու խորքում չկա այն անսասան հավատը, որ Աստված «մեզ համար մարմնացավ»: Մեր աղոթքները լսելի չեն լինի, եթե մեր Էության խորքում չի բնակվում Աստված:

Սուրբ Ծնունդը, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Աստծո և մարդկության հաշտության սկիզբն է, հավիտենական կյանքը ժառանգելու հրավերը, Քրիստոսով փրկության շնորհի մեջ մնալու պարագամն է մեզ: Աստված Իրեն հայտնեց մեզ Իր լիության մեջ, որպեսզի աստվածային և մարդկային կապարելության այդ լիությունից անմասն չմնանք, որպեսզի կապարելության այդ լիությունից հագնեա փրկություն հուսացող մեր կյանքը: Նավաբարձում ենք, որ Աստված մեկ է: Միությունը մեզ անհրաժեշտ չէ՞: Քարոզում ենք, որ Աստված սեր է: Միտ կարիքը չե՞նք գգում, կարո՞ղ ենք առանց սիրտ ապրել, սրբազանություն: Աստված, Ում միշտ աղոթում ենք, սուրբ է, ճշմարիտ ու բարերար: Քննենք մեր սրբերը, սրբության կարիքը չե՞նք գգում, քննենք մեր գործերը՝ ճշմարիտ, բարի և բարերար՞ են միշտ: Դավանում ենք, որ Աստված արդար է: Մենք արդարության կարիքը չե՞նք գգում ամեն օր և ամեն ժամ: Խոստովանում ենք, որ Աստված մեր Նայրն է, գթասիրտ, խաղաղության մշտաժող աղբյուր, պարգևատու բարիքների: Խաղաղությունը ամենօրյա մեր հայցը և մաղթանքը չէ՞, կարո՞ղ չէ՞ աշխարհը հանապազ գթասրտության ու խնամքի: Ով այս կերպ է ճանաչում Աստծուն, նա չի կարող ապրել առանց Նրա և իր փրկության հույսը չկապել Աստվածորդու մարդկության հավատքին և չձգվել լինել Նրա մշտական օրհնության և շնորհների ներքո:

Ուղեկորույս է աշխարհը առանց բեթղեհեմյան աստղալույսի: Առանց Քրիստոսի աշխարհը միշտ լինելու է անհանդարտ, հոգսաշատ և բարոյագուրկ: Միայն նյութական առաջընթացը չի ապահովելու ճգնաժամային իրավիճակներից խուսափումը, կանխումը գժությունների ու բախումների, վերացումը աղերների ու աղքատության: Նոգևորի անպրեստումը, աշխարհայնացման ընթացքները միանշանակորեն խաթարում են նվիրագործված ավանդույթները, աղճատում բարոյական պարկերացումներն ու հասկացությունները, նաև մարդու ներաշխարհը՝ պարճառ դառնալով Աստծուց, իր անձից ու աշխարհից մարդու օտարացման և անարարելության: Աստված է սնուցում մարդկային հոգին: Աստվածասեր հոգով և հավատքի ուժով պիտի նորոգվի մարդկային կյանքը, որպեսզի չվերանան սահմանները մարդասիրության և եսասիրության, չխառնվեն արդարն ու անարդարը, ճշմարիտն ու կեղծիքը, և չշփոթվեն բարին ու չարը: Շատ խնդիրներ պիտի վճռվեն, շատ կնճիռներ պիտի հարթվեն ու վերքեր ամոքվեն գիտակցական այն արժևորմամբ և հավատքով, որ Աստվածորդին մեզ համար մարմնացավ: Կարարյալ սիրտ այս օրինակը լույս է, առաջնորդություն կյանքի և սիրով գործելու պատվեր: «Նագեք, ուրեմն, գութ, ողորմություն, բաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերաբարություն՝ հանդուրժելով միմյանց, ներելով միմյանց, եթե մեկը մյուսի դեմ գանգար ունի. ինչպես Աստված Քրիստոսով ներեց ձեզ, նույն ձևով արեք և դուք: Եվ այս բոլորի վրա հագեք սերը, որ կապն է կապարելության» (Կող. Գ 12-14):

Միքելի հավատալուր ժողովուրդ հայոց, Սուրբ Ծննդյան և Աստվածհայրության «մեծ և սքանչելի» փոռին մեր Եկեղեցին Քրիստոսի սուրբ մկրտության հիշատակումով կարարում է նաև Ջրօրհնների արարողությունը, որպեսզի Աստվածհայրության շնորհներով օրհնված ջուրը բաշխվի մեր ընտանիքներում՝ Աստծո սերը և օրհնությունը առաքացնելով

մեր կյանքում: Մեր մկրպությանը որդեգիր ենք Աստծո: Մեր մկրպությանը մեկ ենք՝ որպեսզի էլ լինենք, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, նույն ազգի, մեր Նայրենիքի զավակներն ենք: Ապրենք և գործենք միության այս զգացումով ու միմյանց հանդեպ սիրով, որպեսզի ի գործու լինենք հաղթահարելու մեր առջև ծառացող դժվարությունները, ընթանալու դեպի մեր հույսերի ու նպատակների իրագործում և իբրև հնագույն քրիստոնյա ազգ, իբրև Աստծո ժողովուրդ, աստվածահաճո մեր կյանքով մասնակցություն բերենք խաղաղ ու բարօր, մարդկանց համերաշխությանը և ուրախությանը լեցուն աշխարհի կառուցմանը: Այսօր մեր Տերն ու Փրկիչը գալիս է մեր սրբերում բնակվելու, Իր շնորհներով մեզ նորոգելու: Ընդունենք Տիրոջը մեր հոգիներում, գորանանք հավաքքով, հավաքարիմ մնանք հոգևոր մեր ժառանգությանը և քրիստոնեական արժեքներին: Մեր Տիրոջն ու Փրկչին ապավինած, Նրա պարգևած անսասան հույսով ու գործությանը բարօր դարձնենք մեր կյանքը ամենուր, շարունակենք շենացնել հայրենի մեր երկիրը, հոգանք ու ջանանք Արցախի մեր ժողովրդի և ազգային մեր բոլոր իղձերի մարմնավորման համար: Եվ թող մեր կյանքում մշտապես պայծառ շողա միմյանց հանդեպ սիրով լեցուն բարերար հոգին և բարերեր գործը, որով պիտի վկայենք, որ սիրում ենք Աստծուն:

Այս զգացումներով, բերկրալից աղոթքով և Նայրապետական ջերմ սիրով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ մեր հավաքքի օրբանից, ողջունում ենք մեր ժողովրդի բոլոր զավակներին, որք ի Նայասարան, յԱրցախ և ի Սփյուռս:

Ի Քրիստոս եղբայրական սիրո Մեր ողջույնն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Աթոռի Վարդապետ Սանտուկյանին, Երուսաղեմի Նայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Նայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանին և մեր Եկեղեցու ուխտապահ հոգևոր դասին:

Նայրապետական Մեր օրհնությունն ու ողջույնն ենք բերում Նայասարանի Նանրապետության նախագահ Կիրո Մերժ Սարգսյանին, Լեռնային Ղարաբաղի Նանրապետության նախագահ Կիրո Բակո Սահակյանին, հայոց պետական ավագանուն և Նայասարանում հավաքարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Սուրբ Ծննդյան շնորհանորդգ այս օրը աղոթքով առ Աստված գոհություն հայրենք մեզ պարգևած բարիքների և մխիթարությունների համար, մեր եկեղեցական և ազգային կյանքում հաջողությունների ու ձեռքբերումների համար և հայցենք, որ Իր անբավ սիրով հոգա մեր մասին, ինչպես կամքն է Իր և արժանացնի հասարակություն մնալու Իր ճանապարհին, գորացնի մեզ, պայծառացնի և օրըսօրե փայլեցնի մեր մեջ փրկության Իր շնորհը՝ այսօր և հավիպյալս:

«Որդիք մարդկան օրհնեցեք, զի վասն մեր մարմնացավ»:

Քրիստոս ծնաւ եւ յայրենեցաւ

Ձեզ – Մեզ մեծ աւերիս:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԱՆՈՐԻ ՈՒՂԵՐՁԸ

(31 դեկտեմբերի 2008 թ.)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ

Նոր փարվա սեմին աղոթքով ու բարի սպասումներով են լցված մեր հոգիները: Նամախմբվել ենք՝ ովքեր ընդհանրապես, մերձավորների հետ, ովքեր՝ ծառայության մեջ, և դիմավորում ենք փարեմուրը՝ մեր լավարեսությունը կիսելով միմյանց հետ:

Նույսեր և նպատակներ ունենք, որ խորհում ենք իրագործել 2009 թվականին: Աստուծոն առավել լսելի է մեր խնդրանքը, երբ մեր աղոթքները միավորված են խաղաղության և մարդկանց մեջ բարի կամեցողության ոգով: Խաղաղությամբ և միմյանց հանդեպ բարի կամեցողությամբ է ծնունդ առնում հույսը նոր աշխարհի, որը մենք՝ մարդկությունը, այսօր էլ ձգտում է կառուցել: Ձգտում ենք սպեղծել առավել կարարելագործվածը, վերափոխել կյանքը դեպի ավելի ապահովը, բարօրն ու բարեկեցիկը: Ձգտում ենք կառուցել աշխարհ, որ լեցուն լինի մարդասիրությամբ, ազնվությամբ, արդարությամբ, մխիթարությամբ ու երջանկությամբ:

Արդարև, իրենց նպատակով են գնահատվելու գործերն ու ժամանակի ընթացքները: Նոր փարին, որպես ժամանակի մի միավորը, նույնպես պիտի հիշվի և բնորոշվի մարդկանց գործերով, ինչպես պատմություն դարձած բոլոր փարիները, նաև 2008 թվականը, որին այսօր հրաժեշտ ենք փայլիս:

2008 թվականը ազգային և եկեղեցական մեր կյանքում հարկանշվեց և՛ ձեռքբերումներով ու հաղթանակներով, և՛ դժվարություններով ու ցավով: Այրեցինք փազնապը մարդկանց ողբերգական դեպքերի՝ դիմակայելով մեր երկիրը խաղաղ, մեր պետությունը անվտանգ պահելու, անկախության և ազատ կյանքի մեր թանկ ձեռքբերումները առավել ամրապնդելու ու գորացնելու ձգտումով: Աղոթքով ու դառն վերհուշով նշեցինք երկրաշարժի 20-րդ փարելիցը, նշեցինք մեր Նայրենիքը շենացնելու հավաքով, մեր ժողովրդի միասնական կյանքի ու լուսավոր գալիքի վստահությամբ:

Մյուսնորհանության սրբազան խորհրդով Սուրբ Էջմիածնում համախմբվեցին մեր ժողովրդի գավակները աշխարհի բոլոր կողմերից: Միավորեցինք մեր աղոթքները, որպեսզի Սուրբ և Սրբաբար Մյուսնով մեր կյանքում առաքանան երկնային շնորհները, լույսն ու օրհնությունը, գորանան եղբայրսիրությունն ու միաբանությունը:

Այսօր, սիրելիներ, մեր ունեցած ձեռքբերումներով, ավարտում և անավարտ գործերով պատմությանն ենք հանձնում 2008 թվականը: Դիմավորենք նոր փարին հավաքով ու լավարեսությամբ: Նավարանք, որ մեր միաբանությամբ, համախմբ ջանքերով ու նվիրումով ձեռք ենք բերելու նոր հաջողություններ ու հաղթանակներ, հաղթահարելու ենք մեզ խանգարող արգելքներն ու խոչընդոտները, կանխարեսվող համընդհանուր փրկության ճգնաժամի դժվարությունները: Նոր փարին դիմավորենք նպատակադրված՝ ավելի ջանք ներդնելու, առավելը գործելու ի սեր մեր Նայրենիքի, հայ Սփյուռքի, հանուն Արցախի և հա-

2009

ԷԶՄԻԱԾԻՆ

Ա 7

մագգային մեր արդար իղձերի, ի սեր հոգևոր մեր կյանքի պայծառության, գիտության, կրթության ու մշակույթի գորացման:

Այս մաղթանքով Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ, սիրելիներ, Նայասպանում, ազա-
րաշունչ Արցախում և Սփյուռքում ապրող մեր գավակներին:

Աղոթում ենք, որ Աստված խաղաղության մեջ առաջնորդի 2009 թվականը բոլոր ժողո-
վուրդների կյանքում, մեր Նայրենիքի և համայն հայոց կյանքում:

Թող Տերը պարգևի մեզ և ամենքին ձեռքբերումներով, արդար վաստակով, ուրախությ-
յամբ ու երջանկությամբ լեցուն օրհնյալ տարի:

Շնորհավոր նոր տարի:

**ՓՐԿՉԻ ՆՐԱՇԱՓԱՌ ԵՎ ԱՌԻՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ՆԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՈՒ
ՆԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՆԵՐԻ ԳԱՆԱԿԱԼՆԵՐԻ,
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ
ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ
ՆԵՌԱԳՐԵՐԸ**

Նոմնական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏ ԺԶ ՊԱՊ (Նոմ)

Կոստանդնուպոլսի Նունաց Տիեզերական Պապրիարք,
Նորին Ամենաաթոռություն
ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ Ա (Սրամբույ)

Մոսկվայի և Նամայն Ռուսիայի Պապրիարքության Պապրիարքական փոխանորդ
ԿԻՐԻԼ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ (Մոսկվա)

Նամայն Վրաց Պապրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ (Թբիլիսի)

Ղազարի Ուղղափառ Եկեղեցու Պապրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ (Կահիրե)

Անտիոքի և Նամայն Արևելքի Ատորի Ուղղափառ Եկեղեցու Պապրիարք,
Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԶԱ Ա ԻՎԱՍ (Դամասկոս)

Եթովպիայի Պապրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՊԱՌԲԼՈՍ (Ադիս Աբեբա)

2009

ԷԶՄԻԱԾԻՆ

Ա 9

Նոդկասպանի Ասորի Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու պետ, Նորին Սրբություն
ՔԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ԴԻԴԻՄՈՍ Ա (Դելի)

Ալեքսանդրիայի և Նամայն Աֆրիկայի Պապ և Պապրիարք,
 Նորին Գերաշնորհություն
ԹԵՈԴՈՐՈՍ Բ (Ալեքսանդրիա)

Անտիոքի և Նամայն Արևելքի Նույն Օրթոդոքս Եկեղեցու Պապրիարք,
 Նորին Գերաշնորհություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՆԱԶԻՄ Դ (Դամասկոս)

Քենթրբերիի Արքեպիսկոպոս, Նամայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և
 Միպրոպոլիս, Նորին Գերաշնորհություն
ՌՈՈԻԱՆ ՎԻԼՅԱՄՍ (Լոնդոն)

Ռումին Ուղղափառ Եկեղեցու Պապրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍՏ (Բուխարեստ)

Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու Պապրիարք, Նորին Սրբություն
ՊԱՎԼԵ (Բելգրադ)

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պապրիարք, Նորին Գերաշնորհություն
ՄԱԶՄԻՄ (Սոֆիա)

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ (Կիպրոս)

Աթենքի և Նամայն Նունաց Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՆԵՐՈՆԻՄՈՍ Բ (Աթենք)

Վարչապալայի և Նամայն Լեհաստանի Միպրոպոլիս, Նորին Գերաշնորհություն
ՍԱՎՎԱ (Վարչապալա)

Մինսկի և Սլուցկի Միպրոպոլիս, Նամայն Բելառուսի Պապրիարքական փոխանորդ,
 Նորին Գերաշնորհություն
ՖԻԼԱՐԵՏ (Մինսկ)

Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՅՈՒԿԿԱ ՊԱԱՐՄԱ (Նելսինկի)

10 Ա

ԷԶՄԻԱԾԻՆ

2009

Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Խորհուրդների Միության Նախագահ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԱԴԵՅ ԳՐԱԲ (Ղրախա)

Տանն Կիլիկիո Կաթողիկոս Նայոց Կաթողիկոս-Պապրիարք
ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ (Բեյրութ)

*

*

*

ՆԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻՅ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն
ԱՐԱՄ Ա (Անթիլիաս)

Երուսաղեմի հայոց Պապրիարք, Նորին Ամենապապություն
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Երուսաղեմ)

Կոստանդնուպոլսի հայոց Պապրիարք, Նորին Ամենապապություն
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Սպամբուլ)

**Նայոց Եկեղեցու Թեմակալ առաջնորդներից – Թեմական Խորհուրդներից
 ու համայնքներից:**

Եկեղեցական պետերից բացի, բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել
 նաև քույր Եկեղեցիների հոգևոր հայրերից՝ կաթոլիկներից, միաբնակներից և
 մյուս առաջնորդներից ու հոգևոր սպասավորներից, Էկումենիկ կազմակերպություն-
 ների ներկայացուցիչներից:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Նայասրանի Նանրապետության նախագահի վսեմաշուք

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ

Նայասրանի Նանրապետության Ազգային ժողովի նախագահի մեծահարգ

ՆՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Նայասրանի Նանրապետության վարչապետի մեծահարգ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Սահմանադրական Դատարանի նախագահի մեծահարգ

ԳԱԳԻԿ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Նանրապետության նախագահի վսեմաշուք

ԲԱԿՈ ՍԱՆԱԿՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Նանրապետության վարչապետի մեծահարգ

ԱՐԱ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նայասրանի Նանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական և համալսարանական հաստատություններից, գիտության, մշակույթի ու սպորտի բնագավառների բազմաթիվ գործիչներից և առանձին անհատներից, Նայասրանում գործող քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից և սրբազան պատմական միություններից, Միջազգային Կարմիր Խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային սպորտի կազմակերպությունների Նայասրանյան գրասենյակներից, «ՆԱՅԱՍՏԱՆ» Նամահայկական Նիմնադրամից, ՆԲԸՄ-ից, Նայկական Նամագումարից, ՆՕՄ-ից, Կյուլպենկյան հաստատությունից, Կարագյոզյան հիմնարկությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Նայասրանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան երկրներում ՆՆ արտակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և համայնքային կազմակերպությունները:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

*«Մեր մկրտությունը մեկ ենք՝ որդեղ էլ լի-
նենք, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու,
նույն ազգի, մեր Նայրենիքի զավակներն ենք:
Ապրենք – գործենք միության այս զգացու-
մով ու միմյանց հանդեպ սիրով...»*

ԳԱՐԵԳԻՆ Բ

Կաթողիկոս Ամենայն Տայոց

Նունվարի 6-ին Տայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց մեր Տիրոջ և Փրկչի՝ Նիսուս Բրիսպոսի Սուրբ Ծննդյան և Աստվածհայրության հրաշափառ փոքր, որը մեծ շուրջով փոխանցվեց ամենայն հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Դեռ հունվարի 5-ին, հավարտ երեկոյան ժամերգության, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պապրիարք և Ամենայն Տայոց Կաթողիկոսի և մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանության ու բյուրավոր բարեպաշտ հայորդիների, Միածնաէջ Սուրբ Տաճարում մատուցվեց ճրագարույցի Ս. Պարարագ: Պարարագիչն էր Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր փեսուհի Ս. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը: Պարարագից հետո կատարվեց նախատոնակ, որից հետո փրվեց ավերիսը Տիրոջ Սուրբ Ծննդյան և Աստվածհայրության, ապա Իջման Սուրբ Սեդանի կանթեղից բարեպաշտ ժողովրդին բաժանվեց Սուրբ Ծննդյան կենարար լույսը:

Նունվարի 6-ին Մայր Տաճարում Տայրապետական Ս. Պարարագ մատուցեց Ամենայն Տայոց Կաթողիկոսը՝ որպես առնթերականեր ունենալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական և հրապարակչական բաժինների պատասխանատու Ս. Եզնիկ արքեպիսկոպոս Պեպրոսյանին և Մայր Աթոռի դիվանապետ Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանին:

Միաբաններից կազմված հանդիսավոր հայրապետական թափորը Վեհաբանից ամպ-հովանու ներքո Ամենայն Տայոց Տայրապետին և Տայասարանի Տանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին առաջնորդեց դեպի Մայր Տաճար: Տայրապետական ամպհովանակիրներն էին ՏՏ Կրթության և գիտության նախարար Սպարտակ Մեյրանյանը, Ռազմիկ Դավոյանը, Լևոն Մալխասյանը և «Նորիզոն 95» ՄԴԼ փոքրեն Գազիկ Գալստյանը:

Ս. Պարարագի ընթացքին Նորին Սրբությունը Տայրապետական իր պարգամն ուղղեց համայն հայությանը (փնս էջ 3):

Նորին Սրբությունը ցավով անդրադարձավ այս օրերին Մերձավոր Արևելքում՝ հատկապես Գազայում ընթացող ռազմական գործողություններին և հրավիրեց ամենքին աղոթելու և հայցելու Փրկչին՝ վերահասարակելու խաղաղությունը Մերձավոր Արևելքի երկրներում և համայն աշխարհում՝ զորացնելով եղբայրսիրության ոգին մարդկանց մեջ:

Հրաշափառ փոքրի առիթով Տայոց Տայրապետն իր ողջույնները հղեց համայն հայ ժողովրդին ի Տայասարան, յԱրցախ և ի Սփյուռս, Տայ Եկեղեցու նվիրապետական արթոնների

գահակալներին՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսին, Երուսաղեմի Նայոց Պապ-
րիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Նայոց Պապրիարք
Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանին և Նայ Եկեղեցու ուխտապահ հոգևոր դասին:
Նորին Սրբությունը Նայրապետական իր օրհնությունն ու ողջույնները ողողեց նաև Պա-
պարագի սրբազան արարողությանը ներկա ՆՏ նախագահ Սերժ Սարգսյանին, ինչպես
նաև ԼՂՏ նախագահ Բակո Սահակյանին, հայոց պետական ավագանուն, Նայաստանում
հավաքարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայա-
ցուցիչներին:

Ս. Պապարագի ավարտին Վեհափառ Նայրապետը կարարեց Ջրօրհների արարո-
ղությունը՝ ի հիշարակ Քրիստոսի Սուրբ Մկրտության: Այս րարի Մայր Տաճարում Ջրօր-
հների Խաչի կնքահայրն էր Նայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ, գրոս-
մայսրեր Սմբար Լպուրյանը:

Վերջում րոնի առիթով Վեհարանի հանդիսությունների սրահում րեղի ունեցավ պաշ-
րոնական րնդունելություն:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ*

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՆԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Ավանդության համաձայն՝ հունվարի 27-ին Բանակի օրվա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մարտցվեց Սուրբ Պապարագ: Պապարագիչն էր Գեղարքունյաց թեմի առաջնորդ Ս. Մարկոս եպիսկոպոս Նովիաննիսյանը:

Արարողության ընթացքում Մարկոս Սրբազանը հավուր պարզաճի քաղաք խոսեց՝ անդրադառնալով հայոց մարտունակ բանակի կարևորությանը մեր պետականության պահպանման և ամրապնդման գործում:

«Մեր բանակն ամբողջությամբ ծառայություն է հայրենյաց, հոգևոր, ազգային բարձր արժեքներին: Եվ, իհարկե, այդ ծառայությունն իրենից գոհողություն է պահանջում, որը խարսխված է գիտակցված գոհողության և սիրո վրա: Եվ եթե այդ գոհողությունը չլինի, չէր կայանա և ոչինչ: Եթե չլինի բոլորանվեր սերը, ապա ոչ մի ձեռքբերում մեր կյանքում չէր լինի, ամեն ինչ կդառնար ձևական, և մենք չէինք ունենա մեր արժեքներով ուրախանալու և ապրելու երջանիկ հնարավորությունը: ...Ուզում ենք, որ առավել գորանա հայոց պետականությունը և նրա անառիկ սահմանները պահող հայոց բանակը՝ ի սպասավորություն այն բարձր արժեքների, որոնց համար մեր նախնիները չեն խնայել ամենաթանկը՝ կյանքը, քանզի արյան գնով են սրելով և պահել այդ ամենը», - նշեց Սրբազան Տայրը:

Սրբազան արարողությանը ներկա էին Տայոց Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՏՏ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՏՏ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատրյանը և ՏՏ բանակի բարձրագույն սպայական կազմի անդամներ:

Ս. Պապարագից հետո դիվանապանը Կեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Մայր Աթոռի դիվանապետ Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, շնորհավորելով ներկաներին առաջիկա Կոնի առիթով, ամենքին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պապրիարք և Ամենայն Տայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները: Այս առիթով շնորհավորական խոսք ասաց նաև ՏՏ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐԶԸ
ՆԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում Նայոց բանակի զորահրամանատարներին, զինծառայողներին և համայն մեր ժողովրդին՝ Նայոց բանակի օրվա առիթով:

Գոհություն Աստծո, որ այսօր զորեղ է մեր բանակը, հաղթական է մեր զինվորների ու զին՝ միշտ աննվազ սիրով ու նվիրումով առ Նայրենին: Այսօր Նայոց բանակի հուսալի պաշտպանությամբ ապահով են մեր երկրի սահմանները, և մեր ժողովուրդը խաղաղության մեջ կառուցում է իր նոր, ազատ կյանքը:

Աղոթում ենք, որ Տերը Նայոց բանակի սպաներին և մարտիկներին իրենց քաջարի և ազնվասիրտ ծառայության մեջ պարգևի նորանոր հաջողություններ: Թող Բարձրյալի օրհնության ներքո միշտ հզոր լինի մեր բանակը, խաղաղ ու բարօր՝ կյանքը մեր Նայրենիքի, աշխարհասփյուռ համայն մեր ժողովրդի:

28 հունվարի 2009 թ.

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ



ՆՇԱՆԱԿՈՒՄ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՓՈԽԱՆՈՐԴԻ

Սրբոց Յակոբեանց Միաբանության Ուխտի Կանոնին (1888) թիւ 46 յօդուածին համաձայն, Ամենապարի Տէր Թորգոմ արքեպս. Մանուկեան, Նայ Պապրիարք Երուսաղէմի, Պապրիարքի փոխանորդ կը նշանակէ Գերաշնորհ Տ. Նուրիան արքեպս. Մանուկեան, լուսարարապետ Պապրիարքարանի: Նուրիան արքեպս., իր պարպատրութեանց կարգին, պիտի իսկէ այլ բաժանմունքներու եւս գործունէութեան, ըստ Կանոնաց Միաբանության Ուխտին:

ԴԻԲՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 9-ին ձեռնադրված յոթ քահանաներ, ավարտելով 40-օրյա պահեցողության շրջանը և մաքուցելով իրենց անդրանիկ Ս. Պարարագր, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պարբիարք և Ամենայն հայոց Կաթողիկոսի հայրապետական փնտրիչությամբ ծառայության են կոչվել հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում և կառույցներում:

Տ. Ներսես քահանա Ղալայանը հոգևոր սպասավորության է կոչվել Գուգարաց թեմում, Տ. Տաթև քահանա Մարտիրոսյանը և Տ. Արարատ քահանա Գոմբալյանը՝ Վիրահայոց թեմում, Տ. Արշակ քահանա Նազարյանը՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում, Տ. Փառեն քահանա Առաքելյանը՝ Շիրակի թեմում, Տ. Եզնիկ քահանա Մալխասյանը՝ Արարատյան հայրապետական թեմում, իսկ Տ. Արսեն քահանա Սարգսյանը՝ ՀՀ Զինված ուժերում:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ*

ԸՆՏՐՎԵՑ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՆԱՄԱՅՆ ՌՈԻՄԵԱՅԻ ՆՈՐ ՊԱՏՐԻԱՐԺԸ

Մոսկվայի և Նամայն Ռոմիայի Պապրիարք Կիրիլը (աշխարհական անվամբ Վլադիմիր Միխայլովիչ Գոմեդյան) ծնվել է 1946 թ. նոյեմբերի 20-ին Լենինգրադում:

Դպրոցն ավարտելով՝ աշխատել է Լենինգրադի մարզի երկրաբանական արշավախմբերում:

1965 թ. ընդունվել է Լենինգրադի հոգևոր սեմինարիան, այնուհետև Լենինգրադի հոգևոր ակադեմիան, որը գերազանցությամբ ավարտել է 1970 թ.:

1969 թ. հունիսի 1-ին ձեռնադրվել է կուսակրոն հոգևորական՝ սրանալով Կիրիլ անունը:

1970-71 թթ. դոգմարիկ աստվածաբանություն է դասավանդել Լենինգրադի սեմինարիայում՝ միաժամանակ կատարելով Լենինգրադի միպրոպոլիս Նիկողիմի անձնական քարտուղարի պարտականությունը:

1971 թ. սեպտեմբերի 12-ին ստացել է վարդապետական աստիճան:

1971-74 թթ. Եկեղեցիների Նամաշխարհային խորհրդում ներկայացրել է Մոսկվայի պապրիարքությունը:

1976 թ. մարտի 14-ին ձեռնադրվել է եպիսկոպոս:

1977 թ. դեկտեմբերի 26-ից 1984 թ. դեկտեմբերի 26-ը եղել է Լենինգրադի հոգևոր ակադեմիայի և սեմինարիայի ղեկավարը:

1977 թ. սեպտեմբերի 2-ին ստացել է արքեպիսկոպոսության աստիճան:

1984 թ. դեկտեմբերի 26-ին դարձել է Սմոլենսկի և Վլադեմսկիի արքեպիսկոպոս:

1986 թ. դարձել է Կալինինգրադի մարզի հոգևոր համայնքների պատասխանատու:

1988 թ. դարձել է Սմոլենսկի և Կալինինգրադի արքեպիսկոպոս:

1989 թ. նոյեմբերից նշանակվում է Մոսկվայի պապրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ և ընտրվում Ս. Սինոդի անդամ:

1991 թ. փետրվարի 25-ին ստանում է միպրոպոլիտության աստիճան:

2009 թ. հունվարի 27-ին ընտրվել է Մոսկվայի և Նամայն Ռոմիայի Պապրիարք:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՄԻՈ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐԹԻՆ

Հունվարի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պապրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է հղել Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սմոլենսկի և Կալինինգրադի միպրոպոլիս Կիրիլին Մոսկվայի և Համայն Ռուսիո Պապրիարք ընտրվելու առիթով:

«Մենք հոգ–որ բերկրանք ենք ապրում, քանզի մեր քույր Եկեղեցին Աստուծոյ կամքով ընտրեց իր արժանի Հովիւապետին՝ Մոսկվայի – Համայն Ռուսիո Պապրիարքական Աթոռի 16-րդ պապրիարքին:

Ջրադեցնելով բարձր – պատասխանատու պաշտոններ, իրականացնելով հսկայական հոգ–որ – հասարակական գործունեություն՝ Դուք, իբր– հոգ–որ առաջնորդ՝ «նախանձախնդիր բարի գործերի» (Տիտ. Բ 14), արժանացաք Ռուսաստանում – նրա սահմաններից դուրս բնակվող ինչպես Ռուս Ուղղափառ, այնպես էլ քույր Եկեղեցիների միլիոնավոր հավատացյալների – եկեղեցականների սիրուն – հարգանքին»,- մասնավորաբար ասվում է Հայրապետական ուղերձում:

Նորին Սրբությունը վստահություն է հայտնել, որ սերտ գործակցությամբ երկու Եկեղեցիները կշարունակեն բարի իրագործումներով հարստացնել դարավոր բարեկամությունը հանուն Եկեղեցիների պայծառության և ի մխիթարություն և բարօրություն երկու ժողովուրդների ու երկրների:

Անսասան Հովիւապետական գավազան և կենաց արեւշարություն մաղթելով նորընտիր Պապրիարքին՝ Վեհափառ Հայրապետը հայցել է Բարձրյալ Տիրոջից, որ նրա գահակալության փարիները վերածննդի մի նոր շրջան դառնան Ռուս Ուղղափառ Եկեղեցու և բարեպաշտ հոգիի համար:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՔԱՐՈՉ ԽՈՄԱԿԱՆ

Տ. ՄԱՂԱՔԻԱ ԱԲԵՂԱ ԱՄԻՐՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(1 հունվարի 2009 թ.)

«Տիկն անց, եւ արդ նոր եղեւ ամենայն»

(Բ Կորնթ. Ե 17-18)

Միեւի՛ իսկ հավաքացյալ բույրեր և եղբայրներ, այսպիսի խոսքերով է Պողոս առաքյալն այսօր՝ Նոր Տարվա սեմին, մեզ ամենքիս կյանքի նորոգման պատգամ հղում, ասելով՝ «Տիկն անցավ, և հիմա ամեն ինչ նոր եղավ»:

Մի նոր փարի է բացվում մեր առջև, որը պարտաստում է իր գալիք օրերով մեզ նոր կյանք առաջնորդել, որն իր խորհրդով պիտի արժևորի մեր կյանքի ամեն մի վայրկյանը: Եվ ահա այսօր՝ հնի ու նորի անցման շրջանին, յուրաքանչյուրս իբրև Աստուծո արարչագործության գարդ ու պսակ, հին փարին թողնում ենք փարիների հավիտենականության մեջ:

Ժամանակը կանգ առնել չի կարող ու անընդհար, առանց դադարումի ընթանում է՝ պարճառ դառնալով այն իրողության, որ հին փարին սահում և անհեղանում է ու միայն կատարված գործերն ու ձեռքբերումներն են մնում, իսկ նոր փարին անակնկալ գալիս ու թափում է մեր դռները՝ նոր կյանքի, նոր ձեռքբերումների, նոր գործերի ու բարի խղճերի հրավեր փայլա:

Միեւի՛նք, վեհ ու նվիրական այս կյանքը, որն Աստուծո ամենաթանկ պարգևն է ամենքիս, ժամանակի մեջ որոշ կայաններ ունի, որտեղ մի պահ կանգ ենք առնում՝ խորհրդածելու, անցնող փարին գնահատելու և փորձություններից խրափելու և դասեր առնելու:

Նոր Տարին լավագույն պահն է անցնող փարվա թերացումներն ու բացթողումները շրկելու և անցնող փարվա փորձառությամբ գորացած՝ ձեռք բերած հաջողությունները զարգացնելու և այն ավելի արժևորելու համար:

Կարծում եմ՝ դժվար կգտնվի այնպիսի անձ, որը կկարողանա ասել, թե իրեն առանց խոչընդոտների կյանքի դյուրասահ ճանապարհ է բաժին ընկել: Նոր փարվա առաջին այս օրը նոր հույսեր ու նոր փառքներ է փայլա մեզ՝ մեր կյանքի բոլոր երազներն ի կատար ածելու, քաջությամբ դիմակայելու կյանքի բոլոր դժվարություններին ու փորձություններին:

Անսխալելի, սիրելի՛ հավաքացյալներ, մարդու կողմից կյանքի զարգացումը բնական և հարաբերական ընթացք ունի, քանի որ երբ Աստված արարեց փիեզերքը, միայն դրանով չսահմանափակվեց ու չդադարեց մարդկանց մեջ գոյություն ունենալուց, այլ մշտամնա գործում և բնակվում է մեր մեջ:

Աստուծո կողմից շնորհված այս կյանքում մենք նույնպես մեր կյանքի ընթացքին պիտի ձգտենք միշտ և հարաբերական զարգացում և հաջողություն արձանագրել՝ ցածրից դեպի բարձր, խոնարհից դեպի վսեմը, լավից դեպի լավագույնը: Նախառակ դեպքում ապրել ու զարգացում չապահովել, եղած հաջողություններն ու ձեռքբերումները չկրկնապատկել նշանակում է խանգարել այն ներդաշնակությունը, որ կա, գոյություն ունի փիեզերքի ու բնության,

Աստուծո և մարդու միջև:

Միբելիներ, նոր փարվա օրը գվարճանքի և ուրախության փուն չէ միայն, այլ սրբազան և նվիրական մի վայրկյան, երբ մենք հոգով ու մարմով գորացած բաժանվում ենք հին՝ անցնող փարուց և նոր՝ եկող փարին գրկաբաց ընդունում: Տարվա առաջին այս օրը մեզ ամենքիս համար հաշվեպովության օր է՝ Աստուծո և մեր խղճի առաջ: Յուրաքանչյուրս մեր կապարած ու չկապարած գործերի համար պարտավոր ենք հաշիվ ներկայացնել, թե՛ որքանով կարողացանք հին փարին արժևորել, թե՛ ինչ կարողացանք ձեռք բերել անցյալում, որը մնայուն ու փրկական է, այլ ոչ թե ժամանակավոր և անցավոր, ինչպես հին փարին էր:

Ամենքս պարտավոր ենք ներթափանցել այդ անցյալի մեջ, որոնել և գտնել մեր կյանքի, մեր կապարած գործերի դրական կողմերը ու նաև միաժամանակ վեր հանել բացասականն ու թերին՝ այս նոր փարում ուղղելու և շրկելու համար: Եվ այն ամենն, ինչ կարողացանք անել կամ չանել, մեզ համար այլևս անդառնալի մի իրողություն կդառնա: Եվ միայն այն ժամ մենք կարող ենք հոգու բերկրանք և անսահման ուրախություն ունենալ, երբ մեր հոգու հաշվեմարտյալները լի են արձանագրված հաջողություններով, երբ անցավոր ժամանակի մեջ այնքան բարիք ենք ամբարել, որ մեր ազգի, մեր ժողովրդի ու մեր Առաքելական Մայր Եկեղեցու համար փրկական և հարանորոգ նշանակություն ունեն:

Իսկ թե որոնք են փրկականն ու մնայունը, որն անցնող ժամանակի մեջ կարելի է ձեռք բերել, երևում է մեր Փրկչի հեփեփալ խոսքերից. «Եվ քանի դեռ ցերեկ է, ես պետք է կապարեմ գործերը Նրա, Ով Ինձ ուղարկեց, գիշեր կգա և ոչ ոք չի կարող գործել» (Նովի. Թ. 4-5): Այո՛, ժամանակի հավերժասլաց ճանապարհն ավելի խմաստավորելու համար կարևոր նախապայման է բարի գործեր կատարելը, քանզի ժամանակն անցնում է արագ, երկիր մոլորակը կապարում է իր ընթացքը փիեզերքի շուրջ, ու մեզ մնում է միայն կապարել բարի և առաքինի գործեր, քանզի. «Մինչդեռ ցերեկ է, գիշեր կգա, և ոչ ոք չի կարող գործել»:

Միբելի՛ հավատարացյալներ, կյանքի կենսաընթացությունը ժամանակավոր է, իսկ փրկության շրջանը՝ շար կարճ: Իմաստուն և խելացի է այն մարդը, ով ժամանակավորից փորձում է հավիթենականը շահել, չբավարարվել ունեցած հաջողություններով, այլ ավելիին ձգտել, իր կյանքի ընթացքին հասնել միայն այն ամենին, ինչ որ մնայուն և հավիթենական է:

Ուստի հարկավոր է, որ զգաստանանք և խրափվենք անցյալի փորձառություններից, որովհետև Նոր փարին մեր առջև նորանոր հաջողությունների դռներ է բացում, մի նոր առիթ և հրավեր է մեզ, որ նայենք մեր ներքին աշխարհին, այնպեղ գտնենք Աստուծո պարկերով ու նմանությամբ սրբեղծված մարդու անաղարպ պարկերը, ապա զգեստավորվենք նրանով, քանզի Աստված խոստացավ հավատով լցված, հույսով ապրող և սիրով գործող մարդուն դարձնել Իր արքայության ժառանգորդը:

Վեհափա՛ն Տեր, այս պահին թարգմանը դառնալով Մայր Աթոռի ողջ միաբանության և հավատացյալ մեր ժողովրդի, մեկ անգամ ես գալիս ենք շնորհավորելու Ձերդ Սրբության Ամանորը և գալիք Սուրբ Ծնունդը: Աղոթք ենք վերառաքում առ բարին Աստված, որ 2009 թվականը, մեր երկնային Տիրոջ օրհնությամբ, լինի բարի խղճերի և ցանկությունների իրականացման փարի: Թող որ Ձերդ Սրբության հոգում ու սրբում ծրարված բոլոր նվիրական փեսիքները դառնան իրականություն, ու միայն այդ ժամ, ուրախ սրբով, անհոգ կյանքով

մեկ մեկու դիմելով կասենք. «Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ»:

Շնորհք, սէր և խաղաղություն եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեւեանս. Ամէն:

**Տ. ՆՈՎԱԿԻՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(11 հունվարի 2009 թ.)

«Ես իսկ եմ հարությունը – կյանքը, ով հավարտում է Ինձ, թեպետ – մեռնի, կապրի. – ով կենդանի է ու Ինձ հավարտում է, հավիտյան չի մեռնի»:

(Նովի. ԺԱ 25)

Միբելի՝ քույրեր և եղբայրներ,

Ավերարանական ընթերցվածն այսօր Ղազարոսի հարության մասին էր, Քրիստոսի և իրեն մշտապես ուղեկցող կանանցից՝ Մարիամի և Մարթայի երկխոսության մասին:

Լսելով Ղազարոսի հիվանդության մասին՝ Քրիստոս մեկնում է Բեթսաիդա, Մարիամի և Մարթայի բնակարանը: Մինչ Նա կժամաներ այնտեղ, Ղազարոսն արդեն մահացել էր և չորս օր էր, ինչ թաղել էին նրան: Մի երկխոսություն է ծավալվում եղբոր մահը սգացող Մարթայի և Տիմոսի, և ապա Տիմոսի և Մարիամի միջև:

Քույրերից Մարթան, որ առաջինն էր հանդիպել Տիմոսին, ասում է. «Տե՛ր, եթե Դու այսօր եղած լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի, բայց հիմա էլ գիտեմ, թե ինչ էլ որ Աստուծոց ուզես, Աստված Քեզ կրա»: Տիմոս նրան խոստանում է. «Քո եղբայրը հարություն կառնի»: Սակայն Մարթան պատասխանում է. «Գիտեմ, որ հարության ժամանակ՝ վերջին օրը, հարություն կառնի»:

Այս խոսքերից հետո Տիմոս ասում է. «Ես իսկ եմ հարությունը և կյանքը, ով հավարտում է Ինձ, թեպետ մեռնի, կապրի, և ով կենդանի է ու Ինձ հավարտում է, հավիտյան չի մեռնի»: Եվ հարց է փայխա Մարթային. «Դու հավատո՞ւմ ես այս բանին»:

Մենք գիտենք, որ Աստուծո Որդին Իր անսահման սիրով, չհանդուրժելով մահվան իշխանությունը Ղազարոսի վրա, փրկում է նրան մահվան կապանքներից, որ Իր հարության նախօրինակն էր և Աստուծո փառքի համար էր:

Միբելի՝ քույրեր և եղբայրներ, արդեն 6 օր շարունակ փոխախմբում ենք Քրիստոսի մարդկության խորհուրդը և աշխարհ գալը: Իր մարդկության մարդկության միջնորդ դարձավ Աստուծո մարդկության միջև: Ինչպես Մամբրե Վերժանողն է նշում. «Իր մեջ կարարյալ միության միավորեց աստվածությունն ու մարդկությունը, որպեսզի մարդկային բնությունը աստվածային բարձրություն ունենա՝ ազատ մեղքից, և մեղավոր մարդուն փառսն առնեն, ինչ նրանք պետք է Աստուծոց ընդունեն, որ երջանիկ լինեն»:

Ամբողջական չէր լինի Տիմոս այս առաքելությունը, եթե չլիներ Նրա Նարությունը՝ հաղթանակը մահվան դեմ, հաղթանակ՝ մահվան պատճառ մեղքի գերության և թշվառության

դեմ: «Եթե Քրիստոս Նարություն չի առել,- ասում է Պողոս առաքյալը,- իգուր է մեր քարոզությունը, իգուր է և ձեր հավաքը»:

Սա է պարաճառը, որ մեր Եկեղեցու իմաստուն հայրերը Սուրբ Ծննդյան փոնակապարտությունների այս շրջանում մեզ են հիշեցնում Նարության մասին:

Քրիստոս մարդացավ, մահկանացու մարմին առավ և Իր հոժար կամքով խաչի վրա մահվան փառապանքները կրեց, սակայն կրկին կյանք վերադարձավ Իր իսկ գործությամբ, որ ավելի հզոր է, քան մահը՝ այսպիսով դառնալով նախակարապետը նրանց մեջ, ովքեր ցանկանում են Իր հետ միասին կյանք վերադառնալ:

Ժամանակակից մարդու համար այնքան սովորական է դարձել մարդկության թշվառ վիճակը, որ միշտ չէ, որ նա հասկանում է հարության ուրախությունն ու խորությունը, փոխհատուցումն ու հավիտենական կյանքը, որ մեզ է պարզել մեր Տերը՝ Նիսուս Քրիստոս:

«Ես իսկ եմ հարությունը և կյանքը, ով հավատում է Ինձ, թեպետև մեռնի, կապրի, և ով կենդանի է ու Ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի»:

Մենք հավատում ենք, որ Քրիստոս մեր կյանքի աղբյուրն է և ուրախությունը, ով այսօր բոլորիս հրավիրում է կիսելու Իր աստվածային պարզեցումը: Նա հրավիրում է յուրաքանչյուր մարդու՝ ամբողջությամբ հաղորդակից լինելու երջանիկ կյանքին, որովհետև Աստված ստեղծել է մարդկանց, որ նրանք երջանիկ ապրեն: Նա ցանկանում է, որպեսզի մենք ապրենք գոհությամբ: Նա յուրաքանչյուր մարդու հնարավորություն է տալիս վայելելու ամբողջ արարչագործությունը, այս աշխարհի և բնության բոլոր պարզեցումները:

Սակայն այս երջանիկ կյանքը հնարավոր կդառնար, եթե մարդիկ հարգեին միմյանց և մյուս արարածներին և դեռ ավելին, եթե նրանք սիրեին Աստծուն:

Սիրելի՛ բույրեր և եղբայրներ, սա մի պարզվիրան է, որի կիրառումը նպաստում է մարդկային ներդաշնակ, հաշտ և համերաշխ հասարակության ստեղծմանը՝ հիմնված ազատ կամքի վրա, որ հիմքն է սիրո: Իսկ ազատ կամքից բխող սիրո զգացումը բացահայտում է Տիրոջ անասելի գեղեցկությունը և օգնում է մեզ այդ նույն գեղեցկությունը փեսնել շրջակա աշխարհի և մեր նմանի մեջ, ով ստեղծված է Աստծո պարկերով և նմանությամբ:

Նավաբացյալ քրիստոնյան և նույնիսկ անհավաքը, ինքը պետք է փեսնի ու զգա կյանքն ապրելու և արժևորելու այս հնարավորությունը, ինչպես նաև մյուս բոլորի մեջ ճանաչի այդ իրավունքը՝ անկախ փարիքից, սոցիալական վիճակից, զբաղեցրած դիրքից և պաշտոնից: Եթե չվերագրենք մեր կյանքի այս իմաստը, ապա չենք կարող ժառանգել այն կյանքը, որ Աստված է խոստանում մեզ:

Մեր նախահայրերն ունեին այդ կյանքը: Սակայն չարն արեց դրախտում մարդու ունեցած երանային կյանքը, նրան մահկանացու դարձրեց և մարդկային ցեղի մեջ ներարկեց եսասիրությունը, ազահությունը, սպանության գաղափարը և այլ չարիքներ:

Չարը հեղափոխում էր Կայենին, որ սպանի իր եղբորը և դառնա առաջին եղբայրասպանը: Այդ ժամանակից ի վեր շար մարդիկ, նմանվելով չարին, արում են մյուսների կյանքը: Արդյունքում մարդիկ զրկվում են կյանքի երջանկությունից:

Քրիստոս մարդացավ, ապրեց երկրի վրա, կամավոր կերպով չարչարվեց, խաչվեց, թաղվեց և հարություն առավ մեզ կյանք տալու, դեռ ավելին, առաք կյանք պարզելու համար: Ուստի քրիստոնյայի կամ յուրաքանչյուր մեկի համար, որ սիրում է իր կյանքը և հար-

գում է Աստված, անհասկանալի է սպանելու կամ մշուսներին ցավ պատճառելու ցանկությունը:

Միեդի՛ բույրեր ու եղբայրներ, քարին նոր է սկսվել: Ինչպես միշտ, այս քարի ևս լսում ենք ցավալի արարքների մասին, որ մարդիկ գործում են միմյանց հանդեպ: Քրիստոս, որ ճանապարհին է, հարությունն ու կյանքը և Ով Իր երկրային կյանքն ապրեց բարիք գործելով և մարդկանց բուժելով, բոլորիս ցույց է փալիս սիրո ճանապարհը, արդարության, կյանքի նկատմամբ հարգանքի և ուրիշներին ուրախություն պատճառելու ճանապարհը՝ որպես միակ ուղին, որ մարդկությանն առաջնորդում է դեպի ճշմարիտ երջանկություն և լիակատար կյանք:

Քրիստոս Իր չարչարանքներին ու մահվանը դիմադրեց ներման, սիրո, բարիք գործելու, գոհաբերության և հարության միջոցով: Նա ապացուցեց, որ չարի գործությունը խորհրդավոր է, չնայած չարի կատարյալ ցանկությանը՝ սպանելու կյանքի առաջնորդին:

Նա մեզ օրինակ է փալիս, որ մեր օրերում չարի գործությունը կրկին կհաղթվի սիրո մեծագույն գործությամբ, որը հարության փանդ միակ ուղին է, քանի որ «...Սերը համբերող է, բաղադրարար է, սերը չի նախանձում, չի գոռոզանում, անվայել վարմունք չի ունենում, իրեն չի փնտրում, բարկությամբ չի գրգռվում, չար բան չի խորհում, անխրավության վրա չի ուրախանում » (Ա Կորնթ. ԺԳ 4-7):

Մենք չպետք է վախենանք չարից, որ թվում է, թե իշխում է, քանի որ Նիսուս Քրիստոս, Իր հարությանը հավաքագող մարդկանց հետ միասին հաղթանակում է:

Բայց մեր հաղթանակը ոչ թե մարդկային էակների, այլ չարի նկատմամբ է, քանի որ մենք՝ քրիստոնյաներս, ցանկանում ենք, որ բոլոր մարդիկ մասնակից լինեն այս հաղթանակին, որպեսզի ոչ ոք պարտության չմարմնվի չարի կողմից և չկորցնի երկրային և, որ ավելի կարևոր է, երկնային կյանքը:

Դրա համար էլ մեր Տերն ասում է. «Ես իսկ եմ հարությունը և կյանքը, ով հավատում է Ինձ, թեպետ և մեռնի, կապրի, և ով կենդանի է ու Ինձ հավատում է, հավիպյան չի մեռնի»:

Եթե հավատում ենք Նրան, ապա ինչպես Պողոս Առաքյալն է ասում. «Փնտրեք վերին բաները, այնպեղ ուր Քրիստոս նստած է Նոր աջ կողքին» (Կող. Գ 3), վերին բաների մասին խորհենք և ոչ թե այն, որ այսպեղ՝ երկրի վրա է:

Եթե հավատում ենք Նրան, ապա եկեք մեր անձերը նվիրաբերենք Քրիստոսին, որպեսզի մարդկությանը փորձության մեջ պահող տառապանքները, անձկությունը, հալածանքը, սովը, մերկությունը չբաժանեն մեզ Իր արժանի սիրուց, որ մեր կյանքի աղբյուրն է ու ուրախությունը, Ով մեռավ բոլորի համար, որպեսզի նրանք, որ կենդանի են, միայն իրենց համար կենդանի չլինեն:

Եթե հավատում ենք Նրան, ապա եկեք մեր անձերը նվիրաբերենք, որ փառավորվի Նրա անունը մեր մեջ, և մենք փառավորվենք Նրա մեջ՝ մեր Աստծու և Տեր Նիսուս Քրիստոսի շնորհի համաձայն:

Այժմ և միշտ և հավիպյալս. Ամեն:

**Տ. ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՔԱՐՈՁԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(18 հունվարի 2009 թ.)

«Յանուն Նոր և Որդույ և Նոգույն Սրբոյ. Ամեն»

*«Ի քէն է Տէր, աղբիւր կենաց, եւ լուսով ե-
րեսաց Քոց տեսանենք զլոյս»*

*«Տէ՛ր, քեզնից է կյանքի աղբյուրը, – երե-
սիդ լույսով ենք լույսը տեսնում»:*

(Մաղմս. ԼԳ 10)

Նայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Դավթի սաղմոսի այս թանկագին հա-
մարը ընդելուզել է «Փառք ի բարձունս» երգի մեջ, որն էլ ամեն օր հապուկ հանդիսավո-
րությամբ երգում ենք մեր ժողովրդի հեկա առավոտյան պաշտամունքի ժամանակ:

Ս. Գիրքը կյանքի գիրք է, որով և այն ծայրեւիծայր լեցուն է կենսական գաղափարնե-
րով: Կենաց ծառը հաճախ է հիշվում նրա առաջին խել գլուխներում, ինչպես և նրա ամենա-
վերջին գլխում:

Կյանքը թանկ է և արժեքավոր: Մարդ սիրում է կյանքը, որքան էլ որ այն թշվառ լինի,
այն նվիրական է: Կյանքը հիմքն ու նախապայմանն է բոլոր մեծ և բարձր հարկություննե-
րի՝ գիտության, գագացումի, իդեալների, սիրո և այլն:

Կյանքը խորհուրդ է և գաղտնիք: Մեզ փրկած չէ, մենք չենք կարող թափանցել նրա
էության մեջ, կարող ենք միայն նկարագրել նրա արտահայտություններն ու երևույթները:
Կարող ենք հստակ իմանալ, թե որտեղ կա կյանք, կենդանություն և որտեղ է բացակայում
այն: Իհարկե, բոլոր կասկածներից վեր է մնում այն, որ կյանքը չի կարող անկենդանից ա-
ռաջանալ:

Սիրելիներ, Դուք, որ Աստծո խոսքն եք ընդունել և Նիսուս Քրիստոսով հաղորդվել հո-
գևոր կյանքին, ավելորդ է Արարիչ Աստծո գոյության բնական և կամ գիտական ապացույց-
ները փնտրել:

Այս մտածումները ձեզ փոխանցելով՝ բացարձակ նպատակ չունեն Աստծո գոյությունը
փաստելու, որովհետև հիմարը միայն իր սրբումն ասաց, թե Աստված չկա: Այլ ասում եմ ա-
նաստվածներին, եթե ազնիվ գիտուններ եք և ճշմարտությունը փնտրողներ, ձեր մոլորութ-
յուններից հեկա վաղ թե ուշ դարձի եք գալու և ընդունելու եք Ս. Գրքի հայտնած ճշմար-
տությունները և Սաղմոսերգուի նման ասելու եք. «Տէ՛ր, Քեզնից է կյանքի աղբյուրը, և երե-
սիդ լույսով ենք լույսը տեսնում»:

Ավելորդ չեմ համարում շեշտել և ասել, թե Աստված՝ Կյանքի Աղբյուրը անձնավորյալ
Էակ է: Այս աշխարհում մեզ ծանոթ ամենաազնիվ և ամենաբարձր փեսակի կյանքը մարդ-

կային կյանքն է. և մարդն ինքը ևս ունի անձնավորյալ կյանք: Եվ քանի որ ջուրը չի կարող իր աղբյուրից ավելի վեր ելնել, ուրեմն ճիշդն ու փրամաբանականն այն է, որ Կյանքի Աղբյուրն էլ գոնե մարդու չափ բարձր կյանքի հատկություններն ունենա, այսինքն անձնավորյալ լինի:

Ո՛վ չգիտի, որ կյանքը, մանավանդ մարդկայինը, խիստ թանկ է և նվիրական Աստծո համար:

Երբ մարդ իր Ձեռքով իր կյանքը փչացնի և կործանի, կարո՞ղ է արդյոք անպատիժ մնալ: Ո՛չ, երբե՛ք, որովհետև մարմինն էլ նվիրական է, այն ի վերուստ սահմանվել է Սուրբ Հոգու փաճարը լինելուն. «Եթե մեկն Աստծո փաճարն ապականի, Աստված էլ նրան պիտի ապականի»: Այսպես է ասում Պողոս առաքյալը Կորնթացիներին ուղղված թղթի Գ գլխի 17-րդ համարում:

Աստված ցանկանում է մարդուն կյանք փալ, լավ կյանք, բարձր և իմաստալից կյանք, լեցուն և կափարյալ կյանք, հավիտենական կյանք: Եվ այս կյանքը Հիսուս Քրիստոսով է:

Մեր բնաբանի երկրորդ մասի ցուցմունքը այս է. «Եվ երեսիդ լույսով ենք լույսը փնտնում»: Հիսուս Քրիստոս Ինքն է Կենաց Խոսքը, որ կար ի սկզբանե, Աստծո փառաց լույսը և Իր Լույսի բուն պատկերը, որով և աշխարհը ստեղծեց. «Աստված Աստուծոյ, յոյս ի լուսոյ»:

«Կյանքը Նրանով էր: Եվ այդ կյանքը մարդկանց համար լույս էր» (Նովի. Ա 4), և վկայությունն այն է, որ Աստված հավիտենական կյանք փռեց մեզ, և դա այն կյանքն է, որ Նրա Որդու մեջ է:

Ամենակարևորը հոգևոր կյանքն է, այն է միայն իր մեջ կրում հավիտենականության խոսքումը: Միավոր կյանքը առանց Աստծո ուժ լինել չի կարող, արվեստը կյանքի լոկ գարդարանքն է, և ոչ թե բուն կյանքը: Նրանք, ովքեր այս բաներին են հեղկում, գանգ առնելով հոգևոր կյանքը՝ ընդամենը ջանք են գործադրում սրվերը բռնելու: Շարերը որոնում են կամքի ուժ կամ բարոյականություն քարոզում: Առանց հոգևոր կյանքի չկա, չի կարող լինել կամքի ուժ, բարոյականություն և նկարագրի կերպում: Աստված է Կյանքի Աղբյուրը: Միայն Ինքը՝ կարող է հաղորդել ճշմարիտ կյանք, և միայն նրան, ով Իր Միածին Որդու միջոցով հաղորդություն ունի Իր հետ: Այս է հաստատում Հովհաննես Ավետարանիչը՝ ասելով. «Հավիտենական կյանքը այս է. որ ճանաչենք Բեզ միակ ճշմարիտ Աստված, նաև Հիսուս Քրիստոսին, որ Դու ուղարկեցիր» (ԺԷ 3):

Հավիտենական կյանքը շահելու պայմանը մեկն է. հավատքով ու սիրով միանալ Հիսուսին և հնագանդության մեջ լինել Նրան «որովհետև նրանք, որ շնորհի առաքության և արդարության պարգևներ են ստանում, կյանքում պիտի թագավորեն միակ Հիսուս Քրիստոսի միջոցով» (Նովմ. Ե 17):

Ով որ խաչյալ և հարուցյալ Քրիստոսին հավատքով կմիանա, հոգևոր և հավիտենական կյանք կունենա: Այս ամենը ապացուցելու համար կարիք չկա, ըստ իս, փրամաբանությամբ և պերճախոսությամբ հանդես գալու: Պարզապես եկեք և փնտրեք. «Ճաշակեցէք եւ փեսէք, զի քաղցր է Տէր, Ալէլուիա»:

Տիրոջ շնորհները, սերը, խաղաղությունը առաքորեն լինեն ձեզ – մեզ ամենափառ հետք. Ամեն:

ԿՐՈՆԱ-ԵԿԵՂ ԵՑԱԿԱՆ

Տ. ԱԴԱՄ ԲԱՆԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՏԵՍԻՆԵՐ ԵՎ ՑՆՈՐՔՆԵՐ

ԵՍ Ի ՏԵՍԻՆ ՆԱՃԱԽԵՑԻՑ, ԵՐԱԶՕՔ ԽՕՍԵՑԻՑ ԸՆԴ ՁԵԶ

Սուրբ Գրիգոր Տաթևացու «Ամատան հատորի» վեցերորդ քարոզը սկսվում է այս բնաբանով. «Ես ի տեսիլն հաճախեցից, երազօք խօսեցից ընդ ձեզ»։ Բնաբանի մեջ նշվում է, որ խոսքը վերցված է Ովսեի մարգարեությունից. «Նորին քարոզ վասն տեսլեան և երազոց. ի բանն Ովսեի որ ասէ. "Ես ի տեսիլն յաճախեցից. երազօք խօսեցից ընդ ձեզ"¹»։ Սակայն Ովսեի մարգարեության մեջ չկան այս բառերը, այլ վերցված են Թվոց գրքից, որտեղ խոսքն ասվում է ոչ թե դերանվան երկրորդ դեմքի հոգնակի թվի՝ *ձեզ*-ի գործածումով, այլ եզակի *նա* դերանվան հոլովված ձևերի նշումով. «Եթե ձեզանից որևէ մեկը Տիրոջ մարգարե դառնա, Ես տեսիլքով կերևամ նրան և երազի մեջ կխոսեմ նրա հետ» (Թվոց ԺԲ 6)։ Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ այստեղ հոգնակիի իմաստ կա, որովհետև խոսվում է մարգարե դարձող յուրաքանչյուր մարդու մասին, որոնց հավաքականությունը հոգնակիի իմաստն է պարունակում։ Պետք է նշել, որ Ովսեի մարգարեության մեջ կա համապատասխան մի հատված, որի համարն է վկայակոչված Տաթևացու քարոզի բնաբանում։ Այն կարծես կրկնությունն է Աստծո խոսքի՝ ասված Ովսեի մարգարեությունից դարեր առաջ Մովսեսի և նրա պես մարգարեական հեղինակություն ունեցող ցանկացող նրա եղբոր ու քրոջ՝ Ահարոնի և Մարիամի հետ կապված դրվագում, որտեղ Աստված Մովսեսի բացառիկությունն ընդգծելով՝ բարկանում է Ահարոնի և Մարիամի վրա։ Հետաքրքիր զուգահեռությամբ Ովսեի մարգարեության մամնօրինակ հատվածը հանդիպում է մարգարեության նույնաթիվ 12-րդ գլխում. «Կխոսեմ մարգարեների հետ, կշատացնեմ տեսիլքները և մարգարեների միջոցով կներկայանամ» (10)։ Սակայն տեսիլքներով այցելելու կամ երևալու և երազներով խոսելու մասին Թվոց գրքի խոսքը նույնությամբ չի կարող լինել Ովսեի մարգարեությունից, քանի որ Ովսեի մարգարեությունում ընդհանրապես գործածված չէ *երազ* բառը, իսկ *տեսիլք* բառը հանդիպում է միայն մեկ տեղում՝ մարգարեության՝ տեսիլքների վերաբերող վերոնշյալ հատվածում։

Այս ամենից կարելի է երկու եզրակացություն անել. կամ քարոզի բնաբանում չի եղել Ովսեի անունը, և բնաբանը նախապես եղել է հետևյալ տեսքով՝ «Նորին քարոզ վասն տեսլեան և երազոց. ի բանն որ ասէ....» (Ովսեի զեղչումով, մարգարեի անունը զուցե հետո շփոթմամբ է նշվել), և կամ էլ Թվոց գրքի և Ովսեի համապատասխան խոսքերի իմաստային նմանության պատճառով սխալ չի համարվել Թվոց գրքի խոսքերը Ովսեի մարգարեությանը վերագրելը։

Սակայն այս դեպքում էլ մեկ այլ անհամապատասխանություն է առաջ գալիս։ Թվոց

¹ Գրիգոր Տաթևացի, Ամատան հատոր, փպեղ յամի 1741 ի Կ. Պոլիս, վերափպեղ ի փպարանի Սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, 1988, էջ 45։

գրքի տվյալ հատվածի բայերը Աստվածաշնչի տարբեր թարգմանություններում հիմնականում ապառնի ժամանակի իմաստն են արտահայտում, մինչդեռ Ովսեի մարգարեության ժԲ 10-ի բայերը գրաբարում հանդիպում են անցյալ ժամանակով՝ *խօսեցայ, յաճախեցի*², սակայն նաև ապառնիով՝ *խօսեցայց, յաճախեցից*³: Չնայած Աստվածաշնչի օրինակների գերակշռող մասում Ովսեի մարգարեության այս հատվածը անցյալով է ներկայացված, սակայն այլալեզու թարգմանություններում ևս հանդիպում են ապառնի ժամանակաձևի գործածումներ⁴:

Արևելահայերենում նույնպես մարգարեության սույն դրվագը ապառնիով է, ինչը նկատի ունենալով՝ հարմար է մարգարեության և Թվոց գրքի համապատասխան հատվածները նույնացնելը: Սակայն մարգարեության խնդրո առարկա հատվածի անցյալ ժամանակով ներկայացվելու դեպքում, որ առավել ճիշտ է թվում, արդեն տեղին չի լինում Թվոցի և Ովսեի մտքերի նույնացումը, քանի որ Թվոց գրքում ասվածը խոստումի իմաստ ունի, իսկ Ովսեի մարգարեության մեջ ակնարկվում են արդեն կատարված իրադարձությունները: Ովսեի մարգարեության մեջ տեսիլքներին վերաբերող խոսքին մախորդող համարում Աստված խոստում է տալիս իր ժողովրդին բնակեցնելու վրանների տակ, ինչպես տոն օրերին: Եվ հաջորդ՝ տեսիլքներին և մարգարեներին առնչվող համարը ապառնիով ներկայացնելը, ինչպես որ արևելահայերեն թարգմանության մեջ է, սույն հատվածը դարձնում է արդեն արված խոստման շարունակություն, որով և իմաստային փոփոխություն է կատարվում: Ովսեի մարգարեության մշյալ համարը բայի անցյալ ժամանակով արդեն ներկայացնում է Թվոց գրքում Մովսեսին վերաբերող վեճի առնչությամբ տրված խոստման իրականացումը, մինչդեռ արևելահայերենում Ովսեի ժԲ 10-ի ապառնի թարգմանությունը հնարավորություն չի տալիս մասն գուգահեռ և կապ անցկացնել Թվոցի խոստման և դրա կատարման ակնարկի հետ, քանզի Ովսեի մոտ ապառնի ժամանակով հանդես գալիս այն ներկայանում է որպես նույն խոստման կրկնությունը: Նույնպես էլ նաև Տաթևացու քարոզի բնաբանում Թվոցի ժԲ 6-ի մանությունը Ովսեի ժԲ 10-ին կատարված է բայերի ժամանակները ապառնիով ընկալելու արդյունքում: Մինչդեռ Ովսեի ժԲ 10-ը պետք է դիտվի որպես պատմական հայտարարություն այն մասին, թե ինչ է Աստված արել իր ժողովրդի համար. մշտապես օգնել է՝ իր մարգարեներին տրվող խոսքով և տեսիլքներով, որոնցում Նա հայտնի է դարձրել իր կամքը⁵: Նշենք, որ տարբերություններ կան նաև Թվոց գրքի ճիշտ հատվածի բայի ժամանակաձևերի առնչությամբ: Գրա-

² Աստվածաշունչ մատեն Տին – Նոր Կրակարանաց, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 1997:

³ Աստվածաշունչ Տնոց – Նորոց Կրակարանաց, նուասպի ումեմն քանի Տեառն սպասատրի Ոսկանի Երևանեցոյ, յԱմստերդամ, ի թոտում Փրկչին 1666, իսկ Տայոց ՌՃԺԵ:

⁴ Գիրք Աստվածաշունչ Տին – Նոր Կրակարանաց, ըստ միաքան վաղեմի գրագրաց մերոց և յոյն քնագրաց, ի Վենետիկ, ի վանս Մխիթարեանց ի Սուրբ Ղազար, 1860 – ՌՅԹ:

⁵ *La Bible*, traduite du texte original par les membres du Rabbinate français; sous la direction Zadoc Kahn, Grand Rabbín, Paris, Librairie Colbo, 3 rue Richer, 5733, MCMLXXIII.

Traduction œcuménique de la Bible, édition intégrale, Ancien Testament, 1983.

⁵ *The interpreter's Bible*, The Holy Scriptures in the King James and Revised Standard Versions with general articles and introduction, exegesis, exposition for each book of the Bible, in twelve volumes, volume VI, New York, Abingdon Press, Nashville, p. 701-702.

քարում և աշխարհաքարում բայերն արտահայտում են ապառնի իմաստ, սակայն հանդիպում են նաև աստվածաշնչյան բնագրի այլալեզու թարգմանություններ, որոնցում բայերը ոչ թե անցյալ կամ ապառնի, այլ ներկա ժամանակով են հանդես գալիս⁶: Ներկա ժամանակի գործածումը ևս տրամաբանական է թվում, որովհետև համապատասխան է Ահարոնի և Մարիամի հարցին. «Միթե Տերը միայն Մովսեսի՞» հետ խոսեց, նա նաև մեզ հետ չխոսե՞ց» (ԺԲ 2), ինչը նշանակում է, որ Աստված ուրիշների հետ էլ խոսում էր, սակայն տեսիլքներով ու երազներով և ոչ թե դեմ առ դեմ և բացեիքաց, ինչպես Մովսեսի հետ (ԺԲ 8):

Սուրբ Գրիգոր Տաթևացին ինքն իր քարոզի մեջ միայն մեկ անգամ է մեջբերում Թվոց գրքի խոսքը դերանվան եզակի թվի երրորդ դեմքի փոխարեն հոգնակի երկրորդ դեմքի գործածմամբ, առանց նշելու Ովսե մարգարեի անունը⁷:

Այսպիսով, հիշյալ քարոզի բնաբանը չէր կարող լինել Ովսեի մարգարեությունից, այլ հատակորեն Թվոց գրքից է որոշ փոփոխմամբ, և Ովսեի մարգարեության սույն դրվագի բայերը թերևս նպատակահարմար պիտի լինեն արևելահայերենում գործածել ոչ թե ապառնիով, այլ ինչպես Աստվածաշնչի գերակշռող թարգմանություններում՝ անցյալ ժամանակով:

ԱՍՏԾՈՒ ՏԵՍԻԼԸ ՏԵՄՆՈՒՄ Է ԲԱՅ ԱՉՔԵՐՈՎ

Իմաստային տարբերություններ կան նաև տեսիլքի վերաբերյալ Թվոց գրքի 24-րդ գլխի 4-րդ և 16-րդ համարների հայերեն թարգմանության և այլ լեզուներով թարգմանությունների միջև: Այս համարներում խոսքը Բաղասամի մարգարեության վերաբերյալ է, ով իր մասին ասում է. «Ես՝ ճշմարտատես այրս, որ Աստծու տեսիլը տեսավ քնի մեջ բաց աչքերով»: Այլ թարգմանություններում, ի տարբերություն հայերենի՝ զրաբար և արևելահայերեն, որևէ խոսք անգամ չկա քնի մեջ լինելու մասին, այլ դրա փոխարեն խոսվում է ընկնելու մասին. «Ով տեսնում է Ամենակարողի տեսիլքները, ընկնում է, բայց բաց են նրա աչքերը»⁸: Ռուսերենում բայերը ներկա ժամանակով են ի տարբերություն մյուս թարգմա-

⁶ Библия, книги Священного Писания Ветхого и Нового Завета, издание Московской Патриархии, Москва, 1990.

Толковая Библия или комментарий на все книги Св. Писания Ветхого и Нового Завета, 1, Бытие – Притчи Соломона, Петербург, 1904-1907, с. 533.

The New Bible Commentary Revised, edited by D. Guthrie BD, MTH, PHD; lecturer in New Testament; London Bible College, J. A. Motyer MA, BD; principal of Trinity College, Bristol; consulting editors A. M. Stibbs MA; formerly Vice-Principal, Oak Hill Theological College, London; D. J. Wiseman OBE, MA, DLIT, FBA, FSA; professor of Assyriology, University of London; Inter-Varsity Press, p. 182.

Traduction œcuménique de la Bible, édition intégrale, Ancien Testament, 1983.

⁷ Ամառան հարրը, էջ 46:

⁸ Библия, книги Священного Писания Ветхого и Нового Завета, Юбилейное издание посвященное тысячелетию крещения Руси, издание Московской Патриархии, Москва, 1988.

Библия, книги Священного Писания Ветхого и Нового Завета, издание Московской Патриархии, Москва, 1990.

նությունների, որոնցում խոսքը երբեմն ոչ միայն ընկնելու մասին է, այլև հափշտակվածության (trance, extase), մեջ ընկնելու, կամ Աստծո առջև ընկնելու՝ երկրպագելու իմաստով⁹: Մինչդեռ զրաբարում և արևելահայերենում ընկնելը քնի մեջ ընկնելու՝ քնելու իմաստով են արտահայտել: Հետաքրքրական է, որ Աստվածաշնչի արևմտահայերեն օրինակները ավելի մեծ են այլ լեզուներով թարգմանություններին՝ խոսելով ոչ թե քնի մեջ լինելու, այլ ընկնելու կամ քնելու պես գետնին ընկնելու կամ վերացումի, այսինքն՝ մտահափշտակության մեջ ընկնելու մասին¹⁰: Աստվածաշնչյան մեկնությունը հենց այս իմաստով է բացատրում Թվոց գրքի այս համարը՝ մատնանշելով աստվածային հայտնությունների, տեսիլքների ժամանակ մարգարեների գետնին ընկնելու վերաբերյալ Սուրբ Գրոց վկայությունները (Եզեկ. Ա. 28, Դան. Ը 17-18, Գործք Թ 4, Հայտն. Ա. 17)¹¹:

Թվոց գրքի այս հատվածում *ընկնել* բառը քնելու հետ չառնչելու դեպքում մարգարեի խոսքի խորը իմաստի ըմբռնումն ենք ունենում: Չնայած մարգարեն մարդկային թուլությամբ ենթակա է բարոյական անկման հնարավորության և մարգարեանալու վիճակում մտահափշտակության մեջ լինելով՝ ֆիզիկական խիստ թուլության, բայց նրա մտավոր աչքը չի դադարում Աստծո կամքը տեսնելուց¹²: Այստեղ նաև խոսքը ներքին աչքերի մասին է, որ բացված են դեպի Տերը¹³: Իսկ աչքերը բաց լինելու մասին նշումը շեշտում է զգոնությամբ ճշմարիտ տեսիլք տեսնելը առանց սթափ գիտակցությունը մթազնող արգելքների¹⁴:

ԱՆՁ ԵՎ ՏԵՄԻԼՔՆԵՐ

Տեսիլքներով այցելելու Աստծո խոստման և տեսիլքի վերաբերյալ աստվածաշնչյան

⁹ *La Sainte Bible*, traduite d'après les textes originaux hébreu et grec, nouvelle version second révisée avec les notes, références, glossaire et index, Alliance Biblique Universelle, 1999.

Traduction œcuménique de la Bible.

The Holy Bible, containing the Old and New Testaments in the authorized King James Version, consolidated Book Publishers, Chicago, 1973.

նաև՝ **A New Commentary on Holy Scripture**, including the apocrypha, edited by Charles Gore, Henry Leighton Goudge, Alfred Guillaume, London, Society for promoting Christian knowledge, Northumberland avenue, p. 140.

¹⁰ **Աստվածաշունչ գիրք Տին – Նոր Կրակարանագ**, եբրայական և լատինական բնագիրներեն թարգմանում, Նիս Եօրք, ի պալարանի Աստվածաշունչի Ընկերության, 1859:

Աստվածաշունչ գիրք Տին – Նոր Կրակարանագ, եբրայական և լատինական բնագիրներեն թարգմանում, Վիեննա, Ամերիկեան Աստվածաշունչի Ընկերություն, 1957:

Աստվածաշունչ մարեան Տին – Նոր Կրակարանների, եբրայական և լատինական բնագիրներից թարգմանում, Նայասարանի Աստվածաշնչային Ընկերություն, 1999:

Աստվածաշունչ գիրք Տին – Նոր Կրակարաններու, եբրայերեն և լատինական բնագիրներեն թարգմանում, Լիբանանի Աստվածաշնչի Ընկերություն, Պեյրոթ, 2001:

¹¹ **A Commentary on the Holy Bible**, by various writers, edited by the Rev. J. R. Dummelow M. A. Queens' college, Cambridge, complete in one volume with general articles, New York, the Macmillan company, p. 115.

¹² **Толковая Библия**, 1, с. 565.

¹³ **The interpreter's Bible**, volume II, p. 259.

¹⁴ **The new Bible Commentary Revised**, p. 191.

մի քանի համարների քննարկումից հետո անդրադառնանք տեսիլքատեսության խնդիրներին:

Անձը հարաբերության միակ գոյութենական հնարավորությունն է, և անձ՝ *provspon* բառով մասնկատի ենք ունենում հարաբերակցված իրականությունը: Այս եզրի հարաբերակցական բնույթն արտահայտվել է դեռ մի անգամ ավելի զործածության մեջ և պարզ երևում է հատկապես դրա ստուգաբանությամբ: *πρός* նախդիրը *ὡς* գոյականի հետ (սենական *ὡπός*), որ նշակում է հայացք, աչք, տեսք, ընդգծում են *πρός-ωπον* բառը հասկացությունը, որի իմաստն է՝ հայացքս ուղղում եմ ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի, գտնվում եմ ինչ-որ բանի կամ մեկի դիմաց: Այսպիսով, այս բառը գործածվել է անմիջական հարաբերակցության սահմանման համար¹⁵: Զարմանալի չէ, որ քրիստոնեական աստվածաբանության մեջ *prosopon* բառով են արտահայտվում մեկ Աստվածության անձերը, որով շեշտվում է երեքանձնյա Աստվածության միջանձնական հարաբերակցությունը: *πρόσωπον* եզրը ներմուծվել է 4-րդ դարի աստվածաբանության գոյաբանական խնդրից հետո հունական աստվածաբանների կողմից, ավելի հստակ՝ Սուրբ Գրիգոր Նյուսացու կողմից¹⁶: Եվ արևելյան աստվածաբանության 5-րդ դարի պատմական կոնտեքստում արդեն կային հունարեն *hypostasis*, *prosopon* բառերը՝ համապատասխան լատիներեն *persona*-ին¹⁷, որը գոյաբանական հասկացություն է¹⁸:

Այսպիսով, մարդը մասն *πρόσωπον* է՝ հայացքն ուղղած ինչ-որ բանի կամ մեկի, և իր հայացքի առջև՝ քնած (երազում) թե հարթմնի, պատկերներ է տեսնում: Գիտական փորձերը, որ կայանում են հերմետիկ և ձայնամեկուսիչ սենյակում մարդուն որոշ ժամանակով հասարակությունից, իր սովորական կենցաղից միայնակեցությամբ հեռու պահելու մեջ, ցույց են տվել մարդու գիտակցության որոշ շեղումներ, մասնավորապես ու տեսողական հալյուցիանցիաների, այսինքն՝ պատրանքածին ձայներ լսելու և աչքերի առջև պատրանքային պատկերներ տեսնելու անկանոնության առկայություն¹⁹: Մարդկային գիտակցությունը և զգացողությունները բոլորովին տարբեր կերպ են դրսևորվում անգամ միայն տեղանքում լույսի և խավար մթության մեջ: Աստվածաշունչը ևս, նշելով աստվածային հայտնության տեսիլքային ձևերի մեջ ի հայտ գալու մասին, շեշտում է մասնավորապես գիտակցությամբ ցնորական պատրանքների կամ Սուրբ Գրքի բառերով՝ սուտ մարգարեությունների և սուտ տեսիլքների մասին (Զաք. Ժ 2, Երեմ. ԺԴ 14, ԻԳ 16, Ողբ Երեմ. Բ 14, Եզեկ. ԺԳ 7, Մատթ. ԻԴ 24):

¹⁵ **Христос Яннарас**, Избранное, Личность и эрос, Москва, Росспэн, 2005, с. 93.

¹⁶ Նույն փեղում, էջ 101:

¹⁷ «**The person of Jesus Christ in the decisions of the ecumenical councils**», a historical and doctrinal study with the relevant documents referring to the Christological relations of the Western, Eastern and Oriental Churches, by Methodios G. Fouyas Ph. D. (Manchester), Hon. D. D. (Edinburgh) Greek Orthodox Archbishop of Aksum, Central Printing Press, Addis Ababa, 1976, p. 151.

¹⁸ MOWBRAYS LIBRARY OF THEOLOGY, «Jesus the Christ», **H. E. W. Turner**, Sometime Fellow of Lincoln College, Oxford; Canon of Durham; and van Mildert Professor of Divinity in the University of Durham, MOWBRAYS LONDON & OXFORD, 1976, p. 72.

¹⁹ **The psychology of consciousness**, second edition, Robert E. Ornstein, the Langley Porter neuropsychiatric institute, the institute for the study of human knowledge, Harcourt Brace Jovanovich, Inc., 1977, p. 88.

Հոգեբանության մեջ, ի տարբերություն աստվածաբանության, երբեմն առավել մախընտրելի է գործածել ողջ անհատականությանը վերաբերող, ավելի լայն իմաստ արտահայտող *անձնավորություն* (personality) եզրը, քան *անձը* (person)²⁰: Կարելի է ասել, որ հոգեբանության մեջ անձնավորության հոմանիշ է մասն *էգո* եզրը: Ըստ որոշ հոգեբանների՝ էգոն ձևավորվում է երեխա-ծնող հարաբերություններից կամ մամն է երեխա-ծնող հարաբերություններին²¹: Էգոյից անբաժան է գերէգոն կամ գերեւը, որ քննադատությամբ միշտ առավել կատարելություն է պահանջում էգոյից: Գերեւը մույնիսկ գերիշխում է էգոյի դատողություններին: Յուրաքանչյուր գիտակցական և ենթագիտակցական միտք կամ արարք, որ չի համաձայնեցվում գերեւի հետ, լարվածություն է ստեղծում, և եթե այդ լարվածությունը գիտակցական է դառնում, այն ընդունվում է որպես մեղքի զգացում²²: Ցնորական տեսիլքները կամ հալյուցիանցիաները հաճախ էգոյի ծնողական մասի դրսևորումն են: Ասվածին որպես հիմնավորում է բերվում այն փաստը, որ ամենատարածված զգայախաբությունները՝ հալյուցիանցիաները, անպարկեշտ խոսքեր են կամ անպարկեշտության մեջ մեղադրանքներ, որ ծնողական արտահայտման ձևեր են²³:

ՑՆՈՐՔՆԵՐ

Ցնորքը առաջոք երևույթն է, կեղծ երևակայական կերպարանք²⁴, որ մեծավ մասամբ կապ ունի մասն խելագարության հետ: *Ցնորք* բառին հոմանիշ են *պատրանք*, *հալյուցիանցիա* բառերը, որոնց արտահայտած երևույթն է՝ զգայարանների սխալ, որով մարդ երևույթն ընդունում է իբրև իրականություն²⁵ կամ տեսնում, լսում, հոտոտում, շոշափում է մի բան, որ իրոք չկա²⁶:

Տեսիլքային հիվանդությունների տեսակներ. - Լատին լեզուները մեկ բառ են օգտագործում՝ նշելու համար մտքի խանգարումը և դրա պատճառով ի հայտ եկած սխալ համոզմունքների ամբողջությունը: Սակայն անգլերենը և գերմաներենը, բացի լատիներեն

²⁰ Anne Anastasi, department of Psychology, Fordham University, §Psychological Testing!, fifth edition, Macmillan Publishing co., Inc., New York, Collier, Macmillan Publishers, London, 1982, p. 17.

Paul Foulquié, Psychologie, nouvelle édition revue et corrigée, Les édition de l'école, 11, rue de Sèvres. Paris-VI^e, p. 503.

²¹ Эрик Берн, Исцеление души, трансакционный анализ психотерапии, пер. с англ. А. Брызберга, Екатеринбург, 2003, сс. 44-45.

Эрик Фромм, Здоровое общество, Догмат о Христе, издательство Трапизткпига, Москва, 2005, с. 185.

²² Игумен Евмений, Пастырская помощь душевнобольным, с. 197.

²³ Эрик Берн, նշվ. աշխ., էջ 65:

Abbrégé de psychologie, par Jean Delay, Professeur de Clinique à la Faculté de Médecine de Paris, membre de l'Institut et de l'Académie de Médecine; Pierre Pichot, Professeur de Psychologie Médicale à la Faculté de Médecine de Paris; troisième édition (3^e tirage), Masson&C^{ie}, Éditeurs, 120, Boulevard Saint-Germain, Paris (VI^e), 1971, p. 75.

²⁴ Հայերեն բացարձակ բառարան չորս հատորով, կազմեց ՍԳ. Մալխասեանց, իսկական անդամ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, Հայկական ՍՍՌ Պետական հրատարակչություն, Երևան, 1944, հատոր չորրորդ, էջ 467:

²⁵ Նույն տեղում, էջ 73:

²⁶ Բացարձակ բառարան, հատոր երրորդ, էջ 12:

delirium եզրից, գործածում են dellusion և Wahn բառերը: Նաև տարբեր նշանակություն ունի ֆրանսերեն *délire* բառը²⁷: Ըստ մեկ կարծիքի՝ ֆրանսերեն *délire* բառը հիվանդությանը վերաբերող բառիմաստի արտահայտման մեջ ավելի ճշգրտությամբ է համապատասխանում լատիներեն իր նախօրինակին, քան գերմանական և անգլոսաքսոնական լեզուների համապատասխան բառերը²⁸: *Délire*-ի դեպքում տարբեր դրսևորումներով լսողական և տեսողական հալյուցիացիաներ են լինում²⁹:

Սովորաբար հալյուցիացիաները տարբերում են հալյուցիոզից: Հալյուցիոզ (hallucinose) բառը հատուկ է ֆրանսիական բժշկության լեզվին: Այն իմաստային փոխադրումն է գերմաներեն Halluzinose եզրի³⁰, որ նշանակում է պատրանքային զտանցանք, բանդազուշանք: Հալյուցիոզի դեպքում, ի տարբերություն հալյուցիացիայի, մարդն ունենում է պատրանքային տեսիլքներ՝ տեսնում առարկա կամ ձայն լսում, բայց անմիջապես ճանաչում է, որ այդ զգայական ընկալումն իրականությանը չի համապատասխանում: Իսկ հալյուցիացիաները կարող են լինել պարզունակ՝ լույս, բզզոց և այլն, կամ բարդ՝ պերսոնաժներ, կենդանիներ, խոսքեր, երաժշտության հատվածներ³¹, որոնք անձի կողմից ընդունվում են իբրև իրականություն:

Կեղծ տեսիլքների առաջացման պատճառներ. - Կենտրոնական ներվային համակարգի խանգարումները ցնորքներով ուղեկցվող հոգեկան խանգարումներ են առաջացնում: Նաև ուղեղի նույնիսկ փոքր ուռուցքը, ուռուցքները կամ դրա արյունատար անոթների լայնացումը կամ գլխուղեղի կեղևային արյան շրջանառության բարդացումները, ինչպես նաև ալկոհոլի, դեղերի, թմրամիջոցների ազդեցությունը հալյուցիացիաներ, ցնորքներ են առաջացնում³²: Գլխուղեղի կեղևի ընկալման կենտրոնների էլեկտրական գրգռումը նկրովիրաբուժական միջամտությունների ընթացքում գրգռվող գոտիներին համապատասխան պարզ կամ բարդ հալյուցիացիաներ են առաջացնում, որոնք հիմնականում հալյուցիոզային բնույթ ունեն³³: Սակայն պատրանքային տեսիլքներ ունեցող պսիխոզով, այդ թվում և շիզոֆրենիայով հիվանդների մոտ անատոմիական քննությունները շեղումներ չեն հայտնաբերել, և ցնորքների ի հայտ գալը մեծ մարդկանց մոտ երբեմն բացատրվում է ներվերի հորմոնների բիոքիմիկ խախտումով³⁴:

Դեղամիջոցներից LSD-ն, L.S.D. 25-ը, մեսկալինը, պսիլոսիբինը, ինչպես նաև հաշիշը և որոշ այլ թմրադեղեր նորմալ անձանց մոտ հալյուցիացիաներ են առաջացնում՝ պատ-

²⁷ *Unevers de la psychologie*, Le développement psychologique normal, La vie psychologique pathologique, avant-propos de Jean Hamburger membre de l'Académie des Sciences et de l'Académie Nationale de Médecine, membre de l'Institut, sous la direction de Yves Pélicier professeur à l'Université René-Descartes, médecin de l'hôpital Necker – Paris, éditions Lidis, Paris, tome III, p. 276.

²⁸ Նույն տեղում, էջ 276:

²⁹ Նույն տեղում, էջ 277, 280:

³⁰ *Abrégé de psychologie*, p. 73.

³¹ Նույն տեղում:

³² *Unevers de la psychologie*, tome III, p. 249.

Abrégé de psychologie, pp. 74, 75.

³³ *Abrégé de psychologie*, p. 74.

³⁴ *Univers de la psychologie*, tome III, p. 249.

նառելով զգայական ընկալման խանգարումներ³⁵: Դարեր շարունակ հայուցիմոգեն՝ պատրանքածին բույսեր գործածվել են ամերիկյան հնդկացիների կողմից: Հայտնի են ացտեկների գուշակության սնկերը, որոնք պարունակում են պսիխոսիբին, որը նույնքան հզոր է, որքան մեսկալինը³⁶: Հայուցիմոգեն բույսերից հայտնի է նաև peyotl-ը, որ ցնորական պատրանքներ առաջացնելու ընդունակ փոքր կակտուս է, և գործածվում է Մեքսիկայի շրջաններում ապրող հնդկացիների կողմից հեթանոսական ուխտագնացության ժամանակ³⁷: Երբեմն նման դեղամիջոցներ գործածած անձանց մոտ հայուցիմացիաները հայտնվում են առանց դեղերի կամ թմրադեղերի նոր ընդունման³⁸:

Իրական և կեղծ միատիցիզմ. - Խելագարությունը իրավաբանական տերմին է, որը բժշկական հաստատում չունի, չնայած շարունակվում է գործածվել բժշկության մեջ: Ավելի ճիշտ է խելագարին փսիխոտիկ անվանել³⁹, այսինքն՝ հոգեկան որոշակի հիվանդություն ունեցող անձ: Հոգեկան հիվանդների մեջ կարելի է տարբերակել երկու խումբ՝ ներքին հիվանդներ և շփոթեցվածներ⁴⁰:

Շփոթեցված մտային հիվանդություն է, որը մասերի է բաժանում հոգեկան միությունը⁴¹: Շփոթեցվածի ժամանակ խախտվում է անձի ամբողջականությունը, հիվանդի մեջ թվացյալ կերպով ապրում են երկու կամ ավելի շատ թվով մարդիկ: Իր եսի բաժանումը տարբեր մասերի հիվանդն ի վիճակի չէ գիտակցելու⁴²: Ի տարբերություն ուղեղի հետ կապված մտային խանգարումներ ունեցող անձանց՝ շփոթեցված լավ է կողմնորոշվում ժամանակի և տարածության մեջ, հիշողության ամրագրումները նորմալ են⁴³: Այս հիվանդությունը հանդիպում է մարդկային բոլոր խմբերում, վնասում է երկրի բնակչության մեկ տոկոսին⁴⁴ կամ երկրի բնակչության մեջ յուրաքանչյուր հարյուրերորդ մարդը հիվանդ է շփոթեցված⁴⁵: տառապելով նաև կեղծ տեսիլքատեսությամբ, ինչպես որ ուղեղի ֆունկցիաների խանգարում ունեցող մարդիկ: Որոշ հիվանդներ առասպելական, միատիկ, հետապնդման թեմաներով հայուցիմացիաներ են ունենում, և երբեմն հասնում են արդյունքի՝ մարդկանց համոզելու, որ իրենք ահավոր դավադրության առարկա են կամ որ Աստուծոց ընտրված են, տիրապետում են ֆանտաստիկ զորության և այլն: Ծատ աղանդներ, կրոնական խմբակցություններ հիմնվում են նման պատրանքային համոզ-

³⁵ *Univers de la psychologie*, tome III, pp. 244, 350.

Abbrégé de psychologie, pp. 67, 74.

The psychology of consciousness, pp. 89, 93, 94, 108.

³⁶ *Univers de la psychologie*, tome III, p. 350.

The psychology of consciousness, p. 94.

³⁷ *Univers de la psychologie*, Les œuvres et les clés de la vie psychique, tome IV, p. 417-418.

³⁸ *Univers de la psychologie*, tome III, p. 352.

³⁹ *Игumen Евмений*, նշվ. աշխ., էջ 205:

⁴⁰ *C. G. Jung*, Problèmes de l'âme moderne, préface du Docteur Roland Cahen, traduction par Yves Le Lay, Édition Buchet/Chastel, 18, rue de Conde 75006, Paris, p. 443.

⁴¹ *Univers de la psychologie*, tome III, pp. 285, 286.

⁴² *Игumen Евмений*, նշվ. աշխ., էջ 202-203:

⁴³ *Univers de la psychologie*, tome III, p. 277.

⁴⁴ Նույն փնդում, էջ 285.

⁴⁵ *Игumen Евмений*, նշվ. աշխ., էջ 159:

մունքների վրա⁴⁶:

Հոգեբաններն զբաղվել են իրական խորհրդապաշտական ու հիվանդագին դրսևորումների և դրանց տարբերությունների ուսումնասիրմամբ: Երբեմն անհնար է տարբերել կրոնախորհրդապաշտական դրսևորումը հիվանդագին դրսևորումներից, և հալյուցիանագեն դեղերը նույնպես միասին վիճակներին համապատասխան վիճակներ են առաջացնում⁴⁷: Պետք է նշել, որ հայտնի հոգեբան Ֆրեյդը իր «*Malaise dans la civilisation*» աշխատության մեջ հերքում է կրոնական որևէ զգացողության վավերական լինելը⁴⁸: Հոգեվերլուծաբան Ժակ Լյոբան (Jacques Leuba) 1930-ին հրատարակեց «Կրոնական միաստիգիզմի հոգեբանությունը», որում համաձայն է Ֆրեյդի կարծիքին: Նրա համար խորհրդապաշտական սիմվոլիզմը անառարկելիորեն սեռական նշանակություն ունի: Միաստիգիզմի դառնում է փոխհատուցում սեռական հուսախաբության համար⁴⁹: Սիմվոլիզմի հետ առնչված՝ վերոնշյալ բաժանումով հոգեկան հիվանդների երկու խմբերի հստակ տարբերության շեշտմամբ նշվում է, որ այդ երկու խմբերի հիվանդությունները, այնուամենայնիվ, մեկ ընդհանուր կետ ունեն՝ իրենց բովանդակության սիմվոլիզմը⁵⁰: Նաև երազատեսության վերաբերյալ ուսումնասիրություններում մեծ ուշադրություն է դարձվում խորհրդանշանների, որոնք համարվում են երազների մասին տեսության մեջ ամենանշանակալի մասը⁵¹: Այսպես նաև աստվածաշնչյան Հոփսեփը, Դանիելը երազներում տեսնված խորհրդանշաններ, սիմվոլներ համարելով բացատրեցին, մեկնեցին երազները (Ծննդ. Խ 12-13, 18-19, ԽԱ, 26-27, Դան. Բ 39-43, Դ 17-24): Երազների վերաբերյալ նշվում է նաև, որ հաճախ դրանք արթմնի ժամանակ անձի չկատարված ցանկությունների իրականացումն են երազներում⁵²: Սա նման է նաև միրածի երևույթին, որ դրսևորվում է ցանկության պատրանքային իրականացման մեջ: Բացատրական բառարանում *միրած* բառի բացատրության մեջ ևս հետևյալ օրինակն է բերվում: Անապատում տոթից և ծարավից նվաղող ուղևորը հանկարծ տեսնում է իր առաջ կանաչավետ և ջրառատ օազիս, որը, սակայն, ոչ թե իրականություն է, այլ տեսողական պատրանք⁵³: Այս նկատառմամբ աշխարհահռչակ փիլիսոփա Էմմանուել Կանտը գրել է. «Խելագարը քայլող երազատես է», և հալյուցիանացիաները որոշ հոգեբանների կողմից ևս երբեմն համարվում են արթմնի երազներ⁵⁴: Տեսիլքների ի հայտ գալը նաև բացատրվում է որպես նման ապրումներ ունենալու խիստ ցանկության արդյունք⁵⁵: Այսպիսով, իրական և կեղծ տեսիլքատեսության

⁴⁶ *Univers de la psychologie*, tome III, pp. 281-282.

⁴⁷ *Univers de la psychologie*, tome IV, p. 333.

⁴⁸ Նույն փեղում, էջ 334:

⁴⁹ Նույն փեղում:

⁵⁰ *C. G. Jung*, նշվ. աշխ., էջ 444.

⁵¹ **Ֆ. Փրեյդ**, Психология бессознательного, Сборник произведений, составитель, научный редактор, автор вступительной статьи М. Г. Ярошевский, Москва, «Просвещение», 1989, с. 93.

⁵² **Զիգմունդ Փրեյդ**, Толкование сновидений, репринтное воспроизведение 1913 года, Ереван, 1991, сс. 101, 108.

⁵³ **Բացատրական բառարան**, հափոր երրորդ, էջ 340, հափոր չորրորդ, էջ 73:

⁵⁴ The psychology of consciousness, p. 86.

Abrégé de psychologie, p. 75.

⁵⁵ **Игумен Евмений**, նշվ. աշխ., էջ 217-218:

դրսկորումները հար և մամ են իրար, սակայն ի տարբերություն վավերական տեսիլքների՝ կեղծ տեսիլքները կամ ցնորքները կարող են լինել անձի սուբյեկտիվ ցանկությունների խորհրդանշանային արտահայտություններ աշխարհի, մարդկանց, Եկեղեցու, եկեղեցականների հանդեպ կանխակալ կարծիքով, նախատրամադրվածությամբ: Եվ ցնորքներով ուղեկցվող հիվանդությունների պարագային նաև անձի ներաշխարհում առկա մշակութային ավանդույթները շատ բան են պայմանավորում⁵⁶: Միմյուրե կրոնական միասնացիվի մեջ երկրորդական և մուլտիպլ ավելորդ է համարվում կանխակալ տրամադրվածությունը, անձի զգացական ընկալումները, քանի որ աստվածհայեցողության կամ եկեղեցական հեղինակների արտահայտմամբ աստվածային մեզի մեջ մտնելու համար անհրաժեշտ է հրաժարվել ամեն ինչից, սեփական անձից և ամեն ինչից անկախ լինելով՝ ճախրել դեպի աստվածայինը⁵⁷: Պողոս և Պետրոս առաքյալներն իրենց տեսիլքային փորձառությունները բացատրել են հափշտակվածության մեջ լինելու իրողությամբ (Գործք ԺԱ 5, ԻԲ 17, Բ Կորնթ. ԺԲ 2-4):

Ցնորքների դիվանականությունը և տեսիլքների վավերականացումը.

Պողոս առաքյալը նշում է մարդ արարածի եռամաս լինելը՝ կազմված հոգուց, շնչից և մարմնից (Ա Թեառ. Ե 23): Գիտնական հոգեբաններն առավելաբար լինելով շնչավոր, այսինքն՝ դեռևս ոչ հոգևոր, իրենց հոգևորը բավականաչափ չգարգացրած մարդիկ, միշտ ուսումնասիրում են մարդկանց միայն շնչավոր, մարմնական տեսանկյունից⁵⁸: Ցնորատեսության մարդկային վիճակի մասին հայտնի է, որ մամ պարագայում ուղեղը գործում է ցածր ճնշմամբ, և շիզոֆրենիայի կամ խրոնիկ մոլորականների դեպքում հալյուցիանցիաները հետևանք են գլխուղեղի կեղևի ընդունակության կորստի՝ զտելու և համակարգելու զգացական տեղեկությունները, խանգարում, որի ճշգրիտ ծագումը հայտնի չէ⁵⁹: Եվ մինչև հոգեբանները մինչև այսօր դժվարանում են հստակորեն որոշել մամ խանգարումների պատճառները, այլ տեսանկյունից ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ցնորքներ, պատրանքներ առաջացնող հիվանդությունների պարագային հալյուցիանցիաները որոշ դեպքերում ուղեղի ֆունկցիաների խանգարման դրսկորում են, որոշ դեպքերում էլ՝

⁵⁶ *Univers de la psychologie*, tome III, p. 250.

⁵⁷ Նայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի աստվածաբանական հանդես, Գանձասար Բ. (Աթենացիների Դիոնեսիոս Արիստագացի եպիսկոպոսի թուղթը եփեսացիների Տիմոթեոս եպիսկոպոսին խորհրդական աստվածաբանության մասին), էջ 145, 147-149:

Scriptores Armeniaci, tomus 17, The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite, edited by Robert W. Thomson, LovanII, in Aedibus E. Peeters, 1987 (Դիոնիսի Արիստագացու եպիսկոպոսի Աթենացու առ Տիմոթեոս եպիսկոպոս Եփեսացու յաղագս խորհրդականի աստվածաբանութեան), էջ 225, 228-229:

From glory to glory, textes from Gregory of Nyssa's mystical writings, selected and with an introduction by Jean Daniélou, S. J., translated and edited by Herbert Musurillo, S. J., St. Vladimir's Seminary press, Crestwood, NY 10707-1699, 1995, p. 118.

Այս մասին րեւն նաև՝ *Мистическое богословие*, (Вл. Лосский, Очерк мистического богословия Восточной Церкви), издание христианской благотворительно-просветительской ассоциации, «Путь к истине», Киев – 1991, с. 116.

⁵⁸ *Игумен Евмений*, նշվ. աշխ., էջ 363:

⁵⁹ *Abrégé de psychologie*, p. 76.

Univers de la psychologie, tome III, p. 285.

դիվական ուժերի ազդեցության հետևանք⁶⁰, ու մասն հիվանդության արմատները հաճախ գտնվում են ոչ թե հոգեկան, այլ հոգևոր մակարդակում⁶¹:

Ի հավելումն Հին Կտակարանում կեղծ տեսիլքների վերաբերյալ Աստծո մախազգուշացումների (Զաք. Ժ 2, Երեմ. ԺԴ 14, ԻԳ 16, Ողբ Երեմ. Բ 14, Եզեկ. ԺԳ 7), Նոր Կտակարանում մահ Բրիստոս Ինքն է զգուշացումներ անում (Մատթ. ԻԴ 24, Մարկ. ԺԳ 22), իսկ առաքյալը հստակորեն նշում է սատանայի՝ իբրև լուսո հրեշտակ կերպարանավորման մասին (Բ Կորնթ. ԺԱ, 14): Եկեղեցու դավանանքը, որ արտահայտում է աստվածային հայտնության ճշմարտությունը, ազդում է մարդու մտքի, նրա ներքին վերափոխման վրա, որով մարդն ընդունակ է լինում իրական խորհրդապաշտական փորձառության ձեռքբերման: Եկեղեցու կողմից պահպանվող ճշմարտությունից դուրս անձնական փորձառությունը զրկված կլինեք վավերականությունից, օբյեկտիվությունից, դա կլինեք ճշտի և ստի, իրականի և պատրանքայինի խառնուրդ, կլինեք միստիցիզմ այդ բառի վատթար իմաստով⁶²: Այսպես մահ առաքյալները դեմ չարտահայտվեցին տեսիլքով Բրիստոսի հետ հաղորդակցված Պողոս առաքյալին՝ հավանություն տալով նրա գործունեությանը (Գաղ. Բ 6-10): Եվ աշխարհում բազում խառնաշփոթ ցնորքների ու տեսիլքների առկայությամբ այս իմաստով դժվարին իրավիճակներում այսօր Եկեղեցին է միակ բարձրագույն աստվածադիր հեղինակությունը՝ զատորոշելու հիվանդագին կամ դիվական ցնորքները աստվածային ներշնչումներից և վավերացնելու ճշմարտացիությունը իրական տեսիլքների:

⁶⁰ Игумен Евмений, նշվ. աշխ., էջ 237:

⁶¹ Նույն տեղում, էջ 163:

⁶² Вл. Лосский, նշվ. աշխ., էջ 98:

Տ. ՄԱԿԱՐ ԱՐԵՂԱ ՀԱԿՈԲՅԱՆ

**ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

Հայոց մեծագույն հայրապետներից մեկը՝ Սուրբ Հովհան Իմաստասեր Օձնեցին, ոչ միայն մեծ աստվածաբան էր, կաթողիկոս, այլև միջնադարյան իրավական մտքի կարկառուն ներկայացուցիչներից: Նա առաջինն էր Հայաստանում, որ համակարգեց մինչև այդ գործող Հայ Եկեղեցու սահմանած կանոնական նորմերը, եկեղեցական ժողովների (Աշտիշատի, Թափապիվանի, Ռվնո և այլոց) որոշումները, առաքելական կանոնները: Օձնեցին ստեղծեց «Կանոնագիրք Հայոց»-ը իր 32 կանոններով, որն առաջին իրավաբանական մեծ ժողովածուն է հայ իրականության մեջ: Ս. Հովհան Օձնեցին իր «Կանոնագրքի» ստեղծման հիմքում դնում է բարեգործական նպատակների հասնելու ձգտումը, որպեսզի մարդիկ չգործեն ինքնակամ ու ինքնազուլի: «Կանոնագիրքն» առավել ցայտուն է արտացոլում ժամանակի իրավահարաբերություններն ու գործող սովորույթային իրավունքի հիմնական դրույթները: Այն հետագա դարերում լրացվեց նոր կանոններով և կանոնախմբերով՝ հասնելով մինչև 40-ի, և մինչ օրս ծառայում է Հայ Առաքելական Եկեղեցուն:

Բացի «Կանոնագիրք Հայոց»-ից, Հովհան Օձնեցին գրի է առել «Գիրք թղթոց» ժողովածուն, «Ընդդեմ պավլիկյանների», «Ընդդեմ երևութականների» ճառերը, «Եկեղեցու կարգերի մասին», «Ատենաբանություն» կանոններ-ճառերը:¹ «Գիրք թղթոց» ժողովածուն ընդգրկում է Տիեզերական և Հայ Եկեղեցու հայրերի թղթակցություններն ու նամակները, որոնք մեծապես օգնում են ըմբռնելու մեր Եկեղեցու պատմական, դավանաբանական և կառուցվածքային առանձնահատկությունները: Կաթողիկոսը, որ քիչ գործ չէր արել Հայոց Եկեղեցու կարգավորման համար, շնորհիվ իր դիվանագիտական ձիրքերի և խալիֆների հետ ունեցած անձնական կապերի, շատ ուժ ներդրեց նաև կրոնական գործերի կարգավորման հարցում: Նա 726 թ. Մանագլետոսի ժողով գումարեց՝ վերջնականապես վճռելու «Բրիստոսի մարմնի ապականացու լինելու հարցը»: Ժողովը այդ կապակցությամբ ընդունեց տաս կանոնական օրենքներ: Ս. Հովհան Օձնեցին կանոնակարգել է նաև Հայ Եկեղեցու ժամերգությունների ընթացքում երգվող շարականները և ընթերցվող աղոթքներն ու քարոզները:

Հովհանն Գ. Օձնեցի կաթողիկոսը հայ զինագործ արհեստավորների հովանավոր սուրբն էր նաև: Արդարադատության «պատժող սուրբ», ճշմարիտ հավատքի համար մղվող պայքարը, երկաթով (իմ. զենքով) հերձվածողներին և հանցագործներին պատժելու, խարանելու հանգամանքներն ուղղակիորեն կապված էին զինագործության և զինագործ արհեստավորների անձի հետ, իսկ Հովհան Օձնեցին այս ամենի զաղափարախոսն

¹ **Հովհանն Օձնեցի**, Երկեր. գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վազգեն Նամբարձումյանի, Երևան, 1999, էջ 8: Տե՛ս նաև **Մ. Պապյան**, Հովհան Իմաստասեր Օձնեցի, Եր., 1998:

ու մարմնավորողն էր: Պատահական չէր, որ նա միջնադարյան և նոր ժամանակների մանրամասնության օրինակներում և սրբապատկերներում պատկերվում էր սրով, որը խաչի խորհրդանիշներից մեկն էր²:

«Կանոնագիրք Հայոց»-ի ստեղծման հանգամանքները և հիմնական դրույթները

Հայտնի է, որ Հայաստանում ազգային-եկեղեցական ժողովներին, սկսած IV դ. 50-60-ական թթ., մասնակցել են երկրի հոգևոր և աշխարհիկ տերերը: Այդ ժողովները, ի թիվս դավանական հարցերի, կարգավորում էին նաև ժամանակաշրջանի համար կարևոր աշխարհիկ-իրավական հարաբերություններ: Օտար և ազգային կանոնախմբերը հնարավորություն են ընձեռում ուրվագծելու հայ ընտանեկան, քրեական, քաղաքացիական իրավունքների կարևոր ինստիտուտները, պատկերացում կազմելու այն մասին, թե ինչպես էր Հայ Եկեղեցին իրականացնում «գործակալության մեծի դատաւորութեան» գործունեությունը, ինչպես հայոց թագավորության գոյության, այնպես էլ պետականությունից զուրկ շրջանում: Նշված ազգային և փոխառված կանոնախմբերը իրենց գոյությունը պահպանեցին մեկուսի, կորսվելու և բնագրային խաթարման վտանգի պայմաններում:

Եվ ահա Հովհան Օձնեցի կաթողիկոսը գիտական բարեխղճությամբ մեկ հավաքածուի մեջ ամբողջացրեց այդ կանոնախմբերը և ստեղծեց իրավաբանական պատմական մի կոթող՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն, որն առաջին «Corpus juris canonici»-ին էր համաշխարհային պատմության մեջ, և այն ստեղծվեց Իսիդորոս Մերկատորի կանոնական ժողովածուից հարյուր տարի առաջ: Բացի այդ, Քաղկեդոնական Եկեղեցին և ամենից առաջ Բյուզանդականը, դավանական անողոր պայքար էին մղում Հայ Եկեղեցու դեմ: Իր դիրքերի ամրապնդման համար վերջինս ստիպված էր ինչ-ինչ միջոցների դիմել: Այդ միջոցներից մեկը սեփական կանոնադրության ստեղծումն էր: Բազմաթիվ կանոնական որոշումներից և փաստաթղթերից անհրաժեշտ էր ընտրել այնպիսիները, որոնք կհաստատեին Հայ Եկեղեցու ուղղադավանությունը: Կանոնագիրքը պարունակում է արտաքին և ազգային ծագման կանոնների 24 խումբ, այդ թվում առաջին երեք տիեզերական ժողովների, վեց տեղական ժողովների, Գրիգոր Լուսավորչի և Սահակ Պարթևի կանոնները: «Կանոնագիրք Հայոցի» ստեղծման մեկ այլ հանգամանք էր այլևայլ աղանդավորական շարժումների դեմ իրավական դաշտում պայքար ծավալելը:

Կանոնագրքի երեսուներկու կանոնները զգալի չափով վերաբերվում են դավանանքի և պաշտամունքի ծիսական խնդիրներին, ամուսնության, ընտանիքի և այլ հարցերի կանոնակարգմանը: Նրանցում բնութագրվում են գործած մեղքը և կատարած հանցանքը կամ զանցանքը, տարատեսակ արգելքներ են դրվում մամոթիմակ գործողություններ կատարելու վրա:

«Կանոնագիրք հայոց»-ը որպես (ներառնող) ինկորպորացիոն իրավական փաստա-

² Գ. Աղանյան, Հայկական գինագործությունը XIX դարում- XX դարի սկզբին, ՏՏ ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի Գիտական աշխատություններ, Գյումրի, 2000, էջ 132: Տե՛ս նաև Ա. Խորաթյան, Ս. Հովհաննես Օձնեցին ժողովրդական ավանդության մեջ, Հայոց սրբերը և սրբավայրերը (ակունքները, փայլերը, պաշտամունքը), Եր., 2001, էջ 76-77:

թուղթ³

«Կանոնագիրք հայոց»-ի հեղինակ Ս. Հովհանն Օձնեցին 719 թ. գումարեց Դվինի հինգերորդ եկեղեցական ժողովը: Ժողովը կանոնական որոշումներ ընդունեց պավլիկյանների դեմ, իսկ ավելի ուշ Օձնեցին գրում է իր մշանավոր «Ընդդեմ պավլիկեանց» ճառ-աշխատությունը: Դա անհրաժեշտ էր, քանի որ պավլիկյանները չէին ընդունում սրբագործված եկեղեցական ծիսակատարությունները: Օձնեցին փորձեց ամրապնդել «Նիկեական դավանանքը» և Հայ Եկեղեցու կարգն ու կանոնը: Սա փաստորեն դավանաբանական պայքար էր Հայ Առաքելական Եկեղեցու օրինականության և ինքնուրույնության պահպանման համար: Ինչպես իրավացիորեն մշում է Վազգեն Հակոբյանը. «Հայագիտության մեջ սխալ է բնորոշվել ու գնահատվել Օձնեցու կազմած ժողովածուն՝ Կանոնագիրքը: Վերջինս համարվել է կողիֆիկացիա: Եթե հետևելու լինենք Օձնեցու կազմած Կանոնագրքի վրա թափված աշխատանքի բնույթին, ապա անվարան կարող ենք ասել, որ մրա Կանոնագիրքը ոչ թե կողիֆիկացիա է, այլ ինկորպորացիա»⁴:

«Կանոնագիրքը» վերաբերում է եկեղեցական ծիսակատարություններին, ամուսնաընտանեկան հարաբերություններին, հոգևորականների պարտականություններին ու վարքին, կրոնական տոներին, եկեղեցու խորհուրդներին, աղանդավորների հետ հարաբերություններին: «Կանոնագիրքը» բաղկացած է երեսուներկու գլուխներից, որոնք ավելի շատ մման են հոդվածների⁵: Դրանք պարունակում են շուրջ 1500 նորմեր: Հարկ է մշել, որ թեև Օձնեցու կանոնները մեծմասամբ վերաբերում են կրոնա-եկեղեցական ծեսերին, սակայն որոշ կանոններ բնույթով իրավական են: Մասնավորապես «Ա» և «Բ» կանոններն ուղղված են հոգևորականների և աշխարհականների հարբեցողության դեմ՝ ապառնալով առաջիններին զրկել հոգևոր դասից, իսկ երկրորդներին՝ զատել Տիրոջ հոտից. «Եպիսկոպոսը կամ քահանան, կամ սարկավազը, կամ եկեղեցական ուխտից ով որ լինի, եթե մերկացվի հարբեցողության մեջ, թող չհամարձակվի պաշտամունք մատուցել, մինչև որ, օրեր ընդմիջում տալով, ապաշխարությամբ, պահքերով և աղոթքներով մաքրի իրեն և դրանից հետո միայն ստանձնի սուրբ ծառայությունը և հաղորդվի: Իսկ եթե համատեղվ մնա մույն որկրամոլության մեջ՝ թող կարգալույծ լինի: Եթե աշխարհականը մույն բանը անի, թող չհամարձակվի հաղորդվել առանց զղջման և ապաշխարանքի: Իսկ եթե շարունակի մույն զեխությունը՝ թող զատվի Տիրոջ հոտից»⁶:

Կանոնագրքի ութերորդ գլուխը ամրագրում է ժառանգորդության իրավունքով սեփական եկեղեցուն ծառայելը: Այս իրավական մորմը խոսում է հայ հոգևորականության տոհմական-դասային շերտի ստեղծման անհրաժեշտության մասին: Այն մախատեսում է հոգևոր դասի ժառանգորդություն՝ հորից որդուն⁷: Այս հոգևոր-իրավական մորմը քիչ բա-

³ Ինկորպորացումը օրենսդրության համակարգման մի եղանակ է, որով նորմավիվ ակերեր ժամանակագրական կամ այբբենական կարգով միավորվում են մեկ բնդհանուր ժողովածուի մեջ՝ առանց բովանդակության փոփոխության: Սրա շնորհիվ հնարավոր է նորմավիվ ակեր ձևակերպել ըստ նախնական րերսքի և սահմանել բնագրում արված հեղազա բոլոր լրացումները և փոփոխությունները:

⁴ Հակոբյան Վ., Կանոնագիրք հայոց, հ. Ա, Եր. 1964, էջ 329:

⁵ Հովհան Իմաստասեր Օձնեցու կանոնները, հղումը՝ ըստ Ռ. Ավագյանի, էջ 170:

⁶ Նույն րերում, էջ 171:

⁷ Նույն րերում, էջ 172:

ցառություններով պահպանվեց հայոց մեջ մաս հետագա դարաշրջաններում:

Տասնվեցերորդ գլուխը վերաբերում է կրկնակի ամուսնությանը. «Կրկնակի ամուսնացողներն առաջին անգամվա մեծ, միջնորդների և երաշխավորների միջոցով պետք է հավաստիացնեն իրենց փոխադարձ հոժարությունը և եկեղեցուց ու քահանաների օրհնությունից ընդունեն իրենց օրհնական ամուսնության կնիքը: Իսկ եթե ոմանք այդպես չանեն, այլ սրանից առաջ կրքից բորբոքվեն և պղծություն անեն միմյանց հետ՝ այսպիսիները թող միմյանցից զատվեն և նրանց վրա դրվի արյունապիղծների մեղադրանքը և պատժաչափը: Իսկ եթե հանձն չառնեն միմյանցից բաժանվել, ապա տասը տարի ապաշխարելով, ողորմածության և արտասվալից զղջման միջոցով թող արժանանան միանալու Աստծո հավատացյալ հոտին»:

Օձնեցին կարևորել է այն հանգամանքը, որ թույլատրելի չէ շաբաթ օրը կամ Զատիկի ճրագալույցին պսակադրություն անել, քանի որ առջևում Հարության սուրբ օրերն են, որոնց ընթացքում հարկավոր է աղոթել, հոգևոր արարողությունների կարգով մխիթարել հոգիները, և ոչ թե մարմնական ցանկություններից տուրք տալով՝ արհամարհել կամ անտեսել սուրբ օրերի խորհուրդը: Կանոնագրքի երրորդ գլուխը նախատեսում է, որ այս դեպքերում պսակադրությունը պետք է համարել անվավեր, իսկ պսակադիրներին պետք է պատժել, սակայն եթե վերջիններս ապաշխարեն, ապա եպիսկոպոսը իր կամեցողությամբ և բարեհոգ հայեցողությամբ կարող է մարդասիրական վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ: Կանոնագիրքը չի թույլատրել հարսանիք անել մահ մինչև սուրբ քառասնորդականի (Զատիկ, Մեծ պահք) և սուրբ Հիսնյակի (Պենտեկոստե) ավարտը, քանի որ այդ բոլոր օրերը Տերունական են և նրանցում տոնվում է աստվածային խորհուրդը⁸:

Կանոնագիրքը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում պաշտամունքին առնչվող հարցերին: Կանոնագրքի 18-րդ գլուխը վերաբերվում է «Կիրակնօրյա գիշերային պաշտամունքին», 21-րդը՝ «Ժամերգության սկզբի սաղմոսներին և քարոզներին», 22-րդը՝ «Առավոտյան պաշտամունքին», 23-րդը՝ «Երեկոյան պաշտամունքին», 24-րդը՝ «Կիրակի օրվա առավոտյան պաշտամունքին», 25-րդը՝ «Քառամասնյա քարոզներին», 26-րդը՝ «Հայտնության օրվա ջրի օրհնությանը», 27-րդը՝ «Խաչի օրհնությանը»: Գիշերային պաշտամունքի համար կանոնագիրքը սահմանում է, որ պարտադիր կանոններից հետո պետք է ավելացնել այս չորս քարոզները՝ «Վասն ի վերուստ խաղաղութեան», «Վասն գիշերույց և ցերեկույց», «Վասն բարեհաճութեան արժանանալու», ինչպես նաև ուրիշ վարքով ընթացալու մասին: Այս քարոզները ստեղծել էր Ս. Սահակը հինգերորդ դարում, սակայն միայն Կանոնագրքի ընդունումից հետո են այս կանոնները դառնում պաշտամունքի պարտադիր մաս: Այս աղոթքներից յուրաքանչյուրին կցվում էր իր հանգիստը: «Տեր Աստուած մշտնջենալոր»-ին՝ «Բարութեան շնորհատու» հանգիստը, «Ի գիշերի և ի տուրնջեան»-ին՝ «Հովիւ քաջ» հանգիստը, «Անկեալ եմք առաջի Բո»-ին՝ «Բում ամենազոր տէրութեանդ» հանգիստը: Այս ամենը պետք էր ավարտել «Օրհնեալ ես, Տէր» աղոթքով⁹:

Պաշտամունքային կարևոր հարցերից էր նաև խաչի պաշտամունքը, որին Ս. Հովհան Օձնեցին անդրադառնում է Կանոնագրքի 27 և 28-րդ գլուխներում: Դատարկ, աստվածային զորությունից թափուր և Առաքելական Եկեղեցուց մերժված են համարվում մարդ-

⁸ Նույն տեղում, էջ 171:

⁹ Նույն տեղում, էջ 176:

կանց կողմից պատրաստված այն խաչերը, որոնք քահանայի կողմից օրհնված և օծված չեն սուրբ մյուռոնով: Միջդեռ պետք է պաշտել, երկրպագել և համբուրել այն խաչերը, որոնք օծված են, քանի որ նրանց մեջ բնակվում է Սուրբ Հոգին և նրանց միջոցով են մարդկանց բաշխվում պահպանիչ միջոցներ և բժշկության շնորհներ: Հանուն դրանց նույնիսկ կարելի է մահ ընդունել հեթանոսների ձեռքից և դասվել մարտիրոսների շարքը¹⁰:

Կանոնագիրքը գրվելու ժամանակ տարածվել էին բազմաբնույթ աղանդները: Բացի այդ Հայոց Եկեղեցին դավանաբանական խնդիրներ ուներ քաղկեդոնական և Հակոբիկյան ասորի Եկեղեցիների հետ: Այս շրջանում են ձևավորվել Սևերոս Անտիոքացու և Հուլիանոս Հալիկաոնացու հերետիկոսական ուսմունքները¹¹: Այս ամենը նկատի ունենալով՝ Օձնեցին կանոնագրքի 29 և 32-րդ գլուխներում սահմանել է աղանդավորների հանդեպ վերաբերմունքի կանոններ: 29-րդ գլուխը վերաբերում է հերձվածողների հետ հաղորդակցություն չունենալուն. «Պետք չէ բոլորովին անտարբեր լինել և հաղորդակցություն ունենալ հերձվածողների հետ, այլ պետք է խորշել նրանցից և նրանց հետ մասնակից չլինել հոգևոր կամ մարմնավոր սեղանի, որպեսզի պատկառանք զգան և փափագեն միաբանել ուղղափառությունն ավանդաբար պահպանողների հետ»:

32-րդ գլուխը վերաբերում է մծղնեական զազրագործ աղանդին, որի հետնորդներին Օձնեցին կոչում է պավիկյաններ. «Ոչ ոք չպետք է օթևանի պավիկյաններ կոչված չաբաղանդ մծղնեականների բնակության տեղերում և կամ հարի և խոսակցիցներ դառնա և գնալ-գալ ունենա: Այլ բոլորովին պետք է հեռու մնալ նրանցից, զարշել և առել նրանց, քանի որ սատանայի զավակներ են նրանք և հավիտենական հրի մեջ այրելի նյութեր և զրկված են Աստծո սիրուց ու ողորմածությունից: Եթե մեկը մոտիկություն անի և սեր ու բարեկամություն հաստատի նրանց հետ՝ պետք է այդպիսին խոշտանգել և ծանր պատիժ դնել վրան, մինչև հավատով զգաստանալը և առողջանալը: Իսկ եթե կրկին նկատեն նրան նույն այդ գործին՝ այդպիսին հրամայում ենք կտրել և դեն ձգել եկեղեցու անդամներից որպես խոց, որպեսզի դառնության արմատը ծիլ տալով չնեղի և նրանով շատերը չպղծվեն»:

Այս կանոնը պավիկյաններին օտարում էր հասարակությունից, ինչն արդարացված էր, քանզի նրանց անջատողական գործունեությունը հղի էր վտանգավոր հետևանքներով պետականությունից զրկված Հայաստանում, ուր միակ միաբանող ուժը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին էր: Վերոհիշյալ կանոնը պահանջում էր հեռու մնալ պավիկյաններից, քանի որ նրանք համարվում էին դևի զավակներ և չարի որոմը տարածողներ:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ Հովհանն Օձնեցու սահմանած դավանական կարգի ազդեցությունը խիստ մեծ է Հայոց Եկեղեցու դավանանքի և ծիսակարգի անաղարտության պահպանման և հետագա զարգացման գործում: Սուրբ Հովհանն Օձնեցի հայրապետի իրավամտածողությունը և իրավագիտական ժառանգությունը դարձան այն անսասան պլաները, որոնց վրա կառուցվեցին բարձր միջնադարի հայ իրավական մեծագույն հուշարձանները՝ Մխիթար Գոշի և Սմբատ Գունդատարի «Դատաստանագրքերը»:

¹⁰ Նույն տեղում, էջ 177:

¹¹ Պեղորոսյան Եզնիկ քահանա, Հայ Եկեղեցու պատմություն, էջ 70:

ՊԱՏՄԱՔԱՆԱՄԻՐԱԿԱՆ

Ն. Ս. ՍՎԱԶՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԱՐՅԱԽԸ ՏԻՆ ԵՎ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՆԱՅԿԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Ուրարտական արձանագրությունները, հունահռոմեական և հայ հիմ ու վաղ միջնադարյան պատմիչներն ու աշխարհագետներն իրենց տարալեզու և տարատեսակ, ուղղակի ու անուղղակի հաղորդումներով միանգամայն պարզորոշ ու առանց երկմտանքի ցույց են տալիս, որ Արցախը Մեծ Հայքի մարզերից մեկն էր, մոտ 10-րդ մահադը՝ իր բնիկ հայ բնակչությամբ, որ խոսել է հայերենի արցախյան բարբառով և գործում մասնակցություն ունեցել մայր երկրի ներքին ու արտաքին հարաբերություններում¹:

Արցախի հայկական պատկանելիությունը առավել ցայտուն ձևով ներկայացված է հայ հեղինակների երկերում: Այդ իմաստով ուշագրավ են Կուրի՝ որպես Մեծ Հայքի ու բուն Աղվանքի միջև սահմանային գետ լինելու մասին Փավստոս Բուզանդի ու Ամանիա Օիրակացու մեկից ավելի հաղորդումները: Ավելին, ցույց տալով, որ Կուրը սահման էր Հայոց և Աղվանից միջև, Բուզանդը մատնանշում է, որ այն այդպիսին էր վաղ ժամանակներից ի վեր: Խոսելով 4-րդ դարի իրադարձությունների մասին, երբ Աղվանքը, օգտվելով Հայաստանի ժամանակավոր թուլությունից, հարձակվել էր մոտ վրա և նվաճել սահմանամերձ մի քանի շրջաններ, պատմիչը գրում է, որ 371 թ. Ջիրալի ճակատամարտից հետո հայերը սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի հրամանատարությամբ կռվի են ելնում Աղվանքի դեմ և ետ խլելով գրավված տարածքները՝ Կուր գետը, ինչպես նախկինում էր, կրկին սահման են դարձնում իրենց երկրի ու Աղվանքի միջև. «Եւ զԿուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին»²:

Բուզանդից անկախ Կուրը Աղվանքի հարավային, իսկ Հայաստանի էլ հյուսիսային սահման է ճանաչում Օիրակացին: «Աշխարհ Աղբանիս, - գրում է նա, - այսինքն Աղուանք, լեւից Վրաց, լերի Սարմատիոյ առ Կաւկասով մինչև ցՀայոց սահմանաւ, առ Կուր գետով»³ և շարունակելով միտքը՝ շեշտում, որ բուն Աղվանքն «ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերին»⁴: Ուրեմն, Կուրը, ինչպես երևում է բերված վկայություններից, սահման է եղել Հայոց և Աղվանից միջև ու մոտանալով միմյանցից՝ ձախափնյակը կամ հյուսիսային շրջանները թողնելով Աղվանքին, իսկ աջափնյակը, այն է հարավային

¹ Այս հարցն էլ առաջին անգամ չէ, որ արծարծվում է: Այս կապակցությամբ եւս գրվել և հրապարակվել են գրքեր, որոնցից են **Բ. Ուրարթյան**, Դավազներ հայոց արևելյան կողմանց պարմության, նույնի, Արցախի պարմությունը (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, 1994, **Ա. Ա. Ակոբյան**, Алуанк-Алуанк, **Г. С. Свазян**, Арцах в исторических первоисточниках, Լրաբեր հաս. գիտ. 1989, թիվ 11, էջ 3-14, **Վ. Բալայան**, Արցախի պարմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002:

² **Փավստոս Բուզանդացու** Պարմութիւն Հայոց, Երևան, 1987, էջ 322 (ընդգծ. Ն. Ս.):

³ Աշխարհացոյց Մովսէսի Խորենացու յաւելումովք նախնեաց, Վենետիկ, 1881, էջ 28-29:

⁴ Նույն տեղում, էջ 29:

շրջանները՝ Մեծ Հայքին: Արցախը, որ աշխարհագրորեն ընկած է Կուրի աջափնյակում, պարզ է, գտնվելու էր Մեծ Հայքի կազմում, ուստի և այլ պատկանելիություն, քան հայկական էր, չէր կարող ունենալ:

Կուրի Հայոց և Աղվանից միջև սահմանային գետ լինելու մասին բերված տեղեկությունները, որոնք հաստատվում և ուժ են ստանում հումաֆոունտական Ն. Ք. 1-ին - Ք. Հ. 5-րդ դարի պատմիչների ու աշխարհագետների (Ստրաբոնի, Պլինիոս Ավագի, Պտղոմեոսի, Ապիանոսի, Դիոն Կասիոսի, Ստ. Բյուզանդացու և այլոց) մամաբնույթ հաղորդումներով, բավական էին, որպեսզի մեկընդմիջտ վերջ դրվեր Արցախի պատմության մենագիտական փորձերին, բայց քանի որ դրանք չեն դադարում, ուստի շարունակենք՝ բերելով Հայոց երկրի ներքին և արտաքին հարաբերություններում Արցախի ունեցած մասնակցության մասին օրինակներ, որոնք չէին լինի, եթե այն հայկական չլիներ: Գրելով, որ երբ հարկ եղավ Գրիգոր Լուսավորչին հայոց կաթողիկոս օծելու համար Կեսարիա ուղարկել և Տրդատ Մեծը նրան ուղեկցողներ նշանակեց, վերջիններիս թվում ընդգրկվելով նաև Արցախի կամ, ինչպես այդ ժամանակ էին ասում, Ծավդեացվոց իշխանին, հայոց դարձի պատմիչը հատուկ շեշտում է, որ այդ ուղեկցողները «իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ»⁵:

Մատենագրական մամ վկայությունը ամերկայորեն ցույց է տալիս, որ Արցախը ոչ միայն ուներ հայկական պատկանելիություն, այլև Հայոց աշխարհի գլխավոր, ընտիր ու առաջատար իշխանություններից էր, որն իր ծանրակշիռ դերն ուներ մայր երկրի արտաքին հարաբերություններում: Ի թիվս այլ իշխանությունների, Ծավդեացվոց կամ Արցախի իշխանությանն էր վստահված իր հազարանոց զորագնդով պահպանելու Հայոց աշխարհի հյուսիսային դուռը, որ Կովկասյան լեռնանցքներից ելնող վտանգի՝ հյուսիսային քոչվոր ցեղերի անընդհատ ասպատակությունների հետևանքով ուժերի մշտական լարում ու աչալրջություն էր պահանջում: Նրա այս դերը հստակ նշված է «հայոց ազատաց և տանուտեբաց» ռազմական ուժը ցույց տվող փաստաթղթում՝ «Զորանամակում»⁶ և մատնանշում է, որ Արցախն հայոց այն նախարարություններից էր կամ կուսակալություններից, որ իր մարտական ուժերով պահպանում էր սեփական հայրենիքի անվտանգությունը: Հայոց երկրում Արցախի ունեցած բարձր դիրքն արտացոլված է նաև արքունիքում հայ նախարարների հարգն ու պատիվը ցույց տվող փաստաթղթում՝ «Գահնամակում», որտեղ այն «Սինեաց երկրորդն» անվամբ զբաղեցնում է 28-րդ տեղը 70 նախարարական տների շարքում⁷:

Բերված օրինակները միանգամայն անառարկելիորեն հաստատում են վերը հայտնադրված մեր այն միտքը, որ Արցախը հայկական նահանգ էր և ակտիվ մասնակցություն ուներ պետական կարևորություն ներկայացնող գործերում:

Բազմաթիվ են այս պատմական իրողությունն ապացուցող անուղղակի տեղեկությունները: Դրանցից են Հայոց մյուս եզրային նահանգին՝ Ուտիքին վերաբերող հաղորդումները: Վերջիններս նրան ներկայացնում են որպես Կուրի աջափնյակում տարածված բուն հայկական նահանգ, որ Երվանդունիների գլխավորած հայոց միասնական թագավոր-

⁵ Ագաթանգեղոսյ Պատմություն Հայոց, Երևան, 1983, էջ 446 (ընդգծ. - Մ. Ս.):

⁶ **Н. Адоиц**, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 251.

⁷ Նույն տեղում, էջ 250:

րության (Ն. Ք. 6-րդ - Ն. Ք. 3-րդ դդ.) տարածքի մաս է կազմել և այդ վարչաքաղաքական կարգավիճակով էլ անցել դարից դար: Եվ որովհետև Ուտիքը, ինչպես այն ներկայացված է աղբյուրներում⁸, հայկական մարզ էր, ապա անտարակուսելի է, որ Կուրի աջափնյա-կում նրանից էլ հարավ ընկած Արցախը ևս Երվանդունիների ժամանակներից սկսած գտնվելու էր նշված թագավորական հարստության իշխանության ներքո և վարչականորեն կազմվելու էր նրանց երկրի մարզերից մեկը:

Արցախը Արտաշեսյանների ժամանակ էլ հայկական էր, քանի որ Արտաշեսի հաղթանակով Երվանդյան Հայաստանի ողջ տարածքը, մասնապես և Արցախը, հաղթողի իրավունքով անցնում է այդ նշանավոր հարստության տիրապետության տակ: Ի դեպ, դա ապացուցում են նաև մատենագիտական տվյալները և հաստատում հնագիտական պեղումները: Սեբեոսը, ապա և Մովսես Կաղանկատվացին մեզ հետաքրքրող կողմերում հիշատակում են «Տիգրանակերտ», «Միս Տիգրանակերտ», «Տկոակերտ» անվամբ ավաններ⁹, իսկ հնագիտական պեղումները մույն կողմերում բացել են հին բնակավայրերի ավերակներ, որոնք տեղացիների կողմից կոչվում են «Թգրանակերտ» կամ «Թառնակերտ» անուններով¹⁰ և լինելով վերոհիշյալ անվանումների տեղական, բարբառային ձևերն ու նրանց հետ մեկտեղ հիշեցնելով Տիգրան Մեծի անունը՝ հանդիսանում են այդ քաղաք-բնակատեղերը նրա կողմից կառուցված լինելու մասին պերճախոս վկաներ: Իսկ եթե Արտաշեսյան հարստության այդ նշանավոր ներկայացուցիչն իր անունով քաղաքներ է կառուցել Ուտիք-Արցախյան աշխարհում, ապա փաստ է, որ այդ աշխարհը գտնվում էր նրա պետության սահմաններում և կազմում էր նրա բաղկացուցիչ մասը:

Արցախի հայկական պատկանելիությունը արտացոլված է նաև նրա անվանումներից մեկի մեջ՝ «Փոքր Սինիք»¹¹: Անվանումը, որ գործածում է Մովսես Խորենացին¹², ավելի քան բավարար հիմք է ասվածը հաստատելու համար, այնքանով, որքանով նշանակում է, որ Արցախը հայոց մյուս նահանգի՝ Սյունիքի հետ երբևիցե կազմել է տարածաշրջանային մի ամբողջականություն, հետագայում զատվել նրանից և վերածվելով ինքնուրույն միավորի՝ շարունակել կրել ամբողջի անունը «Փոքր» ածականով: Այս պատմական իրողությունը պահպանվել է նաև նրա առանձին գավառների անվանումներում, ինչպես «Սիսական ի Կոտակ», որ «Փոքր Սինիք»-ի պահլավերեն կապակցությունն է կամ «Միս Հաբանդ», որը լինելով Արցախի գավառներից՝ Սյունիքի համանուն գավառից տարբերելու համար ածանցվել է «Միս» ցուցիչով և այլն: Այս Հաբանդ գավառի Ամարաս գյուղում է Գրիգոր Լուսավորիչը հիմնում ողջ Հայոց Արևելից կողմանց համար առաջին եկեղեցին, որտեղ էլ ավելի ուշ ամփոփվում է նրա թոռան՝ մաքրութների կողմից հռչակված Մանուկ Գրիգորիսի դին¹³: Եկեղեցու հիմնադրումը Արցախում, ապա և Մանուկ Գրիգորիսի մա-

⁸ Մանրամասները տես **Դ. Շահյան**, Арцах в исторических первоисточниках, էջ 3-14:

⁹ Պատմություն Սեբեոսի, Երևան, 1979, էջ 125, **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 300:

¹⁰ **Ս. Գ. Քարխուդարյան**, Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, Երևան, 1982, էջ 135:

¹¹ Իր երկարապր զոյության ընթացքում Արցախը հանդես է եկել զանազան աշխարհագրական անվանումներով՝ Ուրպիսես, Օրքիսպենես, Արցախ (Արձախ փարընթերցումով), Փոքր Սինիք, Սյունեաց երկրորդ, Ծավղեացվոց իշխանություն, Խաչեն, Ղարաբաղ և այլն:

¹² **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, Երևան, 1991, էջ 260:

¹³ Բուզանդ, էջ 26:

սունքներն ի պահ տալն այնտեղ Արցախը վերածում են ողջ Հայաստանի, մասնավորապես նրա արևելից կողմանց կրոնական կենտրոնատեղերից մեկի: Հարկ չկա ասելու, որ այս հանգամանքը առավել է բարձրացնում նրա քաղաքական կշիռը և ամրապնդում դիրքը հայոց իշխանական տների համակարգում:

Արցախի հայկական պատկանելիությունն ունենալու, միաժամանակ և բուն Աղվանքի հետ ոչ մի առնչություն չունենալու մասին մի փայլուն վկայություն ունի Եղիշեն: Ըստ Վարդանանց պատերազմի պատմիչի՝ Վասակ Սյունեցին հայոց ազատագրական պատերազմի (450-451 թթ.) նախօրյակին պատակտչողական գործունեություն էր ծավալել Հայաստանում և Անդրկովկասյան երկրներում, մասնավորապես «ի Տմորիսն և ի Կորդիսն, լի Արցախ և լի Աղուանսն, ի Վիրս և լի շախարհն Խաղտեաց»¹⁴: Այս վկայությամբ Եղիշեն ցույց տալով, որ Արցախը 5-րդ դարի կեսերին էլ Մեծ Հայքի մարզերից էր, և Աղվանքից զատ ճիշատակելով մատնանշում է, որ նրանք միմյանց հետ ոչ մի կապ չունեցող առանձին-առանձին երկրներ էին:

Արցախի քաղաքական այս կացությունը պահպանվում է մինչև 5-րդ դարի երկրորդ կեսը: Ելնելով Անդրկովկասում ամուր հաստատվելու իր քաղաքականությունից՝ Սասանյան Իրանը 461 թ. բուն Աղվանքում վերացնում է թագավորական կարգը և հաստատում մարզպանական կառավարում: Կառավարման նոր համակարգին համապատասխան, մեկ միասնական վարչական, հարկային միավոր ստեղծելու նպատակով Սասանյանները Մեծ Հայքից անջատում են նրա եզերական նահանգներ Արցախն ու Ուտիքը և ընդգրկում նորաստեղծ մարզպանության կազմում¹⁵: Արցախը Ուտիքի հետ միասին դառնում է Աղվանից մարզպանության քաղաքիչներից մեկը և այսուհետ պատմության մեջ սկսում հանդես գալ այդ կարգավիճակով: Նրա (և Ուտիքի) վրա ևս տարածվում է ողջ մարզպանության համար ընդհանուր «Աղվանք» աշխարհագրական անվանումը: Բայց, չնայած դրան, Արցախը (և Ուտիքը) մարզպանության կազմում էլ ամբողջովին ինքնուրույն էր և բացի նորամույց անվանումը կրելուց ուրիշ ոչ մի օրգանական կապ չունեին բուն Աղվանքի հետ:

Արցախն իր նախամարզպանական շրջանի պատմաաշխարհագրական դիրքով, վարչական կառուցվածքով և քաղաքական կարգավիճակի հետագա փոփոխություններով ցայտուն ձևով ներկայացված է «Աշխարհացոյց»-ում: Վերջինիս հեղինակը բառացիորեն գրում է, որ Արցախը Մեծ Հայքի նահանգներից է և ունի տասներկու գավառ: Ապա հաշվառված հանվանե թվարկելով դրանք՝ ավելացնում, որ վերջիններս անցել են Աղվանքին՝ օտարվելով Մեծ Հայքից: Ահա այդ արժեքավոր հաղորդումը «Ժ (աշխարհ – Հ. Ս.) Արցախ, լերի կալով Սիւնեաց, ունի գաւառս երկոտասան զՄիւսն Հաբանդ, զՎակունիս, զԲերձոր, զՄեծիրանս, զՄեծկուանս, զՀարճլանս, զՄուխանս, զՊիանս, զՊաճկանս, զՍիսականիս, զԿոտակ¹⁶, զՔուստիփառէնս¹⁷, զԿոխտ, յորում լինի քարախունկ. զայս ա-

¹⁴ Եղիշէ, Վասն Վարդանայ և Նայոց պարերազմին, Երևան, 1989, էջ 190 (ընդգծ. Հ. Ս.):

¹⁵ Մանրամասները տես Հ. Ս. Սվազյան, Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը, ՊԲՏ, 1979, թիվ 4, էջ 210-218:

¹⁶ Կարդա՛ որպես մեկ անուն «Միսական ի Կոտակ», որն քսր Ս. Տ. Երեմյանի՝ Միա Նաբանդ գավառի այլ անվանումն է և հանդես է գալիս նաև «Միսական ի Ոսրան» ձևով (տես Հ. Ս. Երեմյան, Նայասարան քսր «Աշխարհացոյցի»-ի, Երևան, 1963, էջ 70, 109:

¹⁷ Այս անվան փակ նույն հեղինակի կարծիքով պետք է տեսնել երկու՝ Բուսրի և Փառնես գավառները (նույն

մենայն Աղուանք ունին հանելալ ի Հայոց»¹⁸: Սրանով 7-րդ դարի աշխարհագետը ոչ միայն ընդգծում է Արցախի հայկական պատկանելիությունը, այլև փաստում, որ Աղվանքն իր կազմում, միևնույնն է, ընդգրկել է հայկական մահանգ:

«Աշխարհացոյց»-ի տեղեկությունները հնարավորություն են ընձեռում որոշելու մասն Արցախի գավառների համարժեք ժամանակակից շրջանները: Ի դեպ, դրանց տեղադրումներից պարզվում է, որ արցախյան գավառների մի մասը համընկնում է այժմ արդեն ազատագրված շրջաններին:

Այսպես.

Արցախի գավառները	Այժմյան համապատասխան շրջանները ¹⁹
Միւս Հաքամդ (Սիսական ի Կոտակ, Սիսականի ի Ոստան, Ամարաս) Վալկունիք (Ծար)	ԼՂՀ Հադրութի շրջանը և Մարտունու Ֆիզուլիի ու Զեքրայիի շրջանների մի մասը Քարվաճառի (Քելրաջարի) շրջանի հիմնական մասը
Բերձոր (Բերդաձոր)	ԼՂՀ Մարտակերտի շրջանի որոշ հատվածներ, մասամբ մասն Ծափումյանը և Քարվաճառը
Մեծիրանք (Մեծառանք, Խաչեն)	Ծափումյանից մի հատված և ԼՂՀ Մարտակերտի շրջանը
Մեծկունք (Մեծկուանք, Մեծ Կողմանք)	ԼՂՀ Մարտակերտի և Ծափումյանի շրջանների՝ Մեծառանքից դուրս մնացած մասերը
Հարճլանք (Հարջլանք, Հարժլանք)	ԼՂՀ Մարտունու շրջանի մի հատվածը և Ֆիզուլիի որոշ տարածքներ
Մուխանք (Մխանք, Մխանց տոհմ) Պիանք (Ասպիանդք)	ԼՂՀ Մարտունու շրջանի հիմնական մասը ԼՂՀ Ասկերանի ու Ծուշիի շրջանները ոչ լրիվ և Աղդամի շրջանը
Պաճկանք (Պազկանք, Պարզականք, Պարզկանք, Պանձկանք) Կողթ (Կոխտ, Կոխդք)	ԼՂՀ Ասկերանի և Ծուշիի շրջանների Պիանքից դուրս մնացած մասերը Ծափումյանի շրջանի մի մասը և Դաշքեսանի շրջանը
Փառնես (Քուստի Փառնես, Միջնարցախ)	Ծամքորի շրջանի հիմնական մասը, որոշ մասեր Դազախի ու Թովուզի շրջաններից և ՀՀ

վերում, էջ 109): Մակայն չենք գրնում, որ մեծ գիքրնականը ճիշդ է: Այսպեղ «Քուսպին», ինչպես «Տուս -Քուսպակ», «Քուսպ ի Խորասան», «Քուսպ ի Կապկոն» կապակցություններում, օգտագործված է «կողմ», «աշխարհ», «նահանգ» կամ «գավառ» նշանակությամբ, ուստի «Քուսպի Փառնեսը» մեկ գավառի անվանում է՝ «գավառ Փառնես» իմաստով: Նման. **Ղ. Ինճիճյան**, Սյորագրությունն հին Նախապարսեայց, Վենեդիկ, 1822, էջ 309:

¹⁸ Աշխարհացոյց, էջ 33 (ընդգծ. Մ. Ս.):

¹⁹ Անշուշտ պետք է նկատի ունենալ, որ նշված համապատասխանությունները չեն կարող լիակատար ճշգրտություն ունենալ, քանի որ փակական ժամանակի ընթացքում նորանոր վարչական բաժանումների հեղեղանքով նրանց սահմանները անընդհատ փոփոխվել են և նոր ձևեր ստացել: Դրանց արդյունքն է, որ ժամանակակից շրջաններում միաժամանակ դիպվում են մի քանի գավառների առանձին մասեր:

²⁰ Սրանց հավելենք և ազատագրված Լաչինը, որ Սյունյաց աշխարհի Աղահեճ գավառն է և այսպեղ գրնվող Քաշաթաղ ու Խոժոռաբերդ ամրոցների անուններով հայրենի է դարձել նաև այդ անվանումներով:

Տավուշի մարզից²⁰:

Այսպիսով, հայկական Արցախ մահաճգի զավառների մասն համապատասխանությունները ժամանակակից շրջանների հետ, թույլ են տալիս միանգամայն հիմնովին հայտարարելու, որ հայերը իրենց պարտադրված պատերազմում ազատագրել են սեփական պատմական տարածքները և, ավելացնեք, դա դեռ ամբողջը չէ:

*

* *

Արցախի՝ բուն հայկական մահաճգ լինելու մասին մատենագիտական տվյալները, անշուշտ, նշվածներով չեն սահմանափակվում: Դրանք առատորեն սփռված են հին և վաղ միջնադարյան հայ հեղինակների աշխատություններում, որոնց, սակայն, մենք չենք անդրադառնա՝ համարելով, որ ներկայացրածներն էլ բավական են համոզվելու համար, որ Արցախը Հայաստանի հնագույն մարզերից մեկն է և ունի միայն ու միայն հայկական պատկանելիություն: Այն իր հայկականությունը չի կորցնում Աղվանից մարզպանության կազմում լինելով էլ և կարճ ժամանակ անց՝ մարզպանության տրոհման ժամանակ, Ուտիքի հետ միասին ձևավորում է մի ինքնուրույն վարչաքաղաքական միավոր և սկսում կառավարվել սեփական իշխանների՝ Առանջահիկների կողմից²¹:

*

* *

Հայ մատենագրության մեջ բավականաչափ հստակ տեղեկություններ կան մասն Արցախի էթնիկական կազմի մասին: Դրանց ամենամակերեսային քննությունն իսկ բերում է մի այնպիսի անվերապահ եզրակացության, որ Հայոց այս մահաճգը ևս զոյության առաջին իսկ դարերից բնակեցված է եղել հիմնականում հայերով: Հայ տարրը այստեղ մշտապես մեծամասնություն է կազմել և դրանով դյուրացրել հայ ժողովրդի էթնիկական ընդհանրության հասնելու գործընթացը, որն արդեն Ն. Ք. 2-րդ դարում, ինչպես վկայում է Ստրաբոնը²², կատարված փաստ էր: Որ Արցախը դեռևս խոր հնադարից բնակեցված է եղել հայերով, ցույց է տալիս Հայոց Վաղարշակ թագավորի պետական շինարարական գործունեության մասին Մովսես Խորենացու հաղորդումը, որի համաձայն թագավորը կուսակալություններ էր հիմնում ըստ «հայերեն խոսակցության վերջին սահմանների» («զեզերբ հայկական խօսիցս») և առաջնորդվելով այդ սկզբունքով Հայոց Արևելից կողմերում, այսինքն Ուտիք-Արցախում հիմնադրում մոր մախարարություն հայկազուն կուսակալի գլխավորությամբ²³: Նշանակում է Արցախը, որ Հայոց Արևելից կողմերում էր,

²¹ Հ. Ս. Սվազյան, Աղվանքը և Միհրանյան փոհմը, Լրաբեր հաս. գիր., Երևան, 1980, թիվ 9, էջ 91-94:

²² Страбон, География, пер. статья и комментарии, Г. А. Стратановского, 1964, XI, XIV, 5. Հայ ժողովրդի պարմության քրեպոմարիա, Երևան, 1981, էջ 196:

²³ Խորենացի, էջ 112-113:

ուրեմն և ընկած էր «հայերեն խոսակցության վերջին սահմանների» շրջանակում, դեռևս Ն. Ք. 2-րդ դարում բնակեցված էր հայերենախոս բնիկներով կամ, այլ խոսքով, հայերով: Միջնադարյան հայ քերականները (Ստ. Սյունեցի, Եսայի Նչեցի և այլք) մրանց խոսակցական լեզուն որակել են որպես հայերենի «արցախյան» բարբառ²⁴ և խորհուրդ տվել մայրենի լեզվի մեջ հմտանալու համար ի շարս հայոց այլ բարբառների, լավ ուսումնասիրել մաս «արցախյանը»²⁵:

Ելնելով երկրին տրվող «Առան» անվանումից՝ հայոց լեզվի այդ բարբառը արաբները կոչել են «առաներեն»²⁶:

Արցախը (և Ուտիքը) վաղուց ի վեր հայերով բնակեցված լինելու մասին լավագույն ապացույցներից են այս տեղերում դարոցների հիմնադրմանը և գրի ու գրականության տարածմանն ուղղված Մեսրոպ Մաշտոցի գործունեության նկարագրությունները պատմիչներ Կորյունի, Խորենացու և Կաղանկատվացու կողմից²⁷, որոնցից երևում է, որ ուսուցչապետը գործում էր հայկական միջավայրում, և մրա ջանքերը արդյունք տվեցին հայ բնակչության առկայության շնորհիվ²⁸:

Արցախում, անշուշտ, ապրում էին մասնալ ազգություններ, որոնք, սակայն, փոքրամասնություն էին կազմում և որոշիչ դեր չէին կարող ունենալ հասարակական կյանքում:

Լինելով հայոց կազմում՝ Արցախի բնակչությունը մրա հետ միաժամանակ էլ 301 թ. ընդունում է քրիստոնեություն: Ի հեճուկս ադրբեջանցի հեղինակների²⁹ դա են ցույց տալիս Տրդատ Գ հայոց թագավորի և Գրիգոր Լուսավորչի գործունեությունը ողջ Հայաստանում և այլ իրադարձություններ՝ կապված Արցախի հետ³⁰:

Այսպիսով, հայ հին և վաղ միջնադարյան պատմիչների ու աշխարհագետների հաղորդումները անվերապահորեն ցույց են տալիս, որ Արցախը հայոց հիմնավոր մահանգներից էր, ուներ հայ բնակչություն, որ 301 թ. համայն հայության հետ ընդունեց քրիստոնեություն, իր ներդրումն ուներ Հայոց աշխարհի քաղաքական կյանքում և հանդիսանում էր մրա հոգևոր ու մշակութային կարևոր օջախներից մեկը: Հետևաբար, ադրբեջանցի ուսումնասիրողների կողմից Արցախը Աղվանից մարզ հայտարարելու և մրան իր հայ բնակչությունից զրկելու ջանքերը ապարդյուն են, հանդիսանում են կեղծարարության

²⁴ Այժմյան Ղարաբաղի բարբառը: Մանրամասն տե՛ս **Ք. Ուրութբյան**, Դավագներ ..., էջ 54-107:

²⁵ **Н. Адовц**, Дионисий Фракийский и Армянские толкователи, Пг. 1915, էջ 187, Եսայի Նչեցի, Վերածնունդի բերականության, աշխարասիրությանը Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1966, էջ 65:

²⁶ **Н. А. Караулов**, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 29, Тифлис, 1901, с. 29, вып. 38, Тифлис, 1908, с. 12).

²⁷ **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Երևան, 2005, էջ 74, **Խորենացի**, էջ 328, **Կաղանկատվացի**, էջ 95, 117-118:

²⁸ Մանրամասն տե՛ս **Ա. Շ. Մնացականյան**, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ, Երևան, 1966:

²⁹ Ֆ. Մամեդովայի կարծիքով Արցախը քրիստոնեություն է ընդունել Աղվանքի հետ 313 թ. Աղվանից առաջին քրիստոնյա թագավոր Ուռնայրի ժամանակ (տե՛ս **Ф. Мамедова**, Политическая история ... , էջ 186 և հաջ.): Սակայն, խնդրի առնչությամբ կարարված քննությունը ցույց է տվել, որ Ուռնայրը Աղվանքում թագավորել է 4-րդ դարի 60-70-ական թթ. և քրիստոնեություն էլ այսպեղ պեղական կրոն է հռչակվել դարի 70-ական թթ. կեսերին (տե՛ս **Վ. Ս. Սվազյան**, Ավարաբիքական հարաբերություններն Աղվանքում և քրիստոնեության հռչակումը որպես պեղական պաշտոնական կրոն, ՊԲՇ, Երևան, 2003, թիվ 3), երբ Արցախը վաղուց արդեն քրիստոնյա էր:

³⁰ Մանրամասն տե՛ս **Г. С. Свзян**, Арцах в исторических первоисточниках, էջ 13:

50 Ա

Հ. Ս. ՍՎԱԶՅԱՆ

2009

շղթայի այն օղակներից, որոնցով ընդհանրապես պարուրել են նրանք Արցախի ողջ պատմությունը և ոչ մի կապ չունեն այն զիտության հետ, որի անունից հանդես են գալիս:

*ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**Պատմական գիտությունների դոկտոր*

ԱՐՈՒՃԻ ԵՎ ԹԱԼԻՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ (7-13-րդ դդ.)

Արագածոտնի նշանավոր և պատմական հարուստ անցյալ ունեցող բնակավայրերից են Արուճը և Թալիճը: Նրանց պատմական զուգահեռները սկսվում են 7-րդ դարից, երբ հաջորդաբար դարձան Հայոց իշխան տիտղոսը կրող և Հայաստանի փաստական կառավարումն իրականացնող իշխանների նստավայր: Իսկ հետագայում՝ Բագրատունյաց շրջանում, աղբյուրներում «գյուղաքաղաք» անվանվող այս երկու բնակավայրերն էլ անմիջականորեն պատկանել են արքունիքին: Գտնվելով Դվին-Անի քարավանային մայրուղու վրա՝ Արուճն ու Թալիճը դարձել են տարանցիկ առևտրի կենտրոն, բնակավայրերի մոտ կառուցվել են քարավանատներ: Այս շրջանում ծաղկում ապրող Արուճի և Թալիճի բնակչության մեջ եղել են նաև ազատներ, որոնք համատեղ հիշատակվում են 1033 թվականին կազմված մի փաստաթղթում: Բնակավայրերը վարչատարածքային առումով Անիի հետ են կապված եղել նաև Օտդդադյան ամիրաների և Զաքարյանների ժամանակ:

7-13-րդ դդ. Արուճի և Թալիճի զարգացումն ընթացել է պատմաքաղաքական և տնտեսական միևնույն գործոնների ազդեցությամբ: Երկու բնակավայրերի պատմության տվյալները երբեմն փոխլրացնող դեր են կատարում զուգահեռ դիտարկման պարագայում:

ԱՐՈՒՃԸ ԵՎ ԹԱԼԻՆԸ ՈՐՊԵՍ ՏԱՅՈՑ ԻՇԽԱՆԻ ՆՍՏԱՎԱՅՐԵՐ (7-րդ դ)

7-րդ դարի կեսերից Հայաստանի կառավարումն իրականացնում էր Հայոց իշխան տիտղոսը կրող, տեղում ընտրված և արաբական խալիֆի կողմից հաստատված իշխանը¹: Հայոց իշխանի նստավայրը նրա կառավարման տարիներին դառնում էր երկրի վարչական կենտրոնը: Արուճը Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի (661-685) իշխանաձիստն էր, ուր նա կառուցեց խոշոր եկեղեցի և իշխանական պալատ: Այնուհետև Հայոց իշխան դարձավ Աշոտ Բագրատունին (685-688)՝ իշխանաձիստը տեղափոխելով հայրենի Դարույնք, իսկ նրա մահից հետո երկրի կառավարումն ստանձնեց Ներսես Կամսարականը (688-692) և իշխանաձիստ դարձրեց Թալիճը:

Արուճի և Թալիճի համար իշխանաձիստ կենտրոն դառնալը նշանավորվեց նախ և առաջ այդ տեղերում մեծադիր Կաթողիկե եկեղեցիների կառուցմամբ: Ինչպես Արուճում,

¹ Ա. Տեր-Ղ-ոնյան, Հայոց իշխան փոփոխի ծագումը և Հայոց տերությունը 7-րդ դարում, Բանբեր Երևանի համալսարանի, 1969, N 1, էջ 243-244:

այնպես էլ Թալինում կային ավելի վաղ կառուցված միջին կամ փոքր չափեր ունեցող եկեղեցիներ², սակայն երբ այդ բնակավայրերը դարձան Հայոց իշխանի մատակարար, անհրաժեշտաբար ունեցան երկրի մեծամեծերին ընդունելու համար վայել մեծաշեն եկեղեցիներ, մասնաւորապէս՝ Գրիգոր Մամիկոնյանի՝ Արուճում կատարած շինարարության մասին Հովհաննէս Դրասխանակերտցին գրում է. «Գրիգոր Մամիկոնեան աստուածային այցելութեամբ հիմնադրեալ **գլխաւոր եկեղեցին, որ ի դաստակերտին Արուճ...** Եւ ի հարաւոյ կողմանէ դնէ **գարբունիս իւր** յեզր քարաժայռ ձորակին... Եւ ապա հաստահեղոյս քարամբք և կրով **պարսպեալ կարգէ տուն բնակութեան իւրոյ**»³:

Արուճի տաճարը, որը հայ ճարտարապետության «գմբեթավոր դահլիճ» կոչվող տիպի ամենամեծ կառույցն է, ըստ ամենայնի ուսումնասիրված է: Սակայն գրականության մեջ նրա անվան հացում առկա է մի թյուրիմացություն: 20-րդ դարի սկզբին եկեղեցուն անդրադարձող հեղինակներից ոմանք այն կոչել են Ս. Գրիգոր⁴, որը ժամանակի ընթացքում լայն տարածում է գտել⁵: Հավանաբար ենթադրվել է, որ եթե կառուցող իշխանի անունը Գրիգոր է, նրա կառուցած եկեղեցին էլ պետք է նվիրված լիներ իր հովանավոր արքին՝ Գրիգոր Լուսավորչին: Թեև սա տրամաբանական է, սակայն փաստն այն է, որ Արուճի տաճարը ո՛չ վիմագիր արձանագրություններում, ո՛չ պատմիչների մոտ չի կոչվում Ս. Գրիգոր անունով:

Արուճի տաճարի հիմնարկերի արձանագրության մեջ Գրիգոր Մամիկոնյանն այն անվանում է Կաթողիկե՝ «ՀԻՄՆԱՐԿԵՑԱԻ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ»⁶: Հաջորդ անգամ Արուճի եկեղեցին Կաթողիկե է անվանվում շինության հյուսիսային պատի վրա գտնվող 973 թ. նորոգման արձանագրության մեջ⁷: Արուճի տաճարը Կաթողիկե են անվանում մասնաւորապէս Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Սամվել Անեցին, Մխիթար Անեցին, Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին⁸:

² Արուճի փաճարի հարավարևելյան կողմում է գտնվում 4-5-րդ դդ. եռանավ բազիլիկ եկեղեցին (Վ. Մաթևոսյան, Պարմամշակութային նորաբաց էջեր, «Հայ արվեստ», 2006, թիվ 4, էջ 34-35): Թալինի Կաթողիկե եկեղեցու հյուսիսային կողմում պահպանվել են 5-րդ դարի միանավ բազիլիկ եկեղեցու ավերակները:

³ **Հովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցի**, Պարմութիւն Հայոց, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Գ. Թոսունյանի, Երևան, 1996, էջ 94 (այս և հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են – Վ. Մ.):

⁴ Թերևս առաջինը Գարեգին Հովսեփյանն է եղել, որն Ազիզբեկյաններին նվիրված, 1921 թ. հրապարակված ուսումնասիրության մեջ Արուճի եկեղեցին կոչում է Ս. Գրիգոր (Գ. Յովսեփյան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պարմութեան մէջ, Բ հրատ, Անթիլիաս, 1969, էջ 408):

⁵ Եկեղեցին Ս. Գրիգոր անունով են կոչել բազմաթիվ հեղափոխողներ, նրանց հետևելով՝ նաև փողերիս հեղինակը (Վ. Մաթևոսյան, Արուճ, Երևան, 1987, էջ 37):

⁶ Վ. Մաթևոսյան, Արուճ, էջ 54:

⁷ Վ. Մաթևոսյան, Արուճ, էջ 60:

⁸ **Ստեփանոսի Տարոնեցոյ** Պարմութիւն, աշխարհաբար թարգմանութեամբ Սպ. Մալխասեանցի, Սանկթ Պետերբուրգ, 1885, էջ 99, Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պարմագրաց՝ յաղագս գիւրի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յատկումներով և ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893, էջ 84, **Մխիթար Անեցի**, Մարեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխարհաբար թարգմանութեամբ Ն. Մարգարյանի, Երևան, 1983, էջ 67, 101, **Վարդան Արեւելցի**, Տիեզերական պարմություն, աշխարհաբար թարգմանությունը, Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 2001, էջ 107, **Կիրակոս**

Եկեղեցիներին տրվող «Կաթողիկե» անունն ունի երկու նշանակություն՝ գմբեթավոր և գլխավոր: Այդպես են կոչվել Էջմիածնի Մայր տաճարը, Դվինի կաթողիկոսարանի եկեղեցին, ավելի ուշ՝ Ամիի Մայր տաճարը: Կարծում ենք, որ Արուճի տաճարն այսուհետև պետք է կոչել **Կաթողիկե**, ինչպես որ անվանված է եկեղեցու հիմնարկերի արձանագրության մեջ և միջնադարյան բազմաթիվ սկզբնաղբյուրներում:

Թալինի Կաթողիկեն գմբեթավոր բազիլիկ է, ճարտարապետական հորինվածքով մասն է նույն դարի սկզբներին Դվինում վերակառուցված Կաթողիկե տաճարին, սակայն կրում է ժամանակի նորամուծությունները, ինչպես օրինակ գմբեթի առաջաստալին փոխանցումը, ճոխ դեկորատիվ հարդարանքը և այլն:

Հետաքրքիր է, որ մինչև Հայոց իշխան տիտղոսն ստանալը Ներսեհ Կամսարականը Թալինում կառուցել էր Ս. Աստվածածին փոքր եկեղեցին (արձանագրության մեջ հիշում է նաև կնոջը՝ Թուշանին և որդուն՝ Հրահատին)⁹: Հայոց իշխան դառնալուց հետո նա հիմնել է Թալինի մեծադիր Կաթողիկե եկեղեցին, սակայն, ցավոք, այս շքեղ եկեղեցին չունի շինարարական արձանագրություն, որի պատճառով ուսումնասիրողների մոտ եկեղեցու կառուցման թվականի և կառուցողի ինքնության հարցը տարակարծություններ է առաջացրել: Հնարավոր է, որ արձանագրության բացակայության պատճառը Ներսեհի մահն է եղել, որ տեղի է ունեցել մինչև եկեղեցու շինարարության ավարտը: Նա իշխել է չորս տարի, հավանաբար հենց առաջին տարում սկսել շինարարությունը, սակայն մասն խոշոր կառույցի համար նվազագույնը 5-6 տարի էր անհրաժեշտ¹⁰: Նկատենք, որ Թալինի Կաթողիկեից առաջ կառուցված Դարույքի և Արուճի իշխանական տաճարները որմնանկարազարդել են տվել կառուցող իշխանները¹¹: Յոթերորդ դարյան արժեքավոր որմնանկարներ ունի նաև Թալինի Կաթողիկեն, սակայն դրա վրա պահպանված ներկագիր արձանագրությունը վկայում է, որ պատկերներն ստեղծվել են Մովսես եկեղեցապանի պատվերով¹²: Դա նշանակում է, որ շինարարության ավարտից հետո, երբ հերթը հասել է նկարազարդմանը, իշխանը ողջ չի եղել: Բայց այն, որ բուն եկեղեցու կառուցողը Հայոց իշխան Ներսեհ Կամսարականն է, չպետք է կասկած հարուցի: Թալինի Կաթողիկեի ծավալն ու շքեղությունն ինքնին խոսում են այն մասին, որ դա Հայոց իշխանի անսովորյալ եկեղեցին է:

8-րդ դարի սկզբներից արաբների ճնշումների հետևանքով ծանր շրջան է սկսվում հայ իշխանական տների, հատկապես բյուզանդական կողմնորոշում ունեցողների համար, ո-

Գանձակեցի, Պարմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 62-63:

⁹ **Վ. Գրիգորյան**, Ղայասրանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երևան, 1982, էջ 20:

¹⁰ Գրիգոր Մամիկոնյանը Արուճում եկեղեցու կառուցումը սկսել է իր իշխանության երկրորդ տարում՝ 662 թ., և ինչպես պարմիչն է նշում, արագորեն է կառուցել տաճարը՝ «շինե զնա սրիպով...» (**Նովհանեն Կաթողիկոս Դրասխանակերպցի**, էջ 94): Չնայած դրան՝ շինարարությունը փակել է հինգ տարի (**Կ. Մաթ-ոսյան**, Արուճ, էջ 54-59):

¹¹ **Ղ-ոնդ**, Պարմություն, Երևան, 1982, էջ 27, Մովսես Կաղանկարության, Պարմություն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 195-196, **Կ. Մաթ-ոսյան**, Արուճ, էջ 52-53:

¹² **Կ. Մաթ-ոսյան**, Արուճի Ս. Գրիգոր և Թալինի Կաթողիկե տաճարների որմնանկարները, «Էջմիածին», 1982, Ը-Թ, էջ 70:

րոնցից գլխավորները Մամիկոնյաններն ու Կամսարականներն էին: 772-775 թթ. Մամիկոնյանների առաջնորդած հակաարաբական ապստամբության պարտությունից հետո այս տոհմը կորցրեց իր հիմնական տիրույթները¹³: 8-րդ դ. վերջերին, թուլացած Կամսարականներն իրենց տիրույթները վաճառեցին Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունուն¹⁴:

ԱՐՈՒՃԸ ԵՎ ԹԱԼԻՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՅ ՇՐՋԱՆՈՒՄ

Արուճի և Թալիճի երկրորդ ծաղկման ժամանակաշրջանը կապվում է Բագրատունիների գլխավորությամբ հայկական պետականության վերականգնման հետ: Արագորեն ծաղկած խոշոր քաղաքների՝ Անիի, Դվինի, Կարսի, Արծնի կողքին վերելք ապրեցին մի ամբողջ շարք գյուղաքաղաքներ և ավաններ:

Արուճն ու Թալիճը գտնվելով Անիի Բագրատունյաց թագավորության կազմում՝ անմասն չէին սկսված ազգային-պետական զարթոնքից և տնտեսական որոշակի դեր ունեին թագավորության մեջ: Անեցիների համար այս բնակավայրերը հատկապես մեծ արժեք էին ներկայացնում բազմաթիվ բերքատու այգիների ու մրգաստանների շնորհիվ, ինչից հիմնականում զուրկ էր Շիրակը: Թալիճն ու Արուճը գտնվում էին Անիի երկրի հարավարևելյան շրջանների հետ կապող և մասնավորապես Դվին տանող գլխավոր ճանապարհի վրա, որն ուղղակիորեն մպաստում էր բնակավայրերի տնտեսական շփումների ընդլայնմանը՝ հնարավորություն ընձեռելով մասնակից լինել տարանցիկ առևտրին: Տեղի քարավանատների հնարավորությունների ու շինարարական արվեստի մասին Թ. Թորամանյանը գրում է. «Թալիճի և Թալիճի (իմա՝ Արուճի – Կ. Մ.) մոտերը կան այնպիսի հսկայական իջևաններ, որոնց մեջ կարող էին պատսպարվել հարյուրավոր մարդիկ և հարյուրավոր անասուններ, սայլեր և այլն և այլն: Այս իջևանները ևս շինված են այնպիսի խնամքով և սրբատաշ քարերով, ինչպես շինված են արքայական, իշխանական պալատները»¹⁵:

Արուճն ու Թալիճը հավանորեն անմիջականորեն պատկանել են Բագրատունյաց արքունիքին, որի մասին կարելի է դատել որոշ արձանագրություններից: Արուճի Կաթողիկեի պատին հարկ թողնելու մասին արձանագրություն է գրվել Սմբատ Բ Բագրատունու (977-990) անունից: Գագիկ Ա Բագրատունու (990-1017) կինը՝ Կատրամիդե թագուհին, իր արձանագրության համաձայն, սալահատակել է տվել Թալիճի Կաթողիկեն¹⁶: Իսկ նրա որդին՝ Հովհաննես Սմբատը (1020-1041), Կաթողիկեի պատին արձանագրություն է թողել

¹³ Այն, որ Արուճն այդ շրջանում է խլվել Մամիկոնյաններից, երևում է փեղի Կաթողիկե եկեղեցու արևելյան պատի ձախ կողմում փորագրված արաբերեն կարճ արձանագրությունից, որի հեղինակ Նասան իբն Մուհամմադ իբն Բաա ալ-Կալասանին գրել է իր անունը և թվականը՝ 786-787 (А. Хачатрян, Корпус арабских надписей Армении, VIII-XVI вв. Ереван, 1987, с. 47.)

¹⁴ Սրեփանոսի Տարօնեցոյ Պատմություն, էջ 106:

¹⁵ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 36:

¹⁶ Ս. Ավագյան, Վիմագրական պրպկումներ, Երևան, 1986, էջ 187:

եկեղեցուն «Կոստանդեանց» կոչված այգին նվիրելու մասին¹⁷:

Արուճի հետ է առնչվում Բագրատունյաց թագավորության պատմության վաղ շրջանի դեպքերից մեկը: 902 թ. այստեղ հաշտության մախնական պայմանագիր է կնքվել հայոց Սմբատ Ա Բագրատունի (890-914) թագավորի և Ատրպատականի ամիրա Յուսուֆի ասորի բանագնացի միջև: Հովհաննես Դրասխանակերտցին Հայոց թագավորի՝ Արուճում բանակ դնելու մասին գրում է. «Իսկ արքայ... գումարտակ շինէր ի **քաղաքագիւղն Արուճ**, ի ծործորս Արագած լերին»¹⁸:

Արուճի տնտեսական վերելքը Բագրատունիների օրոք սկսվել էր դեռ 9-րդ դարում: Կաթողիկեի հարավարևելյան որմնամույթի վրա փորագրված 867 թ. մի արձանագրություն վերաբերում է ջրային հարցի կապակցությամբ Արուճի և Կոշի միջև ծագած վեճին ու գյուղացիների ընդհարմանը: Հավանաբար Արուճը զգալիորեն ընդարձակել էր իր ոռոգելի հողատարածությունները, որն էլ մեծացրել էր ջրի պահանջարկը¹⁹:

Ոռոգման ջրի կարիք ուներ նաև Թալինը: Կաթողիկեի մույթերից մեկի վրա պահպանված 783 թվականի արձանագրությունը վկայում է, որ Ուխտատուր վանականը և նրա եղբայր Տուտին ջուր են բերել բնակավայր²⁰:

9-13-րդ դարերում Արուճն ու Թալինը բազմաթիվ մրգատու այգիներով շրջապատված հարուստ բնակավայրեր էին: Նրանց բնակչությունն այդ ժամանակ կազմված էր մեծ մասամբ այգեգործներից, սակայն կարելի է կարծել, որ այնտեղ եղել են նաև արհեստավորներ, առևտրականներ: Զաքարիա սարկավագ Քանաքեռցու մոտ պահպանված մի արժեքավոր վկայությունից իմանում ենք, որ Արուճի և Թալինի բնակչության մեջ եղել են նաև ազատներ: Պատմիչը Սամահիյի վանքի հին ձեռագրերից մեկից քաղել է Մարմարաշենի Երեմիա վանահորը նվիրված մի պատմություն: Այստեղ նշված է, որ 1033 թ. Հովհանավանքում մի կարևոր փաստաթուղթ է կազմվել, որը կնիքով հաստատել են Սուրենես և Գրիգոր վարդապետները և ստորագրել են Վաղթանգ իշխանն ու **«ազատքն Արուճայ եւ Թալնայ...»**²¹:

Արուճը և Թալինը առևտրական ճանապարհի վրա գտնվելով՝ ունեցել են նաև իրենց շուկաները: Դրանք հավանաբար գտնվել են քարավանատների մոտ: Հիշարժան է, որ Թալինի քարավանատունը համարվում է միջնադարյան Հայաստանի ամենամեծ քարավանատունը: Այն կենտրոնական մասում ուներ մեծ բակ-վանդանոց, այսինքն ոչ միայն քարավանների գիշերելու կամ հանգստյան վայր էր, այլև շուկա:

¹⁷ Ղ. Ալիշան, Այրարար, Վենետիկ, 1890, էջ 139:

¹⁸ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 198:

¹⁹ Արձանագրությունից երևում է, որ վեճ ու կռիվ նախաձեռնողները արունցիներն են եղել և, վերջին հաշվով, իրենք էլ հաղթել ու վերցրել են հարևան գյուղի ոռոգելի ջրի մի մասը: Գործին միջամտել է Բագրատունի Սմբատ սպարապետը. նրա առաջած գորական Գրիգորը վերականգնելով հիշյալ բնակավայրերին հասանելի ջրի նախնական չափը, արձանագրության վերջում սպառնում է «մահվամբ պարուհասել» այդուհետև ջրաբաշխման սահմանված կարգը խախտողներին:

²⁰ Ս. Ավագյան, Վիմագրական պրպումներ, Երևան, 1986, էջ 192, Կեն նաև Գ. Շախյան, Հայ ժողովրդի ճարտարապետական-շինարարական գործունեությունը 8-9-րդ դարերում, Երևան, 2004, էջ 153-155:

²¹ Զաքարեայ սարկաագի Պարմագրություն, հ. Գ, Վաղարշապատ, 1870, էջ 10:

ԱՐՈՒՃԻ ԴՐԱՄԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՆ

Արուճի Կաթողիկե եկեղեցու հարավային պատին պահպանվել է 987 թ. Սմբատ Բ Բագրատունու մի ուշագրավ արձանագրությունը, որով նա Արուճում բաժ հարկից ազատում էր շալակավորների²²: Նախկինում ենթադրվել է, որ «շալակավոր» են անվանվել շալակով ապրանքներ փոխադրողները և քանի որ արձանագրության մեջ հիշվում է, թե բաժից ազատվում են միայն շալակավորները, հետևաբար փոխադրամիջոցներով (սալլ, ձի, ջորի) բերվող ապրանքների դիմաց հակ էր գանձվում, որի համար, ըստ ակադեմիկոս Բ. Առաքելյանի՝ «Արուճում, իբրև գյուղաքաղաքում, կային հարկ հավաքող պաշտոնյաներ, որոնք բաժ էին գանձում շուկա հանվող մթերքներից»²³:

Ակադեմիկոս Հ. Բարթիկյանն առանձին քննությամբ անդրադարձել է «շալակավոր» բառին, որը երկրորդ անգամ հիշատակվում է Բագարատ Վիկացու՝ Անիի Մայր տաճարի 1060 թ. արձանագրության մեջ («եւ շալակաւոր անեցի բամբէնցալ բաժին կէսն ազատ է»)՝²⁴: Նրա կարծիքով «շալակ» արմատն այս երկու դեպքում էլ օգտագործված է «մախաղ, պարկ, տոպրակ» իմաստով. «շալակաւոր՝ նշանակում է քսակաւոր...: «Շալակաւոր»-ը օգտագործվել է հունարեն «սակկովարիոս» իմաստով, որի բառացի թարգմանությունն է»²⁵: Վերջիններս սեղանավորների, լուսնափոխների կարգին պատկանող մարդիկ էին, որ զբաղվում էին դրամափոխությամբ և դրամական գործարքներով: «Շալակաւորի» սույն բացատրությունն ընդունելով Պ. Մուրադյանը գրում է. «Տուր եւ առի այս նշանավոր կենտրոնատեղին (Անին - Կ. Մ.) բնականաբար պիտի ունենար «սեղանավորի», «լուսնափոխի» եկամտաբեր զբաղմունքով պարապող մարդիկ, որ այժմ ճանաչելի են դառնում «շալակաւորի» վերծանմամբ»²⁶:

«Շալակավորի» հիշատակումն Արուճում, ընդ որում Անիի արձանագրության մեջ հիշատակվելուց 73 տարի առաջ, վկայում է այստեղ առևտրական կենտրոնի առկայության և մշտապես կատարվող դրամական գործարքների կամ դրամափոխության մասին, այլապես կարիք չէր լինի շալակավոր-դրամափոխներին հարկից ազատել թագավորական հատուկ հրամանով: Այնուամենայնիվ, ակներև է, որ Արուճը, որպես առևտրական կենտրոն, չէր կարող համեմատվել Անիի կամ մեկ այլ խոշոր քաղաքի հետ և հարց է ծագում, թե 10-րդ դարի 80-ական թվականներին ինչ գործ ունեին շալակավոր-դրամափոխներն

²² «...ԱԼԶ: ԵՍ ՍՄ(Բ)ԱՏ ՇԱՆԱՆՇԱՆ ՈՐԴԻ ԱՇՈՏՈ ՇԱՆԱՆՇԱՆԻ ԱԶԱՏԷՅԻ ՎԱՄՆ ԻՍ ՆԱԻՐՆ ՆԱԲՈՅՆ ԵՒ ԻՍ ԱՐԵԻՇԱՏՈՒԹԵԱՆԵՆ ԵՒ ՄԵՂԱՅ ԹԱԲՂՈՒԹԵԱՆ, ԶՇԱԼԱՎԿԱՒՈՐ Ի ԲԱԺԷ ՇՆՈՐՈՒՄ(Ի)Ն ԱՍՏՈՒԾՈՅ...»:

²³ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Նայասարանում, 9-13-րդ դդ. հ. Ա, Երևան, 1958, էջ 86:

²⁴ Դիվան հայ վիմագրության, սրբ. Ա, էջ 37: Պ. Մուրադյանն անդրադառնալով այսպեղ անհասկանալի համարված «բամբէնցալ» բառին՝ այն սրբագրելով «բամբնցալ», թարգմանում է «արդարությամբ» (Պ. Մուրադյան, Բնագրագիտական դիպարկումներ, «Պարմա-բանասիրական հանդես», 1994, 1-2, էջ 177):

²⁵ Հ. Բարթիկյան, Բագրատունյաց Նայասարանի արհեստներից (Շալակաւոր՝ բեռնակիր, թե՛ բանկիր), Պարմա-բանասիրական հանդես, 1992, 2-3, էջ 158:

²⁶ Պ. Մուրադյան, Բնագրագիտական դիպարկումներ, էջ 176:

այստեղ, որոնք եթե փոքրաթիվ լինեին, դժվար թե Բագրատունի թագավորի ուշադրությանն ու բարեհաճությանն արժանանային:

Մեր կարծիքով, Արուճում շալակավոր-դրամափոխների հայտնվելը պայմանավորված էր բնակավայրի աշխարհագրական դիրքով: Գտնվելով Դվին-Անի առևտրական մայրուղու կենտրոնում՝ Արուճը միայն քարավանային կանգառ չէր: Եթե Անիի ուղղությամբ հաջորդ քարավանատունը գտնվում էր Թալինում²⁷, ապա Դվինի ուղղությամբ այլ քարավանատուն հայտնի չէ (հնարավոր է, որ առևտրական հաջորդ հանգրվանը Վաղարշապատի շրջանում եղած լինի) և, փաստորեն, **Արուճը Արարատյան դաշտավայրից դեպի Շիրակ անցնող քարավանային ճանապարհի յուրօրինակ անցումային կետի դեր էր կատարել:** Անին ու Դվինը մաս տարբեր քաղաքական միավորներ էին ներկայացնում: Դվինը գտնվում էր մահմեդական իշխողների՝ Դալլամցիների (դելմիկների), ապա Ժադդադյանների ձեռքին²⁸: Հետևաբար Արուճը, որոշ իմաստով, առևտրական անցակետի դեր ուներ, որտեղ, հավանաբար, երկու կողմից եկող առևտրականները կատարում էին նախնական դրամափոխությունը, հետագա գործարքները դյուրությամբ իրականացնելու համար:

Հիշյալ ժամանակաշրջանում դրամափոխության գործի ծավալմանը կարող էր նպաստել դրամական շրջանառության ոլորտում տեղի ունեցած էական փոփոխությունը: Ինչպես դրամագետ Խ. Մուշեղյանն է նշում. «10-րդ դարի վերջերին և հատկապես 11-րդ դարի սկզբից փոխվել էր Հայաստանի դրամական շրջանառության կազմը: Նախ արծաթե դրամների թարմ հոսքը նվազել էր, և նոր թողարկված արծաթ դրամները այլևս չունեին արծաթի պարունակության նախկին բարձր որակը: ...Պղնձի խտնուրդով ցածրորակ արծաթ դրամները թողարկում էին Օեդդադյանները 951-1096 թթ., որոնք 11-րդ դարում տեղ էին դարձել Դվին և Գանձակ քաղաքներին...»²⁹: Հասկանալի է, որ առևտրական ուղիներով իրականացվող դրամական հոսքերը և դրամական տարարժեք միավորները պիտի համապատասխանեցվեին տեղական շուկայի պահանջներին և այստեղ է, որ անելիք ունեին դրամափոխները:

Այսպիսով, Արուճի տաճարի պատին Սմբատ Բ Բագրատունու թողած 987 թ. արձանագրության մեջ առկա «շալակավոր» բառի մոր բացատրության շնորհիվ կարող ենք ասել, որ հիշյալ շրջանում այստեղ եղել է դրամափոխության շուկա (արդի «տարադրամի փոխանակման կետերի» նախատիպը), և այդ գործը կատարող մարդիկ, որոնք մինչ այդ հարկ են վճարել, Սմբատ Բ թագավորի վճռով ազատվել են հարկից: Թագավորի սույն քայլը (ինչպես և ավելի ուշ՝ Անիում՝ Բագարատ Վիկացու կողմից շալակավորների հարկի կիսով չափ կրճատումը) սոսկ բարեգործություն չէր: Մեր կարծիքով, Բագրատունի թագավորն արձակել է վերոնշյալ հրամանը վաճառաշահ Անիին եկամուտ բերող առևտրականների գործը հեշտացնելու և դեպի մայրաքաղաք եկող ճանապարհը հրապուրիչ

²⁷ Նեոալոբությունը Թալինի քարավանապոսից մինչև Արուճի քարավանապոսն այժմյան ճանապարհով կազմում է 24 կմ, իսկ հեռավորությունը միջինադարյան դարերից, կարող էր կազմել մոտավորապես 30 կմ:

²⁸ **Ա. Տեր-Ղ-ոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 164-177:

²⁹ Նայ ժողովրդի պարմություն, հ. 3, Երևան, 1976, էջ 223-224:

դարձնելու համար: Տեղին է հիշել, որ Անիի Կաթողիկե եկեղեցու շինարարությունը սկսած Սմբատ Բ թագավորը մասնապես Հնդկաստանից բերել էր տվել «մեկ բյուր գանձով» գնած մի մեծ բյուրեղապակյա ջահ³⁰: Այսինքն, թագավորը շատ լավ գիտակցում էր վաճառականության արժեքը: Ծառ հավանական է, որ մույն այդ նպատակով և արքունիքի հովանավորությամբ են կառուցվել Արուճի և Թալիհի քարավանատները:

Արուճի առևտրական և դրամական շրջանառության կենտրոն լինելը հաստատվում է մաս տեղում ուշագրավ դրամական գտածոներով, որոնց մեջ կան բյուզանդական, արաբական, «իլդեզիզյան», վրացական և այլ մետաղադրամներ³¹: Հատկանշական է մասնաբաժնեներից ոմանց մյութական բավական խոշոր միջոցների տեր լինելու հանգամանքը: Այսպես, 1193 թ. Արուճի ավագերեց Գևորգի թոռ Տրդատ քահանան գնել է Անիում երբեմնի գորեղ իշխան Աբլղարի Դահլավունու կառուցած Ս. Փրկչի եկեղեցին, նորոգել այն, իսկ արձանագրության մեջ նշում է. «...շինեցաք վերստին **գմեր գանձագին հայրենիքս գՍուրբ Փրկիչս** շատ աշխատությամբ եւ նորոգեցաք յառաջին պայծառութիւնն... շինեցաք սմա ժամանոունս...»³²: Իր մասին Տրդատը գրում է. «Ես Տրդատ քահանա, որդի Սուրբենէս քահանայի, թոռն Գեորգա աւագերիցո Արճոյ...»: Վիմագիր արձանագրություններում քիչ են դեպքերը, երբ հեղինակը (մանավանդ ոչ ազնվական) հիշատակում է մասնապահին, այն էլ միայն մանրամասներով (Արուճի ավագերեց): Հարցը պարզվում է, երբ ծանոթանում ենք Տրդատի՝ Ս. Փրկչի եկեղեցուն տված նվիրատվություններին, որից երևում է, որ նրա կարողությունը ծագում էր արունճեցի պապից: Արձանագրության մեջ նշվում են եկեղեցուն տրված նվիրատվությունները՝ Արուճում գտնվող չորս այգի (Սաղար, Ծլիկ, Կովարած, Բլար Խաչկա անուններով), մի արտ, տուն, մաս զարդեղեն, սպասք և այլն:

Չափազանց ուշագրավ երևույթ է Արուճում գտնվող, հատուկ անուններով կոչվող բազմաթիվ այգիների հիշատակությունը Անիի և Ծիրակի վանքերի վիմագիր արձանագրություններում, այգիներ, որոնք մույնպես առ ու ծախի, կամ նվիրատվության առարկա էին: Անիի եկեղեցիների, Հառոմոսի ու Հառիճի վանքերի 12-13-րդ դդ. արձանագրությո-

³⁰ **Մարթնոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ն. Բարթիկյանի), Երևան, 1991, էջ 162-163:

³¹ Արուճում գտնված դրամների մեջ մեծ թիվ են կազմում Քրիստոսի պատկերով բյուզանդական պղնձե դրամները (10-11-րդ դդ.), որոնք առաջնակարգ փեղ էին գրավում հայկական շուկայում: Նմանավոր է, որ այդ դրամների մի մասը հատվում էին Անի քաղաքում (**Խ. Մուշեղյան**, Դրամական շրջանառությունը Նայասրանում, Երևան, 1983, էջ 216): Արուճում գտնվել են փարբեր ժամանակաշրջանների վերաբերող մահմեդական դրամներ, որոնց մեջ հատկապես արժեքավոր է Նայասրանի պարմության պեղական թանգարանում պահվող 704 թ. Դվինում թողարկված Օմայան արծաթյա դրամը (**Ա. Զոհրաբյան**, Դվինում թողարկված Օմայան դրամները գտնված Նայասրանից, Նայկական ԽՍՀ-ում 1987-1988 թթ. դաշրային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, 1989, էջ 68): Արուճում գտնվել են նաև այսպես կոչված «իլդեզիզյան» դրամներ՝ թողարկված Շենս աղ-դին Իլդեզիզի (1136-1173), Կրզլ Արսլանի (1186-1191), Աբու-Բաքրի (1191-1211) անունով, նաև մի պղնձե դրամ, հատված Վրաց թագուհու և նրա ամուսին Դավիթ Սուլանի անունով: Արուճում փարբեր փարիների գտնված 17 դրամից բաղկացած մի հավաքածու (8 «իլդեզիզյան», 7 բյուզանդական, 1 վրացական, 1 պարսկական) մենք 2008 թ. նվիրել ենք Նայասրանի պարմության պեղական թանգարանին:

³² Դիվան հայ վիմագրության, պր. 1, Անի քաղաք, կազմեց Ն. Օրբելի, Երևան, 1966, էջ 47:

յուններում պահպանվել է Արուճում գտնվող թվով 14 այգու անուն³³:

Բնակավայրի տեղագրության վերաբերյալ հետաքրքիր տվյալ է պարունակում Հառի-
ճի 1196 թ. արձանագրությունը, ուր նշվում է, որ վանքին է մվիրվել Արուճի **Վերին թա-
ղում** գտնվող «Խաչկանց» այգին և հնձանը³⁴: Քանի որ Արուճի քարավանատունը
գտնվում է բնակավայրից հյուսիս և ավելի բարձր դիրքում, Վերին թաղը պետք է հենց
այդ կողմում եղած լինի: Ենթադրելի է, որ Արուճն ունեցել է մեկ Ներքին թաղ:

ՆԵՐՔԻՆ ԹԱՂԻՆԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ

Եթե Արուճը Անի-Ռվին քարավանային ճանապարհի հանգրվաններից մեկը լինելով
ծաղկում ապրեց և ունեցավ դրամատիկության յուրօրինակ շուկա, ապա Թալինը նույն-
պիսի նպաստավոր պայմաններում գտնվելով՝ վերափոխում ապրեց: Մասնավորապես,
քարավանային ճանապարհի հյուսիսային կողմում գտնվող Թալինի բնակչության մի
հատվածն անցավ ճանապարհի հարավային կողմը՝ հիմք դնելով Ներքին Թալինին, կամ
գուցե, նոր շուկա հաղորդելով հնուց ի վեր այստեղ եղած փոքրիկ բնակավայրին:

Ներքին Թալինը գտնվում է Թալինից շուրջ 4 կմ հարավ-արևմուտք: Որոշ պարզա-
բանման կարիք ունի բնակավայրի անվան հարցը: 1979-ին Ներքին Թալինն անվանա-
փոխվել է, կոչվել Ռաշտադեմ³⁵:

Բնակավայրի անվան կապակցությամբ գրականության մեջ շրջանառվում է մեկ Քա-
ղին կամ Քաղենի անունը, որը ծագում է Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդած մի
տեղեկությունից: Խոսելով Սիոն Ա Բավոնեցու (767-775) կաթողիկոս դառնալու մասին,
պատմիչն ավելացնում է, որ նրա օրոք է տեղի ունեցել Քաղինի, Արենի և Թալին գյուղա-
քաղաքի կոտորածը, որին զոհ է գնացել 700 և գերևարվել 1200 մարդ³⁶:

Այդ տեղեկությունը Դրասխանակերտցուց քաղելով կրկնել են Ստեփանոս Տարոնեցի
Ասողիկը, Սամվել Անեցին, Մխիթար Այրիվանեցին, Կիրակոս Գանձակեցին³⁷: Քաղին

³³ **Կ. Մաթ-ույան**, Արուճ, էջ 34: Արուճի միջնադարյան այգիները փարածվում էին բնակավայրից շուրջ 1 կմ
դեպի հյուսիս՝ մինչև քարավանատուն, դեպի արևմուտք՝ Վանքաձորից մինչև Շամիրամաձոր, և դեպի հարավ՝
Աղբրի ձորի ավերակ: Այդ փարածքում այժմ էլ կարելի է փեսնել 10-13-րդ դարերի առանձին կանգնած բազմաթիվ
խաչքարեր, որոնք ժամանակին կանգնեցրել են այգիների փերերը: Խաչքարերի մեկի պարվանդանին արձա-
նագրված է եղել Աղամ և Մովսես (Մուսես) քահանաների անունները և 1001 թվականը, իսկ մեկ այլ խաչքարի
արձանագրության մեջ հիշվում է ոմն պարոն Սմբարը (նույն փեղում, էջ 83-84):

³⁴ «Ես Աստուածաբար երու զիմ հայրենի այգիս, որ յԱրուճ, ի Վերին թաղն՝ Խաչկանց այգին և զընծանն
երու ի սուրբ ուխտս Հառիճայ...» (**Ղ. Ալիշան**, Շիրակ, Վեներիկ, 1881, 159):

³⁵ Բնակավայրի անվանափոխությունը հավանաբար արվել է երկու Թալինների անունների շփոթությունից
խոսափելու համար: Դաշքաղեն անունով գյուղ է եղել Սասունում:

³⁶ «Յաւուրս սորա եղև կոտորումն Քաղինոյ և Արենոյ և գիւղաքաղաքին Թալնայ, յորում սպանան ոգիք իբրև
եօթն հարիւր և գերեցան հազար երկերիւր» (Նովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն,
էջ 110):

³⁷ Ասողիկը միայն Թալինի անունն է փալխա (Ստեփանոսի Տարոնեցու Պատմություն, էջ 105): Երեք բնակա-
վայրը նշում են Սամվել Անեցին (Սամուէլի քահանայի Անեցու Հաւաքմունք ... էջ 89), Մխիթար Այրիվանեցին
(Մխիթար Այրիվանեցի, Պատմություն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 52) և Կիրակոս Գանձակեցին: Վերջինիս մոտ
բնակավայրերից երկուսի անունը սխալ է փոխադրված. «կոտորումն եղև Քաղինաւ, Սրենոյ, Թալնայ...» (Կիրա-

կամ Քաղեմի տեղանունը որևէ այլ աղբյուր չի հիշատակվում, հետևաբար այսօր անհնար է պնդել, թե հնում այն Ներքին Թալիմին է վերաբերել: Ավելին, Ներքին Թալիմում եղած, տեղանուն պարունակող երկու արձանագրությունների մեջ բնակավայրը կոչվում է Թալիմ: Ներքին Թալիմից շուրջ 1 կմ հարավ-արևմուտք գտնվող Ս. Քրիստափոր վանքի բազմաթիվ վիմագրերում նույնպես ոչ մի անգամ չի նշվում Քաղեմ կամ Քաղեմի անունը, մինչդեռ երկիցս հիշատակվում է Թալիմը: Կարծում ենք, որ 8-րդ դարի դեպքերի առնչությամբ հիշված Քաղեմը Թալիմի մոտ գտնվող մեկ այլ բնակավայր է եղել, սակայն ոչ Նարքին Թալիմը, քանի որ այդ հաստատող ոչ մի ուղղակի փաստ հայտնի չէ:

1174-ին Վրաց Գեորգի Գ. թագավորը գրավել է Անին և գերևարել Ծաղդադյան Ծահն-շահ ամիրային: Գահի իրավահաջորդ Սուլթանին հաջողվել է ապաստան գտնել Ներքին Թալիմի ամրոցում և հենց նույն թվականին նա հիմնովին նորոգել է այն, կառուցել նոր աշտարակներ: Այստեղ մինչ օրս պահպանված արաբերեն արձանագրության մեջ Սուլթանը հայտնում է, որ կառուցել է այդ ամրոցը 1174 թ. սեպտեմբերին³⁸: 1176-ին վրացիները Անին վերադարձրել են Ծաղդադյանների և Սուլթանը տեղափոխվել է այնտեղ³⁹:

Ներքին Թալիմի ամրոցն իր դերը պահպանել է նաև Զաքարյանների ժամանակ: Այս շրջանում, հավանաբար 13-րդ դ. սկզբին, կառուցվել են դղյակ-ամրոցի ևս երեք բուրգերը, միաժամանակ ողջ դղյակ-ամրոցը վերցվել է երկրորդ պարսպաշարի մեջ: Այստեղ պահպանվել է «Յովհաննէս քարգործ յիշեցէք ի Քրիստոս»⁴⁰ արձանագրությունը: Ս. Սարգիս եկեղեցում հարկ թողնելու մասին 1307 թ. արձանագրություն է պահպանվել ի վանե Բ-ի որդի Աղբուղայից, որը Թալիմը համարում է իր սեփականությունը («թողի զիմ հայրենիք գեղս՝ զԹալմայ գիմոյ խալէն...»)⁴¹: Իսկ Զաքարյանների կառուցած պարսպի մոտքի մոտ 2007-ին հայտնաբերված թերի պահպանված մի արձանագրության մեջ ընթերցվում է ոմն Գրիգորի անունը և դարձյալ Թալիմ տեղանունը⁴²:

Ներքին Թալիմից շուրջ 1 կմ հարավ-արևմուտք գտնվող Ս. Քրիստափոր վանքի արձանագրություններում նույնպես խոսվում է Թալիմի մասին⁴³: Այս փաստերից կարելի է եզրակացնել, որ միջնադարում Ներքին Թալիմը նույնպես Թալիմ է կոչվել:

Մեր կարծիքով Ներքին Թալիմի առաջացման պատմության մեջ գործ ունենք միջնա-

կու Գանձակեցի, էջ 72): Գրքին կցված «նկարված վրիպակների» մեջ առաջինն ուղղված է՝ «Քաղեմ», իսկ «Արեն» անունը սխալմամբ Մրեն է կարդացվել (տպագրական, կամ ձեռագրերից եկող գրչական սխալ է):

³⁸ **А. Хачатрян**, Корпус арабских надписей Армении, VIII-XVI вв. Ереван, 1987, с. 46.

³⁹ Սուլթանը Անիի վերջին ամիրան էր, լավ հարաբերություններ է ունեցել հայերի հետ (**Կ. Մաթ-ոսյան**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 208):

⁴⁰ **Ն. Եղիազարյան**, Ներքին Թալիմ գյուղի Ս. Քրիստափորի անվան վանքը, նրա վիմագիր արձանագրությունները և գյուղի մյուս հուշարձանները, «Էջմիածին», 1971, Ը, էջ 59:

⁴¹ **Ն. Եղիազարյան**, նշվ. աշխ., էջ 64: Արձանագրության հեղինակի ինքնությունն ու թվականը ճշրում է Պ. Մուրադյանը (**Պ. Մուրադյան**, Նախադրանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 105):

⁴² Արձանագրության միայն առաջին քարն է պահպանվել: Այժմ դրված է վերականգնված Ս. Սարգիս եկեղեցու մուրքի դիմաց, Կեքսուր ճի հրապարակվել:

⁴³ Այսպես 941 թվականի մի արձանագրության մեջ նշվում է. «...հրաման յԱստուծոյ ի վերա գիտաբաղաքին Թալմա՝ նոր ուխտ և յիշարակ կարարեն միաբան(ք) սուրբ եկեղեցոյս...», Ոմն Քրիստափորի 950 թ. նվիրարկական արձանագրության մեջ դարձյալ հիշվում է Թալիմը: (**Ն. Եղիազարյան**, նշվ. աշխ., էջ 63):

դարյան բնակավայրերի ընդարձակման մի սկզբունքի հետ, որը բնորոշ է հատկապես ուրուշակի ուղղությամբ տարածվող այգիներ ունեցող վայրերին (օրինակ, Վանը՝ Այգեստան թաղամասով): Կամսարականների նստավայր բուն Թալիհի այգիները տարածվում էին դեպի հարավ-արևմուտք ընկած բերրի հողերը: Ժամանակի ընթացքում, հատկապես Բագրատունյաց շրջանի տնտեսական վերելքի ժամանակ, այգիների տերերը բնակարաններ են կառուցում նաև այգեստաններում և առաջանում է Ներքին Թալիհը⁴⁴: Դրան մեծապես նպաստում է նաև Թալիհի հսկա քարավանատան կառուցումը, որն Անի տաճող մայրուղու կարևոր հանգրվաններից մեկն էր, մայրաքաղաքից մեկ օրվա անցման հեռավորությամբ⁴⁵: Թ. Թորամանյանը գրում է, որ քարավանատունը գտնվում էր «Հին և Նոր Թալիհների ճանապարհի միջին կետի վրա»⁴⁶ և ավելացնում, որ միայն «Թալիհի իջևանի ծախքով կարելի էր չորս հատ եկեղեցի շինել»⁴⁷:

Թալիհի քարավանատունը Հայաստանի միջնադարյան մյուս մեծ կառույցներից տարբերվում էր նրանով, որ երկու հյուրատուն-սրահների միջև ուներ մեծ բակ-վանդանոց, որտեղ եղել են նաև կամարակապ կուղակներ: Դա նաև շուկա էր Թալիհի բնակիչների գյուղատնտեսական արտադրանքի համար:

Ներքին Թալիհի ամրոցը, որ Կամսարականների ժամանակ ուղղանկյուն մի սրահ էր, 9-10-րդ դարերում մասամբ վերակառուցվեց, սակայն իսկապես դրակ-ամրոց դարձավ Սուլթան Օսմանյանի 1174 թ. վերակառուցումից և շինությանը շուրջ 18 մ բարձրությամբ չորս աշտարակների կցումից հետո⁴⁸: Ներքին Թալիհի բնակիչների տները եղել են ամրոցի մոտ և դրանից հարավ գտնվող Գալլաձորի աջ ափին: Հարակից տարածքը ծածկված է եղել պտղատու այգիներով:

ՔԱՐԱՎԱՆԱՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Միջնադարյան Հայաստանի քարավանատներին նվիրված Վարազդատ Հարությունյանի աշխատության մեջ, ուր ներկայացվում են նաև Արուհի և Թալիհի քարավանատները, դրանց կառուցման ժամանակի մասին ասվում է. «Ներկա աշխատության մեջ քննարկվող քարավանատները, կամ ինչպես Հայաստանում նրանց անվանում էին՝ իջևանները, իջևանատները... վերաբերում են զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջան»:

⁴⁴ 19-րդ դարի առաջին կեսին Ներքին Թալիհն այցելած Ն. Շահխաթունյանը բնակավայրի մասին գրում է. «Սա ի հեռում մեծ շինանիստ, ըստ ցուցանելոյ առեակացն և քեղոյ այգեաց և ծառատառնացն...» (3. **Շահխաթունյան**, Սպորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և իննգ զառաւսն Արարաւայ, հ. 2, Ս. Էջմիածին, 1842, էջ 52):

⁴⁵ Թալիհի քարավանատան ընդհանուր չափերն են 37x73 մ.: Քարավանատան մասին հանգամանորեն տե՛ս Վ. **Հարությունյան**, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 55-60:

⁴⁶ **Թ. Թորամանյան**, նշվ. աշխ., էջ 130:

⁴⁷ Նույն տեղում, էջ 36:

⁴⁸ Դրակ-ամրոցի և այն շրջակայքող Ջաքարյանների պարսպի շուրջը բավական մեծ պարագծով պարիսպներ է կառուցել Երևանի պարսիկ խանը 1812 թվականին: Ներքին Թալիհի ամրոցի ամրակայումը և մասնակի վերականգնումը սկսվել է 2005 թվականից: (**Գ. Մ. Սարգսյան**, Դաշրադեմի ամրոցը, «Հայ արվեստ», 2007, թիվ 3-4, էջ 36-37):

նին՝ 12-14-րդ դարերին»⁴⁹: Արուճի և Թալիճի քարավանատները 13-րդ դարի կառույցներ են համարվում ամենատարբեր հրատարակություններում⁵⁰: Քանի որ այս քարավանատների կառուցման վերաբերյալ չկան ոչ վիմագիր արձանագրություններ, ոչ էլ պատմիչների վկայություններ, դրանց հիմնադրման ժամանակի մասին կարելի է դատել միայն շինարարական առանձնահատկություններից կամ հարակից տեղեկություններից ելնելով: Որքան մեզ հայտնի է, այս հուշարձանների շինարարական տեխնիկան հիմնավորապես չի համեմատվել այլ հուշարձանների հետ, որով հնարավոր լինել որոշել դրանց կառուցման ժամանակը:

Թալիճի և Արուճի քարավանատների վերաբերյալ ուշագրավ դիտարկում է կատարել Ն. Տոկարսկին: Նա գրում է, որ Թալիճի քարավանատումը կառուցվել է երկու փուլով, ավելի վաղ հիմնվել է արևելյան մասնաշենքը, որը կառուցվածքով ու չափերով շատ մոտ է Արուճի քարավանատին, որից հետո, դեպի արևմուտք, կառուցվել են վաճառանոց-բակն ու մյուս մասնաշենքը⁵¹: Ուսումնասիրողի կարծիքով այս քարավանատները կարող էին ստեղծված լինել «ընդհանուր հատակագծով»⁵²:

Սակայն Ն. Տոկարսկին, փորձելով որոշել այս քարավանատների կառուցման ժամանակը, դրանք համեմատում է նախկին Սուրմալուի գավառում, Արաքս գետի և Արարատ լեռան միջև գտնվող Զորի քարավանատին հետ, որը նույնպես ներքուստ եռանակ է: Այն ունի շքեղ քանդակազարդված մուտք 13-րդ դարին բնորոշ հարդարանքով, որից ելնելով՝ հեղինակն այս բոլոր երեք քարավանատները համարում է 13-րդ դարի կառույցներ⁵³: Այսպիսի մոտեցումը զուցե ընդունելի կլիներ, եթե մենք կիսավեր քարավանատներից բացի ուրիշ ոչ մի տեղեկություն չունենայինք Արուճի և Թալիճի վերաբերյալ: Հատակագծային նմանությունը չի կարելի ժամանակի միակ որոշիչ համարել⁵⁴: Կառուցման ժամանակի որոշման առումով Արուճի և Թալիճի քարավանատների համեմատությունը Զորի քարավանատին հետ նպատակահարմար չէ նաև այն պատճառով, որ վերջինս քարավանային մեկ այլ ճանապարհի վրա էր գտնվում և կարող էր ավելի ուշ շրջանում կառուցված լինել: Քարավանատների չափերի համեմատությունը ցույց է տալիս, որ Արուճի (15x28,25 մ) և Թալիճի (արևելյան եռանակ հատված՝ 15x35 մ) սրահները համադրելի են, մինչդեռ Զորում այն անհամեմատ մեծ է (25x65 մ)⁵⁵, որն ավելի ուշ կառուցված լինելու մասին է հուշում:

Արուճի քարավանատին պահպանված հատվածը կառույցի հյուսիս-արևելյան մասն է: Այն շարված է միջին չափի քարերով, ինչպիսի շարվածք տեսնում ենք նաև Արուճի

⁴⁹ Վ. Նարությունյան, նշվ. աշխ., էջ 12:

⁵⁰ Օ. Халтахчян, Гражданское зодчество Армении, Москва, 1971, с. 188-191, Նայ Ժողովրդի պարմություն, էջ 903-905, Նայկական սովետական հանրագիտարան, հ. 2, Երևան, 1976, էջ 152, և այլն:

⁵¹ Н. Токарекий, Архитектура Армении, IV-XIV вв., Ереван, 1961, с. 273.

⁵² Նույն փնդում, էջ 274:

⁵³ Н. Токарекий, Архитектура Армении, с. 274-275.

⁵⁴ Այդպիսի մոտեցման դեպքում, կարելի է, օրինակ, բոլոր խաչածն կենտրոնագմբեթ փոքր եկեղեցիները թվագրել 5-7-րդ դարերով, մինչդեռ հայրնի է, որ այդպիսի հորինվածքով բազմաթիվ եկեղեցիներ են կառուցվել նաև 9-13-րդ դարերում (Վ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 7):

⁵⁵ Վ. Նարությունյան, նշվ. աշխ., էջ 15:

Կաթողիկեի հյուսիսային պատի նորոգված հատվածում: Արձանագրության համաձայն նորոգումը կատարվել է 973 թվականին (պահպանվել են գործը նախաձեռնող Գորամի և մի այլ քարի վրա՝ Դավիթ վարպետի անունները)⁵⁶: 2007 թվականին Արուճի քարավանատանն իրականացվեցին մաքրման և մասնակի պեղման աշխատանքներ⁵⁷: Դրանց շնորհիվ բացվեց քարավանատան մուտքի արևելյան կողմի որմնասյունը, որի ստորին մասը մշակված է հնավանդ, պարզ օղակաձև ելուստով: Կառույցի հարավարևմտյան անկյան մոտ բացվեց մի նոր ուղղանկյուն սենյակ:

Արուճի քարավանատունը չունի դեկորատիվ հարդարանքի տարրեր կամ այլ մանրամասներ, որոնք վկայեն դրա 10-11-րդ դարերից ավելի ուշ կառուցված լինելու մասին: Մեր կարծիքով Արուճի քարավանատունը գոյություն ուներ արդեն 987 թվականին, երբ Սմբատ Բ թագավորը տեղի Կաթողիկե եկեղեցու պատին թողած արձանագրությամբ շալակավոր-դրամափոխներին ազատում էր հարկից: Հասկանալի է, որ այդ մարդիկ իրենց դրամական գործարքները կատարում էին ոչ թե միմյանց, այլ տարբեր տեղերից եկող վաճառականների հետ, իսկ վերջիններս պետք է իջևանելու տեղ ունենային: Շատ հավանական է, որ այս նույն ժամանակաշրջանում է կառուցվել Թալիճի քարավանատան առաջին մասնաշենքը, որը մնաց է Արուճի քարավանատանը: Իսկ հետագայում, հնարավոր է 12-13-րդ դարերում, Թալիճի քարավանատունն արևմտյան կողմից ընդարձակվել է:

Արուճի և Թալիճի Բագրատունյաց շրջանում ունեցած ծաղկման մասին վկայող վերը ներկայացված բազմաթիվ փաստերը մեզ բերում են այն համոզման, որ քարավանատները հենց այդ ժամանակի ծնունդ են: Չպետք է մոռանալ նաև, որ Արուճի և Թալիճի վրայով անցնող քարավանային ուղին Հնդկաստանից ու Պարսկաստանից եկող և դեպի Սև ծովի ափերը հասնող միջազգային առևտրական ճանապարհի մի հատվածն էր, ճանապարհ, որը Բագրատունյաց պետության զորացմանը և Աճի մայրաքաղաքի արագ ծաղկմանը նպաստող կարևորագույն գործոններից էր⁵⁸: Այդ ճանապարհի սպասարկմանն էին կոչված նաև Աճի շրջանում Ախուրյան գետի վրա զգված բազմաթիվ լայնաթոփք կամուրջները, որոնք մեծ մասամբ Բագրատունյաց շրջանի շինություններ են⁵⁹: Արուճի և Թալիճի քարավանատների կառուցումը նույնպես այդ ժամանակին պետք է վերագրել:

⁵⁶ Կ. Մաթ-ույան, Արուճ, էջ 60:

⁵⁷ ՆՇ մշակույթի նախարարությանը կից հուշարձանների պահպանության գործակալության նախաձեռնությամբ քարավանատան ողջ պարագծով պարերը շարվել են, ամբողջովին վերականգնվել է եռանավ կամարակապ սրահի հյուսիսային մասը:

⁵⁸ Նայ ժողովրդի պարմություն, էջ 215, 229-230:

⁵⁹ Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 71:

ՊԵՏՐՈՍ Տ. ՆՈՎՆԱՆԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ XVI-XVII ԴԱՐԵՐՈՒՄ*

(գաղթականության ուղիները, ժամանակը, տեղաբաշխումը,
թվաքանակը, զբաղմունքը)

XI դարի կեսերից սկսած՝ Բագրատունյաց թագավորության կործանումից հետո, Հայաստանը ենթարկվում է արևելյան քոչվոր ցեղերի սարսափելի ավերիչ արշավանքների, որոնք կրում են անընդհատ բնույթ: Հենց այդ ժամանակներից է, որ սկսվում է հայերի զանգվածային արտագաղթը դեպի մոտիկ և հեռավոր երկրներ: Նախապես արտագաղթում է Հայաստանի քաղաքային բնակչությունը, որը մասնավորապես շատ էր տուժել քոչվորների ասպատակություններից: Հետագայում սկսում է հեռանալ մաս զյուրական բնակչությունը: Այս ճանապարհով է, որ ստեղծվում են միջնադարի հայկական գաղթավայրերը: Հայկական գաղթավայրերը եղել են և են հայ ժողովրդի պատմության կարևոր առանձնահատկություններից մեկը:

Միջնադարյան հայկական գաղթավայրերի շարքում իր ուրույն տեղն ունի հատկապես Լեհաստանի հայկական գաղթավայրը, որի պատմությունը խիստ ուսանելի է և իրենից գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Գոյություն ունեցող աղբյուրագիտական նյութերի հիման վրա փորձենք ներկայացնել հայ գաղթականության շարժման ուղիներն ու ժամանակը դեպի Լեհաստան, պարզաբանենք գաղթականության տեղաբաշխումը, թվաքանակն ու զբաղմունքը:

Սելջուկյան արշավանքներից հետո (1048-1064 թթ.) Անի քաղաքի և շրջակայքի բնակչության մի ստվար հատված, հարկադրված լինելով հեռանալ Հայաստանից, արդեն ծանոթ առևտրական ճանապարհներով գնում է դեպի նշանավոր առևտրական-արհեստագործական կենտրոնները, մախ և առաջ Կ. Պոլիս, Տրապիզոն, Բյուզանդական կայսրության եվրոպական շրջանները, ուր մինչ այդ գոյություն ունեին հայկական գաղթավայրեր: XII դարում Տրապիզոնում և Սև ծովի հարավային ափերին հաստատված հայերի մի զգալի մասը ծովով, իսկ մյուս մասը Հյուսիսային Կովկասով անցնում է Ղրիմ¹: Հայերի մի այլ մեծ խումբ Ղրիմ եկավ Սև ծովի հյուսիսարևմտյան շրջանով՝ Կ. Պոլիս-Դանուբ գծով²:

Հայ գաղթականության մի նոր՝ ստվար ալիք սկսվեց XIII դարի 30-ական թվականներին, երբ մոնղոլները գրավեցին Հայաստանը և այն ենթարկեցին սոսկալի ավերածությո-

* Նախապես որպես զեկուցում կարդացվել է Պոլ Վալերի Մոնպելյե III (Ֆրանսիա) համալսարանում հրավիրված «Juifs, Arme'niens et Chretiens orientaux: Typologie des giasporas» միջազգային կոնֆերանսում (17-19 մայիս, 1999):

¹ Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, հայր. 1, Երևան, 1964, էջ 41:

² Ա. Ալպոյանյան, Հայ գաղթականության պատմություն, հայր. 2, Կահիրե, 1955, էջ 355:

յունների ու կողուպուտի և տասնյակ հազարավոր բնակիչներ ենթարկվեցին գերեվարության: Անի քաղաքի և շրջակայքի բնակչությունը, խույս տալով մոնղոլական տիրապետությունից, Վրաստանի վրայով տեղափոխվեց Հյուսիսային Կովկաս, այնտեղից էլ ներքին Մերձվոլգյան ավազան: XIII դարի վերջերին նրանք այստեղից տեղափոխվեցին Ղրիմ և համալրեցին տեղի հայկական գաղթավայրերը: Այդ ժամանակ Ղրիմում հայերի թիվն այնքան ստվար էր, որ ժամանակի եվրոպական հեղինակներն այն անվանում էին «Ծովային Հայաստան» («Armenia maritima»): Միայն Կաֆա քաղաքում և շրջակայքում բնակվում էին 30 հազար հայեր, որոնք ունեին 24 եկեղեցիներ³: Սակայն շուտով Ղրիմը ենթարկվեց մոնղոլ-թաթարական հորդանների ավերիչ արշավանքներին: Ղրիմում բնակվող հայերից շատերը ստիպված էին լքել թերակղզին և շարժվել դեպի Մոլդովա, Վալախիա, Պոդոլիա, Գալիցիա և էլ ավելի հեռու՝ Լեհաստան: Փաստորեն Ղրիմը դարձավ կապող այն կամուրջը, որի վրայով հայերը շարժվեցին դեպի Լեհաստան: Մոտավորապես նույն այդ ժամանակներում Լեհաստան գաղթեց նաև Զախարիյա Ուկրաինայի և Կիևի հայ բնակչության մեծ մասը: Լեհ ժամանակագիր Յան Ալպրեխը հետաքրքիր վկայություն ունի այն մասին, որ XIII դ. 60-ական թվականներին Գալիցիայի իշխան Դանիելը հայերին հրավիրել է բնակվելու իր հիմնադրած Լվով քաղաքում և շրջակայքում⁴:

Հայերը Լվովում կառուցեցին եկեղեցի, «Հայկական» անվանվող փողոցներ, կամուրջներ, հրապարակ, բնակելի տներ, խանութներ, արհեստանոցներ և այլն⁵: 1264 թ. այստեղ հիմնադրվում է հայկական եպիսկոպոսական թեմ և կառուցվում Ս. Հակոբ Մայր եկեղեցին: Լեհական սկզբնաղբյուրների համաձայն՝ XIV դարի կեսերին հայերի թիվն այստեղ այնքան էր ստվարացել, որ նրանք կառուցում են նաև հայկական մեկ ուրիշ եկեղեցի ևս, ինչպես նաև վանական համալիր⁶: Հայկական ստվար գաղթականություն կար նաև Կամենեց-Պոդոլսկում, որի շրջակայքում՝ Սմոտրիչ գետի ափին էին գտնվում միայն հայերով բնակեցված Օրմիանիե և Օրմանկի գյուղերը: XIII դարի երկրորդ կեսին հայերը բնակություն են հաստատում նաև Լուցք, Վլադիմիր և այլ քաղաքներում:

1340 թ. Լեհաստանի թագավոր Կազիմիր Մեծը (1333-1370) գրավեց Գալիցյան իշխանության հողերը: XV դարի 30-ական թվականներին Լեհաստանը լիտվացիներից խլեց Պոդոլիան: Այսպիսով, այդ հողերի հետ միասին Լեհաստանի տիրապետության տակ հայտնվեցին նաև հայկական գաղթավայրերը: Պետք է նշել, որ լեհական կառավարող շրջանակները ոչ միայն հանդուրժողական վերաբերմունք են ցուցաբերում հայերի նկատմամբ, այլև նրանց շնորհում են մի շարք արտոնություններ: Այսպիսով, 1356 թ. Կազիմիր Մեծը Լվովի հայերին թույլատրեց ունենալ իրենց ազգային ինքնավարությունը: դատարանը, հայերին երաշխավորեց դավանանքի ազատություն⁷:

Լեհաստանի հայկական գաղթավայրերը համալրվեցին 1375 թ. հետո, երբ կործանվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը: Տեղեկությունների համաձայն այդ ժամա-

³ Լ. Բաբայան, Հայերը Մոլդովայում և Բուքովինայում, Թիֆլիս, 1911, էջ 13:

⁴ B. Zimorowicz, Historia m. Lwowa, Lwo'w, 1835, s. 69.

⁵ Նույնը, էջ 69-70:

⁶ Sk'iu «Нариса історії Львова», Львів, 1956, s. 69.

⁷ T. Gromnicki, Ormianie n Polse, ich historia, prawa i przywilje, Warszawa, 1889, s. 9.

մակ 3000 հայ ընտանիք վերաբնակվեց Լեհաստանում: Քիչ անց՝ XV դ. սկզբներին, Լեհն Թեմուրի արշավանքների ժամանակների հետևանքով Հայաստանից մոր արտագաղթ սկսվեց: Գաղթականների մի մասը հայտնվեց Լեհաստանում: Լեհաստանի հայկական գաղթավայրերը զգալիորեն համալրվեցին այն ժամանակ, երբ 1475 թ. թուրքերը գրավեցին Ղրիմի Կաֆա քաղաքը: Տեղի տասնյակ հազարավոր հայեր տեղափոխվում են Վալախիա, Մոլդովա և Լեհաստանի հարավարևելյան շրջանների քաղաքները, մասնավորապես Լվով և Կամենեց-Պոդոլսկ: XVI դարում Լեհաստանի հայկական գաղթավայրերը մասամբ համալրվեցին նաև Մոլդովայի և Վալախիայի հայերի հաշվին, որոնք զանգվածաբար լքում էին այս երկրները իրենց նկատմամբ սկսված դավաճաբանական հալածանքների պատճառով⁸:

Հայերի վերջին գաղթը Հայաստանից Լեհաստան տեղի է ունեցել XVII դարի սկզբներին: Թուրք-պարսկական անվերջանալի պատերազմների հետևանքով, ինչպես նշում է ժամանակակից պատմիչ Առաքել Դավրիժեցին, «Ամենայն ազգն հայոց եղեալ վտարանդիք ..., ցիր և ցան եղեալ սփռեցան ընդ ամենայն աշխարհ, ի Կիպրոս, ի Կոստանդնուպոլիս ..., յերկիրն Իլախաց (այսինքն՝ Լեհաց)»⁹:

Գաղթականությանը նպաստող մյուս հանգամանքը ջալալիների ասպատակություններն էին, որոնց հետևանքով տասնյակ հազարավոր հայեր փախան երկրից, հեռացան մինչև Լեհաստանի սահմանները¹⁰:

Սկզբնաղբյուրների մանրակրկիտ քննությունը ցույց է տալիս, որ Լեհաստանի հայկական բնակավայրերի ամենամեծ թիվը վերաբերում է XVI-XVII դարերին: Այդ ժամանակ է, որ վերջնականապես կանոնավորվում է գաղթավայրը: Պատմաբան Յա. Դաշկևիչը XVI-XVII դարերում հաշվում է շուրջ 70 հայկական գաղթավայրեր, որոնք ցրված էին ամբողջ Լեհաստանի տարածքով մեկ, մասնավորապես երկրի հարավային և հարավարևելյան շրջաններում¹¹: Այդ գաղթավայրերից իրենց նշանակությամբ հատկապես աչքի էին ընկնում Լվով, Լուցկ, Լիսեց, Յարոսլավ, Յազլովեց, Դուբրովիցա, Կամենեց-Պոդոլսկ, Կազիմիր Դալնի, Դուբնո, Գորոդենկի, Չերնովցի, Բերեժանի, Ռաշքով, Ստանիսլավ, Տամենից, Ջամոստիե, Բալտա, Ժվանեց, Կուտի, Ստոդենիցա, Վարշաժ և այլ քաղաքների գաղթավայրերը¹²: XVII դարում հայկական գաղթավայրեր են հիմնադրվում նաև Լյուբլին, Վիլնյուս, Կրակով, Վարշավա, Պոզնան և հյուսիսային այլ քաղաքներում, ուր մախորդ դարերում հայերի կուտակումներ չէին նկատվում:

Լեհաստանի հայ բնակչության թվաքանակի որոշումը չափազանց դժվարին է, չկան ճշգրիտ վիճակագրական տվյալներ: Հնարավոր է միայն XVI-XVII դարերի համար խիստ մոտավոր տվյալներ բերել՝ նկատի ունենալով հայ և օտար ճանապարհորդների

⁸ Տե՛ս **Ջ. Գալստյան**, Հայկական գաղթավայրերի առաջացումը Ուկրաինայում և Լեհաստանում՝ «Էջեր հայ գաղթավայրերի պարմության», Երևան, 1996, էջ 90:

⁹ **Առաքել Դավրիժեցի**, Պարմություն, Վաղարշապատ, 1896, էջ 147-148:

¹⁰ **Վ. Անասյան**, XVII դարի ազգաբազրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 26-27:

¹¹ **Я. Дашкевич**, Розселения вирменев на Украине в XI-XVIII – «Український историко-географічний збірник», Київ, 1971, с. 150-151.

¹² **S. Baracz**, Rys dziejow Ormianskich, Tamopol, 1869, s. 77-178.

վկայությունները: Լեճ պատմաբան Ռ. Զուբիկի հաշվարկներով հայերը կազմում էին քաղաքների բնակչության մոտ 20%-ը¹³: Օրինակ, XVII դարի սկզբներին Լվովի հայերի թիվը հասնում էր շուրջ 3500-ի¹⁴, Կամենեց-Պոդոլսկինը՝ 5000¹⁵, Լուցկում՝ 1500¹⁶, Զամոստիելում՝ 2100¹⁷: Այս հաշվարկներով կարելի է պնդել, որ XVI-XVII դարի կեսերին Լեհաստանի հայերի թիվը տատանվել է 20-25 հազարի սահմաններում: Հետևաբար խիստ մերժելի են այն հեղինակների տեսակետները, որ Լեհաստանի հայոց թվաքանակը նշված դարերում հասցնում են մինչև 200.000-ի:

Խոսելով XVI-XVII դարերի Լեհաստանի հայերի զբաղմունքների մասին՝ պետք է նշել, որ սովյալներն ընդհանրացրել ենք՝ հիմք ընդունելով սկզբնաղբյուրների հաղորդած փաստերը: Լեհաստանի հայերի հիմնական զբաղմունքները եղել են արհեստագործությունն ու առևտուրը: Զանազան սահմանափակումների պատճառով հայերը չէին կարող զբաղվել ցանկացած արհեստներով, ուստի նրանք ստիպված էին սահմանափակվել գլխավորապես կաշվի մշակությամբ և ոսկերչությամբ: Կաշվից նրանք պատրաստում էին զամշ, սաֆյան (սեկ), կոշիկներ, մաշիկներ, գոտիներ, ձիերի լծասարք և առհասարակ կաշվի հետ կապված այլ իրեր: Նշելի է, որ հայ կաշեգործները Լվովում, Կամենցկում և այլուր միավորված էին համքարությունների մեջ, որոնց կանոնադրությունը հաստատված էր Յան Կազիմիրի կողմից: Հայ կաշեգործների պատրաստած իրերը մեծ պահանջարկ ունեին ոչ միայն Լեհաստանում, այլև հարևան Լիտվիայում և այլ երկրներում: Առանձնապես նշանակալից է եղել հայ ոսկերիչների գործունեությունը: Լեճ պատմաբան Լոգինսկու կարծիքով Հարավարևելյան Լեհաստանում ոսկերչության զարգացումը բացառապես կապվում է հայ ոսկերիչների անվան հետ: Հետաքրքիր է նշել, որ XVII դարի կեսերին Լվովում գործող ոսկերիչների կեսից ավելին եղել են հայեր¹⁸: XVII դարի հայ ճանապարհորդ Սիմեոն Լեհացին Լվովում թվարկում է 15 արհեստներ, որոնք կենտրոնացված են եղել հայերի ձեռքում¹⁹:

XVI-XVII դարերում Լեհաստանի հայ բնակչության գերակշիռ մասը զբաղված էր առևտրով: Դեռևս XII-XIII դարերից սկսած հայերը մեծ դեր էին խաղում Հարավարևելյան Լեհաստանի առևտրում, իսկ հետագայում այդ առևտուրը հիմնականում կենտրոնացնում է նրանց ձեռքում: Կապված լինելով արևելյան երկրների հետ (Թուրքիա, Ղրիմ, Պարսկաստան, Վրաստան, Արաբական երկրներ, Հնդկաստան և այլն)՝ հայ առևտրականները Լեհաստան էին ներմուծում այդ երկրների արհեստագործական և գյուղատնտեսական արտադրանքը՝ գորգեր, ներկեր, մետաքս, համեմունք, զենք, զինամթերք, թանկարժեք քարեր, պերճանքի առարկաներ, չոր միրգ, գինի, խոշոր եղջրավոր ա-

¹³ R. Zubyk, Gospodarka finansowa m. Lwowa, Lwo'w, 1930, s. 8.

¹⁴ Մ. Լ. Տովհաննիսյան, Ուրվագծեր Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղթավայրերի պատմության, Երևան, 1977, էջ 72:

¹⁵ Y. Antoni, Nowe opowiadania historyczne, Lwow, 1883, s. 165-166.

¹⁶ Մ. Լ. Տովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 71:

¹⁷ M. Zakrzewska-Dubasowa, Ormianie zamojsi i ich rola w wymianie handlowej i kulturalnej między Polska a Wschodem, Lublin, 1965, s. 57.

¹⁸ Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 208:

¹⁹ Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, Վիեննա, 1936, էջ 168:

մասուններ, ձիեր և այլն: Այդ, ինչպես մաս մի շարք այլ ապրանքներ, որոնք հայկական առևտրում հանդիսանում էին ավանդական, Լեհաստանում կոչվում էին «Հայկական ապրանքներ»: Եթե լեհական պետությունը չափազանց խրախուսում էր հայերի առևտրական գործունեությունը միջազգային առևտրի բնագավառում, ապա մուլնչափ էլ սահմանափակում էր ներքին առևտրի բնագավառում: Հայ վաճառականների ներմուծած ապրանքները տեղում՝ Լեհաստանում, հիմնականում վաճառում էին իրենք՝ լեհերը: Այդ կապակցությամբ Բ. Զիմորովիչը գրում է. «հայ վաճառականները ամենատարբեր երկրներից բերում էին բազմաթիվ ապրանքներ, որոնք հետո լեհերը և գերմանացիները տարածում էին ամբողջ թագավորության մեջ և հարևան երկրներում»²⁰:

Լեհական կառավարությունը, հաշվի առնելով հայ առևտրականների դերը երկրի տնտեսության զարգացման բնագավառում, հովանավորում է նրանց և շնորհում բազմաթիվ արտոնություններ, որոնք երբեմն դժգոհություն էին առաջացնում լեհ առևտրականների շրջանում: 1402 թ. Վլադիսլավ Յագելլոն հատուկ հրովարտակով թույլատրեց հայերի առևտուրը բուն Լեհաստանում և Լիտվայում²¹, 1505 թ. Ալեքսանդր, իսկ 1509 թ. Սիգիզմունդ I թագավորները հատուկ հրովարտակներով խիստ թեթևացրեցին հայ վաճառականներից վերցվող մաքսավճարները, իսկ 1524 թ. արգելվեց մաքսավճար վերցնել նրանցից: 1578 թ. Ստեֆան Բատորին հայերին շնորհեց մուլն իրավունքները, ինչ որ ունեին կաթոլիկ առևտրականները²² և այլն:

Լեհահայերի մյուս գլխավոր զբաղմունքը գյուղատնտեսությունն էր, մասնավորապես անասնապահությունը: Երկրագործությունը առավել քիչ է արձանագրված որպես հիմնական զբաղմունք. պետք է նկատի ունենալ, որ նրանք հող չունեին և զրկված էին այս բնագավառից:

Գոյություն ունեցող փաստերը վկայում են, որ լեհահայերը չէին սահմանափակվում առևտրա-տնտեսական գործունեությամբ: Նրանք նշանակալից դեր էին խաղում մաս երկրի պետական կյանքում, ակտիվորեն մասնակցում երկրի պաշտպանումնակության ամրապնդմանը և օտար զավթիչների՝ հատկապես թուրքերի և շվեդների դեմ մղված պատերազմներին: Բ. Զիմորովիչը վկայում է, որ XVI-XVII դարերում հայերը լեհական աշխարհագրորում (pospolite ruszenie) միշտ էլ ունեցել են առանձին ազգային զորամաս²³: 1683 թ. Յան Սոբեսկո Վիեննական արշավանքի ժամանակ լեհական բանակի կազմում եղել է հինգ հազարանոց հայկական զորամաս²⁴: Մարտական անբասիր ծառայությունների համար շատ հայեր արժանացել են շլախտիչի պատվի: Մասնակցելով պատերազմներին և պաշտպանելով Լեհաստանը՝ հայերը ապացուցում էին, որ նրանք այդ երկրի անկախության ժամանակավոր բնակիչներ չեն, որ բացի իրավունքներից և արտոնություններից, նրանք ունեն մաս որոշակի պարտականություններ այն երկրի և ժողովրդի հանդեպ, որոնք իրենց օգնություն էին ցույց տվել տարագրության տարիներին:

²⁰ B. Zimorowicz, նշվ. աշխ., էջ 368:

²¹ L. Charewiczowa, Ograniczenia gospodarcze, Lwow, 1925, s. 205-206.

²² Մ. Լ. Տովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 173-175:

²³ B. Zimorowicz, նշվ. աշխ., էջ 304:

²⁴ Stén «Wielka encyklopedia powszechna», Serja II, T. V-VI, Warszawa, 1908, s. 400.

Հայերի զբաղմունքի մի բնագավառ էր նաև դիվանագիտական գործունեությունը: Դիվանագիտության ասպարեզում հայերի ունեցած մասնակցությունը պայմանավորված էր այն բանով, որ նրանք լավ գիտեին արևելյան լեզուներն ու սովորությունները և լայն կապեր ունեին արևելյան երկրների հետ: XVI-XVII դարերում հայերը դիվանագիտական հանձնարարություններ էին կատարում Թուրքիայում, Պարսկաստանում, Ղրիմում, Ավստրիայում և այլուր: Անշուշտ, նշելի է նաև հայերի դերը ոչ միայն հայկական ազգային, այլև լեհական մշակույթի զարգացման գործում, որն այլ ուսումնասիրության առարկա է:

ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒԶԱՆԴԱՅՈՒ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻՆ՝ ԳՐՎԱԾ 1890-1893 ԹԹ.

Վսեմական Տէր Կարապետ Եզեանց

10 յունուար 1890

Այսօրեան թղթատարաւ յղեցի Ձեզ յանձնարարեալ ծրար մի, յորում կան չորս թերթք Դարդելի բնագրին՝ երեսք 49-80, մի տետրակ Տ. Խորենի թարգմանութեան՝ երեսք 65-104, երկու տետրակք իմ դիտողութեանց՝ երեսք 49-96: Կը մնան յղելի 81-109 երեսք բնագրին, 105-152 երեսք թարգմանութեանն, եւ լրումն իմ դիտողութեանց: Ամենադիւր եղեք կ'աղաչեմ որ չկարացի յղել միանգամայն զբովանդակն, ինչպէս խոստացած էի: 25 օր կորուսի ի պատճառս իմ հիւանդութեան եւ անոր հետեւանք մեծ տկարութեանս: Այժմ կիմս հիւանդ է, եւ սաստիկ կը տագնապիմ:

Վսեմական Տէրդ իւր վերջին մամակաւ փափագած էր գիտնալ թէ ի՛նչ ըսել կ'ուզեմ խնդրելով ի Ձէնք «զերկու գաղղիներէն հատորսն, որոց երկրորդն է Դարդել եւ Հեթում Պատմիչ»: Իմ խնդիրն ի Վսեմութենէդ ետ ընդունել զգաղղիներէն բնագիրն Դարդելի, որ ինչպէս տեղեկացայ, իւրաքանչիւր թերթի ստորեւ նշանակեալ ծանօթութենէն՝ է երկրորդ հատոր մի գաղղիներէն հրատարակութեան զորոյ անունն չգիտեմ. վասն զի Ձեր փոխտուած գաղղիներէն Դարդելին մէջ ոչ մատենին ճակատը կայ եւ ոչ յառաջաբան. (արդեօք Archives de l'Orient Latin հրատարակութիւնն է, որ նշանակեալ է ի Սիսում, երես 586, p.):

Երբ մամակս հասնի ի ձեռս Ձեր Վսեմութեան, մոր տարի մտած պիտի ըլլաք: Ձերմ բարեմաղթութիւններ կը մատուցանեմ Ձեզ՝ ի սրտէ փափագելով, որ միշտ քաջաոռոջ եւ հանգիստ կեանք վարէք եւ Աստուած կատարեալ յաջողութիւն պարգեւէ Ձեր ամէն գործոց: Այս առթիւ կը խնդրեմ, որ ընդունիք զհաւաստիս իմ երախտապարտ զգացմանց, որովք մնամ

Նորայր Ն. Բիւզանդացի

Կիմս կ'ողջունէ մեծարանօք զՁեր Վսեմութիւն եւ շնորհաւոր մոր տարի կը մաղթէ Ձեզ:

Ձեզ անձնանուէր

Վսեմական Տէր Կարապետ Եզեանց

7 փետրուար 1890

Երեկի թղթատարաւ կիմս յղեց Ձեզ (յանձնարարեալ) զերկրորդ երկտասնեակ Ձեր Վսեմութեան լուսանկարուց, զորս կը խնդրէ, որ բարեհաճեք ընդունել ի յիշատակ Ձեր այցելութեան ի Ստոքհոլմ:

Վաղիւ պիտի յղեմ Ձեզ ծրար մի յանձնարարեալ, յորում պիտի գտնէք 4 թերթս Դար-

դելի բնագրին (երեսք 81-109), 2 տետրակս Տ. Խորենի թարգմանության (երեսք 105-152), եւ զմնացորդս իմ դիտողութեանց (երեսք 1, 2, 23, 24, եւ 97-144): Ծանր գործ յանձնեցիք ինձ, Վսեմական Տէր. ահա մտադիր կատարեցի զայն ըստ իմում չափու, առ ի հաճել զՁեզ:

Կը փափագեմ գիտել նախ, թէ Տ. Խորեն ի՞նչ բնագիր ունեցած է ի ձեռին, զա՞յն տպագիրն զոր ինձ փոխ տուիք, թէ այլ ինչ. զի այնպիսի անմասնութիւններ կան՝ զորս չկարողացայ մեկնել: Երկրորդ, ո՞րք եմ այն ձեռագիր գաղղիներէն եւ հայերէն ծանոթութիւնք յերեսս 65, 67, 69, 72, 84, 85, 89, 92, 106 գաղղիներէն տպագրին:

Եթէ կարէք շնորհել ինձ զլուսանկար հանգուցեալ Տ. Ք. Պատկանեանի, յոյժ գոհ կ'լլամ:

Կի՞նս կ'ողջունէ մեծարանօք զՎսեմութիւնդ: Ընդ մի՞ն եւ ես մատուցանելով Ձեզ զիմ խորին յարգութիւնս,

մնամ անձնանուէր

Ն. Ն. Բիւզանդացի

Վսեմական Տէր Կարապետ Եզեանց

24 փետրուար 1890

Այս առաւօտ ընկալայ զՁեր նամակն փետրուար 7/19 թուականաւ, եւ կը փութամ պատասխանել:

Ես կը յուսայի ընդունել զձեռագիրն Ասողկան ի հոկտեմբեր ամսեան: Աչացս տկարութեան պատճառաւ միայն ցերեկ ժամանակ զբաղեցայ Դարդելի բաղդատութեամբ. ճրագի լուսով կրնայի ուսումնասիրել զձեռագիրն: Կի՞նս եւ ես դիտատրութիւն ունինք ի յուլիս ամսեան երթալ ի Կ. Պօլիս, առ ի կարգադրել զգործ գաղղիներէն-հայերէն բառարանին, զորոյ եւ ոչ զտպագրութեան ծախսոց կարողացայ ազատել ցարդ. շահ բնաւ չունիմ, եւ այսու ընթացքով կը տուժեմ միայն (սեմեկի վարձք, յապաճովագրութեան ծախք, 25% գրաւաճառի զեղչ, եւ այլն): Ի սեպտեմբերի պիտի վերադառնամ ի Ստոքհոլմ: Երեք կամ երեքուկէս ամիս բաւական չէ ինձ ձեռագիրդ ուսումնասիրութեանն համար, որոյ քովանդակութիւնն ծայր ի ծայր մեծ կարեւորութիւն ունի յաչս իմ: Եթէ Վսեմութեանդ հաճոյ է, կը խնդրեմ որ յղէք անյապաղ զձեռագիրն. եթէ յաջողիմ աւարտել զիմ գործն մինչեւ ի սկիզբն յուլիսի, կը դարձնեմ Ձեզ զայն չեւ մեկնեալ ի Ստոքհոլմէ. եթէ անաւարտ մնայ, պահել կու տամ զձեռագիրդ ի Ստոքհոլմի Bibliothèque Royale, ուր չկայ երկիւղ ո՛չ գողութեան, ո՛չ հրդեհի: Վսեմութիւնդ ըսաւ ինձ, թէ ձեռագիրն կրնար մնալ իմ քովս վեց ամիս. եթէ մեկնինք ի Կ. Պօլիս եւ ձեռագիրն աւանդ պահուի ի Bibliothèque Royale, ուր ամիս մնացած պիտի ըլլայ իմ քովս: Մատենադարանի տեսչին կը յայտարարեմ գրով, որ ձեռագրին տէրն Վսեմութիւնդ է. եւ եթէ ինձ դժբախտութիւն մի պատահի, Վսեմութեանդ իրաւունքն է վերաստանալ զձեռագիրն:

Յոյժ շնորհակալ եմ Արարատայ համար, զոր Վսեմութիւնդ կը բարեհաճի խոստանալ ինձ:

Կը տեսնեմ որ Hildebrand խթանի պէտք ունի, կը յիշեցնեմ զիւր խոստումն:

Կի՞նս կ'ողջունէ ամենայն յարգանքով Վսեմութիւնդ: Նոյնպէս եւ ես՝ մատուցանելով Վսեմական Տեառնդ զիմ խորին մեծարանս եւ զջերմ շնորհակալիս ձեռագրին համար,

2009

ԳՈՀԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Ա 71

մնամ անձնանուէր

Ն. Ն. Բիւզանդացի

Վսեմական Տէր Կարապետ Եզեանց

15 մարտ 1890

Այսօր ընկալայ զպատուական ձեռագիրդ ողջ ամբողջ, եւ լի եղէ ուրախութեամբ: Անշափ շնորհակալ եմ Ձեզ այս մեծ բարեկամութեանդ համար, զոր երբեք պիտի չմոռանամ: Խօսք մի միայն ըսի Վսեմութեանդ, անմիջապէս հաւանեցաք, եւ ահա կատարեցիք զիմ սրտիս ջերմ փափագն երախտապարտ կացուցանելով զիս յաւիտեան:

Մեծ է յարգ եւ կարեւորութիւն ձեռագրիս, ինչպէս արդէն գուշակած էի շատ մօր բան դուրս պիտի գայ: Ուրախ եղէ՝ տեսնելով, որ իմ Լաստիվերտեցոյ բազում ուղղութիւնք համեմատ եմ սոյն ձեռագրի. կան ուրիշ հատուածներ ալ, զորոց խառնակ ըլլալն միայն գուշակած էի, եւ ձեռագիրս կատարելապէս կը պարզէ: Գիշեր ցերեկ պիտի աշխատիմ՝ ջանալով դարձնել Ձեզ զայն մինչեւ ի սկիզբն յուլիսի. իսկ եթէ բաւական ըլլայ երեքուկէս ամիս եւ ուղեւորիմ ի Կ. Պօլիս առ ժամանակ ինչ, կը սպասեմ լսել զՁեր հրաման:

Կրկնելով իմ սրտագին շնորհակալութիւնս, մնամ Վսեմութեանդ խորին մեծարանօք անձնանուէր

Ն. Ն. Բիւզանդացի

Վսեմական Տէր Կարապետ Եզեանց

6 մայիս 1890

Կարելի՞ է, որ բարեհաճիք հայթայթել ինձ օրինակ մի ի Մ. Խորենացոյ Խորէն Վ. Ստեփանէի, եւ շնորհ ընէք յղել առ իս ի Ստոքհոլմ: Զգինս մատենին եւ թղթատան ծախուց կը հատուցանեմ Վսեմութեանդ առաջին առթիւ: Ներեցէք աշխատութեանս, զոր կը համարձակիմ տալ Ձեզ, զի չգիտեմ, թէ ուր եւ առ ով պետք է դիմել առ ի ստանալ զմատեանդ. եւ եթէ գրեմ ի Տփղիս, չեմ յուսար որ պատասխան ընդունիմ:

Իմ ամէնօրեայ զբաղանքս է ձեռագիրն. բաւական բան բաղդատեցի, բայց մնայ տակաւին բազում ինչ: Խնդրեմ ի Վսեմութեանդ, որ ըսէք ինձ, թէ կը հաճի՞ք թէ ոչ՝ եթէ այլոց ծանօթութիւն տամ զձեռագրեդ եւ հաղորդեմ ինչ-ինչ որ թերեւս փափագին: Ինչպէս կը հաճի Վսեմութիւնդ, այնպէս կը գործեմ:

Իմ Տեղեկութիւնքն յԱստղիկ, եթէ հրատարակեցան առանձինն, կ'աղաչեմ յդեք ինձ քանի մի օրինակս:

Մատուցանելով Վսեմական Տեսոնդ զիմ խորին մեծարանս՝
մնամ անձնանուէր

Ն. Ն. Բիւզանդացի

Վերստին յիշեցուցի Hildebrandի զիւր խոստումն առ Ձեզ. պատասխանեց, թէ կ'աշխատի եւ պիտի գրէ առ Վսեմութիւնդ:

Վսեմական Տէր Կարապետ Եզեանց

1 յունիս 1890

Երեկ ընկալայ ի Maisonneuve գրավաճառէ Պարիսի Recueil des Historiens des Croisades. Documents Arméniens. Tome Premier, կազմեալ, ‘sur l’ordre de M. Deubner, Libraire à St. Pétersbourg’ գրեց ինձ Maisonneuve. «Հրամանն» Ձեր Վսեմութեան է, չեմ տարակուսիր, ու կը փութամ մատուցանել Ձեզ զիմ խորին շնորհակալիս վասն մեծագին ընծայիդ: Պատմական կարեւոր տեղեկութիւնք կան ի մատենիդ, յորոց պիտի օգտիմ մեծապէս, եւ միշտ երախտապարտ պիտի մնամ Վսեմութեանդ:

Կը ցաւիմ միայն, որ այսպիսի բազմաձախ հրատարակութեան վերակացու կարգեալ է Ed. Dulaurier, որոյ հայագիտութիւնն (ինչպէս եւ իր հայրենակցին V. Langloisի) ոչ է կատարեալ: Որովհետեւ այժմ զբաղեալ եմ մի միայն Աբրահամ Երիցու ձեռագրով, ժամանակս չմերեր, որ մանր քննեմ զիւր թարգմանութիւնսն: Դիպուածով հանդիպեցայ հետեւեալ հատուածիդ յՈղբս Դրիգորի Տղայոյ (երես 294, տող 1407-8)

«Եւ ոչ շըրջին շուրջանակին
Ջորըս կոչեն դրուց Սիովնին».

Ի ծանօթութեան կը գրէ Dulaurier: «Il y a dans notre manuscrit բրուց, mot qui me paraît une faute de copiste, et que j’ai cru devoir remplacer par դրուց», եւ այլն: Եւ սակայն բրուց է ուղիղն.

«Ջորըս կոչեն բրուցսիոնին» ,

այսինքն գաղղիերէն procession ըսել կ’ուզէ Դրիգոր Տղոյ:

Երիցս տեսնուեցայ M. Hildebrandի հետ, եւ երեք անգամուն ալ պատասխանեց թէ կ’աշխատի եւ պիտի գրէ Ձեզ: Եթէ ցարդ չլից Վսեմութեանդ զոր ինչ խոստացած է, վախեմ թէ յղելիք չունի: Թերեւս լաւագոյն ըլլայ ուրիշ հմարք մի խորհել, եւ ի սեպտեմբեր ամսեան կը խոստանամ աշխատիլ իմովսանն առ ի կատարել զՁեր փափագ:

Յուսամ թէ ողջ առողջ է Վսեմութիւնդ եւ կը մաղթեմ Ձեզ ի սրտէ զամենայն բարիս: Գրեցի Ձեզ մաւն մարտի 15 եւ մայիսի 6 թուականաւ:

Կրկնելով զիմ եռանդագին շնորհակալութիւնս, մնամ Վսեմութեանդ կատարեալ մեծարանօք

անձնանուէր

Նորայր Ն. Բիւզանդացի

Վսեմական Տէր Կարապետ Եզեանց

21 օգոստոս 1890

Ամսոյս 16ին դարձայ ի Ստոքհոլմ յիմ ուղեւորութենէ ի Կ.Պօլիս, եւ յետ առի յԱրքունի Մատենադարանէ քաղաքիս զձեռագիրն Աբրահամ Երիցու՝ զոր ի պահ թողած էի անդէն: Մինչեւ ցարդ համեմատած եմ 7 մատենագրութիւնս, որ են Եւսեբեայ Եկեղեցական, Թ. Մեծփեցոյ Պատմութիւն, Ղեւոնդ Երեցու Պատմութիւն, Ա. Լաստիվերտեցոյ Պատմութիւն, Կիրակոսի Պատմութիւն, Վարդանայ Պատմութիւն, Մ. Խորենացոյ Պատմութիւն:

թիւն: Ազգաթանգեղոսի համեմատութիւնն, որով զբաղեալ եմ այժմ, յուսամ կ'աւարտի յառաջիկայ եօթնեկի: Զեմոքայ Ասորոյ Պատմութիւնն բաւական կը տարբերի ի տպագրէն Ս. Ղազարու. վասն որոյ ամբողջ պիտի ընդօրինակեմ զայն: Նոյնպէս ընդօրինակել կը փափագիմ զԴաշանց թուղթն, զՊատմութիւն Հացիւնեաց խաչին, զՍոկրատայ Եկեղեցականն: Իսկ Միխայէլ Ասորոյ ժամանակագրութեան թարգմանութիւնն օտար է ի հրատարակելոյն յԵրուսաղէմ յամի 1871. կ'երեւի, թէ է նոյն ընդ այնմ զոր Երուսաղէմացիք կը կոչեն «Սովորական օրինակ» եւ կ'ըսեն, թէ «ամօք ինչ յառաջագոյն տպագրեցաւ ի Ս. Աթոռն»։ (Յառաջաբան 1871ի տպագրին, երես Բ, ծան. 1). փնտռեցի ի Կ. Պօլիս զայդ տպագրութիւն, այլ կը ցաւիմ որ չկարողացայ գտանել:

23 օր մնացի ի Կ. Պօլիս (յուլիս 14-օգոստոս 5): Գաղղիերէն-հայերէն բառարանին մնացեալ 1250 օրինակաց վաճառման գործն չյաջողեցաւ, գէթ առ այժմ. յուսացուցին զիս, որ 2-3 ամսէ թերեւս յաջողի: Մեր ազգայնոց վատթար վիճակն մեծ տրտմութիւն պատճառեց ինձ. վհատութիւն, յուսահատութիւն մկարեալ տեսի յերեսս ամենեցուն՝ որոց հետ տեսնուեցայ: Յուլիս 15/27ի երեք Հայոց սպանութիւնն ի Գումգալիուն միջաբեկ ըրաւ զայնոսիկ որոց զգացմունք տակաւին կենդանի եմ դարաւոր գերութեան եւ թշուառութեան հակառակ:

Ունէի կարելոր քննելիս յԱզգային Մատենադարանի Գալատայի, ի Մատենադարանի Անտոնեան Հարց յՕրթաքէօյ եւ ի թանգարանի վերծանութեան. աւաղ որ չունեցայ պարապոյ ժամանակ:

Ամերիկացի բողոքական քարոզիչք ձեռնարկած են հրատարակել ի Կ. Պօլիս զհայերէն Աստուածաշունչն՝ նշանակելով ի ծանօթութիւնս զտարբերութիւնս յեբրայական եւ ի յունական բնագրաց: Այս հրատարակութեան վերակացու կարգեալ է Տ. Աւետիք Կոստանդեան (բողոքական երեց), որ քաջ եբրայագէտ երեցաւ ինձ, եւ իրեն կ'աջակցին Տ. Ա. Մ. Գարագաշեան (Քննական Հայոց Պատմութեան հեղինակն) եւ Տ. Յովհաննէս Հիւնքեարպէլէնտեան քահանայն: Նախ զՆոր Կտակարանն պիտի հրատարակեն, եւ ապա զՀինն: Տեսայ զՄատթէոսի, Մարկոսի եւ Ղուկասու տպագրեալ թերթերն. պատուական գործ է: Ապրին ամերիկացի բողոքականք, որ հայերէն մատենագրութեան այսպիսի կարելոր եւ օգտակար ծառայութիւն մատուցանելոյ համար չեն խնայեր ոսկւոյ: Զունին իրենք Հայերէն Աստուածաշնչի եւ ոչ մի ձեռագիր. այդ ձեռագիրք պահուած են, Վսեմութիւնդ լաւ գիտէ, թէ ուր. եւ ձեռագրացդ տեսարք որչափ կ'օգտին եւ կ'օգտեցնեն զհայ բանասէրս իրեանց ամբարանոցս մթերեալ զանձերէն, Վսեմութիւնդ զայն եւս քաջ գիտէ: Ամօթ, ամօթ մեր վանականաց:

Այլեւայլ անձինք խնդրեցին յինէն զՏեղեկութիւնսն յԱսողիկ, եթէ Վսեմութիւնդ կարէ յղել ինձ այլ եւս քանի մի օրինակս, մեծաւ շնորհակալութեամբ կ'ընդունիմ:

Ի սրտէ մաղթելով քաջ ողջութիւն Վսեմական Տեառնդ, մնամ խորին յարգանաց ողջումիւ Զերդ

Նորայր

**Յոյժ Ազնիւ եւ Սիրելի Բարեկամ
Վսեմական Տէր Կարապետ Եզեանց**

5 դեկտեմբեր 1890

Ընկալալ զՁեր մամակն օգոստոս 24ի (հ.տ) թուականաւ եւ զերիս օրինակս Տեղեկութեանցն յԱստղիկ: Ընկալալ մոյնալէս զմոյնքեր 14ի մամակդ եւ զերկուս օրինակս Դարդելի ժամանակագրութեանն, եւ կը մատուցանեմ Ձեզ զիմ ջերմ շնորհակալիս:

Ուրախ եմ, որ կը վայելեմ զանգին բարեկամութիւն Վսեմութեանդ, որոյ արդիւնք եմ Դարդելի Յառաջաբանին մէջ Ձեր ազնիւ խօսքերն զիմ մուստութեանէս: Բերկրութեամբ տեսալ, որ ընդունած էք գրեթէ զիմ բոլոր ուղղութիւնս եւ դիտողութիւնս: Հարկաւ Վսեմութիւնդ չկարէր ալլազգ յիշել զիմ աշխատութիւն եւ վշտացնել զՏ. Խորէն. բայց այն մամակն՝ զոր գրեցի Ձեզ տարույս փետրուարի ծին, կը մնայ առ Ձեզ, եւ ես գոհ եմ այս չափով: Եթէ Տ. Խորէն պահած է զօրինակ իւր թարգմանութեանն, կրնայ բաղդատել տպագրելոյն հետ, եւ մոռացած չէ անշուշտ զիւր արհամարհական խօսքն՝ թէ «Նորայրի բառարանին հայերէնն ընտիր չէ», ինչպէս վճռած է ի լուսանկարչատան Ապտովլախեան եղբարց, եւ զոր հաղորդեց ինձ բարեկամ ոմն իւր 1883 սեպտեմբեր ծի մամակաւ:

Եթէ Վսեմութիւնդ կը ներէ ինձ, որ տակաւին քանի մի ամիս Աբրահամ Երիցու ձեռագիրն մնայ առ իս, յոյժ յոյժ շնորհակալ կ'ըլլամ: Բիւզանդ, Եսեբեռս, Ագաթանգեղոս շատ աշխատցուցին զիս: Կը փափագիմ ամբողջապէս ընդօրինակել զՊատմութիւն արքայն Ներսէսի, զՋենոբ, զՅոհան Մամիկոնեան եւ զՍոկրատ: Ամէնօրեայ զբաղանքս ձեռագրին ուսումնասիրութիւնն է:

Կը փափագիմ, որ Կորեան Պատմութեան սկզբնատրութիւնն, զոր յղած եմ առ Ձեզ, մնա Ձեր քով: Տ. Կ. Կոստանեան անկատար զաղափար կրնայ առնուլ զիմ աշխատութեանն: Բաւական փոփոխութիւններ մտածած եմ մոյն իսկ ի սկզբնատրութեանն թէ բնագրին Կորեան, եւ թէ ծանօթութեանց: Կը յուսամ, որ օր մի կը յաջողիմ միանգամայն հրատարակել զԵզնիկ եւ զԿորիւն, զԵզնիկ՝ իբր ներկայացուցիչ Առաջին թարգմանչաց Երիցագոյն դասուն, զԿորիւն՝ իբր ներկայացուցիչ կրտսերագոյն դասուն: Յառաջին թարգմանչած իբր ինքնագիր հայերէն մատենագրութիւն ունինք միայն զմատենիկն ընդդէմ Աղանդոց եւ զՄաշտոց վարդապետի Պատմութիւնն. այս երկու փոքրիկ գրուածք մեծ մշակակութիւն ունին հիմնգերորդ դարու գրականութեան համար, եւ կը բաղձամ կատարեալ կերպով ներկայացնել, թէ յորում է Եզնիկայ եւ Կորեան շարագրութեանց տարբերութիւնն, հետեւաբար մէկ կողմէն՝ թարգմանութեանց, որ Եզնիկայ կարգին կը պատկանին, միւս կողմէն՝ թարգմանութեանց, որ Կորեան կարգին կը պատկանին (Ագաթանգեղոս, Բիւզանդ, Մակարապետցոց գիրք, այլովքն հանդերձ):

Գեղեցիկ է Ձեր խորհուրդն հայերէն գիրս հրատարակելոյ ի Ստոքհոլմ: Վաղուց ըմբռնած էի եւ ես, որ մեր հին մատենագրութիւնք անթերի եւ անփոփոխ չկարեն հրատարակիլ ոչ միայն ի Թուրքիա, այլ եւ մոյն իսկ ի Ռուսաստան: Բայց ես յատեւտրական գործառնութեանց բնաւ չեմ հասկանար, Վսեմական Տէր. եթէ այլ ոմն հաստատէ տպարան ի Ստոքհոլմ, որ դիւրաւ կրնայ յաջողիլ փորձառու մարդոյ, եւ կրնամ ստանձնել զգործ տպագրութեանն:

Կը խնդրեմ ի Վսեմութեանդ յղել ինձ օրինակ մի Հ. Ալիշանի Այրարատ մատենէն, զոր անչափ շնորհակալութեամբ պիտի ընդունիմ: Կը խնդրեմ մոյնալէս որ բարեհաճիք փոխ տալ ինձ զԷմիլեան Մ. Կաղանկատուացի եւ զՊատկանեան Մխիթար Այրիվանցի, յետ

բաղդատելոյ կը վերադարձնեմ առ Ձեզ: Կը համարձակիմ խնդրել նաեւ օրինակ մի ի Տ. Գ. Խալաթեանի Քննադատութենէն Խորէն վարդապետի աշխարհաբար Մ. Խորենացւոյն: Վսեմութիւնդ կը ճանաչէ անշուշտ ի համբաւոյ զհայասէր եւ զհայազէտ իտալացիներ Էմիլ Տէզա /Emilio Teza/, ուսուցչապետ ի Համալսարանին Պատաւիոնի, յղեցի Ձեզ աչսօր յանձնարարեալ զիւր տետրակն Cose Armene յորում բարեհաճած է խօսել նաեւ զիմ գրաւոր վաստակոց:

Յայտնելով Վսեմութեանդ զիմ ջերմ խնդակցութիւն ողջամբ երթողարձիդ լէջմիածնէ, եւ կրկնելով զիմ խորին շնորհակալիս Ձեր ամենայն բարութեանց համար, մնամ կատարեալ մեծարանօք անձնանուէր

Ն. Բիւսնդացի

Կիմս յարգութեամբ մեծաւ կ'ողջունէ Վսեմութիւնդ

Վսեմական Տէր Կարապետ Եզեանց

12 փետրուար 1891

Ի 22 դեկտեմբերի անցեալ տարւոյ ընկալալ զԱյրարատն Հ. Ղ. Ալիշանի, գննադատութիւն Տ. Գ. Խալաթեանի Խորենացւոյ աշխարհաբար թարգմանութեան, զՄ. Կաղանկատուացի (տպ. Էմիլեան), եւ զՄիս. Այրիւանեցի (տպ. Պատկանեան), զորս խնդրած էի ի Ձէնց իմ դեկտեմբեր 5ի մամական: Ներողամիտ եղեք կ'աղաչեմ եթէ յապաղեցի մատուցանել Ձեզ զիմ անչափ շնորհակալիս. կը սպասէի Ձեր պատասխանուն, զոր չընկալալ մինչեւ ցայսօր: ԶԱյրիւանեցի պիտի դարձընեմ առ Ձեզ ընդ ձեռագրին Աբրահամ Երեցուն, բայց կը խնդրեմ, որ շնորհէք ինձ ժամանակ մի եւս պահել զԿաղանկատուացի, մինչեւ պարապով աւարտեմ զիմ բաղդատութիւնն:

Կը փափագէի լսել ի Վսեմութենէդ, թէ ինչ յաջողութիւն ունեցաւ զաղդիերէն-հայերէն բառարանին տարածման գործն, զորմէ պիտի խօսէիք ի Տփղիս, ինչպէս ծանուցիք Ձեր անցեալ տարւոյ օգոստոս 24ի մամական: Նոյնպէս նախնեաց Մատենագրութեանց հրատարակութիւնն ի Ստոքհոլմ, զորմէ փափագ յայտնած էիք նոյն մամական, կը հրապուրե՞ցարդ եւս զՁեզ, թէ լեւ կեցաք ի խորհրդոյդ:

Բաւական մեծ մտատանջութեան մէջ եմ, զի 1892ի սեպտեմբերի 30ին կը լրանայ մեր Արուեստանոցին վարձակալութեան դաշնագիրն, եւ ես տակաւին կ'անգիտանամ, թէ ինչ պիտի ըլլայ ապագայն: Ունիմ անհուն ցանկութիւն աշխատելոյ, բայց ինչպէս եւ ուր' ահա անստուգութիւն, որ զիս կը տագնապէ: Անյոյս եմ ի Կ. Պօլսի Հայ մեծատանց, զի նոքա բնաւ սէր չունին Ազգային Հին մատենագրութեան, եւ թէ ո՞ր աստիճանի օգնութիւն տուին ինձ զաղդիերէն-հայերէն բառարանի բազմաձախ հրատարակութեան համար՝ բաժանորդաց ցանկն կը վկայէ: Էջմիածին երթալու բաղձանքս շատ մեծ է. բայց ինչ ընդունելութիւն պիտի գտնեմ յայնպիսի միջավայրի՝ ուր ոչ ոք կը զբաղի Հին Հայերէնի. դոքա բոլորովին կրօնական մարդիկ են, Աւետարանէ եւ Լուսաւորչէ դուրս ուրիշ բան չեն ճանաչեր, եւ կարծեմ իբրեւ անելագործ ոք կը նկատեն զիս՝ որ վեր ի վայր իմ գրութեանց մէջ Նախնիք կը յեղեղեմ: Ուրիշ կողմանէ՝ յոյժ վշտացած եմ, որ 1888 յունուար 11ի թուականաւ առ

Տ. Մակար կաթողիկոս գրած մամակիս պատասխան ընդունելոյ արժանի չեղայ եւ այն 3 օրինակ բառարանին համար, զոր նոյն թուականաւ նուիրեցի առ կաթողիկոսն, առ Էջմիածնի Միաբանութիւնն, առ Գեորգեան Շեմարանն, ոչ միայն շնորհակալութեան խօսք մի չգրեցին, այլ եւ ոչ լոկ **accusé de réception** Էջմիածնի Միաբանութիւնն եթէ փոքր ինչ յարգանք եւ սէր տածէր առ իս անարգս յանարգաց, փոխանակ 138 փրանկի նուիրիս՝ կրնար նուիրել ինձ զԱ. Դարիժեցի, զՄիս. Գոշի Դատաստանագիրս, զՍիմէոն Ապարանեցի եւ զԱբրահամ Կրետացի՝ անվայել համարելով պահանջել յինէն քանի մի ոռութի մինչեւ ցլետին կոպէկն: Թնորհակալ եմ, որ 1888է ի վեր կը յղեն ինձ զՄարարատ, անսպառ բովք հոգեւորական խրատներու եւ քարոզներու:

Վսեմութիւնդ հարցուց ինձ իւր 1889ի նոյեմբեր 11/29ի մամական, թէ արդեօք Տ. Աբգար Յովհաննիսեանէ մամակ կամ լոր ունի՞մ. «շատ ծոյլ է գրելու», ըսիք: Այս պատուական անձս, առանց բնաւ իմ կողմանէ աղաչանաց, ինքնաբերաբար խոստացաւ նուէր յղել ինձ զՓորձ որչափ որ հրատարակեալ է, զԱրձագանգ որչափ որ հրատարակեալ է եւ պիտի հրատարակի, Տփղիս տպագրեալ հայերէն գրքեր՝ ինչ եւ որչափ որ բաղձամ. յայտարարեց թէ Արձագանգի մէջ «պատիւ կը համարի իրեն» հրատարակել զիմ յօդուածս՝ իւրաքանչիւրին համար դրամ հատուցանելով. - խնդրեց որ յատուկ յօդուած մի գրեմ Արեւելագիտաց ի Ստոքհոլմ գումարեալ ժողովոյն վերայ եւ յղեմ առ ինքն ի Տփղիս. - առանձնաբար ալ ըսեր է կնոջս. «Տիկին, պիտի տեսնէք, ամէն շաբաթ ծրար ծրար գիրք եւ լրագիր պիտի ընդունի յինէն ձեր ամուսինն, ձանձրանալու ժամանակ պիտի չունենայ»: Ըստ իմ չափաւորութեան՝ նուիրեցի իրեն զՔննասիրի Ա. Պրակն, զՔննադատութիւն Նօտր-Տամի. հարցուցի թէ ունէ՞ր զՀայկական Բառաքնութիւն. «Ոչ», պատասխանեց, եւ օրինակ մի ալ անկէ տուի. (յետոյ թղթոցս մէջ նշանակեալ տեսայ որ վաղուց նուիրեր եմ իրեն օրինակ մի Բառաքնութիւն յամիւն 1881) -տուաւ ինձ 50 ոռութի, եւ ընկալաւ 95 քրունա, եւ ըսաւ. «Եթէ լումայափոխէն անելի ընդունիք՝ անելին ինձ՝ եթէ պակաս ընդունիք՝ կը յղեմ զՁեր պակասն». (երկու օր վերջը՝ լումայափոխէն առի միայն 91քրունա 50էօնէ.) - փութացի կատարել զիւր խնդիրն՝ գրելով յօդուած զժողովոյն եւ յղեցի յանձնարարեալ մամական յ'13 սեպտեմբերի 1889ի, աղաչելով որ 3^{1/2} քրունայի չնչին գումարին կարեւորութիւն չտայ, ծանուցանելով միանգամայն որ սեպտեմբերի 10ին մամակ մի եւս գրած էի իւր հասցէին **poste restante** ի Պետրքուրգ. (այս մամակս առ իս վերադարձաւ ի Պետրքուրգէ սոյն ամսոյս 2ին, **non réclamée**): Սետպեմբեր 13ի մամակիս հետ յղեցի ի Տփղիս յանձնարարեալ մաւ ծրար մի Ստոքհոլմի երկու լրագրերու, յորս կային յօդուածք զժողովոյն, եւ զամենայն **Bulletin**-ս նոյն ժողովոյն՝ թիւ 1-10, եւ զԲ. Պրակ Քննասիրի: Մինչեւ այսօր ոչ թուղթ եւ ոչ թղթիկ, ոչ մի բառ եւ ոչ կէս բառի չգրեց ինձ Տ. Ա. Յովհաննիսեան. ոչինչ, ոչինչ: Փոյթ չէ. բայց ինչու՞ ուզեց շլացնել զիս մեծամեծ խոստումներով, եթէ կատարելոյ միտք չունէր:

Վսեմութիւնդ կը խնդրեմ ներէ շատխօսութեանս. Բայց իբրեւ առ յոյժ ազնիւ եւ սիրելի բարեկամ ուզեցի թափել զփղձուկ սրտիս՝ պատմելով յԷջմիածնէ եւ ի Տ. Ա. Յովհաննիսեանէ գտած ընդունելութիւնս:

Մաղթելով Ձեզ քաջողջութիւն, մնամ խորին մեծարանօք Վսեմութեանդ անձնամուէր

2009

ԳՈՀԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Ա 77

Նորայր

Վսեմական Տէր Կարապետ Եզեանց

20 փետրուար 1891

Այս առաւօտ ընկալայ զՁեր փետրուար 4ի թուղթն եւ կը փութամ պատասխանել: Կը յուսամ որ զայդ թուղթ գրելէ օր մի ետքը ընդունեցաք զիմ փետրուար 12ի մամակս, որ ըստ կարգի պիտի հասնէր ի Ձեր ձեռս ի 4/16 ամսոյս: Կը կրկնեմ ըսել սոյն գրութեամբս որ Վսեմութեանդ յղած չորս գրքերն առ իս հասան ողջ ամբողջ ի 22 դեկտեմբերի անցեալ տարւոյ, եւ վերստին կը մատուցանեմ զիմ խոր շնորհակալիս:

Կիմս եւ ես յոյժ ցաւեցանք լսելով որ հիւանդացիք էք. յամենայն սրտէ կը փափագիմ Ձեզ քաջառողջ եւ երկար կեանք: Բովանդակ Հայ Ազգիս մէջ չկայ որ ամենեւին՝ որոյ բարօրութիւնն եւ արեւշատութիւնն այնչափ պատուական եւ ցանկալի ըլլայ ինձ որչափ Վսեմութեանդ բարօրութիւնն եւ արեւշատութիւնն. սրտանց կ'ըսեմ զայս, կը խնդրեմ որ Դուք եւս սրտանց հաւատաք:

Մաղթելով ի Տեառնէ որ պարգեւէ Ձեզ անընդհատ զերկնաւոր եւ զմարմնաւոր բարիս, մնամ խորին մեծարանօք Վսեմական Տեառնդ անձնանուէր

Նորայր Ն. Բիւզանդացի

Կիմս կը մատուցանէ Վսեմութեանդ զիր յարգական ողջոյն եւ զսրտագին մաղթանս:

Վսեմական Տէր Կարապետ Եզեանց

28 ապրիլ 1891

Ի 25 ամսոյս ընկալայ զՁեր պատուական թուղթն ապրիլ 9ի թուականաւ (հ.տ.), եւ զգիրսն Հ. Բարսեղ Սարգիսեանի «Ազաթանգեղոս եւ իւր բազմադարեան զաղտնիքն», որոյ համար հետամուտ է հեղինակն Իզմիրեան մրցանակի: Վսեմութիւնդ մեծ պատիւ կ'ընէ ինձ թողլով յիմ դատաստան որ վնիռ հատանեմ թէ արժանի՞ է մատենան մրցանակի, թէ ոչ: Թէպէտ եւ կը փափագէի ոչ գործ ունենալ Իզմիրեան մրցանակի Յանձնաժողովոյն հետ եւ ոչ զբաղիլ Վեներկոյ մի Միփթարեանի աշխատասիրութեամբ, սակայն առ անչափ սէր եւ յարգութիւն զոր ունիմ առ Վսեմութիւնդ, յոժարակամ յանձն կ'առնում զառաջարկութիւնդ եւ պիտի ըսեմ զիմ կարծիս անաչառ բայց եւ առանց կողմնակալութեան:

Այսօր ավարտեցի զառաջին ընթերցումն մատենիդ, եւ նշանակեցի բազում ինչ. թէպէտ եւ կան ի միմ ոչ սակաւ սխալ տեսութիւնք եւ մեծամեծ տգիտութիւնք, բայց պատուական գործ է եւ արժանի մրցանակի: Յետ երկրորդ ընթերցման պիտի սկսիմ ի զիր առնուլ զիմ Քննադատութիւն. եւ որովհետեւ ես ինքնին ի բազում ամաց պարապեալ եմ Կորեան, Ազաթանգեղի եւ Փ. Բիւզանդաց գործերով, եւ ուրեք ուրեք կը համաձայնի Սարգիսեան իմ կարծեաց, եւ այլոր կը խոտորի, կը փափագիմ կատարելապէս զիմ կարծիս ի

հանդէս ածել եւ մի առ մի ցուցանել զհօր սխալներն, եւ այս բառական ժամանակի կը կարօտի (ամիս մի կամ ամիս ու կէս): Լաւագոյն կը թուի ինձ հաղորդել համառօտիւ զիմ դատաստանն առ Յանձնաժողովն (եթէ դիմեն առ իս) եւ հռչակել զՍարգիսեանի գործն արժանի մրցանակի, եւ զիմ ընդարձակ Քննադատութիւնն ուղղել առ Վսեմութիւնդ՝ խնդրելով, որ բարեհաճիք հրատարակել զայն ի Պետրքորդ առանձին տետրակաւ:

Վսեմութիւնդ կը համարձակեցնէ զիս խնդրել զայն մատենաներն՝ որոց կարեմ պէտք ունենայ: Ի Ստորհոլմի Արքունի մատենադարանին կը պակասին բազում գրեանք որ կարելոր եմ իմ ուսումնասիրութեանց: Ահա կը նշանակեմ որչափ որ կը յիշեմ առ այժմ, եւ ինչ որ յղէ Վսեմութիւնդ՝ անհուն երախտագիտութեամբ կ'ընդունիմ:

Կարապետ Թովմայեան, **Agathange et la doctrine de l'Église Arménienne au V^{ème} siècle, Lausanne, 1876.**

Paul de Lagarde, *Agathangelos und die Akten Gregors von Armenien, Göttingen, 1887.*

Նորին **Analecta Syriaca.**

Alfred von Gutschmid, Agathangelos, Leipzig, 1877.

Emine, Recherches sur le Paganisme arménien.

Maspero, 'Hist. ancienne de l'Orient', Paris, 1886.

Pitra, Anallecta Sacra Spicilegio Solesmenci.

Barbier de Meynard, Dict. géogr. et hist. de la Perse, Paris, 1861.

Ed. Dulaurier, Recherches sur la Chronologie arménienne, Paris, 1859.

J. P. Martin, Anallecta Sacra Patrum Antericqnorum.

Բրուէի գաղղիերէն թարգմանութիւնք մեր նախնեաց մատենագրութեանց.

Եղիշէի Պատերազմն Վարդանանց, հրատ. Տ. Խորենի ի Թեոդոսիա.

Միխայէլ Աստրոյ առաջին տպագրութիւնն Երուսաղեմի (ո՛չ այն որ հրատարակեալ է յԵրուսաղեմ յամի 1871 եւ յորում կայ կենդանագիր Սեթ Յ. Աբգարեանի).

V. Langlois, *Collections des historiens anciens et modernes de l'Arménie*, 2 vol. (այս կայ ի Ստորհոլմի Մատենադարանին, բայց կը փափագէի առ ձեռն ունենալ).

J. Saint-Martin, *Mémoires historiques et géographiques sur l'Arménie*, 2 vol.

Payne Smith, *Thesaurus Syriacus*, Oxford.

Վսեմութիւնդ երբ պատեմ առիթ ունենայ ստանալ զմին կամ զմիւսն յայս գրոց, մեծ եւ ամենամեծ շնորհ կ'ընէ յղելով առ իս: Առ այժմ կը խնդրեմ միայն զԵղիշէ (տպ. Տ. Խորենի) եւ զՄիխայէլ Աստրի, զի կարելոր եմ ինձ Աբրահամ Երիցու ձեռագրին բաղդատութեան համար. Միխայէլի պիտի աւարտի իմ ուսումնասիրութիւնն, եւ պիտի վերադարձնեմ զձեռագիրն առ Ձեզ:

Վսեմութիւնդ յոժար էր հայթհայթել զծախս հրատարակելի հայերէն գրոց ի Ստորհոլմ: Ես ունիմ պատրաստ զԿորիւն, զԱգաթանգել, զԲիւզանդ, զԴ. Փարպեցի. այս գրոց հրատարակութեան համար կազմած եմ փոքրիկ դրամագլուխ մի կնոջս նպաստիւ. եթէ Վսեմութիւնդ բարեհաճի այժմէն յղել զոր եւ է գումար, կը յաւելում ի դրամագլուխդ, սպասելով մինչեւ ցայն օր՝ յորում կամ ի Ստորհոլմ կամ այլոր յաջողիմ հրատարակել:

Մեր ապագայի մասին կը գրեմ առ Ձեզ ուրիշ անգամ:

Խնդիր մի եւս ունիմ: Կը փափագիմ որ Վսեմութիւնդ երբ նամակ գրէ ինձ, ծանուցանէ զթուական իմ վերջին նամակիս: Անուղղակի իմացայ ի գրելոցդ որ ընդունած էք զիմ փետրուար 12ի նամակն. բայց ոչ ինչ կ'ըսէք իմ փետրուար 20ի նամակի մասին, զոր գրեցի ի պատասխանի Ձեր փետրուար 4ի գրութեան:

Մատուցանելով Վսեմութեանդ զյարգական ողջոյնս ամուսնոյս, մնամ խորին մեծաբանօք եւ միշտ պատրաստ ի Ձեր ծառայութիւն

Նորայր Ն. Բյուզանդացի

Մեծարգոյ եւ Սիրելի Բարեկամ

Վսեմական Տէր Կ. Եզեանց

31 մայիս 1891

Ընկալայ զգիր Իզմիրեան Մրցանակի Յանձնաժողովոյն, զոր Վսեմութիւնդ յղեց առ իս. նոյնպէս զԵղիշէ (տպագրութիւն Տ. Խորենի), որոյ համար կը մատուցանեմ ջերմ շնորհակալիս. Նոյնպէս զՁեր վերջին գիրն մայիս 14 ի թուականաւ (հ. տ.):

Երեկ յղեցի ի Կ. Պօլիս առ յանձնաժողովն մրցանակին զիմ դատաստան զԱզաթանգեղոսէն Հ. Սարգիսեանի, խնդրելով որ հրատարակեն: Կարծեմ թէ Արեւելք լրագրի կու տան ի հրատարակութիւն. եթէ Վսեմութիւնդ չընդունիր զԱրեւելք, կը յղեմ Ձեզ օրինակ մի: Երկրորդ ընթերցմամբ փոխուեցաւ իմ առաջին դատումս. թերութիւնք եւ սխալք շատ աւելի են ի Քննադատութեանդ քան թէ ուղիղ տեսութիւնք: Գրեցի որ եթէ պատշաճ կը դատին՝ տան մնա, ոչ ի վարձատրութիւն Ազաթանգեղոսի, այլ լոկ ի քաջալերութիւն 250 փրանկ: Թէպէտեմ իմ կարծեօք Վենետկոյ Մխիթարեանք պետք չէ դրամական քաջալերութեան եւ վարձատրութեան փափագին. մոքա հարուստ են. աշխարհական աղքատ գրագէտներու իրաւունքն է Իզմիրեան մրցանակն, եւ ըստ իս՝ արժանի է ամենայն առատաձեռնութեամբ վարձատրել զնոսա, ներողամիտ լինելով իրեանց սխալանաց: Իսկ Վենետկոյ Մխիթարեանի սխալանաց եւ չկարեմ ներողամիտ լինել, եւ կարծեմ ամենայն ոք իրաւունք կու տայ ինձ:

Ընդ հուպ պիտի սկսիմ պատրաստել զիմ Տեսութիւնն զԱզաթանգեղէ եւ զՔննադատութենէն Հ. Սարգիսեանի, բայց չեմ կարծեր որ ամիսուկէս ժամանակի մէջ աւարտի:

Եթէ Աբրահամ Երիցու ձեռագրի ուսումնասիրութիւնս կատարի, կը ձեռնարկեմ ի պատրաստութիւն Ղ. Փարպեցոյ Պատմութեան եւ Թղթոյն, որք արդէն վաղուց իմ քննութեանց միտք եղած են, եւ միանգամայն կը լցուի թէ՛ Վսեմութեանդ փափագն եւ թէ՛ իմ՝ մոր հրատարակութիւն մի ընծայելով Փարպեցոյ կրկին մատենագրութեանց:

Իմ փետրուար 12ի նամակովս շնորհակալութիւն յայտնեցի Վսեմութեանդ Հ. Ղ. Ալիշանի Այրարատայ եւ Տ. Գ. Խալաթեանի Քննադատութեանն համար, ինչպէս նաեւ Կաղանկատուացոյ եւ Այրիվանեցոյ համար, զորս հաճեցաք փոխ տալ ինձ: Գրեցի նաեւ տրտմութեամբ զԷջմիածնէ եւ զՏ. Աբգար Յովհաննիսեանէ: Իսկ փետրուար 20 ի նամակս գրեցի այն օրն յորում ընկալայ զՁեր փետրուար 4ի թուղթն:

Մրցանակի Յանձնաժողովն կը խնդրէ յիմէն որ լետ դարձընեմ առ նոսա զՀ. Սարգիսեանի գիրքն: Բայց այս կարելի չէ, վասն զի առանց այնորիկ չկարեմ գրել զՏեսութիւնս: Յանձնաժողովն 2 օրինակ կ'ընդունի յիրաքանչիւր մատենէ՝ որ հետամուտ է մրցանակի. չէ՞ք կարծեր որ քննդատին իրաւունքն է առ իւր պահել զքննադատեալ մատենան:

Կիմս կը մատուցանէ Վսեմութեանդ զիւր մեծարանաց ողջոյն. եւ ես կը մնամ յարգանք միշտ պատրաստ ի Ձեր ծառայութիւն:

Նորայր Ն. Բիւզանդացի

Մեծարգոյ եւ Սիրելի Բարեկամ

Վսեմական Տէր Կ. Եզեանց,

7 յուլիս 1891

Ընկալայ զՁեր թուղթն յունիս 10ի թուականաւ (հ. տ.):

Կը խնդրեմ ի Վսեմութենէդ պահել տակաւին առ իս զձեռագիրն Արքաճառ Երիցոյ: Առանց Սարգիսեանի Ազաթանգեղոսին պիտի կարողանայի վերադարձնել Ձեզ զայն ի կատարած ամսոյս: Յունիսի 5էն ի վեր զբաղեալ եմ պատրաստելով զընդարձակ Տեսութիւնն զորմէ գրեցի Ձեզ արդէն. մեծ աշխատութիւն ձեռնարկած եմ, եւ կը յուսամ որ գոհ պիտի ըլլաք, երբ ընթեռնուք զիմ երկն: Յաւարտել Տեսութեանն կը փափաքիմ ընդօրինակել զՄիխայէլ Աստրի ձեռագրին, - զի անկարելի եղաւ ինձ ստանալ զտպագիրն Երուսաղեմի, - եւ այնուհետեւ կը դարձնեմ առ Ձեզ զպատուական ձեռագիրդ: Վսեմութիւնդ կը խնդրեմ ապահով ըլլայ. Ձեռագիրն ամենայն խնամով եւ զգուշութեամբ կը պահուի ի սեմեկիս. եւ մեծապէս շնորհակալ եմ եթէ բարեհաճիք թողուլ որ պարապով աւարտեմ զիմ ընդօրինակութիւնն:

Բարի ճանապարհ կը մաղթեմ Վսեմութեանդ, եւ ողջամբ դարձ ի Պետրբուրգ: Եթէ յերթին կամ ի դարձին ի Ստոքհոլմ հանդիպիք, մեծ ուրախութիւն կը պատճառէք կնոջս եւ ինձ:

Կիմս կ'ողջունէ մեծարանք զՎսեմութիւնդ. նոյնպէս եւ ես, որ եմ եւ մնամ միշտ պատրաստ ի Ձեր ծառայութիւն:

Յ.Գ. Ինչպէս ըսի ես կը փափաքիմ նախ աւարտել զՏեսութիւնն, եւ ապա դառնալ ի ձեռագիրն: Իսկ եթէ Վսեմութեանդ կամքն այն է, որ երկու-երեք ամսէն յլեմ առ Ձեզ զձեռագիրն, մէկտի կը դնեմ զՏեսութիւնն, եւ կը խոստանամ մինչեւ ի վերջ առաջիկայ սեպտեմբերի աւարտել զընդօրինակութիւն Միխայէլի: Հաճեցէք յայտնել զՁեր կամքն, եւ ես ամենայնիւ կը հպատակիմ Ձեր հրամանին:

Նորայր Ն. Բիւզանդացի

Մեծարգոյ եւ Սիրելի Բարեկամ

Վսեմական Տէր Կ. Եզեանց,

21 յուլիս 1891

Ընկալալ զԶեր յունիս 30/ յուլիս 12 թուականաւ ամսակն նոյնպէս եւ զՆալբանդեանցի աշխարհաբար թարգմանութիւն Փարպեցոյ թղթոյն, որու համար շնորհակալ եմ յոյժ: Իսկ զԽալաթեանի Ղազար Փարպեցին ունիմ:

Անչափ շնորհակալ եմ Վսեմութեանդ, որ կը հաճիք այլ եւս ժամանակ թողուլ առ իս զձեռագիրն Աբրահամ Երիցոյ: Տեսութիւնս կը յառաջանայ, պիտի ցուցանեմ, թէ ամենայն հաւաստեալ Կորինէ է թարգմանիչ Ազաթանգեղի, Բիզանդայ եւ Մակաբայեցոց, եւ թէ երեքեան մատենադ թարգմանեալք են յասորոյն: Ի Վսեմութենէդ խնդրած մատենաներէս առ այժմ միայն P. Smith Կ Thesaurus Syriacus կարեւոր էր ինձ. զի թէպէտ եւ Արքունի Մատենադարանն ունի զայն, այլ երթեւեկութեանց համար բաւական ժամանակ կը կորուսանեմ:

ԶՄուաշին Տպագրութիւն (Երուսաղեմի) Միխայելի Ասորոյ փնտոնցի անցեալ տարի ի Կ. Պօլիս, բայց չգտի. յանձնեցի գրավաճառաց, բայց ցայսօր չընկալայ: Եթէ Վսեմութեանդ յաջողի հայթայթել ինձ օրինակ մի, մեծապէս շնորհակալ կ'ըլլամ:

Փարպեցոյ Պատմութեան եւ Թղթոյն մասին, ինչպէս արդէն գրեցի Ձեզ, բազում կարեւոր ուղղութիւններ գործած եմ. եթէ ժամանակ ունենայի, կը յղէի Ձեզ զիմ բոլոր ուղղութիւնս, ինչպէս ըրի Լաստիվերտեցոյ Պատմութեան համար: Արարատ ամսագրի տարւոյս մարտի թուէն (երեսք 147-154) տեղեկացայ, թէ յէջմիածին կայ 2463 թուահամարով ձեռագիր մի, յորում բաց ի յԱզաթանգեղոսէ, ի Կորինէ եւ ի Խորենացոյ կայ մաւ Պատմութիւն Փարպեցոյ եւ Թուղթն նորա առ Վահան Մամիկոնեան: Կարելի՞ է արդեօք, որ Վսեմութիւնդ փոխ ընդունի զայս ձեռագիր, եւ ի Վսեմութենէդ՝ ես: Եթէ չէ կարելի, կը խնդրեմ որ բարեհաճիք ընդօրինակել տալ հմուտ եւ ուշադիր մի անձի զՓարպեցոյ Պատմութիւնն եւ Թուղթն: Ահաւասիկ թէ ինչպէս կը փափագիմ որ ընդօրինակուին. էջ առ էջ (այսինքն սիւնակ առ սիւնակ, եթէ երկիջան է ձեռագիրն), երես առ երես, եւ տող առ տող. այսու օրինակաւ՝ եթէ թերի բառք կամ թերթերու յետեւաւաւորութիւն կայ ի ձեռագրին, անմիջապէս կը յայտնուի որքանութիւնն եւ որպիսութիւնն: Կը փափագիմ մաւ, որ ընդօրինակուին ամենայն Յիշատակարանք ձեռագրին եւ ի լուսանցս նշանակեալ ամենայն ծանօթութիւնք:

Մատուցանելով Վսեմութեանդ զհաւաստիս իմ խորին մեծարանաց, մնամ ամենայն շնորհակալեօք Ձեր պատրաստական

Ն. Ն. Բիզանդացի

Կինս կ'ողջունէ զՎսեմութիւնդ ամենայն յարգութեամբ:

**Յոյժ Ազնի եւ Սիրելի Բարեկամ
Վսեմական Տէր Կ. Եզեանց**

8 նոյեմբեր 1891

Ընկալալ զհամառօտդ 18/30 հոկտեմբերի թուականաւ, եւ շատ ուրախացայ, լսելով, որ

ողջամբ դարձեր էք ի մայրաքաղաքդ ի Ջեր երկամսեայ ուղեւորութենէն: Ողջ եմ եւ ես շնորհիւ Տեառն, եւ անընդհատ կ'աշխատիմ յիմ ընդարձակ գործն, որոյ վերնագիր ընտրեցի զհետեւեալդ.

Կորիւն Վարդապետ եւ թարգմանութիւնք իւր

Ագաթանգեղոս, Փ. Բիւզանդ, Մակաբայեցիք, եւ Եթաղի Աղեքսանդրացոյ Յատաշաբանք եւ զլուխք Գործոց Առաքելոց, Թղթոցն Կաթողիկեայց եւ Պաւլոսի Չորեքտասան Թղթոց.

Եթէ Վսեմութիւնդ գոհ եղաւ Բ Պրակէ Բննասիրի, յորում ցուցի թէ ոչք են թարգմանութիւնք Մ. Խորենացոյ, կը յուսամ որ առաւելովքն գոհ պիտի ըլլայ նաեւ ի սմին աշխատութենէս, որ շատ աւելի ճոխ եւ մանրամասն է, քան զյօդուածն Մ. Խորենացի եւ թարգմանութիւնք իւր: Հարիրաւոր մանր մամնութիւնք ոճոյ Կորեան Պատմութեանն Մաշտոցի ընդ Ագաթանգեղոսի այլ եւս տարակոյս պիտի չթողուն ոչ միայն Պատմագրութեանդ թարգմանութիւն լինելոյն, այլ եւ թարգմանչին անձին վերայ: Բազմապատիկ են մամնութիւնքն Կորեան Պատմութեանն նաեւ ընդ Բիւզանդայ, ընդ Մակաբայեցիս եւ ընդ Եթաղէ: Իսկ մամնութիւնք Ագաթանգեղոսի, Բիւզանդայ, Մակաբայեցոց եւ Եթաղէ ընդ միմեանս՝ անթիւ են եւ անհամար:

ՅԵՐԿՐՈՐԴ մասին երկասիրութեանս կը խոսիմ, թէ մինչեւ ցարդ որչափ այլեայլ կարծիք յայտնուած են զԱգաթանգեղոսէ եւ զԲիւզանդայ, մասնաւորապէս քննելով զկարծիս Գաթըրճեանի՝ զոր հրատարակեց Հանդէս Ամսօրեայ, եւ սուղ ինչ քննելով նաեւ զԱգաթանգեղոսն Սարգիսեան Հ. Բարսղի, զոր բոլորովին աւելորդ է մանրակրկիտ քննութեան առնուլ:

Վսեմութիւնդ գիտէ, թէ ինչպէս առ անչափ սէր եւ յարգութիւն զոր ունիմ առ Ձեզ՝ յանձն առի պարապիլ Սարգիսեանի գործով եւ յղեցի զիմ Դատաստանն առ Յանձնաժողով Իզմիրեան մրցանակին: Գրեցի ի Դատաստանիս, թէ Ագաթանգեղոսն արժանի չէ մրցանակի, այլ ի քաջալերութիւն հեղինակին կրնայ տրուիլ 250 փրանկ: Խնդրեցի միանգամայն, որ հրատարակեն զիմ Դատաստանն, ստորագրութեամբս հանդերձ: Յանձնաժողովն որ մինչեւ ցարդ կը շատանայր մի եւեթ դատաւորի կարծեօք, յանձներ է զքննութիւն Ագաթանգեղոսի երկրորդ քննըչի, որով կը յայտնուի, թէ իմ ձեռնհասութեանս վերայ անվստահ է. եթէ գիտնայի զայդ՝ բացէ ի բաց կը հրաժարէի ի դատաւորութենէս: Ոչ Սարգիսեան ընդունեցաւ զիւր 250 փրանկն, ոչ իմ Դատաստանս հրատարակեցաւ, ոչ մի խօսք կամ գիր շնորհակալութեան ուղղուեցաւ առ իս, եւ վերջնական որոշումն Ագաթանգեղոսի մասին թողուեր է 1892ի: Խնդրեմ ըսէք ինձ Վսեմական Տէր, թէ իրաւունք ունի՞մ վշտանալոյ թէ ոչ: Այս ատթիւ կը կրկնեմ յայտնել Ձեզ զիմ ցաւ՝ Իզմիրեան մրցանակի յանձնուելուն ի Պատրիարքարանն Կ. Պօլսի: Մրցանակն արդարութեամբ եւ անաչառութեամբ չի բաշխուեր, այլ կողմնակցութեամբ. Վսեմութիւնդ ըսաւ թէ Գալուստ Ծիրմագանեան արժանի չէր 600 ոտրլի ընդունելուն. ես ալ կը յաւելում (առանց ճանաչելոյ զԱրշակ Տէր Միքայելեան եւ առանց տեսած լինելոյ զիւր գործն Հայաստանեայց Եկեղեցի եւ Բիւզանդական ժողովոց պարագայք), որ 30 օսմանեան ոսկի կողմնասիրութեամբ տրուած է իրեն այս տարի. ուսանող մի կարող չէ այսպիսի բարձր միջոց վերայ արժանաւոր հմտութեամբ ճառել՝ գերմանական մի քաղաքի անկիւնէն:

Վսեմութիւնդ յաջողեցա՞ւ արդեօք ստանալ օրինակ մի Միխայիլ Ասորոյ առաջին տպագրութենէն: Երբ համեմատեմ զայս եւս, ձեռագրին բաղդատութիւնն պիտի աւարտուի եւ ես պիտի յղեմ զայն առ Ձեզ, կրկին եւ կրկին շնորհակալութիւն յայտնելով, որ կը բարեհաճիք թողուլ զայն առ իս այսչափ ժամանակ:

Ի պատրուակէ մամակիդ տեղեկացայ որ յազմուականութեան աստիճան բարձրացեր է Վսեմութիւնդ: Յամենայն սրտէ կը խնդակցիմ, եւ կը փափագիմ գիտել զՁեր պատուանուն: Կը մաղթեմ որ ամենայն երկրաւոր պարգեւք եւ մեծութիւնք անպակաս ըլլան Ձեր անձէն:

Կիմս խորին մեծարանօք կ'ողջունէ զՁեզ. ընդ միմ եւ ես մատուցանելով զիմ յարգանքներս, մնամ միշտ պատրաստ ի Ձեր ծառայութիւն:

Նորայր Ն. Բիւզանդացի

Յոյժ Ազնիւ եւ Սիրելի Բարեկամ

Վսեմական Տէր Կ. Եզեանց

1 յունուար 1892

Նոր տարւոյս առաջին օրուան մէջ իմ առաջին մտածութիւնս Ձեզ համար է: Ի սրտէ կը մաղթեմ որ ամենայն բարեօք լի տարի մի ըլլայ Ձեզ, Ձեր ամենայն ձեռնարկութեանց, Աստուած լիովի յաջողութիւն պարգեւէ եւ զՁեր ամենայն իղձս արդիւնատուրէ Ձեր բաղձանաց համեմատ:

Ծատ ցաւեցայ որ հիւանդացեր էք, անշուշտ influenza ըստած հիւանդութեամբ՝ որ մաւ բաղաքիս մէջ կը ճարակի տասնութիւն օրէ ի վեր: Կը յուսամ թէ ապաքինած էք այժմ, եւ եռանդագին կը մաղթեմ, որ վայելէք միշտ կատարեալ ողջութիւն՝ առաջին ամենայն երկրաւոր բարեաց:

Ծնորհակալ եմ Ձեր պատուական մամակին համար՝ զոր ընկալայ ի 23 դեկտեմբերի: Կը տեսնեմ որ զՁեզ եւս յաճախ վշտացուցած է մերայնոց «քաղաքակրթական ձեւերու» անգիտութիւնն: Յայսմ մասին մշտնաւոր եմ Կ.Պօլսեցիք, որոց հետ զլիաւորապէս յարաբերութիւն ունեցած եմ ցարդ. շատերու գրած եմ թուղթ կամ ցաւակցութեան կամ խնդակցութեան, կամ ընծայատրութեան, երբեք պատասխան ընդունած չեմ: Տասնութիւն ամիս յառաջ թուղթ գրեցի առ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց, Թորոս Աղբարի այլեւայլ մասերուն յատուկ տեղեկութիւն խնդրելով. արժանի չեղայ պատասխանոյ:

Նկատմամբ իմ «Կորին Վարդապետ եւ Թարգմանութիւնք իւր» երկասիրութեանս, իմ փափագս է կամ զձեռագիր գործս վաճառել 1000 փրանկի, կամ տպագրութեան համար ստորագրութիւն բանալ 25 փրանկի: Բազում աշխատութիւն ունիմ սոյն երկասիրութեանս մէջ, բազում մոր (եւ կը յուսամ ուղիղ) տեսութիւններ: Այժմու մերազգի եւ օտարազգի քննադատներն՝ կարծէք թէ միաբանած եմ զայն ամենայն զոր չեն կրնար դիրաւ հասկանալ՝ սուտ հռչակելոյ, Խորենացոյ Պատմութիւնն հիստուած մ'է ստութեանց. Ազաթանգեղոսի գործն սուտ է, եւ հայ վարդապետ մ'է հեղինակն, մոյնպէս Փ. Բիւզանդ: Եթէ միայն աշխարհական մարդիկ այսօրինակ ամբաստանութեամբք աղարտել ջանային զաշա-

կերտու Սահակայ եւ Մեսրոպայ, (որոց մէջ եւ չեմ ճանաչեր եւ ոչ մի խարդախ անձն՝ որ ինքնահնար կարկատուն զրոյցներ ուզած ըլլայ հաւատացնել վերջնոցս իբր հաւատի պատմութիւն), վնասն մեծ չէր ըլլար: Բայց ի՞նչ ըսեմ Մխիթարեանց. եթէ սուտ եմ մեր հինգերորդ դարու սրբակրօն մախնիքն, ապա ուրեմն ինչո՞ւ կը խորշին ի Ռըմանէ՝ որ սուտ կը գտնէ զԱստուածաշունչ զիրս:

Կիմս կը մատուցանէ Վսեմութեանդ զիր ջերմ բարեմաղթութիւնս առաջիկայ տարույ համար: Ընդ միին եւ ես ողջունելով մեծարանօք զՎսեմական Տէրդ, մնամ միշտ պատ-րաստ ի Ձեր ծառայութիւն:

Նորայր Ն. Բիզանդացի

**Յոյժ Ազնիւ եւ Սիրելի Բարեկամ
Վսեմական Տեր Կ. Եզեանց**

15 մարտ 1892

Ընկալայ զՁեր թուղթն փետրուար 15/27 թուականաւ: Կը յուսամ որ այժմ ապաքինած էք, եւ կը մաղթեմ սրտագին որ միշտ քաջատողջ ըլլաք:

Ծնորհակալ եմ Վսեմութեանդ՝ որ կը փափագիք հրատարակեալ տեսնել զիմ գործն «Կորին Վարդապետ եւ Թարգմանութիւնք իւր»: Եթէ գտնուի բարերար ոմն որ հաճի իւր ծախսօք տպագրել տալ զայն, բայց եւ պարտաւորիմ 2-300 օրինակ մնա թողուլ, եւ քանի՞ օրինակ պիտի յաջողիմ վաճառել, եւ յետ 20-25% գրավաճառաց զեղչելոյ, քանի՞ փող պիտի շահիմ: Ամենայն աշխատաւոր զիր աշխատանաց վարձքն ընդունել կը բաղձայ. եւ ինչո՞ւ անվարձ աշխատեմ, որ չունիմ ոչ եկամուտ, ոչ ամսական թոշակ, մանաւանդ որ մոր երկասիրութեանս մէջ զայլոց անբաւ սխալ կարծիս եւ տեսութիւնս ուղղած եմ, եւ դժուարակնճիոն խնդիր մի պարզած լուսաւորած:

Ի Վսեմութեանդ փոխ ընդունած եմ զՄ. Կաղանկատուացի (տպ. Էմին) եւ զՄխ. Այրիվանցի (տպ. Պատկանեան): Զյետինս դարձուցի Ձեզ այսօր յանձնարարեալ, ամենայն շնորհակալութեամբ: Կը խնդրեմ որ հաճիք ծանուցանել թէ ընդունեցաք: Բաւական ժամանակ կայ որ յղած եմ Ձեզ յանձնարարեալ իտալերէն տետրակ մի. կը յուսամ որ ընդունած էք եւ զայն:

Այլ մատենաք գորս ընդունած եմ ի Ձեզ՝ եւ հետեւեալքդ. Եղիշէ (տպ. Թէոդոսիայ).- Խորէն Վ. Ստեփանէի աշխարհաբար Խորենացին, եւ Տ. Գ. Խալաթեանի Բնագրատութիւնն.- Ղ. Փարպեցւոյ Թուղթն, աշխարհաբար, զոր ինքնական յղեցիք: Կը խնդրեմ ըսէք թէ գորս յայս չորս մատենից պարտեմ դարձընել: Իսկ զձեռագիրն Աբրահամ Երիցու անվրէպ պիտի դարձընեմ առ Ձեզ յառաջիկայ յունիս ամսեան: Վսեմութիւնդ կը փափագի որ յանձնեմ զայն առ Վսեմ. Զինովեւ, Ռուսաց պաշտոնեայ ի քաղաքիս. լսած եմ թէ նշանաւոր արեւելագէտ մի է. եթէ կը հաճիք ի յունիս ամսեան քանի մի տող գրել առ Տ. Զինովիեւ եւ յղել ինձ պատիւ կը համարիմ ներկայանալ Ձեր գրով. կը յուսամ Ձեր շնորհիւ օգտուիլ յիւր գիտութենէ: Յետ այնորիկ պիտի պարապիմ Մ. Կաղանկատուացւոյ Պատմութեամբ որպէս զի ըստ կարի փութով դարձընեմ Ձեզ եւ զայն:

2009

ԳՈՀԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Ա 85

Մաղթելով Վսեմութեանդ քաջողջութիւն, մնամ ամենայն շնորհակալութեամբ եւ մեծարանօք

Ն. Ն. Բիւզանդացի

Կիմս կը մատուցանէ Ձեզ զիր յարգանաց ողջոյնն:

Յոյժ Ազնիւ Բարեկամ

Վսեմական Տէր Կ. Եզեանց,

1 յուլիս 1892

Կը խնդրեմ որ բարեհաճիք երկտողի ծանուցանել ինձ թէ ի Պետրբուրգ կը գտնուիք այժմ: Նոյն օրին որ ընդունեմ զՁեր թուղթն, կը յանձնեմ զձեռագիրն Աբրահամ Երիցու առ Վսեմ. Զինովիեւ, որպէս զի հասուցանէ զայն ի ձեռն Ձեր:

Խորին շնորհակալութեամբք եւ մեծարանօք, մնամ խոնարհաբար

Նորայր Ն. Բիւզանդացի

Յոյժ Ազնիւ Բարեկամ

Վսեմական Տէր Կ. Եզեանց

5 յուլիս 1892

Այս առաւօտ ընկալայ զՁեր պատուական թուղթն ի Wildbadgasteinէ գրեալ յ'2 ամսոյս, եւ շատ ցաւեցայ որ տակաւին չէք ապաքինած ի ծանր հիւանդութենէդ: Լի սրտով կը մաղթեմ որ ընդ հուսկ կազդուրիք եւ գտնեք կատարեալ առողջութիւն, յուրախութիւն Ձեր բազում բարեկամաց, եւ մասնատրապէս նուաստիս:

Հինգ օր յառաջ թղթիկ մի գրեցի առ Վսեմութիւնդ ի Պետրբուրգ, փափագելով գիտել թէ ի Պետրբուրգ եք, որպէս զի յանձնեմ զձեռագիրն Վսեմ. Զինովիեւի, եւ Դուք ապահովապէս ընդունեք զայն: Եւ որովհետեւ կը գրէք այժմ թէ ամսոյս 10/22ին միտք ունիք դառնալ ի Պետրբուրգ, լաւագոյն կ'երեւի ինձ աւանդել զձեռագիրն առ Վսեմ. Զինովիեւ յ'18 ամսոյս, որ կրնայ ժամանել ի Պետրբուրգ ի 23 կամ ի 24: Եթէ յանկարծ արգելուիք ի Պետրբուրգ գտնուելէ 22ին, անշուշտ կը գրէք ի Պետրբուրգ առ որ անկ է՝ որպէս զի խնամով պահէ զանգին ձեռագիրն մինչեւ ի դարձ Ձեր:

Այս առթիւ եւս կը կրկնեմ Վսեմութեանդ զհաւաստիս զիմ ջերմ երախտագիտութեան՝ փոխարէն այն ամէն բարութեանց զորս գտի ի Ձէնջ եւ կը յուսամ գտնել նաեւ յապագային, եւ մնամ սիրով եւ խոնարհաբար

Ն. Ն. Բիւզանդացի

Կիմս կը մատուցանէ Վսեմութեանդ զիր մեծարանաց ողջոյնս եւ սրտագին մաղթանս վասն քաջողջութեանդ:

Յոյժ Ազնի Բարեկամ**Վսեմական Տէր Կ. Եզեանց**

23 յուլիս 1892

Երեկ ներկայացայ Վսեմ. Տ. Զիովիեի՝ հանդերձ ձեռագրով Աբրահամ Երիցու, որպէս զի յառաջ քան զփակելս տեսնէ հեղ մի զձեռագիրն, եւ ժամադիր եղանք այսօրուան համար: Այսօր կրկին զնացի յիւր բնակարանն, բայց Վսեմ. Պաշտօնեայն չկարաց ընդունել զիս, եւ ըսել տուաւ ինձ որ կրնայի իւր սպասաւորին յանձնել զձեռագիրն. հետեւաբար խնդրեցի ի սպասաւորէն որ Տ. Զիովիեի մատուցանէ զձեռագիրն, զոր փակ փայտեայ արկղիկի մէջ զետեղած էի եւ մոմլաթով պատած ու կարած շուրջանակի: Ըսի երէկ Տ. Զիովիեի որ Վսեմութիւնդ 300 ոտքի յապահովել տուած էր զձեռագիրն, եւ խնդրեցի որ նոյնպէս յապահովել տայ, եւ զծախսն ծանուցանէ ինձ՝ որպէս զի հատուցանեմ: Կը խնդրեմ ի Վսեմութեանդ որ յանդորրութիւն սրտիս բարեհաճիք իսկոյն տեղեկութիւն տալ ինձ երբ հասնի ձեռագիրն ողջ անարատ ի ձեռսդ, ինչպէս կը յուսամ: Յղեցի Ձեզ յանձնարարեալ ամսովք յառաջ զՄիսիթար Այրիվանցի, զոր ընդունած էք անշուշտ, քիչ ժամանակէն կը յղեմ մաւել զՄ. Կաղանկատուացի:

Պարտ անձին կը համարիմ դարձեալ յայտնել Վսեմութեանդ զիմ խորին շնորհակալիս, որ այդպիսի պատուական եւ ընտիր ձեռագիր մի հաճեցաք վատահեալ յիս, եւ թողիք առ իս աւելի քան զերկու տարի: Շատ մեծ շնորհ ըրիք, եւ երախտագէտ եմ Ձեզ: Համարձակեցայ կապար գրչաւ նշանակել ի ստորոտ իւրաքանչիւր երեսի զթղթահամարսն, եւ յատկապէս կը խնդրեմ ի Ձեզ հաստատել տալ ճարտար գրակազմի զբայքայեալ թուղթսն, որ վախեմ կրնան ինձալ ի ձեռագրէն:

Գիտէք որ Վիեննայի Միսիթարեանք ձեռնարկած են հրատարակել զՄայր Յուցակ հայ գրչագրաց: Կը ներէ՞ Վսեմութիւնդ որ հաղորդեմ նոցա զնկարագիր ձեռագրիդ:

Կը յուսամ որ մամական կը գտնէ զՁեզ ի Պետրբուրգ, եւ լի սրտով կը մաղթեմ, որ վայելէք կատարեալ առողջութիւն:

Խորին մեծարանօք մնամ Վսեմութեանդ

անձնանուէր

Ն.Ն. Բիզանդացի

Կիմս կ'ողջունէ զՁեզ յարգանք: Գրեցի առ Վսեմութիւնդ ի 5 ամսոյ եւ թուղթ մի ի Badgastein:

Յոյժ Ազնի եւ Սիրելի Բարեկամ**Վսեմական Տէր Կ. Եզեանց**

18 հոկտեմբեր 1892

Ընկալայ զՁեր թուղթն սեպտեմբեր 3ի (հ.տ.) թուականաւ, եւ շատ ուրախ եղայ, լսելով որ անվնաս հասեր է ի ձեռսդ Աբրահամ Երիցու ձեռագիրն:

Կը փափագիք գիտել թէ իմ Կորին Վարդապետ եւ Թարգմանութիւնք իւր երկասիրու-

թիւնս ասարտա՞ծ է թէ ոչ: Այս ամառ՝ հանգստեան եւ շրջագայութեան պէտք զգացի անելի քան ուրիշ տարիներ. վասն որոյ ընդհատեցի զիմ աշխատութիւնն, մանաւանդ որ խնդրուեցաւ յիմէն Mémoire մի գրել թէ որչափ կարեւոր հարկ կայ Հայերէն բնագրաց քննադատական հրատարակութեան: Այս Mémoire ասարտած է, եւ քանի մի օրէն պիտի յղեմ զայն ի Հռոմ առ Accademia dei Lincei. պիտի հրատարակի գաղղիներէն լեզուա ի Պրակա նոյն Ակադեմիոյ: Յետ այնորիկ պիտի դառնամ ի Կորին, զոր կը բաղձամ ասարտել այս ձմեռ:

Յուլիս 23 ի թղթովս հարցուցի Վսեմութենէդ թէ ընդունա՞ծ էք արդեօք զՄխիթար Այրիվանցի՝ զոր դարձուցի Ձեզ. եւ թէ կը գերէ՞ք որ հաղորդեմ Վիեննայի Մխիթարեանց զնկարագիր Աբրահամ Երիցոյ ձեռագրին, (հարկաւ առանց ծանուցանելոյ որ ձեռագիրը յղեցաւ առ իս ի Պետրբուրգէ ի Ստոքհոլմ): Հաճեցէք, կ'աղաչեմ, կրկին հարցմանցս պատասխանի շնորհել:

Մաղթելով Վսեմական Տեսոնդ քաջողջութիւն, մնամ ամենայն յարգանք
անձնանուէր

Ն. Ն. Բիւզանդացի

Կիմս կը մատուցանէ Վսեմութեանդ զիր մեծարանաց ողջոյնս:

**Յոյժ Ազնիւ եւ Սիրելի Բարեկամ
Վսեմական Տէր Կ. Եզեանց**

1 յունուար 1893

Առաջին թուղթն զոր կը գրեմ յառաջին ատուր նոր տարույս՝ Ձեր Վսեմութեան համար է: Ծառ ցաւեցայ ընդ մահ մօրաքեաղ՝ զոր ծանուցիք ինձ Ձեր նոյեմբերի 22ի (հ.տ.) նամակաւ. ի սրտէ կը տրտմակցիմ Ձեզ, եւ կը փափագիմ ու կը մաղթեմ որ նոր տարիս ամենայնիւ երջանիկ եւ բարեկից ըլլայ զՁեզ համար, եւ ես ընդ երկար ժամանակ բախտ ունենամ վայելելոյ զՁեր անգին բարեկամութիւնն:

Ի գաղղիական եւ ի գերմանական լրագրաց իմացայ զմահ Տ. Խորէնի, դեղակուր անձնասպանութեամբ (ըստ Berliner Tagesblatt-ի): «Վստահելի անձն չէր», կը գրէք. պատմեմ Ձեզ այդու նկատմամբ զհետեւեալը: 1881ին, մինչդեռ ի Կ. Պօլիս էի, ըսաւ ինձ Տ. Գէորգ Ասլանեան, թէ իւր հօր, Տ. Մանուկ Ասլանեանի քով՝ կը գտնուէր հայերէն ձեռագիր մի. Տ. Խորէն կը տեսնէ զայն, եւ կը խնդրէ յանձնոր՝ որպէս զի ուսումնասիրէ. կը հաճի Տ. Մանուկ Ասլանեան, եւ կու տայ զձեռագիրն: Բաւական ժամանակ անցնելէ ետքը՝ Տ. Ասլանեան յետս կը պահանջէ զձեռագիրն. Տ. Խորէն կը պատասխանէ թէ ձեռագիրն աներեւոյթ եղած էր յիր տանէն: Հարցուցի ցԱսլանեան Գէորգ, թէ ինչ էր ձեռագրին բովանդակութիւնն. ըսաւ՝ թէ այսչափ միայն կը յիշէր որ պատուական ձեռագիր մի էր, եւ միւթն էր Ռուբինեան թագաւորաց Պատմութեան: Հաւանական կը թուի ինձ՝ որ Տ. Մանուկ Ասլանեանի այս ձեռագիրս այնչափ յարգի եւ կարեւոր էր որչափ ձեռագիրն Անսիգք Անտիոքայ եւ Սմբատայ Գումդուստապի Օրինագիրքն, նոյնպէս ստացուած նոյն անձին, զոր ապա ընծայեց զայն Վենետկոյ Մխիթարեանց մատենադարանին, ո՛ր զիտէ թէ ընչաքաղց

Տ. Խորենն վաճառած չէ զայն օտարի բարձր գնով: Ձեռագիր մի ասղան պէս չկարէ անյայտանալ:

Յիշատակարանն տպագրուել է ի Հոովմ: Որ օր ընդունիմ՝ պիտի յղեմ Ձեզ օրինակ մի, եւ կը փափագիմ լսել զդատաստան Վսեմութեանդ:

Կը փափագիմ զնել զամենայն գաղղիական թարգմանութիւնն Հայ մատենագրաց՝ զորս հրատարակած է Բրոսէ, ինչպէս նաեւ զՎրաց Պատմութիւնն՝ յորում կը գտնուի թարգմանութիւն հայագիր Վրաց Պատմութեան զոր հրատարակած են Մխիթարեանք: Կը խնդրեմ ի Վսեմութեանդ ցոյց տալ ինձ Պետրբուրգի գրավաճառ մի՝ որ կարող ըլլայ հայթայթել ինձ: Նոյնպէս զայն գործ Ն. Մատի (ռուսերէն) յորում հրատարակեալ է բաղդատութիւն Ս. Խորենացոյ Պատմութեան ընդ Սանահնեան գրչագրին:

Կրկնելով զիմ ջերմ բարեմաղթութիւնն շնորհաւոր նոր տարւոյ, կը մատուցանեմ միանգամայն Վսեմութեանդ զհաւաստիս իմ խորին մեծարանց:

Կինս կ'ողջունէ յարգանօք զՎսեմութիւնդ եւ կը մաղթէ նոյնպէս քաջողջութիւն եւ բարօրութիւն:

Նորայր Ն. Բիւզանդացի

*Նրապարակության պատրաստեց
Գոհար Ղազարյանը*

*ԱՇՈՏ ՆԱՅՐՈՒՆԻ**Պատմական գիտությունների դոկտոր*

**ԳՈԿՏՈՐ ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՄԻՈՒՄԻ ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ
ԵՎ ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐՋ Ի ՆԱՅՏ ԵԿՈՂ ԻՐԱՐԱՄԵՐԺ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ՝
ԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ**

Յոհաննես Լեփսիուսի մարդասիրական, հրապարակախոսական և հասարակական-քաղաքական գործունեությունը վերջին տարիներին Գերմանիայում ևս զգալի հնչեղություն է ձեռք բերել: Պաշտոնական Գերմանիայի կողմից այն իր գնահատանքն ու ճանաչումը ստացավ մասնավորապես հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանական Բունդեսթագի՝ 2005 թ. հունիսի 15-ին ընդունված բանաձևում, որտեղ բառացիորեն նշված է. «Գերմանական Բունդեսթագն իր հարգանքի տուրքն է մատուցում այն բոլոր գերմանացիներին և թուրքերին, որոնք դժվարին հանգամանքներում և հակառակ իրենց այն ժամանակվա կառավարության դիմադրությանը: խոսքով և գործով նվիրվել են հայ կանանց, տղամարդկանց և երեխաների փրկությանը: Առանձնապես դր. Յոհաննես Լեփսիուսի գործը, որը եռանդով և ազդու կերպով պայքարել է հայ ժողովրդի վերապրման համար, պետք է մոռացումից դուրս բերվի և հայ, գերմանացի և թուրք ժողովուրդների միջև հարաբերությունների բարելավման իմաստով խնամվի ու պահպանվի»:

Ի ճանաչումն Լեփսիուսի անմնացորդ հայանվեր մարդասիրական գործունեության, գերմանական կառավարությունն այնուհետև վճռեց 300 000 եվրո հատկացնել Պոտսդամում գտնվող Լեփսիուսի առանձնատան վերանորոգման համար, որն այնուհետև պետք է դառնար հայոց ցեղասպանության հիշման, գիտական հետազոտությունների անցկացման և հայ-գերմանական մշակութային միջոցառումների իրականացման վայր, ապահովվեր հարուստ գրադարանով և այլն: Ավելորդ է ասել, թե այս հանգամանքը ինչպիսի վայմասուն առաջացրեց Գերմանիայի և Թուրքիայի թուրք ազգայնական շրջաններում, որոնք զանազան բողոքներով և հերյուրանքներով ամեն կերպ փորձում էին բեկանել կառավարության որոշման կենսագործումը: Ինչպես Գերմանիայի Արտգործախարարության պետքարտուղար Գերնոթ Էրլերն է վավերացրել իր պաշտոնական տեղեկություններից մեկում, մինչև իսկ թուրքական կառավարությունն է իր մտահոգությունն արտահայտել Լեփսիուսի առանձնատունը վերոնշյալ նպատակներով օգտագործելու կապակցությամբ:

Երբ գերմանացի հրապարակախոս Վոլֆգանգ Գուստը զանգվածային մամուլում և զանազան ինտերնետային կայքերում հրապարակումներ կատարեց Լեփսիուսի կողմից 1919 թ. հրատարակված «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ.» վերնագիրը կրող գերմանական դիվանագիտական տեղեկագրերի ժողովածուում տեղ գտած կրճատումների և փոփոխությունների մասին, դա դարձավ հիմնական շարժառիթ Լեփսիուս մարդա-

սերին վարկաբեկելու և ըստ այդմ մաս կառավարության որոշումը վիճարկելի և սխալ համարելու համար: Գուստը, որն, ի դեպ, գերազանցապես անտեղյակ է Լեփսիուսի հումանիստական և հասարակական-քաղաքական գործունեության պատմությանը, այդ առնչությամբ այն պնդումն է արտահայտել, որ Լեփսիուսը գերմանական Արտգործնախարարության հանձնարարությամբ փաստաթղթերում կատարած կրճատումներով և փոփոխություններով փորձել է ամեն կերպ կոծկել հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցությունը: Բառացի հղում եմ նրա «Մոզական քառանկյուն» հոդվածից «...դրանք կատարվել են որոշակի մեթոդով, ... հանվել են ցեղասպանության խնդիրների առնչությամբ գերմանական կայսրության քաղաքականությանը վերաբերող կարևոր մատնանշումները, գերմանական մեղսակցությունը, մաս գերմանացի սպաների մասնակցությունը հայերի հալածանքներին»¹:

Այդ սենսացիոն «հայտնագործությանն» առավելագույն կշիռ տալու և դրա միջոցով մաս Լեփսիուսի պատմական դերի վերագնահատմանը հասնելու հրապարակախոսական գայթակղությունը Գուստին այնուհետև դրդել է շարունակել զարգացնել իր տեսակետը՝ մատնանշելով, որ Լեփսիուսը, ունենալով ծայրահեղ հակաթուրքական դիրքորոշում, եղել է մաս աջ ծայրահեղական թեքում ունեցող հակադեմոկրատ, պատկանել է գերմանացի գեներալ, հետագայում Հիտլերի մերձավոր Էրիխ Լուդենդորֆի միջավայրին, մինչև իսկ հարել է հակասեմիտական ռասայական գաղափարներին և մշտապես, մաս Վայմարյան Հանրապետության շրջանում եղել է գերմանական մեծ կայսրության ջատագով:

Եթե մկատի առնենք, որ Լեփսիուսը տասնամյակներ շարունակ միանշանակորեն դիտվել է որպես մեծագույն մարդասեր և հայ ժողովրդի անմնացորդ դատապաշտպան, ապա ինքնին հասկանալի է, որ նրա գործունեության վարկաբեկումը թուրք պատմագրության կողմից պետք է ընկալվեր մաս որպես նրա կողմից հետապնդված հայ դատի վարկաբեկում, և պատահական չէ, որ թուրքական կողմը, ի դեմս գերմանաբան պատմաբան Կեմ Օզգունուլի, անմիջապես որդեգրեց այդ տեսակետները՝ իր հերթին որևէ առիթ բաց չթողնելով դրանք հանգամանակից վերարտադրելու համար:

Ցավալի է, որ Գուստի կողմից արտահայտված պնդումները միանշանակորեն, անքննադատ կերպով ընդունել է մաս Բուդեթթագի «Ջախեր» խմբակցությունը, որն այս տարվա հուլիսին իր ներքին քաղաքական հարցերով զբաղվող աշխատակցուհու՝ Ուլլա Յելպկեի միաձայնությամբ ու ակտիվ աջակցությամբ «Փոքրիկ հարցում» անվանումը կրող մի հայտ ուղղեց դաշնային կառավարությանը: Դրանում մի կողմից ափսոսանք արտահայտելով այն առնչությամբ, որ կառավարությունը, բացի Լեփսիուսի առանձնատանը վերաբերող վերոնշյալ ձեռնարկումից, ուրիշ ոչինչ չի արել հայոց ցեղասպանության հիշումը, հունիսի 15-ի բանաձևում ամրագրված՝ հարցին առնչվող այլ կետերը պատշաճ կերպով իրականացնելու համար, և մյուս կողմից՝ կառավարությանը ներկայացնելով Լեփսիուսին վերաբերող Գուստի տեսակետները՝ խմբակցությունը միանգամայն վիճարկելի էր համարում Լեփսիուսի առանձնատանը վերաբերող կառավարության վերոնշյալ հանձնառության պատշաճությունն ու հիմնավորվածությունը:

¹ Տե՛ս ինքեթն. ցանցում **Gust W.**: Magisches Viereck. Johannes Lepsius, Deutschland und Armenien.

Հուլիսի 27-ին Արտգործնախարարության պետքարտուղար Գերնոթ Էրլերը Բունդես-թագի նախագահ Նորբերտ Լամերտին ուղարկեց դաշնային կառավարության պատաս-խանը «Ձախեր» խմբակցության հարցման առնչությամբ, որտեղ մասնավորապես նշվում էր, որ Լեփսիուսի առանձնատանը ճիմնվելիք հաստատությունը իր խնդիրը պետք է դարձնի նաև Լեփսիուսի անձի հետ կապված բոլոր վիճահարույց հարցերի ուսումնասի-րությունը, իսկ առանձնատան վերանորոգման խոստացված ֆինանսավորումը առկա-ված է մինչև այդ ֆինանսների օգտագործման վերաբերյալ Բրանդենբուրգի երկրամասի և դաշնային կառավարության միջև համաձայնության կայացումը:

Չնայած կառավարությունը, ինչպես վկայում է վերոնշյալ պաշտոնական պատասխա-նը, «Ձախեր» խմբակցության կողմից արտահայտված նկատառումները միանշանակորեն ճիմք չի համարել Լեփսիուսի առանձնատան կապակցությամբ իր ստանձնած նախաձեռ-նությունից հրաժարվելու համար, այնուամենայնիվ, ինքնին հասկանալի է, որ այդ վար-կաբեկիչ քարոզչության հետևանքով Լեփսիուսի առանձնատունը հայոց ցեղասպանությա-ն հիշման վայր դարձնելու կառավարական նախաձեռնությունն էապես վտանգված է: Գա արձանագրել է նաև «Ձախեր» խմբակցությունն իր հուլիսի 29-ի մամլո հաղորդագ-րության մեջ, իսկ «Junge Welt» պարբերականն իր հուլիսի 30-ի համարում հայտարարում է, որ դաշնային կառավարությունը հայոց ցեղասպանության հիշման վայր ստեղծելու համար մեծարում է մի աջ ծայրահեղական թեքում ունեցող հակադեմոկրատի, Վայմար-յան Հանրապետության հակառակորդի և պատմության կեղծարարի ու այդպիսով ընդհա-նուր առմամբ վտանգում է նաև հայոց ցեղասպանության հիշումը:

Այս ամենը մենք վկայակոչեցինք ամբողջական պատկերացում տալու համար ներկա-յումս Լեփսիուսի դեմ ծավալվող կրքոտ քարոզարշավի և դրա փաստացի ու հնարավոր հետևանքների մասին, իսկ այժմ կկամենայինք քննական լուսաբանման ենթարկել այն հարցը, թե ինչ կովաններ են փորձում օգտագործել Լեփսիուսի քննադատները, և դրանք ինչ չափով են հավաստի կամ հիմնավոր:

Եթե փորձենք ի մի բերել այն՝ այսպես կոչված հիմնավորումները, որոնցով կատար-վել և կատարվում է Լեփսիուսի մարդասիրական ու հասարակական-քաղաքական գոր-ծունեության վարկաբեկումը, ապա կտեսնենք, որը դրանք գերազանցապես վերաբերում են Լեփսիուսի ժողովածուում տեղ գտած կրճատումների և փոփոխությունների հանգա-մանքին, որոնք, ըստ Լեփսիուսի քննադատների, նա կատարել է հայոց ցեղասպանությա-ն հարցում Գերմանիայի մեղսակցությունը կոծկելու նպատակով:

Այն, որ Լեփսիուսի հրատարակած փաստաթղթերում կատարվել են զգալի քանա-կությամբ կրճատումներ և փոփոխություններ, փաստ է, և դա Հայաստանում հայտնի է դարձել ավելի վաղ, քան Գերմանիայում: Լեփսիուսի հրատարակած փաստաթղթերի և դրանց ամբողջական օրինակների համեմատական քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ կրճատումների և փոփոխությունների՝ Գուտտի կողմից կատարված մեթոդական դա-սակարգումն ու մեկնաբանությունները միանգամայն անհիմն են և իրականությանը չեն համապատասխանում:

Եթե փորձենք Լեփսիուսի կատարած կրճատումներն ու փոփոխությունները, որոնք ի-րականում խիստ բազմաբնույթ են, մեթոդաբանական դասակարգման ենթարկել, ապա

պարզ կդառնա, որ դրանցում մեծ թիվ են կազմում հայերի հակապետական, հեղափոխական ձգտումների, դավաճանությունների և դասալքությունների վերաբերյալ թուրքական պաշտոնական քարոզչության ազդեցությամբ գերմանական արձանագրություններում տեղ գտած հիշատակությունները, որոնք հաստատման կամ հերքման ենթակա չլինելով՝ Հայկական հարցին և հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող՝ հետզինադադարյան քննարկումների ընթացքում կարող էին ապակողմնորոշիչ և վնասակար նշանակություն ունենալ²: Ուստի հասկանալի է, որ Լ.Եփսիուսը դրանք ժողովածուից դուրս է թողել:

Բացի այդ, հենվելով իր հետազոտությունների արդյունքների վրա՝ նա կատարել է նաև փաստաթղթերում տեղ գտած մի շարք տեղագրական, ժամանակային և թվական տվյալների ճշգրտումներ, որոնք այլ նպատակ չեն ունեցել, քան ճշմարտությանը հավատարիմ մնալ և, մյուս կողմից, եղելությունների ու դրանց հետևանքների՝ փաստաթղթերից արտածվող ընդհանուր պատկերը դարձնել հնարավորինս կոտ և անխոցելի³: Կատարված բազմաթիվ այլ փոփոխություններ ունեն սույն ոճական նշանակություն և այլ՝ ավելի առարկայական միտում չեն հետապնդել⁴: Եվ վերջապես կա նաև կրճատումների մի խմբաքանակ, որն իրոք վերաբերում է եղբրական իրադարձություններին գերմանական կողմի մասնակցության խնդրին, սակայն գերազանցապես բովանդակելով բնակչության շրջանում արտահայտված ընդհանուր տեսակետներ և ենթադրություններ՝ Գերմանիայի մեղսակցության հաստատման համար հիմք դառնալ չէր կարող⁵:

Անշուշտ, միամտություն կլինեք կարծել, թե պաշտոնական Գերմանիան հայոց ցեղասպանության հարցում պատասխանատվության իր բաժինը կրելու վտանգին իրազեկ չէր, առավել ևս, երբ, ինչպես բազմիցս հաղորդում էին հյուպատոսական տեղեկագրերը, ոչ միայն Անտանտի և չեզոք երկրների, այլև թուրքական ոչ պաշտոնական քարոզչությունը ջանում էր ցեղասպանության ողջ պատասխանատվությունը բարդել Գերմանիայի վրա, և դրա դեմ ժամանակ առաջ անհրաժեշտ քայլեր չէր ձեռնարկել: Կ. Պոլսի գերմանական դեսպանությունն այդ նպատակով դեռ աքսորի շրջանում հանդես էր եկել Բ. Դոանն ուղղված մի շարք ամուլ բողոքարկումներով և նախազգուշացումներով, որոնք նպատակ ունեին փաստել Գերմանիայի անհամաձայնությունը հայ ժողովրդի զանգվածային տեղահանման առնչությամբ և միաժամանակ վկայել այն կանխելու՝ Թուրքիայի զինակցի անկարողությունը⁶: Մի շարք դիվանագիտական հաղորդագրությունների միջոցով նաև հաստատվում է, որ գերմանացի զինվորականներն ու դիվանագետները հենց միայն գերմանական կողմին հետազայում մեղսակցության մեղադրանքներից զերծ պահելու նպատակով, որպես կանոն, խուսափել են մասնակցել հայ ժողովրդի տեղահանման

² Տե՛ս ինք՝ ցանկում՝ **Gust W.**: Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke« <http://home.t-online.de/home/wolfgang.gust/dvita.htm>: Այդ ժողովածուում Կենն ի թիվս այլոց, թիվ 9, 15, 18, 25, 26, 99, 116, 126, 129, 132, 143, 149, 185, 193, 226, 246, 300, 306, 317, 333, 377, 425, 426, 432, 435 թղթակցությունները:

³ Տե՛ս, ի թիվս այլոց, թիվ 7, 9, 10, 12, 47, 51, 165, 193, 218, 226, 279, 302, 345, 356 թղթակցությունները: Անդ:

⁴ Տե՛ս, ի թիվս այլոց, թիվ 4, 15, 19, 34, 80, 114, 132, 137, 174, 176, 187, 192, 226, 242, 307, 370, 377, 405, 413, 430 փաստաթղթերը: Անդ:

⁵ Տե՛ս, ի թիվս այլոց, թիվ 11, 13, 18, 129, 297, 426 փաստաթղթերը: Անդ:

⁶ Տե՛ս, ի թիվս այլոց, 106, 116, 144, 201, 215, 216, 273, 284, 417 փաստաթղթերը: Անդ:

և բնաջնջման գործողություններին, և ամենայն հավանականությամբ մահ համապատասխան հրահանգավորում են ստացել Բեռլինից:

Մյուս կողմից, ինչպես հենց ինքը՝ Գուստն է վերանայված փաստաթղթերի՝ իր կազմած ժողովածուի առաջաբանում տեղեկացնում, փաստաթղթերը, մախքան Լեփսիուսին տրամադրվելը, Գերմանիայի Արտգործնախարարության և Կ. Պոլսի գերմանական դեսպանության կողմից բազմիցս ենթարկվել էին «զտումների»⁷: Հետևապես զարմանալի չէ, որ, ինչպես ցույց է տալիս փաստաթղթերի ամբողջական ժողովածուի ուսումնասիրությունը, Լեփսիուսի տրամադրության տակ մնում էր միայն երեք՝ քիչ թե շատ առարկայական հիշատակություն ընդհանուր թվով՝ մեկ գերմանացի զինվորականի վերաբերյալ, որը մասնակցել էր հայկական կոտորածներին⁸: Խոսքը վերաբերում է մայրը կոմս Վոլֆֆոն Վոլֆսկիլին, որը, հակառակ Հալեայի հյուպատոս Ռոսկերի խիստ նախազգուշացումներին, 1915 թ. ապրիլին Այնթապում, Մարաշում և Զեյթունում այսպես կոչված «տեսչական ստուգումներ» կատարելու ժամանակ ուղեկցել էր Ֆահրի փաշային, սեպտեմբերին մրա հետ միասին մասնակցել Մուսալեռցիների դեմ իրագործված ռազմական գործողություններին, իսկ այնուհետև օգնել մրան՝ ճնշելու Ուռֆայի հայության ինքնապաշտպանությունը⁹:

Գրանք, անկասկած, ցեղասպանության հարցում Գերմանիայի մասնակցության և ըստ այդմ մեղսակցության հաստատման համար բավարար հիմք չէին հանդիսանում, սակայն դառնալով շահարկումների առարկա՝ կարող էին ստվերել երիտթուրքերի հանցավորության միանշանակությունը և վնասել հայ ժողովրդի հատուցմանը և հայկական հարցին վերաբերող՝ սպասվելիք բանակցագործընթացը: Մեղսակցության՝ հիմնավորման ոչ ենթակա պնդումները, բնականաբար, այլ նշանակություն չէին կարող ունենալ, քան մեղքի ստվերումը, ուստի ինքնին հասկանալի է, որ Լեփսիուսը սպասվելիք բանակցագործընթացում դա բացատելու համար իր ժողովածուից դուրս է հանել վերոնշյալ զինվորականին վերաբերող տողերը:

Ինչ վերաբերում է հիշյալ ենթախմբին պատկանող մյուս կրճատումներին, որոնք Գուստնի կողմից մնամապես մեկնաբանվում են «Գերմանիայի մեղսակցության» կոծկման միտումով, ապա դրանցից և ոչ մեկը մեղսակցության որևէ փաստացի վկայություն չէր պարունակում, այլ, ինչպես նշվեց, գերազանցապես բովանդակելով բնակչության շրջանում արտահայտված ընդհանուր տեսակետներ՝ լավագույն դեպքում հնարավորություն էր ընձեռում խնդիրը դիտարկել բարոյական շահագրգռությունների ոլորտում: Մեր համոզմամբ Լեփսիուսը ժողովածուն կազմելիս առաջնորդվել է այս՝ միանգամայն քաղաքական նկատառումներով, ինչը վկայում է մահ մրա ժողովածուի և փաստաթղթերի բնօրինակների համեմատական քննությունը, և մրա վարքագծի պայմանավորումը Գերմանիայի մեղսակցության կոծկումով կամ Գերմանիայի հանդեպ տաժած «սիրով», ամենևին իրատեսական չէ:

Ի դեպ, ակնհայտորեն դժգոհ լինելով Լեփսիուսի կողմից հրատարակված և իր կողմից

⁷ Անդ, Vorwort...:

⁸ Անդ:

⁹ Տե՛ս թիվ 25, 188 և 193 թղթակցությունները:

վերանայված փաստաթղթերում հայկական կոտորածներին գերմանական կողմի մասնակցությանը վերաբերող փաստերի սակավությունից, Գուստը նաև այն ենթադրությունն է կատարում, որ Լեփսիուսը որոշ փաստաթղթեր, որոնք «նրա կողմից հետապնդված քաղաքական գծին» չէին համապատասխանում, գիտակցաբար ամենևին չի ներառել իր ժողովածուում¹⁰:

Այն հանգամանքը, որ ժամանակին Արտգործնախարարության կողմից Լեփսիուսին ոչ բոլոր դիվանագիտական փաստաթղթերն են մատչելի դարձվել, միանշանակորեն պարզ դարձավ դեռ հանգուցյալ ակադեմիկոս Վ. Միքայելյանի կողմից կազմված ժողովածուի հրապարակումից հետո: Ավելին, Միքայելյանի ժողովածուում ամփոփված առանձին ուշագրավ թղթակցություններ վկայում են, որ Լեփսիուսն իրեն չհանձնված մի շարք փաստաթղթերի մասին Հալեպի նախկին հյուպատոսի միջոցով իրազեկվել է միայն իր ժողովածուի հրապարակումից հետո, և որ գերմանական Արտգործնախարարությունը նույնիսկ նրա բավական հնարամիտ հիմնավորումներից հետո հրաժարվել է այդ փաստաթղթերը կամ դրանց պատճենները նրան ուղարկել¹¹:

Այդ ավելի հասկանալի դարձնելու համար հարկ է մշել, որ ժողովածուի կազմման հարցում Արտգործնախարարության և Լեփսիուսի դիրքորոշումները միանգամայն տարբեր էին: Ինչպես վկայում է Արտգործնախարարության աշխատակից, գաղտնի խորհրդական Գյուպերտի՝ Լեփսիուսին ուղղված մամակներից մեկը, նախարարությանը հետաքրքրում էր ոչ միայն հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցության՝ Անտանտի և չեզոք երկրների մամուլում մեծ տարածում ստացած պնդումների հերքումը, այլև, որչափ որ թուրքական կառավարության հանցավորության ներկայացումը դրան չէր նպաստում, նաև այդ հանցավորության պարտականությունը¹²: Մինչդեռ Լեփսիուսը ձգտում էր լուսաբանել հայ ժողովրդի դեմ իրագործված ոճրագործությունները, մերկացնել դրանց բուն կազմակերպիչներին և նպաստել հայության արդարացի հատուցմանը: Ընդ որում, Արտգործնախարարությունը բնականաբար խիստ շահագրգռված էր, որ այդ առաջադրանքը կատարեր ոչ այլ ոք, քան Լեփսիուսը, որն իբրև անձնուրաց հայանվեր գործիչ մեծ վստահություն էր վայելում ոչ միայն հայկական շրջաններում, այլև Գերմանիայի հակառակորդ երկրներում¹³: Իսկ Լեփսիուսն իր նպատակին հասնելու համար պարտավոր էր ըստ հարկի պահպանել Արտգործնախարարության հետ փոխըմբռնումը, ինչն, իհարկե, խիստ դժվար էր, սակայն ոչ անհնար, քանի որ նա իր տրամադրության տակ գտնվող փաստաթղթերի միջոցով պետք է համոզվեր, որ Գերմանիայի՝ իբրև ցեղասպանության «կազմակերպիչ» կամ «մասնակցի»՝ Անտանտի երկրներում ի հայտ եկած համարումը փաստաիրավական հիմքեր չունեն, իսկ խնդրո առարկա՝ կրճատված կամ փոփոխման

¹⁰ Տե՛ս **Gust W.**: Vorwort..., Ինքնին հասկանալի է, որ «քաղաքական գիծ» ասելով՝ Վ. Գուստը նկատի ունի Գերմանիայի մեղսակցության առնչությամբ իր կողմից Լեփսիուսին վերագրվող միտումը:

¹¹ Տե՛ս այդ մասին Վ. Միքայելյանի սպառիչ պարզաբանումն իր ժողովածուի առաջաբանում, փո՛ս **Михаеля В.**, Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)..., էջ 5-6: Լեփսիուսի և գաղտնի խորհրդական Գյուպերտի միջև կատարված թղթակցությունների ամբողջական տեքստը փո՛ս անդ, էջ 603-604 և 607-608:

¹² Տե՛ս անդ, էջ 607:

¹³ Տե՛ս այդ մասին նաև ԱԳՆ-ի պարասխանաբու աշխարակցի վկայությունը: Անդ, էջ 593:

ենթարկված հատվածները, որոնք կրճատումների և փոփոխությունների ընդհանուր զանգվածի մեջ միայն մի փոքր թիվ են կազմում, կարող էին Գերմանիայի մեղսակցության հարցը լավագույն դեպքում սոսկ բարոյական հարթության վրա դիտարկելու հնարավորություն ընձեռել. հանգամանք, որի քաղաքական շահարկումները հայ ժողովրդի համար բախտորոշ այդ օրերին կարող էին անկանխատեսելի հետևանքներ ունենալ, և որն, անկասկած, ժողովածուն կազմելիս ըստ հարկի գիտակցում և արժևորում էր մաս Լեփսիուսը: Ուստի հասկանալի է, որ մա հիշյալ հատվածները ժողովածուում չի ներառել:

Թերևս ավելորդ չէր լինի մաս նշել, որ կարծես հեռագրալով ապագայում իր ժողովածուի վերաբերյալ առանձին կասկածների առաջացման հնարավորությունը, Լեփսիուսն ինքը հարկ է համարել կատարել հետևյալ պարզաբանումը, որով վերոնշյալը լրացուցիչ ուշագրավ հիմնավորում է ստանում: Կրկին ընդգծենք, մա այդ ժամանակ պատկերացում իսկ չունեի ԱԳՆ-ի կողմից իրեն չհանձնված նյութերի մասին: «Ես ստանձնում եմ փաստաթղթերի ընտրության և Հայկական հարցի առնչությամբ գերմանական կառավարության դիրքորոշման՝ ճշմարիտ ներկայացման հետ կապված ողջ պատասխանատվությունը: Բացառելու համար ցանկացած կասկած, թե իբր ինչ-ինչ տեսանկյուններից գերմանական կառավարությանը, դեսպաններին և հյուպատոսներին կամ զանազան գերմանացի սպաների, պաշտոնյաների ու անհատների ծանրաբեռնող փաստաթղթերը կարող են իմ կողմից վանված լինել, ես դիվանագիտական փաստաթղթերի այնպիսի լիարժեք ընտրություն եմ կատարել (որոնք մաս բազմաթիվ, հարցի առնչությամբ միանգամայն աննշանակ բյուրոկրատական նյութեր են ամփոփում), որ թղթակցությունների ներքին շարունակականությունը երաշխավորում է դրանց առարկայական ամբողջականությունը»¹⁴:

Իսկ ինչ վերաբերում էր Լեփսիուսի բուն մպատակին, այն է՝ ոճրագործությունների փաստացի լուսաբանմանը և դրանց պատասխանատուների մերկացմանը, ապա մա այդ պատշաճ կերպով կարողացավ իրագործել, չնայած թուրքական կողմին ծանրաբեռնող փաստաթղթերի առնչությամբ Արտգործնախարարության որդեգրած վերոհիշյալ դիրքորոշմանն ու դրանով պայմանավորված բոլոր խոչընդոտներին: Այն, որ Լեփսիուսն այդ հարցում ևս բավականաչափ ազատություն չէր վայելում, կարող էր վկայել, օրինակ, Գյուպերտին ուղղված նրա հետևյալ բազմանշանակ պարզաբանումը. «Ես միանգամայն անհնար եմ համարում ...փաստաթղթերից դուրս հանել կոտորածների կազմակերպիչներին վերաբերող այն ամենը, ինչը ոչ վաղուց, և ավելին, հարյուրավոր վկաների միջոցով հայտնի է դարձել...»¹⁵:

Լեփսիուսի ժողովածուի գնահատման պարագայում չի կարելի անտեսել մաս այն փաստը, որ, ինչպես պարզ է դառնում հղված և մի շարք այլ հաղորդագրություններից, Արտգործնախարարության կողմից Գյուպերտի միջոցով Լեփսիուսի վրա մեծ ճնշում էր գործադրվում՝ փաստաթղթերը Արտգործնախարարության վերոնշյալ դիրքորոշմանը համապատասխան կրճատելու կամ սրբագրելու համար, իսկ Լեփսիուսը ժողովածուի հրապարակումը չխափանելու համար պարտավոր էր գործել ԱԳՆ-ի հետ փոխըմբռնման պայմաններում, այն է՝ ըստ հնարավորին մվազ և աննշանակ զիջումների գնով

¹⁴ Stü Lepsius J., Mitteilungen, „Der Orient“, 1919, էջ 40:

¹⁵ Stü Микелеян В., Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)..., с. 604:

փրկել կարևորագույնը: Բնակչության շրջանում Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ ի հայտ եկած տեսակետները, որոնք, ինչպես նշվեց, մեղսակցության հաստատման համար հիմք դառնալ չէին կարող և միայն կվնասեին հայկական հարցին՝ ստվերելով մեղքի միանշանակությունը, Լեփսիուսը դարձրեց այդ զիջումը՝ կարողանալով ապահովել փոխըմբռնում և հայոց եղբրական ողբերգությունները, դրանց ծրագրայնությունը, իրագործման եղանակներն ու հետևանքները միանշանակորեն փաստող՝ այդ խիստ երախտավոր գործը զլուխ բերել:

Լեփսիուսի ժողովածուի առնչությամբ ի հայտ եկող տեսակետներն ու գնահատումներն անվերապահորեն կայաթափեց, եթե անտեսեն այդ բարդ իրադրությունը, որը մա կարողացավ մեծ ջանքերի գնով և պատվով հաղթահարել: Կարելի էր ենթադրել, որ Գուստի հիշյալ տեսակետը բխել է պարզապես այդ իրողության թերաթևորումից, ինչը, սակայն, քննություն բռնել չի կարող, քանի որ մա բավականաչափ իրազեկ էր ինչպես Ա.Գ.Ն-ի կողմից Լեփսիուսին բոլոր փաստաթղթերը չհանձնելու իրողությանը, այնպես էլ ժողովածուի կազմման խնդրում Արտգործնախարարության և Լեփսիուսի դիրքորոշումների զանազանությանն ու դրա հետևանքով Լեփսիուսի համար ստեղծված ծանր իրավիճակին, որը բավական հստակ ձևակերպվել է մաս Լեփսիուսի կողմից: «Եթե ես իմձ տրված թույլտվությունը անխնա չօգտագործեի,- նշում էր Լեփսիուսը Գյուպերտի վերաբերյալ բարեկամներին ուղղված մի նկատառման մեջ,- ապա կարևորագույն փաստաթղթերի կեսն անգամ լույս աշխարհ չէր գա: Այդ գաղտնի խորհրդականը, որի հետ ես հանուն պատշաճության լավ փոխհարաբերություն էի պահպանում, միշտ փորձում էր ժողովածուից ամենակարևորը դուրս բերել, քանի որ մա ուզում էր թուրքերի մոտ լավ համարում ունենալ, զլխավոր ոճրագործներին խնայել և մաս թուրքական զեռույններին դեպահանքի կեղծամների միջից սանրելով դուրս թափել»¹⁶:

Ավելորդ չէր լինի մեկ անգամ ևս նշել, որ չնայած ժողովածուի պատրաստումը, որը Լեփսիուսը հույս ուներ հրապարակել մաս անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, չխափանելու համար Լեփսիուսը պարտավոր էր գործել Արտգործնախարարության հետ փոխըմբռնման պայմաններում, սակայն չհայտնվելով կատարածուի դերում՝ մա Արտգործնախարարության լիարժեք վստահությունը երբևէ չի վայելել, և պատահական չէ, որ երբ մա ժողովածուի հրատարակումից հետո Ռուսներից տեղեկանալով իրեն չհանձնված մի շարք փաստաթղթերի մասին, Արտգործնախարարությանը խնդրեց գեթ իր անհատական իրազեկման պատճառաբանությամբ դրանք տրամադրել իրեն, միանշանակորեն մերժում ստացավ¹⁷:

Լեփսիուսի ժողովածուի առնչությամբ ի հայտ եկած մեղադրանքները, ըստ որոնց մա կրճատումներն ու փոփոխությունները կատարել է Գերմանիայի մեղսակցության կոծկման միտումով, այսպիսով միանգամայն անհիմն են և իրականությանը չեն համապատասխանում: Նրա քննադատներին իրատեսական գնահատումներ կատարելու համար ցավոք խոչընդոտել է սեփական վարկածը ցանկացած գնով, մինչև իսկ պատմական իրողությունների թյուր ներկայացման միջոցով հնարավորինս հիմնավորելի դարձնելու

¹⁶ Stfu **Gust W.**, „Magisches Viereck“...:

¹⁷ Անդ. Վմմպ. անդ. էջ 607:

միտումը: Ընդ որում, այդ նպատակին հասնելու համար մրանք որպես կանոն առանձին իրողություններին անդրադառնում են՝ գիտակցաբար լուրջ մատնելով դրանց պատմական համատեքստը կամ պարզապես չտիրապետելով դրան: Այդ համատեքստից քաղում են մի դետալ և ջանում են այն մեկնաբանել այնպես, ինչպես իրենք են ուզում: Արդյունքում ստացվում է այնպես, որ պատմական իրադարձությունների համատեքստում միանգամայն պարզ և հասկանալի այդ դետալը մեկնաբանվում է կեղծ և սխալ կերպով՝ ստեղծելով միմիայն թյուրիմացություն:

Օրինակ, ինչպես գիտենք, Լեփսիուսը Հոլանդիայում գտնված ժամանակամիջոցում այնտեղից աշխատակցում էր մաս Արտգործնախարարության հետ՝ վերջինիս խնդրանքով կանոնավոր կերպով Գերմանիա ուղարկելով պատերազմին և խաղաղության հաստատման խնդիրներին վերաբերող՝ հոլանդական մամուլում լույս տեսնող հրապարակումները: Այդ իրողությունը, որ մրան հնարավորություն էր ընձեռում իր բազմանդամ ընտանիքի ասպրուստը հայթայթելուց զատ շարունակել մաս հայօգնության աշխատանքները Գերմանիայում, արդեն բազմիցս հստակ պարզաբանում է ստացել թե՛ Լեփսիուսի, թե՛ մրա աշխատակիցների և թե՛ հետագայում մրա՝ հոլանդական տարիների գործունեության մը զբաղվող մի շարք հետազոտողների կողմից: Գուստը, սակայն, իր «Magisches Viereck» հոդվածում լուրջամբ շրջանցելով այդ առթիվ առկա տեղեկությունները՝ փորձում է Լեփսիուսի հիշյալ գործունեությունը մեկնաբանել մեծ մարդասերի կերպարին հակասող և մրան իբրև մեծապետական կուսակցական գործիչ, գործակալ և «ազգայնական» ներկայացնող շարժառիթներով: Ամենաուշագրավը, սակայն, այն է, որ մա իր պնդումը հիմնավորելու համար վկայակոչում է Լեփսիուսի և մրա «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության հոգաբարձության միջև 1917 թ. գոյություն ունեցած «տեսակետների անհամապատասխանությունը» և Լեփսիուսի զխավոր ընդդիմադիր՝ ընկերության տնօրեն Ա. Ռյոդենբեքի կողմից կատարված մի հայտարարությունը, որտեղ վերջինս Լեփսիուսին անվանել էր «դավաճան»: Ընդ որում Գուստը դա վկայակոչում է առանց պարզաբանում տալու այն մասին, թե որո՞նք էին այդ անհամաձայնության դրսևապատճառները և ինչու՞ էր Ռյոդենբեքը մման հայտարարություն կատարել: Հարցը պարզ դարձնելու համար մշենք, որ Լեփսիուսի և իր ընկերության հոգաբարձության անհամաձայնությունը պայմանավորված էր առաջին աշխարհամարտի տարիներին հոգաբարձության, և մասնավորապես տնօրեն Ռյոդենբեքի՝ պետական քարոզչության պահանջներին համակերպվելու և հայ ժողովրդի եղերական դրության վերաբերյալ պատերազմի տարիներին կատարյալ լուրջում պահպանելու դիրքորոշմամբ: Ռյոդենբեքը, դրանով չսահմանափակվելով, փորձում էր կասեցնել մույնիսկ Լեփսիուսի անձնական նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ իրականացվող հայօգնության աշխատանքները և չէր խուսափում Գերմանիայի պետական քարոզչությանը հակասող՝ Լեփսիուսի հայանվեր գործունեությունը որակել որպես «դավաճանություն» հայրենիքի շահերին: Մինչդեռ, ըստ Գուստի մեկնաբանության, ստացվում է հակառակը, այն, որ Լեփսիուսը Ռյոդենբեքի կողմից դավաճան էր անվանվել հայօգնության աշխատանքներին դավաճանելու համար: Եթե Գուստն այդ փակագծերը բացեր, ապա մրա փաստարկները պարզապես կուղղվեին իր դեմ: Ուստի ինքնին հասկանալի է, որ մա կամ ամենևին հարկ չի համարել

անդրադառնալ հիշյալ «անհամաձայնության» և Ռյոդենբերգի հայտարարության բուն շարժառիթին և կամ պարզապես անտեղյակ է եղել դրան:

Մեկ այլ առիթով նա, օրինակ, նշում է, որ «որքան ավելի էր ուզմական և քաղաքական իրադրությունը կայսերական պետության համար աննպաստ դառնում, այնքան ավելի էր Լեփսիուսի համար առաջին պլան մղվում ընդհանրապես պատերազմի բռնկման և մասնավորապես հայերի ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցության խնդիրը»¹⁸: Ասվածից ինքնին բխում է, որ Գերմանիայի համար նպաստավոր ուղղափառական իրադրությունում հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցության խնդիրը Լեփսիուսին առանձնապես չէր հետաքրքրում: Հանգամանք, որի հիմնավորման համար Գուստը որևէ փաստարկ չի ներկայացնում և չէր էլ կարող ներկայացնել, քանի որ դա իրականությանն ամենևին չի համապատասխանում:

Լեփսիուս մարդասերի ու հայանվեր գործչի հանդեպ անվստահության մթնոլորտ ստեղծելու նպատակով իրողությունների անգափոխման և աղճատման՝ այդ արտառոց մեթոդը, ցավոք, Գուստին չի դավաճանում նաև իր շարադրանքի հաջորդ հատվածներում՝ հասնելով մինչև իսկ անսքող անհեթեթության: «Օսմանյան կայսրությունում իր հիացումը վայելող հայերի հետ շփումների ընթացքում նրա ձեռք բերած ցավագին փորձառությունները, - նշում է Գուստը, - նրա մեջ գերմանական կայսրության փոքրամասնությունների ճակատագրի հանդեպ ըմբռնում չձևավորեցին: Երբ ժողովրդական ուժեղ ալիքը Գերմանիայում տեսանելի դարձավ, Լեփսիուսն իրեն ապահովագրեց մի ձևական փորձագիտական տեղեկագրով, որը «նրա» հայերին հռչակում էր արիներ»¹⁹:

Մեկնաբանություններն, ըստ էության, ավելորդ են: Նման հայտարարություն կատարելուց առաջ Գուստը պարտավոր էր գոնե տեղյակ լինել, որ այդ «ժողովրդական ուժեղ ալիքի» (ինչպես նա անվանում է մացիոնալ-սոցիալիզմի քաղաքական վերելքը) ի հայտ գալուց մի քանի տարի առաջ Լեփսիուսն արդեն վախճանվել էր, իսկ իր մահից հետո հայերին արիներ հռչակելու և հրեա փոքրամասնության ճակատագրով մտահոգվելու հնարավորություն չուներ: Լեփսիուսի մոտ բնականաբար գոյություն չի ունեցել նաև այդպիսի փորձագիտական տեղեկագիր, նաև դրա անհրաժեշտությունը: Ամեն դեպքում այդպիսի փաստ հայտնի չէ և չէր էլ կարող լինել:

Որոշ ժամանակ անց, սակայն, փորձելով զարգացնել այդ տեսակետը՝ Գուստը և նրա համախոհները Լեփսիուսին մեղադրեցին հակասեմիտական և աջ ծայրահեղական գաղափարներ դավանելու մեջ՝ պնդելով, որ նա հարել է գեներալ Էրիխ Լուդենդորֆի կողմից դեկավարվող աջ ծայրահեղական շրջանին, մինչդեռ այդ պնդումները նույնպես նրանց կողմից որևէ հիմնավորում չեն ստանում: Միակ իրողությունը, որով Գուստը փորձում է իր տեսակետը հիմնավորելի դարձնել, այն իրողությունն է, որ Լեփսիուսը Հոլանդիայում գտնված ժամանակամիջոցում պատերազմին և խաղաղության հաստատման խնդիրներին վերաբերող՝ հոլանդական մամուլում լույս տեսնող հրապարակումները Գերմանիա էր ուղարկում Լուդենդորֆի գլխավոր պրոպագանդիստ Հանս ֆոն Հաեֆթեմի միջոցով, որն այդ շրջանում նույնպես Հոլանդիայում էր գտնվում: Գա հիմք է ծառայել

¹⁸ Stü Gust W., Magisches Viereck....:

¹⁹ Անդ:

Գուստին պնդելու, թե Լեփսիուսը պատկանել է Լուդենդորֆի աջ ծայրահեղական թիմին, հետևաբար մաս կալսերապաշտ է եղել և մինչև իսկ հարել է այդ թևի կողմից հովանավորվող հակասեմիտական գաղափարաբանությանը: Այս վերջին պնդումը առավել հիմնավորելի դարձնելու համար Գուստը վկայակոչում է մասնաճյուղի հանգամանքը, որ Լեփսիուսը մի առիթով Չեմբերլանդի մասին (որը համարվում է հակասեմիտական գաղափարաբանության հետևորդներից մեկը) դրվատանքով է արտահայտվել՝ անվանելով նրան «մեծ», ընդ որում որևէ փաստ չկա այն մասին, որ Լեփսիուսը Չեմբերլանդին այդպես է անվանել նրա հակասեմիտական դիրքորոշման համար: Ինքնին հասկանալի է, որ եթե պատմական գործիչների գնահատումը կատարվի այդօրինակ կոնֆլիկտների մեթոդով, առանց փաստական հիմքերի, ինչպես վարվում է Գուստը, ապա դա կհանգեցնի միայն թյուրիմացությունների²⁰: Ավելորդ է ասել, որ Լեփսիուսի համասեմիտական կողմնորոշմանը վերաբերող պնդումները չեն հիմնավորվում մասնաճյուղի հակալատիկական հրապարակախոսական ժառանգության ամենամանրագին ուսումնասիրությամբ:

Այս ամենով հանդերձ, Գուստը չի կամենում հիշել, որ իր կողմից «մոլի հակասեմիտ» անվանվող Լեփսիուսը սերտորեն համագործակցել է ազգությամբ հրեա Հենրի Մորգենթաուի հետ, որն իր հուշերում Լեփսիուսի մասին բառացիորեն հետևյալն է գրել. «Ես ճանաչում եմ միայն մեկ գերմանացու, որն իմ համար ընդունելի է: Դա Յոհաննես Լեփսիուսն է»: Գուստը չի մտաբերում մասնաճյուղի անաչին աշխարհամարտի տարիներին ազգությամբ հրեա Ալբերտ Էնշտեյնի հետ միասին «Համակիրների միության անդամ էր», որը լայն գործունեություն էր ծավալել համերաշխության հիման վրա խաղաղության հաստատման համար:

Լեփսիուսի քննադատները նրան մեղադրում են մասնաճյուղի հակալատիկական և կալսերապաշտ լինելու մեջ, ինչը նույնպես կատարելապես անհիմն է: Նրանց այսպես կոչված հիմնավորումները սահմանափակվում են վերոհիշյալ այն պնդումով, որ Լեփսիուսը պատկանել է Լուդենդորֆի աջ ծայրահեղական թիմին, ինչպես և նրանով, որ նա Վայմարյան Հանրապետության ժողովրդավարությունը մի առիթով անվանել է «փափկաուկոր»: Իրականությունը սակայն, այն է, որ Լեփսիուսը ոչ միայն հակալատիկական չէ, այլև մեծագույն և անգուցական դեմոկրատ է:

Երբ գերմանական գրաքննությունը 1916 թ. զանգվածային լրատվամիջոցներին և հայ ժողովրդի բոլոր գերմանացի բարեկամներին պարտադրեց հայկական հարցի և Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի դրության վերաբերյալ մինչև պատերազմի վերջը կատարյալ լռություն պահպանել, բոլորը, մինչև իսկ մասնաճյուղ-հայկական ընկերություն-

²⁰ Լեփսիուսն, օրինակ, սերտ հարաբերություններ ուներ նաև Պաուլ Ռոբբախի հետ, որը նույնպես եղել է գերմանական մեծ կայսրության ջարագով: Բայց դա չի նշանակում, թե Լեփսիուսը կիսել է նրա կալսերապաշտական հայացքները: Ռոբբախը ծավալել է նաև անուրանալի հայանպասք մարդասիրական գործունեություն: Նա էր, որ Ադանայի կոլորադոների իրական պարկերը ներկայացրեց գերմանական հանրությանը, մի շարք հայ երիտասարդ հոգևորականների աջակցեց Գերմանիայում ուսանելու համար, «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության կառույցում ծավալեց մեծանշանակ հայանպասք հրապարակախոսական և կազմակերպական գործունեություն, Լեփսիուսի մահից հետո ցմահ դարձավ գերմանա-հայկական ընկերության նախագահը և նաև մեծ ներդրում ունեցավ նացիոնալ-սոցիալիզմի իշխանության փաթիլներին գերմանական ռասիզմի կողմից հայությանը սպառնացող վտանգները չեզոքացնելու հարցում:

Այդ լուեյայն հնազանդվեցին այդ պահանջին: Միակ բացառությունը դարձավ Յոհաննես Լեփսիուսը, որը ոչ միայն վճռականապես մերժեց կառավարության և գրաքննության՝ իրեն ուղղված պահանջը, այլև վտանգելով իր կյանքը՝ հայ ժողովրդի բնաջնջման վերաբերյալ իր հավաքած նյութերը առանձին գրքով 20 500 տպաքանակով գաղտնի հրատարակեց և նմանապես գաղտնի կերպով 500 օրինակ ուղարկեց Ռայխստագի պատգամավորներին ու զանգվածային լրատվամիջոցներին, իսկ 20 000-ը գերմանական բոլոր ավետարանական քահանայություններին՝ հանձնարարելով դրանք տարածել իրենց ծխական համայնքներում: Լեփսիուսն այդ հանդուգն ձեռնարկով նպատակ ուներ գերմանական լայն հասարակական շրջաններին իրազեկել Թուրքիայում կատարվող ոճրագործությունների մասին և հասարակայնության միջոցով ազդու ճնշում գործադրել կառավարության վրա՝ նրան հարկադրելով դիմել կոշտ միջամտության թուրքական կառավարության հայաստանի քաղաքականությունը կասեցնելու համար, բացի այդ նաև հասարակական լայն շրջաններին հավաքագրել ու ներգրավել իր կողմից ղեկավարվող հայօգնության աշխատանքներում: Համաշխարհային պատմության մեջ նման իրադրությունում դեմոկրատիայի հաղթանակի համար մղված նման անձնուրաց ու վճռական պայքարի մեկ այլ օրինակ, կարծում ենք, հնարավոր չէ գտնել:

Արժե հիշատակել, որ այդ օրերին հայ ժողովրդի դրության շուրջ բացարձակ լուրջություն պահպանելու՝ գերմանական կառավարության պահանջին ենթարկվեց մինչև իսկ Լեփսիուսի կողմից ստեղծված և երկու տասնամյակ անընդմեջ ղեկավարվող «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության հոգաբարձությունը՝ իր հերթին, նմանապես կառավարության պահանջով ջանալով այդ լուրջությունը պարտադրել նաև առաջին նախագահ Լեփսիուսին: Արդյունքում վերջինս մեկընդմիջտ բաժանվեց իր ընկերությունից՝ իր հրաժարականը հիմնավորելով հետևյալ հայտարարությամբ. «Մի միսիա, որը կամենում է լուրջամբ շրջանցել մի քրիստոնյա ժողովրդի մահը, որի համար մա 20 տարի գործել է, և 100 000-ավոր անմեղ կանանց ու երեխաների սովահարության դեպքում փորձում է իր հիմնական առաջադրանքը մի ինչ-որ այլ բանում տեսնել, քան նրանց փրկությունն է, այլևս այն միսիան չէ, որը ես հիմնադրել եմ»²¹:

Ծառանալով կառավարության և գրաքննության պահանջների դեմ՝ Լեփսիուսն իրեն դատապարտեց աքսորի: Տարբեր կողմերից նախազգուշացումներ ստանալով իրեն սպառնացող վտանգների մասին, միաժամանակ հայ ժողովրդի համար առավել ազատ գործելու նպատակով նա իր գրքի գաղտնի առաքումից հետո, նախքան այն հայտնի կդառնար, կարգելվեք, կհարուցեք պաշտոնական Թուրքիայի կրքոտ բողոքները, մեկնեց Հոլանդիա, որտեղ հայ գործիչների, այլ օտարազգի մեծ մարդասերների հետ միասին նվիրվեց հայ դատի պաշտպանությանը, զանգվածային լրատվամիջոցներում կատարեց հրապարակումներ հայ ժողովրդի բնաջնջման և նաև այն մասին, որ գերմանական կառավարությունը, այդ ամենի մասին տեղյակ լինելով, լուր է: Իրեն և հայ ժողովրդին դավաճանած ընկերության փոխարեն նա դեռ Հոլանդիայում ստեղծեց մի նոր ընկերություն, որի միջոցով շարունակեց հայօգնության աշխատանքները: Իրեն հավատարիմ մնացած միակ նախկին աշխատակցի՝ Ռիխարդ Թեֆերի միջոցով Գերմանիայում նույնպես հայօգնության աշխատանքներ ծավալելու, միաժամանակ իր բազմամյա ընտանիքի ապրուս-

²¹ Lepsius J., Meine Mission, ամս. էջ 53:

տը հայթայթելու համար Լեփսիուսը, ինչպես հիշատակվեց, Հոլանդիայում գտնված ժամանակամիջոցում համագործակցում էր մաս գերմանական Արտգործնախարարության հետ՝ Գերմանիա ուղարկելով պատերազմին և խաղաղության հաստատման խնդիրների վերաբերող՝ հոլանդական մամուլում լույս տեսնող հրապարակումները: Եթե մա գեթ չնչին իսկ չափով կայսերապաշտ լիներ, կամ եթե մույնիսկ նվազագույն չափով տուրք տար կույր հայրենասիրությանը, որի դիրքերից հանդես էր գալիս ժամանակի գրաքննությունը, ապա մա մույնպես կհամակերպվեր բոլոր մյուսների համար այլընտրանքից զուրկ թվացող իրադրության հետ:

Մենք, բնականաբար, ամենևին հակված չենք Լեփսիուսին համարելու ոչ հայրենասեր անձնավորություն: Դա մույնքան սխալ և անհեթեթ կլիներ, որքան անհեթեթ մրա հայրենասիրության շահարկումներն են: Հայրենասիրությունը, սակայն, բարոյականությանը և խղճին ծառայող այդ մեծ անհատին երբեք երկընտրանքի առաջ չի կանգնեցրել, այլ, ընդհակառակը, մրան մշտապես զորավիզ է եղել հայ ժողովրդի ողբերգությունների հանդեպ հանցավոր հանդուրժողականություն որդեգրած՝ գերմանական պետական շրջանների քաղաքականության դեմ իր պայքարում՝ ձգտելով փրկել գերմանացի ժողովրդի՝ այդ քաղաքականության հետևանքով «անարգված» արժանապատվությունը: Մենք դա վիճարկողներին կառաջարկեինք փոքր-ինչ ուսումնասիրել Լեփսիուսի կյանքն ու գործունեությունը՝ համոզվելու համար, որ իրենց մեղադրանքներն ու շահարկումները միանշանակորեն հերքելի լինելուց զատ հակասում են մաս փորձությունների, մարտահրավերների և զոհաբերումների բովում ինքնահաստատված և «հայրենասիրության փորձաքննությունը» բազմիցս, չափազանց ծանր իրավիճակներում աներկբայորեն հաղթահարած գործչի կերպարին:

Ինչևէ, հավուր պատշաճի ըմբռնելով պատմագիտության մեջ հեղաշրջիչ նորարարություն կատարելու գայթակղության ուժը, մենք, այնուամենայնիվ, Լեփսիուսի քննադատների աշխատածը ոչ միայն գիտական, այլև բարոյական համարել չենք կարող: Հայերենում կա մի ասացվածք այն մասին, որ լուից ուղտ են սարքում: Լեփսիուսի քննադատների տեսակետների ուսումնասիրությունը վկայում է, սակայն, որ մրանք ուղտը սարքել են ոչնչից, քանի որ Լեփսիուսի պարագայում անհմար է մույնիսկ լուին գտնել: Եթե այդ քննադատներին լրջորեն հետաքրքրում է հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցության հարցը, որը Լեփսիուսն իբրև թե իր ժողովածուում կոծկել է, ապա մրանք կզբաղվեին ոչ թե Լեփսիուսի անձի և հասարակական-քաղաքական գործունեության անհիմն վարկաբեկմամբ, այլ առաջին հերթին այդ մեղսակցության հաստատման խնդրով, քանի որ ի տարբերություն Լեփսիուսի, մրանց առջև ամբողջովին բաց է Գերմանիայի Արտգործնախարարության քաղաքական արխիվը, և բացի այդ դա անելու համար որևէ ճնշում, խոչընդոտ կամ սահմանափակում մրանց չի սպառնում: Եթե մրանց հետաքրքրում է Գերմանիայում ազգայնական, մացիոնալ-սոցիալիստական, հակասեմիտական, հակադեմոկրատական, մեծապետական մտայնությունների պատմական ժառանգության ուսումնասիրությունը, ապա մրանք կզբաղվեին այն գործիչներով, որոնք իրոք հարել են այդ մտայնություններին, սակայն դեռ իրենց լիարժեք պատմական գնահատականը չեն ստացել:

Կարող է հարց առաջանալ, թե այդ դեպքում ինչ նպատակ է հետապնդում Լեփսիուսի անձի և գործունեության վարկաբեկումը: Քանի որ այդ մասին խոսելիս պետք է զննել ոչ

թե փաստերի, այլ կոաֆումների ճանապարհով, ես հարկ չեմ համարում դրան անդրադառնալ: Այն հանգամանքը, սակայն, որ այդ քարոզարշավը զուրկ է հիմքերից և մասն չի ծառայում գիտության շահերին, կասկած չի կարող հարուցել:

*ԹՈՒՄԱՆՅԱՆ - 140**ՍՈՒՄԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**Բանասիրական գիտությունների դոկտոր***ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԸ**

Սրտակից, հարազատ ընկեր-բարեկամներով շրջապատված լինելը Թումանյանի բարեբախտություններից էր և արդյունք էր ինչպես նրա ստեղծագործության տարածված ու սիրված լինելուն, ժամանակակիցների կողմից նրա մեծության ընկալմանը և բարձր գնահատանքին, այնպես էլ Թումանյան-մարդու անհատական հմայքին, նրա բնավորության և խառնվածքի առանձնահատկություններին: Թերևս դա հետևանք էր նաև այն պարզ ճշմարտության, որ մեծ հոգիները երբեք միայնակ չեն լինում:

Քսաներոդ դարասկզբին, դրանից առաջ և հետո թերևս ոչ մի հայ գրող չի ունեցել այդքան մեկեմասներ, հովանավորներ ու աջակիցներ, որքան Թումանյանը: Եվ այստեղ ամենաէականն ու կարևորը ոչ թե նրանց մեծաթիվ լինելն է, այլ թերևս այն, որ նրանք բոլորը խորությամբ գիտակցում էին Թումանյանին աջակցելու կարևորությունը, նրա ստեղծագործության բացառիկ դերն ու նշանակությունը հայ գրականության համար: Բանաստեղծի մեկեմասները նրան հովանավորում և աջակցում էին ոչ միայն հանուն նրա տաղանդի, հանուն հայ մշակույթի ու գրականության զարգացման, այլ նաև հանուն Թումանյան-մարդու և Թումանյան-ստեղծագործողի հետ ներդաշնակ միասնության մեջ գտնվող հմայիչ անհատականության:

Թումանյանի հովանավորներն ու մեկեմասները պատկանում էին հասարակության ամենատարբեր խավերին՝ սկսած Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյանից մինչև իշխանուհի Մարիամ Թումանյանը, բժիշկ Արիստակես Զարգարյանը (Ռուստեմ), մախ շերամի, սերմի, հետո կաշվի առևտրով զբաղվող Փիլիպոս Վարդազարյանը (Ֆիլիպ) և ուրիշներ:

Ժամանակակիցներից Վարդգես Ահարոնյանը գրում է. «Հարգանք և հիացում ուներ Վասպուրականի Արծվի՝ Խրիմյանի հանդեպ»¹:

Նկատենք, որ Թումանյանը առհասարակ չէր սիրում հասարակությունը մարդկային խմբերի՝ դասերի բաժանելը: Նրա համար միևնույն էր, թե մարդկային նկարագրի լավ ու վատ կողմերը ո՞ր դասին պատկանող մարդու մեջ կտեսներ՝ անկախ կուսակցական, դասային, սոցիալական, մասնագիտական, ազգային կամ այլ պատկանելությունից: Հենց այդ է պատճառը, որ նա լավագույն բարեկամներ ու նաև թշնամիներ ուներ բոլոր դասերում:

Դեռևս 1893 թ. Թումանյանը հայ առաջադեմ մտավորականության հետ արտատրոփ սպասում էր Խրիմյան Հայրիկի կաթողիկոս հաստատվելուն, որը ձգձգվել էր ռուսական իշխանության կողմից: 1892 թ. մայիսի 5-ին միաձայն ընտրվել էին երկու թեկնածուներ՝

¹ Վարդգես Ահարոնյան, Հովհաննես Թումանյան. Մարդը և բանաստեղծը, Բոսպոն, 1936, էջ 83-84:

Մկրտիչ եպիսկոպոս Խրիմյանը և Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյանը: Վերջնական ընտրությունը պետք է կատարեր Ռուսաստանի կայսր Ալեքսանդր Երրորդը: Վերջինս 1893 թ. հունիսի 3-ին այդ պաշտոնում հաստատում է թուրքական կառավարության կողմից Երուսաղեմ աքսորված Մկրտիչ Խրիմյանին: Թումանյանն իր անհամբերությունը կիսել էր Գևորգյան ճեմարանի տեսուչ, Սինդիկատի անդամ, կաթողիկոսական իր թեկնածությունից հանուն Խրիմյանի հրաժարված Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանի հետ, որը հետագայում գլխավորել էր աքսորված կաթողիկոսին Երուսաղեմից Էջմիածին ուղեկցող պատվիրակությունը: Թումանյանին դուր չէին եկել 1893 թ. նոյեմբերին հնչակյանների որոշ դժգոհությունները Խրիմյանից. «...Կուսակցությունը շատ էր հուզված Հայրիկի դեմ»²: Այդ դժգոհությունները բանաստեղծը անվանում է «ամբոխային հուզմունք»:

Խրիմյանը Ղ. Աղայանի միջոցով 1893 թ. հունվարի 11-ին ստացել էր Թումանյանի «Բանաստեղծությունների» երկու հատորները (1890, 1892 թթ.)³:

1895 թ. դեկտեմբերի սկզբին Թումանյանը հանդիպել և երկար զրուցել է Հայրիկի հետ Էջմիածնում: Զրույցի հաջորդ օրը Հայրիկը, Թումանյանի հետ ունեցած հանդիպումից մեծ բավականություն ստացած լինելով, մոտից է մտնում հրավիրել իր մոտ: Առաջին տեսակցությունը ունեցել էր պաշտոնական բնույթ և կապված էր եղել Թումանյանի ճամփորդության բուն նպատակի՝ արևմտահայ գաղթականությանն օգնելու գործի հետ: Այնուհետև Թումանյանը հանդիպում էր Խրիմյանին ամեն անգամ, երբ նա գալիս էր Թիֆլիս: Այսպես, 1898 թ. դեկտեմբերի 20-26-ին բանաստեղծն այցելում է Հայրապետին, որպեսզի միջնորդի Ղ. Աղայանին թոշակ նշանակելու համար: Խրիմյանը խոստանում է բանաստեղծին կատարել մեծ խնդրանքը և կատարում է իր խոստումը, թեև ձգձգումով, քանի որ Էջմիածնի Սինդիկատը խանգարում էր, սակայն, այնուամենայնիվ, այդ թոշակը՝ ամսական 25 ռուբլի, նշանակվել էր Աղայանին ցմահ, և նույնիսկ շարունակվել էր վճարվել ընտանիքին մեծ մասնով: Բայց շուտով Սինդիկատը որոշմամբ թոշակը դադարեցվել է՝ առաջացնելով Թումանյանի և հայ մտավորականների զայրույթը⁴:

1900 թ. ամռանը Դսեղում Թումանյանը դիմավորում և հյուրընկալում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկին, ում հետ կապված էր նվիրական ու անկեղծ սիրով: Թումանյանին դուր չի գալիս կաթողիկոսի հանդեպ գյուղացիների անտարբերությունը: Նրանց ամենևին չէր հուզել այդքան բարձրաստիճան հյուրի ներկայությունը. «...Սաստիկ անշուք անցավ Հայրիկը,- նշում է բանաստեղծը,- և ժողովուրդը՝ գյուղացին, գրեթե տեղից չշարժվեց» (9, 225):

Պատճառների մասին խորհելով՝ Թումանյանը կարծում է, որ գյուղացին իր թշվառության ու հոգսերի մեջ դադարում է նկատել այն, ինչ բարձր է, վեհ, հարգանքի և մեծարանքի արժանի. խավարի մեծությունը թույլ չի տալիս նկատել լույսը: Նրա տխուր տպավորությունը այն ցավալի զարմանքից էր, թե «մեր կյանքում իսկի լուսավոր, մխիթարական բան չկա, բարձր բան չկա» (9, 225): Գրելով այս տողերը՝ Թումանյանը ավելացնում

² Նովիանեն Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 9, էջ 121: Այսուհետև հատորն ու էջը կնշվեն տեքստում:

³ Տե՛ս Ղ. Աղայան, ԵԺ, Ե., 1963, հ.4, էջ 535:

⁴ Տե՛ս «Նորիզոն», 1912, թիվ 55:

է, որ այն իր հոռետեսության արտահայտությունը չէ, այլ իրատեսության:

Համագլուխացիների սառը վերաբերմունքը բանաստեղծը փորձում է ինքնուրույն ու միայնակ հաղթահարել իր՝ կաթողիկոսի հանդեպ դրսևորած մեծ ուշադրությամբ. ուղեկցում է նրան՝ զրուցելով տարբեր թեմաների, այդ թվում նաև իշխանուհի Մարիամ Թումանյանի մասին, մի քանի կադր լուսանկարում է խորհմյանին:

Այդ լուսանկարներից հատկապես հաջող է ստացվում մեկը, որում խորհմյանը Թումանյանի եղբոր՝ Ռոստոմի ձիու վրա է: Հայրապետի լուսանկարը բանաստեղծը ուղարկում է Մարիամ Թումանյանին, Փիլիպոս Վարդապարյանին ու նաև Վեհափառին, որի կարգադրությամբ Էջմիածնի դիվանապետ վարդապետը խնդրել էր այդ լուսանկարը: Մ. Թումանյանի վկայությամբ՝ խորհմյան Հայրիկը շատ էր սիրում նկարվել զանազան ձևերով և ուրախությամբ բաժանում էր ամենքին իր լուսանկարները⁵:

Իշխանուհի Մարիամ Թումանյանը վկայում է, որ ամեն անգամ, երբ խորհմյան Հայրիկը Թիֆլիսում էր լինում, Թումանյանն ամեն օր գնում էր նրան այցելության: Բանաստեղծը բարեկամանում էր բոլոր նրանց հետ, ովքեր բանաստեղծական հոգի ունեին և սիրում ու գնահատում էին գրականությունը: Իսկ խորհմյանը հենց այդպիսին էր: Երբեմն Հայրիկը ցածր ձայնով երգում էր իր հորինած, կամ էլ որևէ ժողովրդական երգ, երբեմն էլ որևէ գրքի առիթով վեճի էր բռնվում Թումանյանի հետ և այնպես ոգևորվում նրա հետ զրուցելով, որ ժամերն անցնում էին աննկատ, իսկ եկած այցելուներին մերժում էր՝ չկամենալով ընդհատել հանդիպումները Թումանյանի հետ, որովհետև, ինչպես փաստում է իշխանուհի Մարիամ Թումանյանը, «Թումանյանը Հայրիկի ամենասիրելի հյուրն էր միշտ»⁶:

Նույնիսկ Կրծանիսում հիվանդ պառկած կաթողիկոսը իր այցելուներից հետաքրքրվում էր Թումանյանի առողջական վիճակով, նրա մեծ ընտանիքի հոգսերով: Հայտնի է, որ մի անգամ, երբ իշխանուհի Մ. Թումանյանը Հայոց Հայրիկին այցելության է գալիս, խորհմյանը տասնհինգ «տասանոց» ոսկիներ է փոխանցում բանաստեղծին:

1901 թ. Ավետիք Իսահակյանին հանդիպելիս Հայոց Հայրապետը ասել էր. «Է՛հ, դու՛ն ալ բարով ես եկել, ես քեզ կճանչնամ, կարդացեր եմ քու գրվածքներեն քանի մը բան: Ես Կովկասին մեջ երեք բանաստեղծ գիտեմ. մեկը մեր ուսուցիչ Հովհ. Հովհաննիսյանն է, մեկն ալ Թիֆլիս Հովհ. Թումանյանն է. անոնց անձամբ կճանչնամ ու շա՛տ կսիրեմ: Ըշտե մեկն ալ դու՛ն ես - քեզ ալ հիմա տեսա. դու՛ն անոնցմե երիտասարդ ես, այդ է պատճառը, որ միշտ ամպ ու աղբյուր, վարդ ու աղջիկ կերգես»⁷:

Թումանյանի և Հայոց Կաթողիկոսի համակրանքը փոխադարձ է եղել: Վարդգես Ա.-հարոնյանը նշում է. «Խորհմյանին այցելելու ոչ մեկ առիթ չէր փախցնում Հովհ. Թումանյանը, երբ ինքը Էջմիածին էր գնում, կամ երբ խորհմյանը գալիս էր Թիֆլիս:

Խորհմյանը, որ իր խոր ծերությանն իսկ պահել էր իր սուր մտքի պայծառությունը, անշուշտ, հաճույքով էր ընդունում Հովհ. Թումանյանին»⁸: Թումանյանը հաճախ է նրա կյան-

⁵ Տե՛ս Մ. Թումանյան, Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, Ե., 2003, էջ 94: Նշված լուսանկարը այժմ պահվում է Թումանյանի թանգարանի լուսանկարների բաժնում՝ թիվ 385 (65):

⁶ Տե՛ս Մ. Թումանյան, Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, Ե., 2003, էջ 94:

⁷ Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4, Ե., 1959, էջ 19:

⁸ Վարդգես Ահարոնյան, Հովհաննես Թումանյան. Մարդը և բանաստեղծը, Բոսպոն, 1936, էջ 84:

քից դեպքեր պատմել: Թումանյանի պատմած այդպիսի գվարճալի դեպքերից մեկը ան-
 ջնջելի է մնացել Մարգար Ավետիսյանի ճիշտության մեջ: Խրիմյանը Թումանյանի հետ
 հանդիպելիս ամենից շատ խոսում էր գրականությունից, գրողների անապահով վիճակից
 և այլն: Վեհափառը ինքն էլ ստեղծագործում էր, ժամանակի գրական ընթացքի ակտիվ
 մասնակիցներից էր: Նրա ստեղծագործությունները տեղ էին գտնում մամուլում և բոլոր
 քրեատոմատիաներում ու ամթոլոգիաներում, գրախոսվում էին գրողների և գրաքննա-
 դատների կողմից: Խրիմյանը բնականաբար հատկապես բարձր էր գնահատում Թուման-
 յանի կարծիքը: Նշենք մակ, որ Թումանյանը «Խրիմյան Հայրիկի օրերից մեկը»
 հուշ-պատմվածքում խոստովանել է, որ Խրիմյանը «Սիրուն, սրտաշարժ պատմություններ
 էր անում զանազան մարդկանցից: Եվ ինչքան ձանձրությամբ էի լսում նրա տառամալորնե-
 րը, այնքան ավելի հետաքրքրությամբ լսում էի նրա տաղանդավոր զրույցները» (5, 70):

Ժակատագիրը մոտեցրել էր այդ երկու մեծ մարդկանց, քանի որ նրանք ունեին հո-
 գևոր նկարագրի մեծ ընդհանրություն: Երկուսն էլ տաղանդավոր զրուցակիցներ էին, բա-
 նավոր խոսքի անզուգական վարպետներ: Նրանք հազար ու մի թելերով էին կապված
 միմյանց հետ, և այդ փոխադարձ ձգողական ուժը պայմանավորված էր ոչ միայն ընդհա-
 նուր հետաքրքրություններով, ազգային հոգսերով ու մտորումներով, բնավորության բազ-
 մաթիվ ընդհանուր գծերով, այլև հետաքրքրի զրուցակցի անհագ կարիքով ու կարոտով:
 Հանդիպումներից մեկի ժամանակ Խրիմյան կաթողիկոսը խնդրում է բանաստեղծին
 ունկնդրել իր նոր գրած պոեմը: Վեհափառը, առաջարկելով Թումանյանին ճոճաթողը, ա-
 սում է. «Դե, լսե՛. տեսնենք կը հավնի՞ս հայոց Հայրիկի նոր պոեմը»⁹: Բանաստեղծը Հայ-
 րապետի բարձր ընթերցանության պահին գուցե Վեհափառի ձայնի միալար շեշտից, գու-
 ցե պոեմի անհետաքրքիր բովանդակությունից, գուցե պարզապես հոգնածությունից և
 ճոճաթողի հարմարավետությունից, սկսում է անջել. «Ձե՛նը ականջիս էր ընկնում ինչպես
 գետի միալար խշշոց, բայց բառերին, մտքին չէի կարողանում հետևել, - ասում է Թուման-
 յանը: - Մեկ էլ հանկարծ ձենը կտրվեց. Ես վեր թռա, ինչպես անջող ջաղացալու, երբ ջա-
 ղացը կանգ է առնում» (ԹժՀ, 177): Թումանյանը ամոթահար աչքերը բաց է անում և
 խնդրում է Վեհափառին շարունակել: Թումանյանը ասում է. «Հասկացա, որ ծերունին
 վշտացել էր, և խղճի խայթ զգացի»¹⁰: Սակայն «բանը բանից անցել էր» և լավ թաքցրած
 վիրավորվածությամբ Հայրիկը հրաժեշտին խնդրում է և «պնդում», որ Թումանյանը իր նոր
 գործերը բերի և ընթերցի:

Բանաստեղծը բնականաբար չէր կարող մերժել Հայրիկի խնդրանքը: Երկու օր անց,
 երբ մա գալիս է իր նոր ստեղծագործությունները ներկայացնելու, դերերը փոխվում են:
 Այժմ արդեն Թումանյանն է ընթերցողի դերում: Նա ոգևորված կարդում է իր նոր ստեղ-
 ծագործությունները, սակայն զարմացած նկատում է, որ Խրիմյանը անվերջ շեղվում է
 ինչ-որ կողմնակի գործերով: Նա մերթ վառարանի կրակն է խառնում, մերթ դարակի մեջ
 ինչ-որ բան է փնտրում, մերթ հազում ու քթի տակ ինչ-որ երգ է մրմնջում, մերթ սուրճ է
 պատրաստում և միշտ «նույն թրխկոցով»: Հենց որ Թումանյանը ուզում է ընդհատել ըն-
 թերցանությունը, Հայրիկը հորդորում է շարունակել. «Ծարունակե՛, շարունակե՛, ես

⁹ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1969, էջ 177: Այսուհետև փեքքում կնշվի ԹժՀ և էջը:

¹⁰ Վարդգես Ահարոնյան, Հովհաննես Թումանյան. Մաղղը և բանաստեղծը, Բոստոն, 1936, էջ 85:

կ'ունկնդրեմ... Հայոց Հայրիկը բանաստեղծի համար սուրճ կը պատրաստե, որ կոկորդը չցամաքի կարդալու ատեն: Հա՛, ցամքած կոկորդով դժվար է կարդալ» (ԹժՀ, 178):

Թումանյանը դեռևս ոչինչ չէր կասկածում, մինչդեռ Հայրիկը, արգելելով նրան ընդհատել ընթերցանությունը, դուրս է գալիս կից սենյակը, այնտեղից էլ բակ՝ զբոսնելու: Պատուհանից տեսնելով բակում ճեմող վեհափառին՝ Թումանյանը ի վերջո գլխի է ընկնում, որ սա Հայրիկի «պատասխան քայլն է», որ ինքն անզգուշորեն ընկել է նրա լարած ծուղակը, և որ իր անուշադրության ցույցերով Հայրիկը պարզապես «վրեժ է լուծում»: Վեհափառը վերջապես ներս է մտնում և խորամանկ ժպտալով ասում. «Է՛հ, շատ սիրուն պոեմ գրեր ես, կերևա ավելի շատ գրել գիտես, քան ունկնդրել...»

Էսպես վրեժ լուծեց ինձանից Հայոց կաթողիկոսը», - տարբեր առիթներով պատմում էր Թումանյանը և ամեն անգամ «ծիծաղում մանկական ծիծաղով» (ԹժՀ, 178-179):

Դատեր՝ Նվարդի վկայությամբ Թումանյանը Խրիմյանին «մեծ մարդ էր համարում... և հետաքրքիր զրուցակից: Խրիմյան կաթողիկոսը հաշվի էր նստում հայրիկի, նրա գրական ճաշակի ու հայացքների հետ»¹¹:

Խրիմյանը մի առանձնահատուկ սիրով էր կապված նաև Թումանյանի ընտանիքի հետ, և ամեն անգամ Թիֆլիս գալով՝ ուզում էր տեսնել ոչ միայն բանաստեղծին, այլև նրա կնոջն ու երեխաներին: Այդպիսի հանդիպումներից մեկի ժամանակ, երբ Թումանյանի տասը երեխաները զույգ-զույգ մտնում են Խրիմյանի մոտ, կաթողիկոսը բանաստեղծի կնոջը՝ Օլգային ասում է. «Ապահարզան տալը դժվար գործ է, հեշտ չենք տալիս, բայց եթե դու ուզես, քեզ կտանք: Բանաստեղծի պահելը, դիմանալը դժվար գործ է» (ՀԶ, 175):

Բանաստեղծի կողմից Խրիմյանի մարդկային և կարագրին ու ստեղծագործությանը տված գնահատականներից մեկը պահպանվել է Նվարդ Թումանյանի հուշերում. «Խրիմյանը մեծ մարդ էր, շա՛տ մեծ... փիլիսոփա բանաստեղծ էր՝ ունենալով Աղայանի խառնվածքը: Օրենք չէր ճանաչում, օրենք չգիտեր, օրենքից բարձր էր, ինքն էր օրենք ստեղծում, մեծ անարխիստ էր: Ինքնատիպ դեմք էր, մեծ ու անսխտեմ» (ՀԶ, 233):

«Աղայանի խառնվածք» ասելով՝ Թումանյանը հասկանում էր «լավ, համակրելի, բարձր ոգևորությունների մարդ» (ՀԶ, 233):

Մկրտիչ Խրիմյանը Հայոց Հայրապետ էր դարձել Մակար կաթողիկոսի մահից հետո (1892 թ. մայիսի 5): Թուրքական կառավարության կողմից Երուսաղեմ արքայական հոգևոր գործչի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնում 1893 թ. հունիսի 3-ին հաստատվելը Թումանյանը ընդունել է խանդավառությամբ և մեծ հույսերով ու սպասումներով: Ոգևորությունը համընդհանուր էր: Արսեն Դլտճյանը վկայում է. «Խրիմյան Հայրիկի կաթողիկոս ընտրվելուց հետո երիտասարդության մեջ ձգտում կար վանական-հոգևորական կամ, ինչպես ասում էին, վարդապետ դառնալու: Դա համարվում էր ազգին ծառայելու մի ձև» (ԹժՀ, 277):

Խրիմյանը Թիֆլիս էր հասել 1893 թ. օգոստոսի 29-ին: Երկու օր անց «Մուրճի» աշխատակիցների հետ Թումանյանը այցելում է կաթողիկոսին: Ընդունելությունը տևում է կես ժամ¹²:

¹¹ Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Ե., 1983, 174: Այսուհետև փոքրագույն կնշվի ՀԶ և էջը:

¹² «Մուրճ», 1893, թիվ 7-8, էջ 1291:

1893 թ. սեպտեմբերի 26-ին Խրիմյան Հայրիկի կաթողիկոս օծվելու առիթով կազմակերպված խնջույքին Թումանյանը գրում է «Հայ ուխտավորին» բանաստեղծությունը: Այդ մասին վկայում է ինքը՝ բանաստեղծը. ««Հայ ուխտավորին» էքսպրոմտ է. Խրիմյանի ընտրության առթիվ չորս հոգի քեֆ սարքեցինք Օրթանալայում, էն քեֆին գրեցի» (ՀԶ, 231):

Խրիմյանի հետ կապված բանաստեղծի հույսերն ու սպասումները, նրա նկատմամբ զգացումները ունեցել են իրենց մակընթացություններն ու տեղատվությունները՝ կապված հայ ժողովրդի վիճակի, Էջմիածնի դեպքերի, մասնավորապես 19-րդ դարի վերջերին Արևմտահայաստանում տեղի ունեցած իրադարձությունների հետ: Թիֆլիսում շատերի վրդովմունքն էր շարժել Վեհափառի՝ Էջմիածնում կատարած մի շարք փոփոխությունները՝ երիտասարդության կողմից սիրված Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանի հրաժարականը Գևորգյան Ճեմարանի տեսուչի պաշտոնից, «Արարատ» ամսագրի խմբագրության և նրա խմբագիր Գալուստ Տեր-Մկրտչյանի փոփոխությունը, Կարա-Մուրզային Ճեմարանի երգի ուսուցչի պաշտոնից զրկելը և նրա փոխարեն Կոմիտասին նշանակելը, Գևորգ եպիսկոպոս Սուրենյանին Թիֆլիսի թեմի առաջնորդ դարձնելը և այլն: Այս ամենը չէր կարող չհուզել նաև Թումանյանին: Նրա որոշ չափով հիապոստոսները նպաստում են ևս երկու հանգամանք: Հայոց Հայրապետը, տեղի տալով «Մշակում», «Նոր Դարում» և «Արձագանքում» տպագրվող պահպանողականների հոդվածներում արտահայտված անարդար պահանջին, 1894 թ. Ղազարոս Աղայանին ազատել էր Էջմիածնի տպարանի և ձուլարանի կառավարչի պաշտոնից: Պահպանողականների զայրույթը առաջացրել էր Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրության հրապարակումը, որտեղ հեղինակը սուր քննադատության էր ենթարկել Գևորգ Չորրորդ կաթողիկոսին: Մինչդեռ Աղայանը Խրիմյանի մոլի պաշտպաններից էր և կաթողիկոսական ընտրությունների ժամանակ անձամբ էր մեկնել Երուսաղեմ՝ նրան հայրապետական աթոռ հրավիրելու նպատակով¹³:

Ծատերը, այդ թվում նաև Թումանյանը, Խրիմյանին մեղադրեցին Աղայանի հանդեպ անարդար վերաբերմունքի մեջ: Երկրորդ հանգամանքը, որն առանձնապես հուզել էր Թումանյանին, նրա մտերիմներից մեկի՝ Արսեն Ղլտճյանի՝ Էջմիածնից Երնջակի վանք արքայությունը էր:

Արսեն Ղլտճյանը 1894 թ. փետրվարին Թումանյանին խորհուրդ է տալիս ոչնչացնել «Հայ ուխտավորին» բանաստեղծությունը՝ նկատի ունենալով Պոլսի «ազգավնաս» պատրիարքի՝ Աշըղյան եպիսկոպոսի, սովի ու աղքատության, Էջմիածնում կաշառակերության դեմ պայքարելու, արևմտահայերի գաղթը կանխելու և գաղթականներին օգնելու կաթողիկոսի անկարողությունը: Սակայն Թումանյանի կենսազգացողությունը նրան հուշում էր, որ մի մարդու, այդ թվում և Ամենայն Հայոց կաթողիկոսին այդքան շատ մեղադրանքներ հասցեագրելը չի կարող հիմնավոր լինել: Բանաստեղծը հրաժարվում է ոչնչացնել ստեղծագործությունը և հայտնում է ընկերոջը. «Գրում ես, թե ոտանավորը կորցնեմ, ինչո՞ւ կորցնեմ. այն կմնա իբրև հիշատակ մեր առաջին զգացումների, իսկ նորը յուր կարգին. նորը քեզ կուղարկեմ. այսպես է սկսվում».

Եթե այդպես է, մենք կխորտակենք

¹³ Աղայան, Եժ, հ. 4, Ե., 1963, էջ 311-315, 615:

Այն պատվանդանը, որ մենք կառուցեցինք...» (9, 129):

Իհարկե, Թումանյանը այդպես էլ գեղարվեստական տեսք չի տալիս Խրիմյանին «պատվանդանից գցող» բանաստեղծություն գրելու իր մտադրությանը, որովհետև շատ շուտով համոզվում է նրա ազնվության և առաքինի վարքագծի մեջ: Կարճատև հիասթափությունը տեղի է տալիս մեծ համակրանքի առջև, և արդեն 1898 թ. նա «Հայ ուխտավորին» հանձնում է «Տարազին»՝ տպագրության:

Խրիմյանը միշտ սթափ էր մայրում և ճիշտ էր գնահատում իրականությունը, կատարվող դեպքերն ու իրադարձությունները: Նա ամենևին էլ վերացական դրախտի գովերգում չէր: Կաթողիկոսը ամեն ինչ անում էր, որպեսզի իր ժողովուրդը չհուսահատվի և չբարոյալքվի: «Իրախտի ընտանիքը» ստեղծագործության մախաբանում Հայրիկը գրում է. «Ողբով ու կոծով մեր կորուսած դրախտը (Հայրենիքը ըսել կ' ուզե) մի՞թե կարող եմք գտնել. թող մեր ազքը լայ, մեր սիրտն զգայ. բայց աշխատինք մտքով, աշխատինք ձեռքով. մեր կեանքն ու վիճակը գտնել և դորա միջոցն է մի միայն ընտանիքը վերանորոգել»¹⁴:

1895 թ. մայիսի 30-ին և դեկտեմբերի 1-ին Խրիմյանի հետ հանդիպումներից և «երկար զրույցներից» հետո սկսվում է Խրիմյանի և բանաստեղծի մեծ բարեկամությունը: Այդ հանդիպումից ամիսներ անց՝ 1906 թ. սեպտեմբերի 18-ին, Թումանյանը գրում է «Կաղնի» բանաստեղծությունը՝ «Հայրիկին» ենթավերնագրով, և այն նվիրում է իշխանուհուն (4, 217):

Ժամանակը մեկ անգամ ևս հավաստում է Թումանյանի հեռատեսությունը, մարդկանց ճանաչելու և իրողությունը ճիշտ գնահատելու ունակությունը: Խրիմյանի ազգային և հայրենամանկ գործունեությունը և մարդկային նկարագիրը ավելի հստակ ուրվագծվեցին 1895-1896 թ. թուրքական կառավարության կողմից կազմակերպված հայկական արյունալի ջարդերի ընթացքում, երբ կաթողիկոսը ներկայացավ որպես ազգային-ազատագրական պայքարին նվիրված գործիչ, ամեն ինչ արեց՝ հոգալու համար տեղահան եղած և կոտորածներից մազապուրծ փրկված հայերի կարիքները:

Խրիմյան Հայրիկը ոչ մի ջանք չէր խնայել մասնաշրջանային կայսեր հովանավորությունը ստանալու համար՝ Արևմտյան Հայաստանում խոստացված բարեփոխումներն իրականացնելու համար: Այնուհետև Թումանյանի համակրանքը Խրիմյանի նկատմամբ մնաց մշտապես անփոփոխ՝ մինչև կաթողիկոսի մահը և մինչև իր կյանքի վերջը:

Արժանահիշատակ է Թումանյանի և Խրիմյանի հանդիպումը՝ կապված 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների շրջանում, ինչպես նաև նրանց համատեղ ջանքերը այդ արհավիրքի առաջն առնելու նպատակով:

Փետրվարի 9-ին Թիֆլիսի Ազգային ժողովի դահլիճում («Ժողովարանում») Թումանյանի մասնակցությամբ տեղի է ունենում բազմամարդ ժողով՝ կոտորածի տարածումը կանխելու նպատակով: Ըստ Ժիրվանզադեի հավաստիացումների. «դահլիճը ծայրեծայր լինք է... ներկա են դաշնակցության գրեթե բոլոր թիֆլիսաբնակ առաջնորդները»¹⁵:

Ելույթ են ունեցել Ալ. Խատիսյանը, Ավ. Ահարոնյանը: Վերջինս մեղադրական խիստ խոսքեր է ուղղել ոռոսական իշխանությունների հասցեին՝ հանձին Կովկասյան կառավարչապետի տեղապահ գեներալ Մալամայի: Նա ասել է. «Ոչ մենք ենք մեղավոր, ոչ

¹⁴ «Բազմավեպ», Վենետիկ, 1908, թիվ 2, էջ 57:

¹⁵ Շիրվանզադե, Երկերի ժողովածու 10 հավորով, Ե., 1963, հ. 8, էջ 255:

թուրքերը, այլ դուք, պատասխանեցե՛ք»¹⁶: Բաքվից եկած երեք հայ պատգամավորներից ինժեներ Միքայել Ունանյանը փորձում է մեղմել կրքերը և խնդրում է ժողովը այլ ուղղությամբ չտանել, «նոր ճակատ բաց չանել» և ամեն ջանք գործադրել կոիվը դադարեցնելու:

Ժողովը որոշում է հեռագրել Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկին և խնդրել նրան անհապաղ մեկնել Բաքու, ուր նույն նպատակով գնացել էր Թիֆլիսի շեյխ ու իսլամը: Թումանյանին և բժիշկ Մ. Մուրադյանին և կոտորածներին ականատես մի անձնավորության, որի ով լինելը չկարողացանք պարզել, պատգամավոր են ընտրում՝ գնալու Էջմիածին, իրազեկելու կաթողիկոսին (այդ նպատակով նրանք իրենց հետ էին տանելու այդ ջարդերի անմիջական մի ականատեսի): Ուղևորության նպատակն էր Խրիմյան Հայրիկին Բաքու ուղեկցելը, որպեսզի համատեղ ջանքերով նպաստեն հաշտությանը, արյունահեղության շուտափույթ դադարեցմանը: Նույն օրը երեկոյան Թումանյանը մեկնում է Էջմիածին¹⁷:

Փետրվարի 10-ին հասնելով Էջմիածին՝ Թումանյանը հիվանդ կաթողիկոսին պատմում է Բաքվի դեպքերի մասին: «Խեղճ ծերունուն գտանք անկողնում պառկած, գրում է Թումանյանին իր հանդիպման մասին: Երբ որ պատմեցի... բավական է... բավական է... աղաղակեց ու գլուխը ցած գցեց: Այդ աղաղակը ես չեմ մոռանում: Այդ կարծես մեր ամբողջ ազգի, տանջված, ջարդված, հոգնած, ուժասպառ եղած ազգի աղաղակը լինի - բավական է, բավական է, բավական է...» (10, 8):

Կաթողիկոսը թեև վատառողջ էր, սակայն համաձայնում է Թումանյանի հանձնախմբի հետ Բաքու մեկնել¹⁸:

Թումանյանի՝ Էջմիածին հասնելու հաջորդ օրը՝ փետրվարի 11-ին, Թիֆլիսում տեղի է ունենում մի նոր ժողով՝ Վրաստանի և Իմերեթիայի հայոց թեմի առաջնորդ Գարեգին Եպիսկոպոս Սաթունյանցի նախագահությամբ: Որոշվում է խնդրել կաթողիկոսին մնալ Թիֆլիսում, զխավորել նույն ժողովում ընտրված 12 հոգանոց հանձնաժողովը, մասնակցել նախօրոք կազմակերպված հաշտության ու խաղաղության ժողովրդական ցույցին: Կաթողիկոսը համաձայնվում է:

Փետրվարի 12-ին Խրիմյանը Թումանյանի ուղեկցությամբ հասնում է Թիֆլիս և հաջորդ օրերին՝ փետրվարի 13-ին և 14-ին, մասնակցում հայերի և թուրքերի խաղաղության ցույցին, ընդորոշում, 13-ի ցույցին մասնակցում էին հայերն ու թուրքերը, իսկ հաջորդ օրը՝ հայերն ու վրացիները:

Վանքի բակում, ուր տեղի էր ունենում հանրահավաքը, Խրիմյան Հայրիկը ընդունվում

¹⁶ Նույն փեղում, էջ 256:

¹⁷ «Մշակը» փեղյակ էր, որ Թումանյանը հենց այն պարվիրակն է, որ գնացել է Էջմիածին՝ Խրիմյանի մոտ, սակայն դիտավորությամբ նրա անունը չի հայտնում 1905 թ. փետրվարի 11-ի լուրերի բաժնում մեկ անգամ ևս ցուցաբերելով իր չկամությունը Թումանյանի նկատմամբ: Տե՛ս «Մշակ», 1905, թիվ 20:

¹⁸ «Մշակը» հաղորդում էր, որ պարվիրակները գնացել էին Խրիմյան Նայրիկին Բաքու ուղեկցելու («Մշակ», 1905 թիվ 20), իսկ Թումանյանը գրում է, որ գնացել էին խնդրելու կաթողիկոսին, որ գա Թիֆլիս: Նավանաբար սկզբում որոշվել էր, որ Թումանյանը պետք է Խրիմյանին ուղեկցեր Բաքու, սակայն մեկ-երկու օր անց այդ որոշումը փոխվել էր: Նոր որոշման համաձայն կաթողիկոսը պետք է կանգ առներ Թիֆլիսում և մասնակցեր խաղաղության և հաշտության հանրահավաքներին (ԵԼԺ 10, 7-8: Տե՛ս նաև **Լ. Կարապետյան**, Նովի. Թումանյանի հասարակական գործունեությունը, Ե., 1992, էջ 54):

է ջերմ ծափահարություններով ու կեցցեներով: Երևալով առաջնորդարանի պատշգամբում՝ կաթողիկոսը, ոգևորված ժողովրդի խանդավառությունից, մի պահ մոռանում է իր ծանր առողջական վիճակը, շտկում կորացած մեջքը և հազիվ լսելի ձայնով հայրաքար օրհնում է ու բարեմաղթանքներ հղում ներկա բազմությանը:

Թումանյանը այդ մասին հիշել է այսպես. «Այդ նույն վայրկյանին մի զարմանալի, անհավատալի կերպարանափոխություն կատարվեց Խրիմյանի հետ:

Ինչպես ծառս է լինում մարտի շեփոթի ձայնը լսող ուղեւորական ճոխքը, այնպես ծառս եղավ հիվանդ, կուցած ծերունին: Մեկեն շտկեց իր կորացած մեջքը, մեկ կողմ հրեց իր կողքից քայլող եպիսկոպոսի թևը և հենված միայն իր գավազանին՝ մենակ ու հաստատուն քայլերով առաջ անցավ: Ամենքս ապշած էինք մնացել»¹⁹:

Թեև դրսում անձրև էր, հազարավոր մարդիկ անտրտունջ սպասում էին Հայրիկին: Եվ երբ հիվանդ կաթողիկոսը դուրս է գալիս պատշգամբ, տիրում է քար լուրջություն, և բոլորը ծնկի են գալիս: «Մեկեն լոնցին բոլոր կոչերն ու աղաղակները, - շարունակում է Թումանյանը, - և մի սրբազան լուրջություն իջավ այդ հսկա բազմության վրա:

Վարը՝ պատշգամբի տակ, գլուխների մի ծով և դեպի վեր ուղղած հազարավոր անթարթ հայացքներ:

Վերը՝ պարթևահասակ մի ծերունի՝ ոտքից գլուխ սև հագնված, ճերմակ, թավ մորուքը փռած կրծքին, կանգնած էր հենված իր գավազանին: Իր ճակատը ծածկող սև վեղարի վրա մի փոքրիկ ակնակուռ խաչ, որ մեղմ ցույքեր էր արձակում: Թավ հոնքերի տակից իր խոշոր, գեղեցիկ աչքերի հայացքը՝ լի հայրական բարությանմբ ու գորովով՝ թափառում էր մեր գլուխների վրա: Հիմա՛վուրց մի մահապետ էր, որ եկել էր իր ժողովուրդը իր ետևից տանելու: Այդ վայրկյանին Հայոց Հայրիկը կարող էր մեզ տանել, ուր որ ուզեր... Մեզնից ոչ ոք չմտածեց, թե գետինը թաց է, թե իր ոտքերի տակ անձրևաջրի լճակներ են կազմվել: Հազարավոր ծունկեր մեկեն ծալվեցին, և հսկա բազմությունը մեկ մարդու պես ծունկի եկավ:

Մեզնից ամեն մեկին թվաց, թե ինքը լսեց նրա խոսքը, որի մեջ կար և՛ հայրական գոռով, և՛ քաջալերանք, և՛ խրախույս, և՛ մանավանդ սեր:

Մենք մոռացել էինք ամեն ինչ, և՛ թաթար հրոսակները խուժողով, և՛ կոփվր արյունոտ, և՛ ավերը մեր երկրի, և զգում էինք մեզ հզոր, ապահով ու երջանիկ Հայրիկի թևերի տակ»²⁰:

Խրիմյանը օգնել է նաև Թումանյանին գեներով ու գորքով պայքարելու թշնամու դեմ:

Քոլագերան կայարանից 1905 թ. նոյեմբերի 29-ին առավոտյան ժամը 10-ին, երբ Ղա-րախաչի թուրքերը, օգտվելով համընդհանուր տագնապից, հարձակվում են հայերի մոտակա գործարանների վրա, մեծ չափով վնաս հասցնում Գ. Ծաղիկյանի պանրի գործարանին²¹, կայարանապետի միջոցով բանաստեղծը հեռագիր է ուղարկում Հայոց Կաթողիկոսին և հենց նրանից է խնդրում, որպեսզի միջնորդի Լոռիում ուսական զինված ուժեր տեղակայելու համար: Հեռագրում մասնավորապես ասվում էր. «Խնդրում եմ հաղորդել Վեհափառ Կաթողիկոսին, թե Լոռվա շրջանում հայտնվել է թուրքերի մի ահագին

¹⁹ Վարդգես Ահարոնյան, Հովհաննես Թումանյան. Մաքրը և բանաստեղծը, Բոստոն, 1936, էջ 90-91:

²⁰ Նույն տեղում, էջ 92-93:

²¹ «Մշակ», 1905, թիվ 239:

խումբ, որ կողոպտում է, սպանում: Ժողովուրդը աղաչում է անմիջական օգնություն»²² (10, 10): Վեհափառ Խրիմյանին ուղղած օգնության այս կոչը Թումանյանի զինված պայքարը կազմակերպելու առաջին քայլերից էր: Ընդ որում բանաստեղծը ուղղակի օգնություն էր խնդրում այն պահին, երբ գիտեք, որ հայկական կողմը շատ ավելի ուժեղ է: Այդ մասին վկայում է ինքը՝ բանաստեղծը. «Ձևայած որ մենք՝ լոռեցիներս, անհամեմատ ուժեղ էինք նրանցից» (10, 492):

Կաթողիկոսի միջնորդությունը չի ուշանում: Ալեքսանդրապոլի Սևերսկի գնդից Թիֆլիսի զինվորական շտաբի կարգադրությամբ Թումանյանի տրամադրության տակ է դրվում զինված մի էսկադրոն, որին Քոլագերան կայարանում դեկտեմբերի 5-ից 6-ը դիմավորում է անձամբ Թումանյանը: Մինչ այդ նա ստացել էր ռուսական շտաբի գեներալ Վերխմանի հեռագիրը այն մասին, որ Ալեքսանդրապոլի ճամբարից օգնության հասնելու համար ուղարկվել էր Սևերսկի կոչվող գնդի երրորդ հեծելաժողովը, որը, ըստ Թումանյանի, «ժողովրդի կողմից ընդունվեց մեծ ցնծությամբ» (10, 492):

Ռուսական զորքի համար անսպասելի էր եղել հայերի այդքան ջերմ ընդունելությունը, և մեկնումից հետո նրանք բանավոր և գրավոր արտահայտել էին իրենց շնորհակալությունը: Թումանյանի վկայությամբ, ռուս զինվորների հեռանալուց հետո «մեզ շնորհակալություն հայտնեցին, որը, եթե չեմ սխալվում, չէր մոռացվել նաև շտաբ ուղարկված հեռագրում» (10, 493):

Խորհրդային շրջանում գաղափարական նկատառումներով լոռյան է մատնվել նաև, որ Թումանյանը հարկ եղած դեպքում պայքարել է զենքի ուժով: Ամենայն Հայոց Հայրապետը Ամանայն Հայոց Բանաստեղծի տրամադրության տակ է դնում ռուսական զենքն ու զինվորին: Սևերսկի գունդը, որի գլուխն էր անցել Թումանյանը, իր հրետանին ուղղել էր ազերի թաթարների դեմ, միաժամանակ հետապնդել էր տեղի հանցագործ խմբերին, մասնավորապես Զուբինովի, Սիմոնի և Դավիթ Օավերդովի խմբավորումներին: Այսպես, Թումանյանի տրամադրության տակ դրվել էր ռուսական զենքն ու զորքը, և նա կարողացել էր այն օգտագործել հայերի զինված ինքնապաշտպանությունը կազմակերպելու և ուժեղացնելու նպատակով (8, 333):

Իհարկե, Թումանյանը վերապահությամբ էր մոտենում Խրիմյան-գրողի գեղարվեստական ժառանգությանը: սակայն խորապես բարձր էր գնահատում նրան իբրև մարդ և իբրև ազգային-քաղաքական գործիչ:

1907 թ. հոկտեմբերի 29-ին վախճանվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը: Նա Հայ Եկեղեցու պատմության մեջ ամենից սիրված կաթողիկոսներից է եղել, և նրան «Հայրիկ» պատվատիտղոսը շնորհած մի ամբողջ ժողովուրդ իրեն որբացած էր զգում: Մկրտիչ Պոտուրյանը «Բազմավեպում» գրում է. «Դադրած է բաբախել սիրտը, որ սիրոյ արև մ' եղաւ ու փակուած են այն աչքերը՝ որ գրեթէ դար մը հայութիւնը ողբացին: Որք է Հայրենիքը, զրկված Հայրիկէն... Սակայն համբաւը պիտի ապրի հայ գրական մատենագիտութեան մէջ, և պիտի փայլի իր անունը ազգային կրօնական պատմութեան մէջ»²³:

²² «Արշալույս», Թիֆլիս, 1905, թիվ 66, դեկտեմբերի 1:

²³ «Բազմավեպ», Վենետիկ, 1907, թիվ 12, էջ 562:

«Անահիտ» ամսագրի հոկտեմբեր-նոյեմբեր-դեկտեմբեր միացյալ համարում Արշակ Չոպանյանը գրում է «Հայրիկի մահվան առիթով» խորագիրն ունեցող հոդվածը, որի արձագանքները լույս տեսան Էջմիածնի «Արարատ» ամսագրում²⁴:

Առաջին անգամը չէր, և միայն տխուր առիթը չէր պատճառը, որ Արշակ Չոպանյանը արտահայտում էր իր հիացմունքը Խրիմյանի նկատմամբ: «Դեմքեր» շաբթում 1907 թ. առաջին ամիսներին Չոպանյանը գետեղել էր «Ժամանակակից Հայաստանի առաքյալը. Ն.Վ. Մկրտիչ Խրիմյան» հոդվածը²⁵: Հրապարակմանը արձագանքում է Արփիար Արփիարյանը «Հայրիկը և Միսիթարյանները» հոդվածով²⁶:

Հոկտեմբերի 31-ին Թիֆլիսում տեղի է ունենում Խրիմյան Հայրիկի հիշատակին նվիրված հոգեհանգիստը, որտեղ ելույթ է ունենում նաև Թումանյանը: Նա Խրիմյանին ներկայացնում է իբրև «ժողովրդի մարդու», «հասարակ ժողովրդի «Հայրիկի»»: «Նոր ալիքի» լրագրողը յուրովի է վերարտադրում բանաստեղծի խոսքերը: Ըստ նրա՝ Թումանյանը մասնավորապես ասել է. «Այն անասման սերը, որ մա վաղելում էր աշխատավոր տարրերի կողմից, չէր պայմանավորվում նրա կղերական պատրիարքական, կաթողիկոսական կոչումով: Ժողովուրդը նրան սիրում էր իբրև իր ազատագրության անձնավոր պաշտպանին: Հարգանք հեղափոխական ուսման հիշատակին, հարգանք աշխատավոր գյուղացիության, արհեստավորների ու մշակների առաջին պաշտպանի անվանը»²⁷:

1907 թ. նոյեմբերի 2-ին Թումանյանը «Հայ ուխտավորին» բանաստեղծությունը առաջին անգամ հրապարակում է ամբողջությամբ «Նոր ալիք» պարբերականում. «Տարագում» այն լույս էր տեսել կրճատումներով²⁸: Սովորության համաձայն՝ Թումանյանը բանաստեղծությանը կցում է ծանոթագրություն, որում նշում է. «Ժամանակի ցենզորական պայմանների պատճառով առաջին անգամ է տպագրվում ամբողջությամբ»²⁹: Բանաստեղծը նկատի ուներ գոլիցինյան խստությունների ու գրաքննչական սահմանափակումների պայմաններում բանաստեղծական այն տողերի արգելանքը, որտեղ Սևանը ներկայանում էր հուզված հայրենիքի ողբերգական պատմության և դարավոր անցյալի դառը հուշերով, անհանգիստ ժողովրդի ապագա ճակատագրով: «Տարագում» բանաստեղծությունից հանվել էին նաև այնպիսի տողեր, որտեղ արտահայտվում էր ժողովրդի նվիրական երազանքի իրականացման հույսը, այն, որ հենց Մասիսի գագաթին են դադար առնելու մեր հին փառքերը: Արգելանքը դրվում էր ժողովրդի պատմական հիշողության, նրա՝ ապագայի երազների և ներկայի հուզումների ու մտահոգությունների վրա: Նկատի ունենալով Հայաստանի խորհրդանիշներից մեկի՝ Սևանի վշտոտ ու տխուր «հոգեվիճակը»՝ բանաստեղծը գրել էր, իսկ գրաքննիչը ջնջել էր հետևյալ տողերը.

²⁴ «Արարատ», Էջմիածին, 1908, թիվ 2, էջ 235-236:

²⁵ «Անահիտ», Փարիզ, 1907, թիվ 1-2, էջ 1-14:

²⁶ «Լուսաբեր» երկօրյա լրագիր, Գանիբե, 1907, թիվ 463, դեկտեմբերի 26: Նույնպիսի են փոխադրվում նաև Կ. Պոլսի «Չայն հայրենյաց» շաբաթաթերթում (Ա. Չոպանյան, «Ն. Վ. Մկրտիչ Խրիմյան (կյանքը և գործը)» 1907 թ., թիվ 442, 443-444: Նույն լրագրում լույս է տեսնում նաև «Խրիմյան Հայրիկ (Մահվան առթիվ)», 1907, թիվ 469, էջ 1:

²⁷ «Նոր ալիք», Թիֆլիս, 1907, թիվ 1:

²⁸ Տե՛ս «Նոր ալիք», 1907, թիվ 2:

²⁹ Նույն փեղում:

Եվ մերթ վշտով ու տխրությամբ,
Սևանում է, ինչպես մութ ամպ...
Ո՞վ իմանա՝ ի՞նչն է հուզում,
Ի՞նչ է հիշում, ի՞նչ է ուզում:

Բանաստեղծության՝ Խրիմյան Հայրիկին վերաբերող չորրորդ հատվածից ցարական գրաքննիչները հանել էին այն տողերը, որոնց ենթատեքստում զգացել էին Խրիմյանի թաքուն երազը՝ աշխարհում ցրված հայությանը միավորելու փափագը: Բանաստեղծության մեջ հայ ուխտավորը՝ Խրիմյանը, Լիբանանի կաղնու մման ամուր կանգնած Լուսավորչի շիրմի առջև՝ իր արծվենի հայացքը հատել էր Հայոց աշխարհի հեռունները.

Կողմերն Հայոց ու շա՛տ հեռուն
Դիտե ցրված իր ձագերուն...

Սակայն Թումանյան-գեղագետին չի բավարարել իր իսկ բանաստեղծության՝ Վեհափառին նվիրված հատվածը: Հավանաբար այդ տողերը նրա համար սովորական այն բազմաթիվ էքսպրոսիվներից էր, որոնք նա գրում էր իր ընկեր-բարեկամների, կամ նույնիսկ պատահական ծանոթների համար, սակայն մտքովն անգամ չէր անցկացնում, թե դրանք երբևէ կներառի իր ժողովածուներում իբրև գրական մնացույթ արժեք: Ահա թե ինչու 1908 թ. Բաքվի ժողովածուում և 1909 թ. «Հայ գրողներ» քրեստոմատիայի առաջին հատորում նա զետեղում է «Հայ ուխտավորին» բանաստեղծությունը՝ առանց Վեհափառին նվիրված չորրորդ հատվածի:

Իսկ «Նոր ալիքում» տպագրելով Խրիմյանի մասին գրած հատվածն ամբողջությամբ՝ բանաստեղծը պարզապես հրաժեշտ էր տալիս իր համար այնքան սիրելի Հայրիկին, որի պայծառ նկարագրի մասին հիշողությունները ուղեկցեցին գրողին ողջ կյանքում.

Գնա՛ս բարով, ա՛յ ուխտավոր,
Երանի քեզ, հա՛յ ուխտավոր,
Որ կարոտով ու սիրառատ
Ուխտ ես գնում դեպ Արարատ...

1907 թ. նոյեմբերի 6-ին «Նոր ալիքում» լույս է տեսնում «Երկու հայրը» պատմվածքը, որի հերոսը դարձյալ Հայրիկն էր³⁰:

Վեհափառ Հայրապետի մահից ընդամենը երկու շաբաթ անց ընթերցողի դատին

³⁰ «Նոր ալիք», Թիֆլիս, 1907, թիվ 5, նոյեմբերի 6: Գրության թվականը մինչև օրս վիճելի է: Ըստ գրականագետ Ա. Ինճիկյանի՝ պատմվածքը գրվել է 1895 թ. նոյեմբերի վերջերին կամ դեկտեմբերի սկզբին, այսինքն, այն պահին, երբ Թումանյանը կատարում էր իր երկար ուղևորությունը Բորժոմ - Ախալցխա - Ախալքալաք - Ալեքսանդրապոլ - Կարս - Ալեքսանդրապոլ - Ղարաբիլիսա - Դիլիջան - Երևան - Էջմիածին ուղեգծով: Ինճիկյանի կարծիքով, հենց այդ ճամփորդության ընթացքում է բանաստեղծը լսել Մարգիս քահանայի պատմությունը (Տե՛ս Ա. Ինճիկյան, Նովիսանես Թումանյան, Կյանքի և սրբեղծագործության պատմությունը (1869 - 1899), Ե., 1969, էջ 371, 373): Սակայն գրողի երկերի գիտական երկրորդ լիակատար հրատարակության ծանոթություններում պատմվածքի գրության թվականը նշվում է 1907 (տե՛ս ԵԼԺ 5, 751): Մեր կարծիքով, պատմվածքը գրելու մտահղացումը և նյութի շարադրանքը կատարվել է 1895 թվականին՝ նշված ճամփորդության ընթացքում, երբ բանաստեղծը հանդիպել էր Արևմտյան Հայաստանից գաղթած հայերի և ուշադրությամբ լսել նրանց կորուստների, ցավի ու փառապանքի մասին, սակայն իր նշումներին գեղարվեստական գործի տեսք տվել էր միայն 1907 թ.՝ Հայրիկի մահվան անմիջական ազդեցության ներքո:

հանձնված այս պատմվածքում քսան որդի կորցրած քահանա Սարգիսը, միաթարվելու համար գնալով Հայրիկի մոտ, դարձել էր քսան հազար քսան որդի կորցրած Վեհափառի ծով ցավի ու վշտի միաթարողն ու ամոքիչը: «Բահանան շտապեց առաջ, աջը դրավ իր Հայրապետի գլխին, սկսավ աղոթք մրմնջալ, ու աչքերը լցվեցին արտասուքով...

Նա օրհնում էր Հայոց կաթողիկոսի՝ն...

Նրա առջև խոնարհված էր Հայոց Հայրիկը...» (5, 70):

Վեհափառի մահվան առիթով է թումանյանը գրել մաս «Խրիմյան Հայրիկի օրերից մինը», որը թեև թումանյանի հետմահու հրատարակություններում միշտ զետեղվել է պատմվածքների բաժնում, սակայն այն ավելի հուշագրություն է հիշեցնում: Հայրիկի կյանքի մեկ օրվա մեջ թումանյանը խտացնում է ջարդից ու կոտորածից մազապուրծ եղած, սոցիալական ծայրահեղ թշվառության հասած մի ամբողջ ժողովրդի ողբերգությունը: Կրթության վարձի պատճառով ուսումնարանից դուրս մնացող տասնամյա որբ երեխան, կոտորածից այրիացած հինգ երեխաների մայրը, քառասուն տարի Ս. Միմասի եկեղեցում Աստծուն ծառայած ծերունի տիրացուն քաղցած են ու կարիքավոր և ապավինում են միայն Հայրիկին:

Թումանյանը հրաշալի էր զգում Հայրիկի տառապանքը, որվհետև դա մաս իր ցավն էր ու ողբերգությունը: Ինչպես Ամենայն Հայոց Կաթողիկոսին, այնպես էլ Ամենայն Հայոց Բանաստեղծին դիմում էին բոլորը, պատմում էին ծայր չունեցող իրենց առօրյա հոգսերը և խնդրում էին օգնություն: Երկուսն էլ աջակցում էին որքան կարող էին, երկուսն էլ վեր էին անձնական ցավից, երկուսի սրտում էլ հայոց վիշտն էր, որը թաքցնում էին հոգու անտեսանելի խորքերում, երկուսն էլ «ծիծաղաշարժ բաներ էին պատմում ու այնպես դուրեկան, այնպես սրտալի ծիծաղում», որ միայն իրենք կարող էին, երկուսն էլ հմայիչ ու խոսքաշեն, «տաղանդավոր» գրուցակիցներ էին, երկուսն էլ գեղեցկացնում էին շրջապատը, լույս ու ջերմություն տալիս մրան:

Երկու մեծ հայերի անսահման մարդկայնությունը բամբասանքների առիթ է տվել: Վեհափառի մասին ասում էին, թե իր բարությանը, յուրաքանչյուր դիմողին օգնելու պատրաստակամությանը վատնում է Էջմիածնի ունեցվածքը: Վեհափառը շատ լավ գիտեր իր շուրջ ծավալված բամբասանքի, հաճախ մաս չարության ու ատելության մասին, որը մրան ուղեկցել էր երիտասարդ տարիներից ի վեր, և մա մեծահոգաբար իր կյանքը դառնացնողներին դիմելով՝ ասում էր. «Մտի՛կ ըրեք, ո՛վ դուք, սեր քարոզող վարդապետներ, Սէրն ձեզ կ'աւանդէ, երկնախօս վարժապետ՝ սիրոյ դասեր կ'ուսուցանէ... Աւա՛ղ մեզ, ուշամոռաց եղանք. հազար ութ հարիւր տարի է այս դասերն Աւետարանը մեզ կ'աւանդէ. և մենք կը կարդամք ժողովուրդին. տակաւին ո՛չ մենք սովորեցանք, ո՛չ ժողովուրդը հասկացաւ. Սիրոյ դասը թողինք՝ յատելութիւն կրթեցինք զմեզ, սիրոյ կտակը տուինք՝ բանասիրելուն նախանձն առինք. սէրը կորուսինք՝ և զրգոյիշ թշնամութիւնը գտանք: Այլ եւս ի մէջ ո՞վ կը համարձակի սեր քարոզել ժողովուրդին, երբ սիրոյ ճառախօս վարդապետներս՝ սիրել չգիտենք, հետ միմեանց ատելութեամբ կը վարիմք. և ի՞նչ մնաց, որ Խաչն ու Աւետարանը մեր գրկէն թողումք, և սուր առնելով՝ միմեանց մըխենք»³¹: Իսկ մեծ ընտանիքի հոգսերի տակ կքած, դժվար ապրող, ծայրը ծայրին հազիվ հասցնող թումանյանի շուայ-

³¹ «Բազմավեպ», Վենետիկ, 1908, թիվ 2, էջ 57:

լույթունը չէին հասկանում նույնիսկ ամենամտերիմ սրտակից բարեկամները: Նրանցից շատերի համար անթույլատրելի էր վեց տասնյակից ավելի պարտատերեր ունեցող բանաստեղծի նորանոր պարտքեր անելը՝ իրենից պակաս կարիքավոր ծանոթ-անծանոթներին օգնելու համար: Նրանց կարծիքով՝ անթույլատրելի էր նաև անվերջ հյուրասիրություններով «անկազմակերպ վատնել» ունեցածը, երբ ծայրահեղ դժվարությամբ էր վատակում յուրաքանչյուր կոպեկը: Այդպես էին մտածում բոլորը՝ և՛ օգնության, աջակցության ձեռք մեկնողները, և՛ հյուրասիրվողները:

Թումանյանի ժամանակաշրջանը շուրջ էր խոշոր հայերով, և նրանցից յուրաքանչյուրին բնութագրելիս Թումանյանը բնորոշում էր հենց իրեն: Այն, ինչ Թումանյանը գրում է երկու ազդեցիկ, մեծանուն հայ կաթողիկոսների՝ Խրիմյանի և Իզմիրլյանի մասին, կարծես գրում է իր մասին: «Երկուսն էլ խոշոր հայ դեմքեր էին, գերազանցորեն հայ, երկուսն էլ շատ ապրած իրենց ժողովրդի տառապանքով... երկուսն էլ ուրույն հայացք ունեին հեղափոխության վրա և ասում էին արյունը» (6, 268):

Խրիմյան Հայրիկը Թումանյանի այն եզակի մերձավոր հոգիներից էր, որին բանաստեղծը նվիրել է չորս գեղարվեստական ստեղծագործություն: Եվ սա ամենահին էլ պատահական չէր: Թումանյանը ունեցել է շատ ավելի մտերիմ ընկեր-բարեկամներ, որոնց և ոչ մի բանաստեղծություն չի նվիրել: Խրիմյանը իր օրերի կենդանի լեգենդներից էր, և այդ պատվին էր արժանացել նաև ժողովրդի կողմից, որն իր անկեղծ սերն ու պատկառանքը արտահայտում էր՝ նրա մասին զրույցներ ու ավանդություններ հյուսելով: Դրանցից մեկի համաձայն՝ Թիֆլիսի փոխարքան Խրիմյանին հյուր է հրավիրում և իր պալատի վեհությունն ու ազդեցիկ լինելը ցուցադրելու համար սանդուղքների երկու ծայրերին սպիտակ արջեր է կանգնեցնում:

Խրիմյանը բարձրանում է աստիճաններով՝ առանց դուլզն-ինչ ուշադրություն դարձնելու փայլվիլում աչքերն իրեն հառած արջերին: Փոխարքան, զարմացած կաթողիկոսի անտարբերությունից, հարցնում է. « Ինչպե՞ս, Վեհափա՛ռ Տէր, այս արջերէն չվախեցա՞ք»:

- Չէ՛, կ'ըսէ Հայրիկը թարգմանին ձեռքով, ըսէ՛ք փոխարքային, որ ես ասկէ աւելի կատաղիները տեսած եմ Պետերբուրգի մէջ»³²:

Մեկ այլ ավանդության մեջ, որը պատմել է Կոմիտասը, Հայրիկը զրուցում է գերմանացի մի հնախույզի հետ, որը Էջմիածնում հնություններ էր որոնում: Հայրիկը հանձնարարում է իր վարդապետներին. «Հա՛, ըսէ՛ք իրեն, որ ես թանկագին հնութիւն մը ունիմ. հարցուցէ՛ք, քանի՞ տարուան հնութիւն կը կարծէ»:

-Հինգերորդ դարու, կը պատասխանէ օտարականը թարգմանին բերնով:

- Անկէ՛ց ալ հին:

- Քրիստոսի ժամանակէն:

- Անկէ՛ց ալ հին:

Ու հնախոյզը հետաքրքրուած այս հնութենէն կ'ըսէ.

-Տեսնեմ, Վեհափա՛ռ Տէր, ի՛նչ է այդ թանկագին հնութիւնը:

- Իմ Ազգս է, Քրիստոսէ ալ հին, Մովսէսէ՛ն ալ հին. իմ թշուառ ա՛զգը, որ անտեսած

³² «Բազմավեպ», Վենետիկ, 1908, թիվ 4, էջ 191:

այս թանկագին հնութիւնը՝ հին քար մը կամ առարկայ մը փնտռելու կ' ելլէք»³³:

Խրիմյան Հայրիկին նվիրված Թումանյանի չորս ստեղծագործություններից գրեթե յուրաքանչյուրը առանց վերապահության կարելի է համարել ինքնաբերական:

Թումանյանի մարդկային կերպարը, նրա կյանքի իմաստն ու խորհուրդը, իրոք, հիշեցնում են անտառի մեջ բարձրացող հսկա մի կաղնի, որի բունը քանի՜- քանի՜ անգամ այրել է երկինքը բոցոտ շանթ ու կայծակով, որի զլխով անցել են ազգային ջարդերի ու կոտորածների, քաղաքական հալածանքների իրար հաջորդող փոթորիկները, որին հարվածել էին չարկամ զանաճները, զարնան կարկուտն ու ամուսն տապը.

Բայց նա միշտ կանգուն, նա միշտ աննկուն

Հուսով նայում էր ամպած երկնքին...

Ինքնակենսագրական է նաև կաղնու «շուքի տակ» նրանցից շատ ցած աննշան խոտերի, թփերի ու ծառերի պատկերը, որոնք ներքևից վերև նայելով մեծ կաղնուն միմյանց ականջի փսփսում էին, վախեցած դժգոհում ու բամբասում կաղնու հերոսական աներեր կեցվածքից.

Սա, որ վերև է բարձրացել այսքան,

Ոչ որոտ գիտի, ոչ քամի, ոչ բան... (4, 218):

Կաղնու պատկերը ներդաշնակ ու համահունչ էր Թումանյանի մեծությանն ու կատարելագործությանը, մարդու և ստեղծագործողի նրա նկարագրին, որովհետև, ինչպես Գյոթեն գերմանական գրականության մեջ, այնպես էլ Թումանյանը հայ գրականության այն կաղնին էր, որին մոտենում և որից հեռանում են մեր ազգային գրականության բոլոր ճանապարհները:

³³ Նույն տեղում:

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԴԵՊԻ ԼՅԱՌՆ ԽՈՍՔԻ

(Նովիաննես Թումանյանի գրաքննադատական ժառանգության առթիվ)

Նորություն է մեր գրականության մեջ նրանց (քննադատների - Ա. Ա.) հարգալից վերաբերմունքն ու կիրառած քննադատական մեթոդը: Նարկայ, նրանք կարող են սխալվել իրենց գնահատությունների մեջ, բայց նոր ու շիտակ է նրանց ճանապարհը: Դուք էլ ուշադիր ու հարգանքով լսեցեք նրանց, օգտվեցեք նրանց դիտողություններից – մի շփոթվեք բնավ, որովհետք – ամենից շատ – ամենից լավ բանաստեղծն ինքն է իրեն հասկանում – իր ներքին բնագղն ու ինտրուիցիան է իր ամենատիկա առաջնորդը: Նամոզված եղեք, որ քննադատը ոչ բանաստեղծ կարող է ստեղծել – ոչ բանաստեղծ կարող է սպանել: Նա միայն մեկնաբանում, պարզում ու բացատրում է: Եվ վերջիվերջո մի քննադատ կա, որ վերջնականապես որոշում է ապրող – մեռնող գործերը՝ դա ժամանակն է:

ՆՈՎՆ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

...Երևի թե Հովհաննես Թումանյանի պարագային է, որ ժամանակ հասկացությունը ընդլայնում է իր տարածքների *տեսիլքները*՝ առանց որևէ վերապահության և այնպիսի մի համակարգում է գործում և համաժամանակային, որ Նրան վերստին ընթերցելը դառնում է ոգեւնող ինքնապահովության համար: Քանի որ Նրա ցուցանած ժամանակը՝ մեր հոգևոր ժամանակի և տարածության այն հատվածում է, - խորապես կենսական և ուղեմշակին, - որ շարունակաբար ապրելու ենք: Եվ ընդհանրապես, գրաքննադատությունը թումանյանական մեկնակերպի այն հուսալի կետմաններից է, որտեղ հնարավորինս առանց վերապահության ցուցանված են անցյալի, ներկայի, ապագայի իրականությունը՝ հայոց, - գրեթե, - մույնընթաց-գաղափարազերծ իրականությունը: «Մենք կորցրել ենք հասունաճալու ժամանակը» ձևակերպման անողորմությամբ ամենահին չպետք է ինքնադարացում փնտրել ու... գտնելու դեպքում բոլորովին այլ ընդհանրացմամբ սփոփվել՝ տեղի տալով արտաքին աշխարհի զգացողությունից ներաշխարհով *խույս տալու* մեր սովորությունը: Այս խորապատկերի վրա գրականության առաքինությամբ մշակավորված ամենայն ինչ

անատարկելիորեն պետք է գիտակցվի՝ դիմակայելու համար խառնաշփոթը և ոգու բովանդակ կամազրկումը: Այն, ինչ,- բոլոր ժամանակներում,- չափազանց որոշարկված հասարակական կարծիքի անվան տակ է մատուցվում. «Մեր լրագիրները փեշակ են շինել հալածել ու հայհոյել գրականությունն ու գրողներին, իհարկե միշտ քննադատության անունով, գրականության վրա սրտացավ հսկողի հավակնությամբ, միշտ անաչառություն աղաղակելով: Ծառ հետաքրքրական բան դուրս կգար, եթե մի ձեռնհաս մարդ քններ այս տխուր երևույթը, ցույց տար, թե ինչ շարժառիթներից է առաջ եկել, ինչպես է արտահայտվել կամ ինչ միտք է ունեցել այս թշնամական վերաբերմունքը, որ միշտ անցել է հասարակ մարդավարության և տանելի դատողության սահմաններից» («Մեր գրական վարք ու բարքից», այս և մնացյալ մեջբերումները տրվում են ըստ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1994, 6-րդ և 7-րդ հատորներ, կնշենք միայն հոդվածների վերնագրերը):

Անշուշտ, «շարժառիթները» ունեն հասարակական բովանդակություն, գրեթե բոլոր ժամանակներում՝ պահանջարկ, և ծառայում են որոշակի,- եթե ոչ գործնական,- նպատակի: Ժամանակին, եթե «Մշակ» և «Նոր Դար» լրագրերը նպատակադրեն են «վնասել ժողովրդի զարգացման գործին», ապա, բնականաբար, ուղղորդված: Լայն առումով անբարենպաստ կարծիք ստեղծել Րաֆֆու, Ծերենցի, Սունդուկյանի, Ծիրվանգադեի, Մուրացյանի, Պոռչյանի, Փափագյանի և այլոց նկատմամբ, ովքեր իրենց ստեղծագործություններով նպաստել են հայ հասարակության ոգեղեն զարթոնքին՝ ցուցանելով «ազգի պակասավոր կողմերը» ամենաազնիվ մղումներով, որպեսզի ազգը իր վրայից թոթափի կեղծ բարեպաշտության ամեն հնոտի: Ի վերջո, գրողները արդյոք չե՞ն ծառայում ազգային կրթության նվիրագործմանը, մի խնդիր, որ զոհն 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին հրամայապահանջ էր բոլոր առումներով, «ժողովրդի հետ խոսելու» ամենաառաջնային նախապայման: Եվ «հայի մեջ միայն պակասություններ տեսնելու», ինչպես համոզված էին ժամանակի լրագրերը,- վտանգավոր դիտավորություն ու գրողական չպատճառաբանված քմայք չէր, այլ ամեն երևույթի և իրողության քննադատաբար մոտենալու իմաստավորված կեցվածք, որն ուղղված էր հոգևոր սնանկության դեմ, հասարակական առաջընթաց արգելակող:

Թումանյանական անխառն պարզությունը, որ հոգևոր նշանակալիությամբ է զուտ այդպիսին և կարոտ է խորքային բացահայտումների, քննարժանման (խնդրո առարկան վերաբերում է Հովհ. Թումանյանի ստեղծագործությանն ընդհանրապես), նրա տեսական դատողություններում, մտածումներում անխուսափելիորեն ավելի է բյուրեղանում՝ գրական իրողությունների ընդհանրացումներով: Գրական այս կամ այն երևույթի ստեղծագործական համընդհանրական որևէ խնդիր՝ անցյալի և իր ժամանակակից գրողի վերաբերող, «նոր հայացքներով և հասկացություններով» նրա ուշադրությանը պետք է արժանանար ոչ այն պատճառով, որ ինքը տիրական դեմք էր և իր խոսքը էական նշանակությամբ անհրաժեշտ ու զատորոշվող, այլ գրողի և գրականության առաքելության խնդրի նորոշի մեկնաբանմանն էր նա հետամուտ: Ասել է, թե պարզունակ և հնամենի հասկացությունների,- գրողին և գրականությանը վերաբերող,- *դիմազերծումը* հասարակական նշանակություն ունեցող խնդիր էր և տևական պայքար էր պահանջում: Իսկ եթե ոչ Հովհ.

Թումանյանը, ապա ո՞վ պետք է գիտակցեր ազգային ինքնահարգանքի կարևորությունը: Քանի որ ազգային էության, հոգեբանության ներկայանալիության «մենաշնորհը» տրված լինելով գրողին՝ նա իր ստեղծագործություններում ազգաճանաչողական հատկանիշներ է ի հայտ բերում՝ ուրվագծելով իր ապրած ժամանակաշրջանի *ազգային* ժամանակը: «Ասպետական զգացմունքը պակասում է մեր մեջ: Մեր մարդը սիրում է խեղճությունն ու լացը և զարդարվում է նրանցով: Եթե ուզում է մեկին էլ հարգանք ցույց տալ, նրան էլ ճգնում է ցույց տալ խեղճ ու ողորմելի... Ապա լավկանությունն ու հառաչանքի ողորմուկ ձայնը, սովամահի ու մերկության ողբը տարածեցին ամբողջ գրականության վրա. էլ ապրողների թշվառ վիճակը, էլ մեռածների «ողողողացող ուրվականները»... այնտեղից էլ մամուլի մեջ. «երկու կուպեկը» ձեռքին Ռաֆֆին, անկուպեկ Արծրունին... Ոչ, սոված ու մերկ չեն հայ գրողները: Եթե այդպես եք կարծում, կարող եք հանգիստ լինել: Դժբախտությամբ այդ չի, այլ այն, որ գրականությունը ապրուստ չի տալիս գրողին... և գրողը իր եռանդն ու ժամանակը կորցնում է ապրուստի վրա, ճիշտ այնպես, ինչպես հասարակ մարդիկ, ու չի կարողանում պարապել գրականությամբ, եթե պարապում էլ է - ի միջի այլոց:

Այս արդեն ուրիշ խնդիր է: Եվ, այո, մեծ դժբախտություն է մի գրականության համար: Եթե սրանից եք խոսում - խոսեցեք: Գրողի և նրա ընտանիքի համար էլ այստեղ վիրավորական բան չկա: Ընդհակառակը, մենք գնահատում ենք գրողի տաղանդը և չենք ուզում, որ տանի ծախսի այդ տաղանդը ապրուստի վրա, այլ կարողանա տալ մեզ այն, ինչ որ բարձր է ու գեղեցիկ և ինչ որ չունենք մենք... Չեք կարողանում գրականություն ու գրող պահել, այդ հերիք չի, այժմ էլ պետք է խնդրել, որ ճատեր չասեք նրանց վրա, երբ որ մեռնում են» («Վիրավորական հարգանք»):

Գրողին (և ընդհանրապես գրականությունը) չգնահատել, ասել է թե ազգային-հոգևոր առաջընթացին արգելք հանդիսանալ հատկապես մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ քաղաքական և սոցիալական, ինչպես նաև բարոյահոգեբանական վատթար վիճակում հայտնված հայությունը,- թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստաններում,- ողբալսական մահեր էր գործադրում: Հայտնի պատմաքաղաքական իրողությունները, ներքին՝ ընկերային-հոգեբանական հակասությունները և հակամարտությունները այնպիսի իրավիճակ էին ստեղծել, որ նախ և առաջ վտանգված էր հայ ինքնության գոյությունն ընդհանրապես: Եվ միայն գրականությունն էր ի գործ ազգային-հոգևոր ոլորտում որոշ տեղաշարժերով կյանքի կոչել անխուսափելիորեն կործանման դատապարտված, անզորնացած հայ հանրությանը: Այս հույժ ճակատագրային համարվող ժամանակներում Հովհ. Թումանյանն իր սթափեցնող ներկայությամբ ժամանակ էր վատնում նաև անդրադառնալու գրական իրավ գեղարվեստական և գեղագիտական չափանիշներ ունեցող ստեղծագործություններին՝ խորապես գիտակցելով հավաքական ոչնչությունների ազդավառ դերը, հատկապես սերունդների հոգեկերտվածքի ձևավորման անընդմեջ ընթացությունը: Անողորմ ու ճշմարտացի էր Հովհ. Թումանյանը, քանի որ ընդհանրապես (ոչ միայն գրական) տգիտության դեմ պայքարում գիտակցում էր իր անպաշտպան *պաշտպանվածությունը*, որը նաև ժամանակի գավառամտական մտահայեցողությամբ էր պայմանավորված. «...կանգնեցե՛ք, գրական մեծություններ սանձահարող անսանձ փոքրություն: Էստեղ տվե՛ք ձեր ականջներն ու կանգնեցեք մեր առջև: Էսպես: Ես ճանա-

չում եմ ձեզ: Դուք մի որևէ Ռ. Դրամբյան չեք: Դուք միմը չեք: Դուք շատ եք: Դուք տիպ եք: Դուք էն պատիկ, մաղձոտ ու մուր հոգին եք: Էն հավիտենական անկոչ պրոկուրորը, որ ամեն տեղ, ուր կերևա, միայն «դիպվածով» լսած լինելով մի բան, դատում ու դատապարտում է ամեն գործ ու գործիչ, առանց ճանաչելու, առանց ամաչելու: Դուք էն անհոգի, տափակ ընթերցողն եք, որ կարդում է պարապությունից ու «դիպվածով»՝ ձեռքն ընկած մի քանի տողով առանց խոր ու լուրջ մայելու, առանց հասկանալու, տգետ ու թեթև սկսում է քննադատել ու «հարվածել», և առանց հասկանալու էլ շարտում է բառերը՝ շանտաժ, ժանտախտ, բանագող... թեկուզ և դեմը կանգնած լինի մի գրական մեծություն... Բայց ոչ, ձեզ չի տրված՝ ոչ եղածը վերցնելու շնորհքը, ոչ ստացածը գնահատելու առաքինությունը, այլ համբակի թեթևամտությունը և տափակ, փոքրիկ հոգու մաղձն ու թույնը... Եվ անշուշտ, ձեզ հետ վեճի բռնվելը շատ ավելի տգեղ է ու անպատվաբեր, բայց պատասխանեցի՝ որովհետև ինչպես արդեն ասել եմ, դուք մեր կյանքում, դժբախտաբար, «սովորական երևույթ եք», թեև միաժամանակ միանգամայն ոչնչություն» («Ոչ-գրական ոչնչությունները քննադատ»):

Ընդհանրապես, Հովհ. Թումանյանը գրականության,- իբրև հասարակության զարգացման մասնապայմաններից՝ ազդեցության տարածման դրսևորումներով,- այս կամ այն խնդրին անդրադառնալիս,- հարկ է համարում գրական անցյալ արժեքները վկայաբերելով՝ մասնահատկել, թե ի՞նչ ներգործություն են ունեցել հետագա շրջանի գրողների ստեղծագործությունների վրա, դրանով իսկ հասարակական կյանքում նրանց ունեցած դերը բարերար ազդեցություն ունեցե՞լ է արդյոք՝ նպաստելով հանրային մտքի առաջընթացին. «Այս դարի կեսերից մեր կյանքում ամենուրեք, ուր հայ է ապրում, սկսվում է մի եռանդուն մտավոր շարժում... հին ուսումնառումն ու ուսուցման խալիֆայական եղանակը դատապարտելով, մանկավարժական մոր ձևերով, կյանքի պահանջներին ավելի հարմար գիտելիքներ են ավանդվում...» («Մեր մախորդ շրջանի բանաստեղծները»):

Վկայաբերելով և արժևորելով Խ. Աբովյանի, Մ. Պեշիկթաշյանի, Ռ. Պատկանյանի, Ս. Ծաֆազիզի ստեղծագործությունները՝ Հովհ. Թումանյանը «ժողովրդի խավերի մեջ» ճակատագրային, մկատելի տեղաշարժերի առկայությամբ «լույսի և ճշմարտության» համընդհանուր արթնացում է նշմարում: Ասել է թե՛ ոգեղեն արթնացում, որը բնականաբար պետք է ունենար շարունակական ընթացք՝ որոշակի դրսևորումներով: Ավելորդ է նշել, որ սա զուտ պատմական իրողություն է, իսպառ անկասելի, օրինաչափ՝ պայմանավորված հասարակության միանգամայն բնականոն զարգացմամբ: Եվ պատահական չէ, որ Հովհ. Թումանյանի պես տեսանողը, երևույթների դիտարկման և գնահատման իր արժեչափումներով, տեսնում և ընդհանրացյալ հատկանշում է այն հոգևոր առնչությունը, որը գոյություն ունի մախորդ և ներկա,- ինչո՞ւ չէ, մաև ապագա,- սերունդների միջև, մանավանդ, որ այդ կապը գրական-մտածողական է՝ հասարակական հոգևոր ներկայանալիություն ընդգրկող-ընդհանրացնող. «Անցյալ ինստիտուցիոնալ թվականներին հաջորդական ասպարեզում հայտնվեցին տարբեր ուղղության ու տարբեր շնորհքի մի շարք բանաստեղծներ: Մեծ հասարակությունը, որ առհասարակ ծանր է լսում և ուշ է գնահատում, մանավանդ գեղարվեստական գործերը, իհարկե, սրանց չնկատեց: Այսպիսի դեպքերում գնահատողը լինում է գրականությունը սիրող ու հասկացող մի որոշ բազմություն, որը

կազմում է այս կամ այն երկրի գրական մթնոլորտը: Դժբախտաբար, դա էլ գոյություն չունեն անհատական... Արդյոք այնքան փոխվե՞լ են ժամանակն ու հասարակությունը, որ գոնե սրանք (նոր գրողները.- Ա. Ա.) մենակ չմնան ու լքված, այլ տեսնեն, որ ապրում են հարազատ ժողովրդի մեջ, զգան նրա սիրող սրտի ջերմությունը, նրա վերաբերմունքի քնքշությունը, ոգևորվեն, զարգանան ու մեծանան... Թող սրանք էլ լինեին ուրիշ շատ որդեգիրների թվում, որ սրանց գեղեցիկ ճանապարհն ու թանկ հաջողությունը ապահովեին ջանքերից: Այս տեսակի լավությունը արված կլինի ոչ թե մի անհատի, այլ մի ամբողջ ժողովրդի. ո՞վ գիտի, գուցե և ավելին, որով և հասարակական տեսակետից բարերարությունն էլ կդառնա ավելի մեծ ու իմաստավոր» («Նորերի համար»):

Ժամանակ և հասարակություն. թումանյանական խստապահանջությամբ այս երկու կարևոր գործոնների փոխադարձված կապը գերազանցապես գաղափարական բնույթի է: Հատկապես, երբ խնդրահարույց է ժամանակի բարոյականության ոգու կորստի չգիտակցումը այն մույն հասարակության կողմից, որը կոչված է, եթե ոչ ոգեկիրը լինել, ապա գոնե ճանաչողաբար յուրացնել (կամ ինքնաքննադատաբար ճանաչել) ժամանակի առաջադրածը, որ ուզենք թե չուզենք՝ պատմական անհրաժեշտություն է իր բոլոր հակասություններով: Եվ Հովհ. Թումանյանի չափազանց ճշգրիտ դիտարկմամբ, քննադատությունն ընդհանրապես,- գրական քննադատությունը մասնավորապես,- ժամանակի ոգու իրական և երևակայական ընկալումներում առավելա է բացահայտվում, քանի որ նրա գոյության իրավունքի *հավաստիությունը* ժամանակի պահանջն է. «Բնադատությունը կատարում է ժամանակի գործոնը: Ժամանակը ջոկում է վատն ու լավը ու վատը մի կողմ թողնելով, դեմ ձգելով, իր հետ տանում,- հետզհետե ավելի ու ավելի փայլեցնում,- սիրում ու պահում է լավը, էսպես էլ լավ քննադատը: Ժիշտ է, նա մոտենում է մի գրական գեղարվեստական գործի ոչ թե նրա համար, որ ցույց տա, թե ինչ չկա նրա մեջը, այլ նրա համար, որ ցույց տա, թե ինչ կա» («Զայրույթի պատճառը»):

Ընդհանրապես, գեղարվեստական «գործը», իբրև այդպիսին, և իբրև ժամանակի ընկալման *միջոց*, Հովհ. Թումանյանի քննական դիտարկումներում չի սահմանափակվում սուկական վերլուծումներով և գնահատման ընդունված մեկնաբանումներով: Գրական արվեստի խնդիրը՝ հնարավոր բացահայտումներով էական ու դիտարկելի էր այն պարզ պատճառով, որ *գրային* և *քննադատական* շերտերում, թերևս, Հովհ. Թումանյանն առաջիններից էր, որ կենսական համարեց ներմուծել լեզվազգացողական այնքան անհրաժեշտ խնդիրը՝ պատմական գիտելիքների հնարավորինս զուգադրումներով: Ժողովրդական լեզու, գրական լեզու, գրաբարյան ոճավորումներ և ընդհանրապես նոր ոճավորումներ ու գրական լեզվի փոխառություններ: Եթե մի պահ հիշենք չափազանց դիպուկ այն արտահայտությունը, որ «Պոեզիան լեզվի արվեստ է» (Պոլ Վալերի), ապա թումանյանական ընդհանրացյալ առումով՝ «Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հետավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը»:

Եվ շատ էլ չէին սխալվում հմերում, եթե լեզու ասելով ազգ էին հասկանում» («Հայոց գրական լեզվի խնդիրը»):

Հովհ. Թումանյանը «մեր գրական լեզվի զարգացման տեսությունը» պայմանավորում էր «վերջնականապես մի ճանապարհի վրա հաստատելու» քննական անհրաժեշտությամբ: Անկաշկանդ զարգացմամբ է լեզվի («ժողովրդական բարբառներից օգտվելով») «կենսունակությունը ու հարազատությունը ամենուր ընդունվում, սիրվում ու դառնում ընդհանուր ազգային գրական լեզու»: Ինչ վերաբերում է լեզուների փոխառություններին, Թումանյանը ժողովուրդների գրականության փոխհարստացման անհրաժեշտությունը նվազ կարևոր չի համարում՝ էապես առաջնային համարելով գրական-հոգևոր և ընդհանրապես մշակութային «նյութափոխանակության» խնդիրը: «Ծատ լուրջ ու պարզ գիտակցությամբ»՝ գրաքննադատի ճշմարտություններ հայտնաբերելու, գրական ստեղծագործությունն արժևորելու դիտողականությունը որոշակի և վճռորոշ հոգածությամբ պետք է դրսևորվի: Այսպես առանձնահատուկ ինքն էր վերաբերվում նորեկ սերնդի գրողներին՝ հուսադրելով, որ. «Մենք էլ ենք եղել սկսնակներ, բայց մեր գրական կյանքի արշալույսին էս տեսակ հասարակություն, էս տեսակ ընդհանրական ուշադրություն չենք տեսել... Հրճվանքով եմ լսում, թե իզուր չեն շրջանները իրար հետևել և դուք՝ թե արվեստի կողմից, թե հոգեկան ապրումների, հանդիսանում եք ձեր մախորդ շրջանների զարգացումը: Բայց նույնքան հրճվանքով եմ նկատում և մեր հասարակական կյանքի զարգացումը...» («Խոսք սկսնակ բանաստեղծներին»):

Վերստին գրականության առաջընթացի հզոր ու նպատակային խթան համարելով բարեփոխ կյանքն ու «հանդիսական հասարակության» հոգևոր բարեխառնությունը, Հովհ. Թումանյանը առանձնապես է էական համարում գրական այն խնդիրների իմաստավորումը և վերափմաստավորումը, որոնք գրականության շարժում ընթացքն են պայմանականություններից զերծ պահում, դրանով իսկ ուղենշային դառնում ոչ միայն ստեղծագործ սկսնակի, այլև ողջ գրական ընթացքի տևականապես զարգացման համար: Եվ պատահական չէ, որ տեղեկեցիայի խորհուրդը գրականության մեջ՝ նրա նկատածամբ սկիզբ է առնում «ստեղծագործող մարդու, բանաստեղծի կանխատեսության և կանխագիտության հիմնական ունակություններից», որոնք հատկանշում են նրան. «Տաղանդները կարող են շեղումներ անել և շեղումների մեջ էլ դարձյալ կմնան տաղանդավոր, բայց առհասարակ գնում են ուղիղ ճանապարհով և մախորդշված նպատակներով, միտումով, տեղեկեցիայով չեն առաջնորդվում իերնց ստեղծագործությունների ժամանակ»:

«Հասարակությանը հուզող զանազան խնդիրների» արծարծումը գեղարվեստական փաստ ու արժեք դառնում է միայն այն դեպքում, երբ այդ խնդիրներն ունեն խորհուրդ և խորապես են անհատականացված, բայց միևնույն ժամանակ ընդհանրական են՝ իրենց զգայունակությամբ հասարակական ճանաչողության արժանացած: «Նախորոշված» են արդյոք ստեղծագործական սրընթացության շրջադարձները, թե՞ «ուղիղ ճանապարհով» ընթանալու անկասելի բերկրանքից է «առաջնորդ ոգու» կենսականությունը զատորոշելի: Կարծես թե այսկերպ առավել ճանաչելի պետք է լիներ և զոհացուցիչ՝ հասարակության համար, մանավանդ *հակամարտող* դեր ստանձնած հասարակության, որը ընկերային և գաղափարային առումով տակավին հավաքականություն չէր, քանի որ թերևս միայն դավանաբանական նշանակությամբ էր միական: Ընդհանրապես, Հովհ. Թումանյանը գրաքննադատական տարբեր հոդվածներում, այս կամ այն գրողին, մշակույթի գործչին

նվիրված ելույթներում հասարակության դերը, հասարակական այլևայլ գործընթացների արձագանքումը՝ մշակույթի ոլորտում, կարևորել է այնքանով, որքանով այն առնչվել է ազգային զգայունակության խնդրին: Այս դիտարկումներում զգալապես տեսանելի է Թումանյան հասարակական գործչի եռանդն ու իմացականությունը և գաղափարական տեսակետների խնդրահարուցումը, այն, ինչ պայմանավորված է նրա՝ ոչ իբրև և միայն բանաստեղծի զգայական, կանխատեսման հատկություններով, այլև գրաքննադատ-վերլուծաբանի ճշգրիտ-պատճառաբանված դատողություններով:

...Ի թիվս այլ խնդիրների՝ ի՞նչ նպատակների է ծառայում մամուլը. արդյոք հասարակական խնդիրների, ազգային (ինչպես նաև ներազգային) հակամարտությունների ապարեզը ի՞նչ չափով, ի՞նչ կերպ և ի՞նչ ծավալով, խորքայնությամբ է բաց մամուլի համար: Արդյոք ոչ միատարր, - *բովանդակային* հասարակություն, - եթե այդպիսին հայ հանրությունը համարվում է, - ունենալու խնդիրը կնպաստե՞ր հասարակական կյանքի ճգնաժամի վերացմանը: Այս հարցադրումները ամենևին անհետևանք չեն մնացել Հովհ. Թումանյանի, - կարելի է ասել՝ զուտ ազգային գրաքննադատական, - դատողություններում և հույժ արժևորելի բանախոսական-վիճաբանական տազնապ հարուցող, ցարդ մտորումների տեղիք տվող ընկալումներում: Իսկ թե դրանց ո՞րչափ էր պատրաստ ու ընկալունակ ժամանակի հասարակությունը, այնքան էլ դյուրին-ենթադրելի չէ, քանի որ. «Ինչպես ամեն մի կուլտուրական ժողովրդի, նույնպես և հայ մամուլի մեջ եղել է և կա բանակոծի: Հաճախ բանակոծիվը ստանում է ոչ ցանկալի կերպարանք շնորհիվ այն բանի, որ հաճախ բանակոծի ժամանակ պաշտպանվում են անարդարությունները, խեղաթյուրվում են փաստերը և այլն: Այժմ, երբ դրված է այդ հարցի լուսաբանությունը, ցանկալի է, որ խոսողները լինեն հանգիստ, կոռեկտ և զգույշ ժամանակակից բանակոծիկներին գալիս, որով վիճաբանությունները կարող են սուր կերպարանք ստանալ, որը, իհարկե, ցանկալի չէ»:

«Կրիտիկոս Ռ. Դրամբյանին», (որը գրականության պատմության մեջ մնաց և հիշատակվում է զուտ և միայն Հովհ. Թումանյանի շնորհիվ, այլապես նրա սնամեջ գրաքննադատական հոդվածները ժամանակին իսկ արդեն մեռելածին լինելով, *դիպվածային* այս գրադատի անշահեկան-վնասաբեր գործելաոճը՝ մարտնչող տգիտության սահմանն անցած, չէր հիշատակվի ընդհանրապես) հերթական անգամ հիշատակելիս արդեն հիշատակված «Զայրույթի պատճառը» հոդվածում անդրադառնում է գրական-քաղաքավարական այն ըմբռնումին, որը գրաքննադատության համար էական ու պարտադիր պայման է: Իրավ, ճշմարտացի քննադատության փոխադարձ հանդուրժողականության առումով. «...թողեք էդ բառերը. քաղաքավարության, վսեմ կրիտիկայի, ու ջենտլմենության խոսք մի անեք, եթե բարձր ու վսեմի կարոտ ունեք, լսեցեք ինչ եմ ասում... Ես գիտեմ, որ ջենտլմենությունը սուտ է, իսկ քաղաքավարությունը՝ կեղծավորություն: Եթե կարող եք, եթե ուժ ունեք, եղեք մարդավարի, բարի եղեք ու անկեղծ: Եվ եթե, երբ որ մաքուր սրտով ու անկեղծ կմտենաք նույնիսկ էմ մորենու թփի միջից էլ կլսեք Աստծու ձենը և կունենաք ու կնաշակեք վսեմի ու բարձրի հաճույքը, այլապես դուք պատժված կլինեք էմ պատժով, զայրույթով, որ նախասահմանված է կեղծավորներին և չոր ու չար հոգիներին...»: Ասել է թե՛ ժամանակի մոռացությամբ. ոչ այնքան անողորմությամբ, որքան այն ըմբռնման հավաստիությամբ, որ ժամանակն է ամենահուսալի և անաչառ արժևորողը գրական-մշա-

կութային ցանկացած երևույթի, իսկ «գրական վարք ու բարքում» եղած նշանակալի աղտեղությունները, «պակասությունները» լիարժեքորեն հիմնավորում են, որ Հովհ. Թումանյանը հաճախադեպ պետք է թվացյալ դաժան ընդհանրացումներով ներկայացնեք իրավիճակը՝ գաղափարագրկում և ոգեգրկում նշմարելով պարսպ քննադատությամբ զբաղվողների գործելաոճում, այն, ինչ անխուսափելիորեն սպառնում էր վերածվել, (կամ գուցե վերածվել էր) աշխարհայացքի՝ անշուշտ գրապատմական զարգացումը խոչընդոտելու *ափսրատությամբ*: Այս խնդրի կարևորությունը, և դրա գիտակցման անհրաժեշտությունը, Հովհ. Թումանյանին այնքան չէր մտահոգի, եթե նա իր մոտեցումներով այդքան կշռադատակից չվերաբերվեք գրականության զարգացման վերլուծականությանը՝ հեռանկարային առումով և բարոյահոգեբանական չափակշռումներով. «Մեր լրագիրները փեշակ են շինել հալածել ու հայհոյել գրականությունն ու գրողներին, իհարկե միշտ քննադատության անունով, գրականության վրա սրտացավ հսկողի հավակնությամբ, միշտ անաչտություն աղաղակելով: Ծատ հետաքրքրական բան դուրս կգար, եթե մի ձեռնհաս մարդ քններ այս տխուր երևույթը, ցույց տար, թե ինչ շարժառիթներից է առաջ եկել, ինչպես է արտահայտվել կամ ինչ միտք է ունեցել այս թշնամական վերաբերմունքը, որ միշտ անցել է հասարակ մարդավարության և տանելի դատողության սահմաններից... Գրականության մասին խորհրդածություններ է անում («Նոր Դարը».- Ա. Ա.), հարցեր է տալիս ու իրան-իրան պատասխանում: Իհարկե, շատ անմխիթար պատասխաններ, հուսահատական եզրակացություններ, նախատիքներ ու խրատներ, մեկը մյուսից ավելի անհեթեթ ու անճոռնի...»: Այնուհետև իր մտահոգությունը զուգակցաբար առավելս առարկայացնում՝ դիտարկելով գրողի արժանապատվության խնդիրը՝ ըստ էության, առանձնակի շեշտելով, որ լրագրողական չարաբանությունն ու անարդար մեղադրանքը «վնասել են ժողովրդի զարգացման գործին»: Ավելին. «Դուք (նկատի ունի ստահոգի և կեղծաբար մամուլը.- Ա. Ա.) գրողներին զրպարտելուց և նախատելուց հետո հարցնում եք. որտե՞ղ, ո՞ր ժողովրդի մեջ կգտնեք, որ տգետ մարդը, իր մանկությունը զրկանքով, օրերը նեղությամբ և ծայրահեղ խնայողությամբ անցկացնելուց հետո, խնայված կարողությունը զոհե, նվիրաբերեք ուսման գործին, ուրիշների զավակների կրթության գործին: Գտնում եք, որ այդ «գեղեցիկ և բարձր հատկություն է»... գրողներին առաջարկում եք փառաբանել այդ առաքինությունները, նախատում եք, որ նրանք անտես են առնում հայի այդ բարձր կողմը, և հենց դրանով էլ ապացուցանում եք, որ ոչ մի նմանություն չկա և ոչ մի հաշտություն չի կարող լինել ձեր և գրողների մեջ, որոնք... ի ծնե կոչված են գործերի ներքին իմաստը թափանցելու, արտերի գաղտնիքը կարդալու և այնտեղից խոսելու ժողովրդի հետ» («Մեր գրական վարք ու բարքից»):

Զարմանալի չէ ամենևին, որ այս առաքելությունը Հովհ. Թումանյանին պետք է վերապահված լինեք. իրականության ամենատարբեր խնդիրներ վերին ճշմարտության չափանիշներով բանաձևող ու դիտարկող այն բացառիկ անհատականությանը, ով հոգևոր (ոգեստեղծման խորին նշանակությամբ) տիրական ազդեցություն ուներ և հարկադրված էր այդ ազդեցության լծակներն ընդլայնելու՝ զուտ ստեղծագործական նկատառումներով՝ գաղափարապես ներազդելու, իրերն իրենց իրական անուններով կոչելու համար: Եվ պետք է նշել, որ հաշտության եզրեր չտեսնելու (մամուլի և գրողների միջև) խնդիրը

խիստ մտահոգեցնող էր, քանի որ մամուլ-գրականություն փոխկապակցվածությամբ (իրարահանդուրժողության պարագային) հասարակական կյանքի զարկերակը կբաբախեր բնականոն: Հովհ. Թումանյանը արդարև և իմաստալից բանավեճի (ոչ միայն գրական) կողմնակից լինելով, միևնույն ժամանակ ջատագովն էր գրաքննադատության իմացաբանական,- ոչ հավուր պատշաճի և մերկապարանոց,- խորքային մեկնաբանման: Թե՛ Ծեքս-պիրի հայերեն թարգմանությունների մեկնաբանման, թե՛ Ա. Չոպանյանի և այլոց հետ, ինչպես նաև հայ գրողների, ուսուցիչների և մշակույթի այլ մարդոց բանավեճելու ժամանակ, Հովհ. Թումանյանը աներևակայելի զգոնություն էր դրսևորում՝ մախ պահպանելով գրական-բանավեճային յուրահատուկ գեղագիտական պահվածք և հանդուրժողականություն: Եվ զարմանալիորեն ցանկացած գրա-պատմական ուսումնասիրության և հայ, օտարազգի գրողի ստեղծագործության անդրադառնալիս, մա մասնահատկում էր բովանդակային և ոճային այնպիսի մրբերանգների էականությունը, որ միայն և միայն վկայում էր մրա գրական-իմացաբանական լայնախոհության մասին:

Ընդհանրապես, Հովհ. Թումանյանի ամեն մի գրաքննադատական, բանավեճային հոդված, ելույթ, այս կամ այն գրողի հոբելյանի, մահվան առթիվ ասված խոսք, այնպիսի տպավորություն է թողնում, որ ինքնաարտահայտվելը մրա համար «նշանակալի ցնորք» է բառի խորքային իմաստով և նշանակությամբ: Քանի որ հասարակական կյանքի մրա գիտակցման և իմաստավորման «նշանառությունը» միայն հոգևոր ոլորտին ու արժեքներին չի ուղղված: Նա բացահայտում է այնպիսի իրողություններ, որոնք բավականաչափ կամ *վերացական* էին և կամ հանրությանը տակավին հասու չէին, հատկապես իմաստագերծված:

«Ոչ հայ կյանքն է ուսումնասիրված, ոչ հայ գրականությունը քննադատված... և եթե եղել են հատ-հատ դեպքեր, այն էլ շատ թերի և անհատական բնույթ կրող, և եթե այժմ (դասախոսությունը Հովհ. Թումանյանը կարդացել է 1907 թ. Թիֆլիսի ժողովրդական համալսարանում - Ա. Ա.) այդ նյութին ես պետք է միկրեմ մի երկու ժամ, այս էլ կլինի իմ անհատական զրույցս հայ կյանքի ու գրականության վերաբերյալ: Ռուսաց գրականության մախորդ շրջանի կյանքը վաղուց է ուսումնասիրված և վաղուց բոլորիս համար ճմարտություն է դառել, թե ինչ ահագին չափերով ազդում է շրջապատող կյանքը առհասարակ գրականության վրա: Որքան շրջապատը լայն է ու ընդարձակ, բազմակողմանի ու բազմաբովանդակ, այնքան մեծ է գրողը և մրա շրջահայացը, նույնքան մեծ ու հարուստ է նաև գրականությունը: Հայ գրականության մասին խոսել, այդ նշանակում է խոսել մի փոքրիկ գրականության մասին, որ դեռ մոր-մոր է սկսել իր լեզուն մշակել, ծաղկել, դեռևս անկերպարան վիճակում է, և որի սկսողների մի մասն արդեն մեռած, սակայն մյուս մասը դեռ ապրում է մեզ հետ... Ժողովուրդներն ունենում են հազար ու մի դարդ-ցավ, այրող-մաշող խնդիրներ, սակայն կան խնդիրներ, որոնք համաժողովրդական են և որոնք իրենց հաստատուն կնիքը դնում են գրականության վրա» («Կյանք և գրականություն»):

Խնդրո առարկան, այնուամենայնիվ, այն, ինչ Հովհ. Թումանյանին մտահոգել է ողջ կյանքում, «ստեղծված անտանելի կացությունն է»: Մի կողմից հայ հասարակության անտարբերությունը գրի և գրականության նկատմամբ, մյուս կողմից հայ գրողի աննկարագրելի վիճակը: Արդյունքում. «մեր գրականությունը դեռևս հնարավորություն չի ունեցել ու-

սումմասիրության առնելու այդ ժամանակակից այրող խնդիրները»: Ասել է թե՛ խոչընդոտվել է գրական-մտածողական բնական և բնականոն զարգացումը:

«Հայ կյանքն ու հայ գրականությունը». ահա թումանյանական գրաքննադատական ըմբռնումի և ստեղծագործական կենսալից նախանձախնդրության ոգեսնող ակունքը: Վերլուծաբար ու խորաթափանց, փորձառության պակաս երբեք չզգացած ու չապրած Հովհ. Թումանյանը ամենաանճշան իրողությունների ներքին շերտերում բացահայտում է հայ կյանքի ու գեղարվեստի շարժունակությունը՝ ստեղծելով արտահայտվելու մթնոլորտ: Ինքնաարտահայտվելով՝ այլոց ևս մղելով ազատ խոսքի և մտածումի: Եվ գրաքննադատությունն իբրև միջոց՝ միանգամայն բնական և ճշմարտորեն պետք է չափորոշեր ազատության և ճշմարտության սահմանները՝ «ներքին բարոյական-հոգեկան ուժի խորին գիտակցությամբ ու ստեղծագործ ժողովրդի ազնիվ հպարտությամբ»:

Ընդհանրապես Հովհ. Թումանյանի գրաքննադատական ժառանգությունը (ներառյալ նամականին) գրական ստեղծագործության, գրողի լեզվի, ոճի, մտածողության, գրական փոխառնչությունների, թարգմանական արվեստի և այլ բազում խնդիրների արծարծմամբ, անդրադարձ է նաև,- համընդհանրական բնույթով և խորքայնությամբ,- իր ապրած գրական, հասարակական իրականությանը, հայացք՝ ուղղված մեր ժամանակին, հայ մարդու ճակատագրին:



Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆՆ ԵՍԱՅԵԱՅ»

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրապարակչական բաժինը «Հին Կրակարանի գրքերի մեկնություններ» շարքից հրապարակել է Հայ Առաքելական Եկեղեցու եռամեծար վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացու «Մեկնություն մարգարեությանն Եսայեայ» աշխատությունը: Մարենաշարի գլխավոր խմբագիրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրապարակչական բաժնի տնօրեն Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պեպրոսյանն է, իսկ նշյալ երկը հրապարակության է պատրաստել Հակոբ Քյոսեյանը: Գիրքը տպագրվել է Արմեն և Նունե Սարգսյանների մեկենասությամբ:

Ս. Գրիգոր Տաթևացու վաստակը հանրագումար է հայ միջնադարյան մտքի տարբեր մարզերում ձեռք բերված նվաճումների: Նրա բազմաժանր ու բազմաբնույթ մարենագրության մեջ արձանագրված ու համակարգված է աստվածաբանական-դավանաբանական, իմաստասիրական, մեկնաբանական, քարոզիտոսական մարզերում Հայ Եկեղեցու կուրակած դարավոր փորձառությունը: Տաթևացու մեկնաբանական գրականությանը հատուկ է հանրագիտարանային ճոխությունը: Այս առանձնահատկությամբ աչքի են ընկնում Աստվածաշնչի նրա մեկնություններն ու լուծմունքները, որոնց մեջ ուշագրավ է ծավալով փոքր, սակայն բովանդակությամբ հարուստ Եսայու մարգարեության մեկնությունը:

Սույն հրապարակությունը մեծ օգտակարություն կարող է ներկայացնել ինչպես հայ մեկնողական գրականությամբ հետաքրքրվողների, այնպես էլ ընթերցող լայն շրջանակների համար:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱՐԵՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՆՆ ԱՐՏԱՇԱՏԻՆ

Ж. Хачатрян, О. Неверов, Архивы столицы древней Армении Арташата, Е., 2008, 271с., 96 табл.

Հայաստանի անտիկ մայրաքաղաք Արտաշատի պեղումների, պատմության, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի տարբեր ոլորտների վերաբերյալ շրջանառու է ուսումնասիրությունների մի ամբողջ շարք:

Վերջերս ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրապարակված գրախոսվող հատորը լրացրեց այդ աշխատությունների հարուստ ցանկը: Բովանդակային առումով հետազոտությունը բաղկացած է ներածությունից (5-6 էջ), 3 գլուխներից (7-130) հատկանշական ցուցակից (134-233), ընդարձակ մատենագիտությունից (252-261), աշխարհագրական անունների (265-268), կրճատումների ցանկերից (269) և հայերեն (234-244) ու անգլերեն (245-251) ամփոփումներից:

Ժ. Խաչատրյանի և Օ. Նևերովի համատեղ ջանքերով պատրաստված սույն հատորը հեղինակների տարիների տքնաջան պրպտումների արգասիքն է: Հակիրճ ներածականում Խաչատրյանն ընթերցողին նախապատրաստում է «մուտք գործելու» կնքադրոշմների հարուստ աշխարհը, ուր անտիկ ժամանակաշրջանի ընդարձակ միջավայրը ներկայացվում է Ն. Ք. 189-188 թթ. հիմնադրված, Արևելքն Արևմուտքին կապող, միջազգային ասպարեզում աշխույժ կյանքի կոչված Հայաստանի մայրաքաղաք Արտաշատի գործունե մասնակցության ֆոնի վրա:

Մինչ կնքադրոշմների հայտնաբերումը բացված շինությունների ճարտարապետությունը, խեցեղենը, մետաղը, զարդերը, դրամներն ու արվեստի գործերը հանդիսանում էին Արտաշատի պատմության, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի մեկնաբանության հիմնական աղբյուր: 8000 կնքադրոշմներից բաղկացած արխիվի գյուտը հայազետներից հետազոտության նոր զինանոց տրամադրեց քաղաքական կենտրոն խնդիրների լուծումներն իմաստավորելու և պատմության մութ կետերը նորովի լուսաբանելու համար: Նախնական վիճակի հատակությունից զուրկ լինելու պատճառով 8000 կնքադրոշմներից 6000-ն է վերծանված, և կարծիք կա (Ժ. Խաչատրյան), որ արխիվը տակավին թերի է: Սակայն բյուրավոր կնքադրոշմների զանգվածի համապարփակ քննությունը հավաստիացրեց, որ Արտաշատի արխիվը ուշ անտիկ շրջանի հարուստ շտեմարաններից մեկն է ու լրացնում է հանրահայտ ժողովածուների շարքը: Տարողունակ հավաքածուում ամփոփված կնքադրոշմների թեմատիկան բազմաժանր է՝ թագավորների, թագուհիների, զորավարների, քաղաքական գործիչների դիմանկարներ, մարդկանց զբաղմունքը խորհրդանշող մոտիվներ, բուսական և կենդանական աշխարհի պատկերներ, որոնք, անկախ նկարազարդման գեղարվեստական ու ռճական ուղղությունների տարբերակման, լուսաբանում են Ն. Ք. II-I դդ. քաղաքական բարդ կյանքը այն էլ միջազգային մասշտաբ-

ներով: Տեղին է ժ. Խաչատրյանի դիտողությունն այն մասին, թե հավաքածուն պատկանում է II-I դդ. սոցիալ-տնտեսական կյանքի, Արևմուտքի ու Արևելքի բազմապիսի հարաբերությունների ու մշակութային կապերի մակարդակը պատշաճ կերպով շոշափող հնագիտական նյութերի շարքին: Ի վերջո, Մարկ Անտոնիոսի և Օկտավիանոսի միջև տարվող քաղաքական կռիվների ընթացքում Հայաստանի քաղաքական կարգավիճակի մասին մինչև օրս հոռմեական պատմիչների կցկտուր տեղեկություններով (Դիոն-Կասիոս, Պլուտարքոս) հյուսված հալ ժողովրդի պատմության այդ ժամանակահատվածը, ներկա աշխատանքով առարկայորեն ամրագրվեց փաստացի նյութով ու լրացրեց պատմա-քաղաքական իրադարձությունների համադրման ընդհանուր կոնտեքստը:

Անմիջապես ներածությանը հաջորդած ենթազույլներում ժ. Խաչատրյանն անցնում է պեղումներով արխիվի հայտնաբերման մանրամասներին: Արտաշատը կառուցվել է անտիկ քաղաքաշինության կառուցողական սկզբունքներով՝ բլուր-հարթավայր տարածքների հնարավորությունների համապատասխան օգտագործումով, իսկ բնակեցումն իրականացվել է սինոկիզմի (համաբնակեցման) կանոններով:

Կնքադրոշմների արխիվը հայտնաբերվել է 1973-1984 թթ. աշխատանքների ընթացքում, արշավախմբի կողմից պալմանականորեն ընդունված V և VIII «բլուրների» կոչված պեղահատվածում:

Կրկնակի պատերով գոտևորված V բլրի պաշտպանական համակարգը (էջ 12), քաղաքի հիմնադրման ժամանակ նախօրոք մշակված հատակագծով բնակելի շինությունների, կոմունալ ու ջրամատակարարման հատուկ համակարգի կառուցումը, շարադրանքում չափազանց մանրախույզ բնության է արժանացել: Դժվար է այս ենթաբաժնում ընդունել տեքստը ծանրաբեռնած հնագիտական նյութի (խեցեղեն, մետաղ, արձանիկներ և այլն) մանրակրկիտ վերլուծությունները, հատկապես քանդակների բնութագրումների առումով, որովհետև այդ մասին Խաչատրյանի շրջանառու շահեկան հրապարակումները կզոհացնեն հետաքրքրություն ցուցաբերող յուրաքանչյուր մասնագետի: Ծարադրանքն ավելի ամփոփ կստացվեր, եթե գտածոները ներկայացվեին կոնկրետ հայտնաբերման միջավայրում, ինչպես օրինակ V բլրի բնակելի համալիրներից մեկի մեծ սեմյակի II հատակից (քաղաքի հիմնադրման ժամանակներին համահունչ 189/188) կնքադրոշմների հետ: Անտոքիոս Ա և Տիգրան Բ դրամների գյուտը տրամաբանորեն կբավարարեր նյութի ժամանակագրական պատկերն ընկալելու համար:

Արտաշատի VIII բլրի պեղումներն ընթացել են 1973-1984 թթ.: Լանդշաֆտի բնույթից ելնելով՝ տեղի կառուցապատումներն իրականացվել են աստիճանավանդակային հարթության վրա՝ ապահովելով բնակելի հատվածի ամֆիթատրոնային տեսքը: Պեղված մշակութային թանձր շերտն այստեղ ընդգրկել է քաղաքի գոյատևման 4 փուլերը՝ սկսած հիմնադրումից (189/188 թթ.) մինչև Ծապուհի կողմից քաղաքի կործանումը (մ. թ. 368 թ.):

Ինչպես V բլրում, այստեղ էլ համոզիչ է նախօրոք մշակված ծրագրով քաղաքային բարձր մշակույթով օժտված 14 սեմյակից բաղկացած համալիրի կառուցումը, որի շինարարական I հորիզոնում (Ն. Բ. I դ.), 20 կնքադրոշմները հայտնաբերվել են համաժամանակյա արձանիկների ընդհանուր կոմպլեքսում: Կարծում ենք՝ հնագիտական հաշվետվության այս բաժինը առավելագույնս կշահեր, եթե շարադրանքին ուղեկցեր ճարտա-

րապետական սխեմատիկ մի գծագիր՝ կնքադրոշմների հայտնաբերման հանգամանքների կոնկրետ ցուցիչով:

Աշխատության առանցքային ու փաստառատ բաժիններից մեկը վերնագրված է «Արտաշատի կնքադրոշմներն իբրև պատմության աղբյուր», ուր Խաչատրյանը նյութը քննել է որպես Ն. Ք. II-I դդ. Հայաստանի պատմությունը լուսաբանող արժանահավատ սկզբնաղբյուր:

Ելակետ ընդունելով կնիք, կնքադրոշմ հասկացության ուղղակի կապը սեփականատիրական կարգավիճակի հետ՝ հեղինակը փորձել է մատնանշել Ն. Ք. I հազարամյակից սկսած այդ երևույթի ծագումը, գործառույթը՝ փուլ առ փուլ նշելով Հայաստան մոտք գործած բոլոր արժեքները, կենտրոնանալով Արտաշատի արխիվի հանգամանակից քննությանը: Վերջինս հեղինակի կողմից ստուգաբանված է իմաստաբանական, խորհրդանշային և պատմական բարեխիղճ հիմունքներով (թեև գանձի առատությունը նորմավորման ընթացքում տեղիք է տվել ժամանակագրական ու թեմատիկ որոշ շեղումների):

Ծարադրանքում զգացվում է թեմայի վերաբերյալ ուսումնասիրողի նպատակամետ գիտելիքները: Հասցնիկ թերթումից իսկ տեսանելի է Խաչատրյանի կատարած լաբորատոր աշխատանքի ծավալն ու խորությունը, որին նա հասել է քայլ առ քայլ, հնագիտության հանդեպ իր ունեցած անմնացորդ նվիրումի շնորհիվ: Ավելացնենք, որ ուսումնասիրության առանձին բաժինները նա հրատարակել է հոդվածներով, հաճախ էլ զեկուցումների և հաղորդումների տեսքով կարդացել գիտաժողովներում: Կնքադրոշմների առարկայական քննության այս հատվածն ամենածավալունն է: Ծարադրանքը կառուցված է դասակարգման ծագումնային, ժամանակագրական և արվեստագիտական դպրոցների տարբերակման հատկանիշներով: Չափազանց առատ նյութի սպառման ձգտումով Խաչատրյանը խմբերի շերտավորումներն իրականացրել է տվյալ երկրի իրավական վիճակի, մարդկանց զբաղմունքի, մշակութային առանձնահատկությունների և գործառության պայմանների հաշվառումով՝ ընթացքում ձևակերպելով համապատասխան մեկնաբանություններ:

Գրքի այս գլխում շարադրանքը կայացել է՝ հետևելով պատմական իրողություններին, նյութը ներկայացնելով պատմա-քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի լայն հարթության վրա (հոգ չէ, թե պատմական քիչ ընդարձակ հաղորդումները Արտավազդի, Օկտավիանոսի, Մարկ Անտոնիոսի և Կլեոպատրայի հարաբերությունների մասին ծանրաբեռնել են տեքստը):

Կնքադրոշմների ուսումնասիրության ընդունված ավանդական մեթոդի կիրառմամբ Խաչատրյանը հստակորեն ցույց է տվել նաև II-I դարերում տվյալ ռեգիոնում գործող գլխավոր ուժերի միտումներն ու բնութագրական գծերը, իր շահերից բխող միջազգային հարաբերությունների մեջ յուրաքանչյուր երկրի օբյեկտիվ պատմական դերն ու դիվանագիտական խաղերը, ժողովուրդների (հռոմեացիք, պարթևներ, հույներ, հայեր) շփումներն ու փոխազդեցությունները՝ դրանով իսկ վերհանելով նյութի ժամանակագրական, պատմական, մշակութային քննությունը: Ուսումնասիրության մասնաբաժիններից մեկը կառուցված է արձանագրություններ բովանդակող կնքադրոշմների վերլուծությամբ: Պատմական ժամանակաշրջանի լեզվամտածողության օրինաչափության սահմաններում ըն-

դումված արամեատառ ու հունատառ հիշատակագրություններով, երբեմն էլ պատկերատիպերով ուղեկցված կնքադրոշմները առանձին ուշադրության են արժանացել:

Ժողովածուում հեղինակի կողմից համրահոչակ Արտեմիսին բնորոշ բանաձևումով դասական “Α” “Ε” (Էջ 42) մոնոգրամային և մեղվի խորհրդանիշով կնքադրոշմի առկայությունը Խաչատրյանը վերագրում է Եփեսոսին, ուր լայնորեն ընդունված էր այդ Աստվածուհու պաշտամունքը, իրողությունը՝ հիմնավորելով մաս Արտաշատի և Եփեսոսի առևտրա-մշակութային հարաբերությունների ուղղակի կապով:

Հեղինակի տեսադաշտից չեն վրիպել և արամեատառ լեզվամիավորներով կնքադրոշմները (Էջ 43): Այդ համատեքստում հավաստի քննարկումների է արժանացել իրանական ծագումով կնքադրոշմների խումբը, ուր պահլավերեն արձանագրությունների հմտակից քննությամբ լուծվել են պարթևական զորատեսակների և զինարվեստի մանրամասները rzmr(dnr)dyn= 'razman', phalanx=φаланга – հեծելազոր (x-1025): Ըշտված ընթերցումներն այսօր օժանդակող գործոն են տվյալ ժամանակահատվածի զինատեսակների և մարտական պատրաստվածության կանոնների խնդիրներով զբաղվողների համար: Ավելացնենք, որ կնքադրոշմների պահլավերեն արձանագրությունների վերլուծությունները շարադրանքում գիտական քննարկման էթիկայի կանոններով ստուգաբանված են համրահոչակ լեզվաբանների (Վ. Լիվշից) հիմնավոր դիտողություններով (Էջ 44): Աշխատությունում առանձին ուշադրության է արժանացել գերիների երթի կոմպոզիցիոն տեսարանով հարդարված կնքադրոշմը, որն աղերսվում է Բիհիստունյան ժայռապատկերների թեմատիկային (III-92): Հեղինակը վերլուծությունը սոսկ փաստով չի արձանագրել, այլ հավելյալ վկայություններով թափանցել է երևույթի խորքը՝ տալով իր գնահատականը որպես տվյալ ժամանակաշրջանին բնորոշ զբաղմունք (ստրկավաճառություն): Արքայական որսի տեսարանով կնքադրոշմները հատորում քննարկված են ժամանակի կանոնների ու սահմանված արարողությունների չափորոշիչներով կամ իրողության պաշտամունքային գործոնների էության հաշվառումով (III 1001-101): Հայտնի է, որ Անտոնիոսի և Օկտավիանոսի միջև քաղաքացիական կռիվների (II-I դդ.) շարժիչ ուժն Արևելքն էր՝ հանձնին Պարթևական Պարսկաստանի, որին տիրելու համար երկու գահակալների ուշադրության առանցքը Արտաշատը նվաճելու մոտիվն էր, հանգամանք, որ քաղաքը ներքաշեց դինաստիական այդ պայքարի մարտադաշտը: Արտաշատի արխիվում երկու գահակալների մրցակցությունն իր թեմատիկի տարբերակներով արտացոլված է Օկտավիանոսի, Կլեոպատրայի և Անտոնիոսի պլուժետային ու խորհրդանշային դիմերեսներով հարդարված կնքադրոշմների առատ պատկերաշարքով: Կնքադրոշմներից շատերը Օկտավիանոսի անձը բնութագրող դիմերեսն է, հաճախ այժեղջյուրի խորհրդանիշով (VII 502-503) (VIII – 860, 861, 863): Իսկ Անտոնիոսը պատկերված էր Հերակլի (I-27, IV- 293 (7 օրինակով) IV-300, 301a, 302a), Դիոնիսին (II-65-69-71) և Հելիոսին նվիրված պատկերագրության մանրամասներով (VII-509-521):

Թեմատիկ նորարարությամբ ու պատմական կարևորությամբ առանձնակի արժեք ունեն Արտաշես Բ դիմապատկերով հարակից մոնոգրամներով ու հունատառ արձանագրությամբ հարդարված կնքադրոշմները (X-1034, Էջ 42-43): Սոսկ հոռմեական աղբյուրների կցկտոր տեղեկություններով Արտաշես Բ կյանքի միջև օրս շրջանառու հայ ժո-

դովրդի պատմության կնճռոտ պատմափուլը (մ.թ.ա. 30-20 թթ.) այս գլուտով արժանի է պատմագիտական ու արվեստագիտական մոր մեկնաբանությունների, ըստ որում կնքադրոշմներից մեկի վրա միապետի գլխին թագի բացակայությամբ է Խաչատրյանը բացատրում մրա տակավին թագաժառանգ լինելու (X-1034) պահը:

Անտոնիոսի և Կլեոպատրայի դաշինքն ուներ անձնական ու քաղաքական հիմք, և ժամանակի հզոր այդ գործիչները Արտաշատի գանձում ներկայացված են բազում դրսևորումներով: Կլեոպատրան կնքադրոշմի վրա հաճախ ընդօրինակված է համաժամանակյա դրամների պատկերագրությամբ (IX-953-954), աստվածների ուղեկցությամբ (I-39,40,41), Աֆրոդիտեի կերպարանքով, հաճախ Էրոսն ուսին (I-2 313 օրինակ), Հերակլի ընկերակցությամբ (IV-258, 249, 259) և շատ այլ պատկերատիպով: Հետաքրքիր է նաև Անտոնիոսի և Կլեոպատրայի դստեր՝ Սելենայի դիմապատկերով կնքադրոշմը (I-43):

Արտաշատի արխիվում տիրակալների դիմապատկերի և նրանց խորհրդանիշներով կնքադրոշմների առատությունը (Օկտավիանոս, Անտոնիոս, Կլեոպատրա) համոզիչ կովան են ուշադրությունը բևեռելու II-I դդ. թեժ պայքարի ընթացքում Հայաստանի ունեցած դերակատարությունը և հարակից այլ խնդիրները փաստացի արձանագրելու համար, թեև մի գրախոսության սահմանում գիտական սպառիչ վերլուծությունները իրատեսական չեն: Արտաշատի արխիվը նյութական հարուստ շտեմարան է նաև քաղաքի առևտրական հանգուցակետի իրողությունը հաստատելու համար: Գրքում այդ զբաղմունքը խմբավորված է խորհրդանիշների մի ամբողջ համախմբով՝ ամֆորաները (IV-440-441, 442-443, 445, 447, 448), դեֆինները (VI-488-449), (VII-732, 736, 737), խաբիսիսը (IX-920, 82 օրինակ) և դիոսկուրները (VI-488-449) խորհրդանշել են ծովային առևտուրը, մինչդեռ տարբեր ձևափոխություններով խաղողի վազը (VI-482, 484, 488 (96 օրինակով), 491) հանդիսացել է ցամաքային առևտրի չափորոշիչը:

Փաստն այն է, որ Ն. Բ. I դարում Հռոմի ձեռքին էր Էգեյան, Միջերկրական, Սև ծովերի, ինչպես նաև Արևելքի ցամաքային առևտրի անվտանգությունն ու հսկողությունն ապահովելու իրավասությունը: Առևտրական խորհրդանիշներով մեծաքանակ կնքադրոշմների գլուտն Արտաշատում պայմանավորված է այդ իրողությամբ: Մյուս կողմից, Արտավազդի մահից հետո, երբ Հայաստանը դառնում է Հռոմի պրովինցիան, Արտաշատ են փոխադրվում հռոմեական առևտրա-վաշխատողական դասին պատկանող հսկայական բանակներ, որոնք իրենց գործունեությամբ մեծ նպաստ են բերում երկրի առևտրական կյանքին:

Արտաշատի կնքադրոշմների սիմվոլների շարքը կարելի է հասցնել հարյուրների, որովհետև կան և իրատեսական ու երևակայական թռչունների (VII-698, 701, 703, 707-710), կենդանիների, բույսերի բազում այլ պատկերներով հարդարված կնքադրոշմներ, որոնք կապված են մարդու զբաղմունքի, առօրյա կենցաղի, ապրելակերպի, զվարճալիքների և այլ հասկացությունների հետ: Սա լուրջ թեմաներից է, որ անտիկ շրջանի մշակութային խնդիրներով զբաղվողների առաջիկա հետազոտության նյութ կարող է ծառայել: Որոշակի կովաններից ելնելով (էջ 99)՝ Խաչատրյանը արխիվը համարում է մասնավոր և վստահեցնում, որ Արտաշատի գանձը լրացնում է Արմավիրի V-IV դդ. և Դվինի սասանյան կնքադրոշմների (V-VII դդ.) միջև ընկած սպիտակ վանդակը:

Արտաշատի արխիվի քննարկումը արվեստագետ Նևերովն իրականացրել է հոմեա-կան դասական մշակույթի խոր իմացությունների, պատմական մտածողության օրինաչա-փության և քաղաքական կոնկրետ իրողությունների բարձրորակ մեկնաբանությամբ: Բո-վանդակային ու մշակութային շերտերի հարուստ պարունակությամբ արխիվն իբրև պատմության աղբյուրագիտական նյութ արդեն բժախնդրորեն մամրամասնված էր Ժ. Խաչատրյանի նախորդ հաջողված շարադրանքում, ուստի Օ. Նևերովը, համատեղելով մտածողության գիտական ու գեղարվեստական որակները, ընտրել է Արտաշատի արխի-վի լուսաբանման բովանդակային ու կառուցվածքային սինկրետիկ համակարգման մոր ձև:

Այս համատեքստում կնքադրոշմներն ուսումնասիրվել են անկում ապրող հելլենիս-տական աշխարհի և մոր զարգացող Հռոմի քաղաքական խմբավորումների բախումների, Արևելք-Արևմուտք աշխարհների սուր հակասությունների ֆոնի վրա: Հիմք ընդունելով այս գլոբալ խառնարանի փոփոխությունները՝ նա տեսական քննարկումներն ուղեկցել է փաստագրական նյութի (կնքադրոշմների) ծավալում ընտրանքով ու առարկայական չա-փորոշիչներով հիմնավորել հելլենիստական պատկերացումների աստիճանական անհե-տացման ու մոր արժեքների (ուշ անտիկ, հոմեական) ծագման ու տարածելիության սահ-մաններն ու չափանիշները:

Հետևելով այս իրականությանը՝ Նևերովը կնքադրոշմների քննությունն իրականաց-րել է հարցադրումների որոշակի ծրագրով ու դասակարգման համար ընտրել հետևյալ փորձը:

ա) Բացահայտել արխիվի իրավական էությունը (անհատական կամ պետական նշա-նակության փաստը), բ) ներկայացնել կնքադրոշմների թափանցման աշխարհագրությու-նը, գ) լուծել նյութի թվագրության խնդիրը: Նևերովը 8000 կնքադրոշմներից 114-ի վրա է նկատել բովանդակությամբ կրկնակներ, ըստ որում 4-ն ունեցել են 4-ական կրկնակներ, 42-ը՝ 3-ական, իսկ 68-ը՝ երկուական: Այս հաշվարկի ընդհանուր հայտարարից նա բխեց-րել է Արտաշատի արխիվի փաստաթղթերի ու գործարքների՝ առանց վկաների հաս-տատվելու պարագան՝ ավելացնելով, որ բոլոր կնքադրոշմներն օտարամուտ են. մի տե-սակետ, որին դժվար է համաձայնել այն պատճառով, որ եթե ոչ բոլոր, ապա կնքված շատ փաստաթղթեր ու գործարքներ իրականանում էին տեղական պաշտոնյայի իրավա-տեսությամբ ու մասնակցությամբ, մանավանդ իր իսկ նյութի խմբավորումներից դատե-լով՝ հայկական կնիքները մի սովոր խումբ են կազմում (էջ 117-118):

Արխիվի շրջանառության հստակեցումը Նևերովն իրականացրել է Սառնակունքի (Սիսիան) դրամական զանձի համեմատական փորձառությամբ՝ դադարեցման ժամկետ ընդունելով 31-27 թթ. Ն. Բ.:

Գալով աշխարհագրական սահմանների մորմավորման խնդրին՝ հեղինակը հետևյալ երկրների խմբավորումներով է ներկայացնում:

I) Հոմ-Խտալիա, ուր զգալի տոկոս են կազմել Մարկ-Անտոնինոսի քարոզչությանը նվիրված կնքադրոշմները. 78:

II) Եգիպտական կնքադրոշմների խումբը, Կլեոպատրայի անձին պատկանող կոմպո-զիցիոն պատկերներով ու խորհրդանիշներով. 45:

III) Հայաստանի կնքադրոշմների խումբ. 35:

IV) Իրանի վերագրվող կնքադրոշմների խումբ. 35:

V) Փոքր Ասիայի վերագրվող խումբ. 30:

VI) Միջագետքի և Սիրիայի խումբ. 10:

VII) Բոսֆոր և Հյուսիս Սևծովյան խումբ. 10:

Արտաշատի զանազան լատիներեն արձանագրություններով կնքադրոշմների բացակայությունն առերևույթ պիտի բացատրեք քաղաքում հռոմեական կնիքների շրջանառության գործոնը: Այս բացը Նևերովը լրացրել է հռոմեական դիմապատկերների հայտնի շարքի խորագույն քննությամբ: Դիմերեսների նկարչական տիպային ոճի, բովանդակության, արվեստագիտական սխեմատիկ նորմատիվների ու ժամանակակից դրամների հետ ունեցած զուգահեռներով նա պատճառաբանում է կնքադրոշմների ծագման բուն հռոմեական ակունքները: Խորապես տիրապետելով անտիկ դիմապատկերային պատկերազրության սկզբունքներին՝ նա հիմնալի կերպով զատորոշել է ավելորդ պաճուճանքներից (աքսեսուար) զուրկ հռոմեականները, որոնք փոխարինելու եկան ճոխ հարդարանքով հայտնի հելլենիստականներին: Արվեստագիտական հմուտ վերլուծություններով նա լիարժեք բնութագրումներ է հատկացրել Գնեյ Պոմպեոսի և նրա որդու՝ Սեկստի դիմապատկերներին (I-34), բացահայտել Մարկ Անտոնիոսի դիմապատկերը (I-27), (I-3)՝ նրա զբաղեցրած դիրքին և կոչմանը համապատասխան:

Իսկ Օկտավիանոսի դիմապատկերային պատկերաշարքը, որն աչքի է ընկնում նյութի ճոխությամբ (էջ 110), նա շարադրել է պատմական իրողությունների ամբողջական կոնտեքստում: Հայտնի Օկտավիայի դիմապատկերի մանրամասներում (I-44-53, նա Մարկ Անտոնիոսի կինն էր) հեղինակը խտացրել է հռոմեական բարձրաշխարհիկ կնոջ արդու-զարդը և մագերի հարդարման շքեղ շեշտադրումները: Նևերովի ուշադրությանն են արժանացել նաև պատմական այդ փուլում պաշտոնական իշխանավորների ինքնությունը կամ կոչումը հաստատող խորհրդանիշերը՝ հաճախ զուգահեռ ունենալով տվյալ ժամանակվա դրամները: Այդ տրամաբանությամբ նա իբրև ծովակալ՝ Սեկստ Պոմպեոսին ներկայացնելու ուղեմիջ է ընտրել ծովերի աստված Պոսեյդոնի պատկերատիպով նրան ներկայացնելու փորձը (IV-226-229): Հռոմեական կնքադրոշմների սխեման ամբողջացնելու համար նա չի շրջանցել կենդանաշխարհի (օձ, արծիվ, ցուլ և այլն) պատկերներով այս կամ այն իշխանավորի կամ զորավարի ինքնությունը շեշտելու անհրաժեշտությունը (էջ 112):

Մեր կարծիքով, կնքադրոշմների ուսումնասիրության առանցքային ու արժեքավոր ենթաբաժինը հայկական կնքագիտության վերաբերյալ նրա տիպաբանական ու հետևողական եզրահանգումներն են: Այստեղ հետազոտությունն իրականացված է միության քողով պատած քաղաքական իրադարձությունների զարգացման բարդ ժամանակաշրջանի (30-20 թթ. Ն. Ք.) շրջանակներում: Չբացառելով աքեմենյան, հելլենիստական, սելևկյան ավանդույթների զորեղ ազդեցությունը հայկական մշակութային կյանքի բոլոր ոլորտներում՝ Նևերովը վստահորեն առանձնացնում է բուն հայկական ապակե բազմաճիտ և քարե կլոր կնիքները՝ ներկայացնելով իրատեսական ու երևակայական կենդանիների, արշավող ձիավորների և այլ պատկերներով հարդարված կնքադրոշմների մի ամբողջ շարք (III-106, 124) (IV-363a), (VII-658, 847, 860, IX-904, 905, IX-917):

Արտաշես II կյանքի և իշխանության անցնելու աստիճանական փուլերի կոմպոզի-

ցիոն տարբեր դրսևորումները կնքադրոշմների վրա ամփոփվում են պաշտոնական թեմայի սահմաններում: Ըստ հեղինակի՝ Արտաշես Բ պատկերող կնքադրոշմներից մեկը (I-8) զորավարի զգեստով է, իսկ կամքի մեծ ուժ արտահայտող դիմագծերն ուղեկցում է ART[A]ՋԱՋ Արտաշես մոնոգրաման: Պատկերաշարքի մեկ այլ դիմանկարում (I-17) նա պատկերված է պարթևների կողմից թագադրության արարողակարգի պահին: Թեմատիկ շարքը շարունակելով (III-128,131, 154)՝ նա պարզաբանում է Արտաշես Բ-ի պարթևական կողմնորոշման հաստատականությունը: Պաշտոնական բնույթի այս կոմպոզիցիոն պատկերաշարքի հետազոտությունն ավելի կշահեր, եթե 1985 թ. Արտաշատի պեղումներից հայտնաբերված Արտաշես Բ դիմանկարով պղնձե երկու դրամների տիպաբանական վերլուծություններն ամփոփվեին շարադրանքում՝ ևս մեկ անգամ հաստատելով Արտաշես Բ-ի պարթևական կողմնորոշումը և թշնամանքը հունա-հռոմեական ենթակայությանը¹:

Հունա-պարսկական կնքագիտության շրջանակներում է ամփոփված կնքադրոշմների հետևյալ շարքը. (III-109-110-112), (III-121-123-122), (III-101-102-107, 114) (III-100), (VII-866-867) և այլն, Աքեմենյանները (V-IV դդ.) (III-92,94): Պարթևական է համարում ձիերի, որսի տեսարանների, կենդանական պլուծեներով ու հաղթանակի աստված Նիկեի պատկերով կնքադրոշմները (III-116, 120), (III-152-153), (IV-385-88):

Եգիպտական դրոշմակնիքների վերաբերյալ Նևերովի վերլուծություններն, ըստ էության, չեն տարբերվում Ժ. Խաչատրյանի քննություններից և կրկնողությունից խուսափելու համար նշենք, որ նա միայն անվերծանելի է համարում Էրոտ Ցեզարիոնի (I-3) պատկերով դրոշմակնիքը, որի զուգահեռն, ինչպես երևում է ո՛չ կնիքների, ո՛չ կնքադրոշմների, ո՛չ էլ դրամների մեջ տակավին չկա (էջ 116):

Փոքրասիական կնքադրոշմների շարքից նա առանձնացնում է Միհրդատ Եվպատորի (I-7), Պոլեմոն Պոնտացու (I-9) դիմանկարները, որոնք ժամանակի քաղաքական հզոր գործիչներ էին:

Նևերովը մանրամասն վերլուծել է Պերգամոն (IX-922) արձանագրությամբ կնքադրոշմները (էջ 125), իսկ քաղաքի խորհրդանիշն, ըստ հեղինակի, եղնիկին կերակրող մարդու, աստղի և լուսնի կոմպոզիցիոն պատկերագրությամբ կնքադրոշմներն են (III-194-208):

Էական կարևորության այս կնքադրոշմներից բացի շարադրանքում տեղ են գտել նաև և երկրորդական նշանակություն ունեցողները (VII-585, 587, 589, 592):

Միջագետքյան և սիրիական մասնաբաժիններում որոշակի բնութագրումների են արժանացել սելևկյան կնքադրոշմները (VII-573), (IV-23,I-234), որոնք Անտիոքոս Ա և Սելևկիոս Բ-ի դրամներին բնորոշ խորհրդանիշերով են հարդարված, թեև քիչ չեն և երկրաչափական բարդ հանգույցներով (IX-1002-1009) նկարագարվածները:

Ի վերջո բոսֆորյան ու սևծովյան որոշ կնքադրոշմների պլուծեների մանրամասներում (I-12), (VI-15) (IX-1000-1001) (IV-338-339) Նևերովը դիտարկում է Արտաշատի այդ ոեզիոնի հետ ունեցած բազմապիսի կապերը:

Այսպիսով, Արտաշատի ուշ անտիկ ժամանակաշրջանի ծավալուն արխիվին նվիր-

¹ *Չարդադյան Մ.*, Եգական դրամներ Արարատի պեղումներից Արարատ Բ (Զեկուցման թեզիսներ՝ կարդացած «Դրամաշրջանառությունը Նայաստրանում» ինքնապեղական գիտական նստաշրջան), Եր-ան, 1998, էջ 5-7:

ված հատորը մեծարժեք գործ է և առաջնեկն է այդ կարգի հետազոտությունների ասպարեզում: Հեղինակների կողմից բարձր որակով մատուցված գրքի վերաբերյալ մեկ գրախոսության սահմաններում դժվար է գնահատել դրա բոլոր արժանիքները: Կարծում ենք, ուսումնասիրությունն ավարտուն է նյութի ընդգրկվածության, թեմատիկ վերլուծությունների ժամանակագրական սխեմաների և աշխարհագրական սահմանների ծավալների ցուցիչի իմաստով: Բայց սրանով նյութի ուսումնասիրության սահմանները սպառված չեն ու առաջիկայում դրա վերաբերյալ կարելի է իրականացնել նոր, համարձակ մեկնություններ:

Մեր դիտողությունը մասնակի բնույթի է: Տեքստում նյութի գծապատկերների աղյուսակները չափազանց անհրաժեշտ են, որովհետև ոչ այնքան որակյալ լուսանկարները դժվարացնում են դիտակտիկ նյութի ընկալումը:

Այս ամենով հանդերձ պիտի խոստովանել, որ հայագիտության զանազան հարստացավ ևս մեկ արժեքավոր ուսումնասիրությամբ և որը գիտական շրջանառության մեջ կդնի հավաքված այս մեծարժեք նյութը:

Աղավնի Ժամկոչյան

Պատմական գիտությունների թեկնածու

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԿՈԱՏԱՆԴՆՈՒՊՈԼԱՄ ՆԱՅ ԳԱՂԹՈՋԱՆԻ ՄԱՍԻՆ

2007 և 2008 թթ. «Գալուստ Գյուլյենկյան» հիմնարկության միջոցներով Երևանի համալսարանի հրապարակչությունը լույս է բնծայել երեք փասնյակից առկա պատմագիտական և գրականագիտական հեղափոխություններ: Դրանց շարքում աչքի ընկնող փնտռված գրավում պատմական գիտությունների դոկտոր Ալբերտ Խառապյանի՝ Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախի (XV-XVII դարեր) պատմությանը նվիրված հիմնարար աշխատությունը, որի մեջ քննարկվում են բազմաթիվ կարևոր առանցքային հարցեր Օսմանյան կայսրության մայրաքաղաք դարձած նախկին բյուզանդական կայսրության մայրաքաղաքի հայ գաղթօջախի վերաբերյալ: Նայ պատմագիտության մեջ բազմաթիվ աշխատություններ են գրվել Կոստանդնուպոլսի մասին, սակայն առաջին անգամ է, որ քննարկվում են գաղթօջախին վերաբերող այսօրվա փաստաթուղթ հարցեր, որոնց պատասխաններն աչքի են ընկնում լայնքով և խորությամբ. շոշափված ամենափոքր հարցն անգամ վերլուծվում է արտակարգ հանգամանակից: Նկարագրությամբ է ընթերցվում գրքի առաջաբանը, որպեսզի հեղինակն ըստ արժանվույն ներկայացնում է Կ. Պոլսի հայ գաղթօջախի դերը ողջ արևմտահայության կյանքում, քննարկում և արժևորում է նրա մասին գոյություն ունեցող սկզբնաղբյուրները և պատմագիտական գրականությունը:

Սկզբնաղբյուրների շարքում կարևոր փնտռված են գրվում Մ. Մաշպոցի անվան Մալեմադարանի արխիվում պահվող վավերագրերը, որոնց հիման վրա Ա. Մաֆրասյանը հրապարակել է «Թուրքական աղբյուրները Նայասարանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» քառահատոր ժողովածուն: Այն բացառիկ նշանակություն ունի հայ և մյուս ժողովուրդների վերաբերյալ օսմանյան օրենքները, ֆերմանները հայ մասնագետներին և ընթերցող լայն հասարակայնությանը մարչելի դարձնելու գործում: Դրանց միջոցով հայ պատմագիտությունը հաղորդակցվեց բազմաթիվ թուրք հեղինակների գործերին, որոնք հեղափոխական փոփոխություններ են պարունակում Կ. Պոլսի հայության մասին օսմանյան վարչական ձեռնարկումների, սեփականափրական ձևերի վերաբերյալ: Մանրախույզ քննարկվում է նաև Ավ. Փափագյանի թարգմանած և կազմած «Թուրքական վավերագրերը Նայասարանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» ժողովածուն. այն կազմող ոչ միայն հայերեն ներկայացրել է օսմանյան կանոնադրություններ, բերաններ, Կ. Պոլսի հայ պարբերականներին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր, այլև հանդես է եկել որպես բարձր մակարդակի հեղափոխություն՝ առաջադրելով և գիտական ծանոթագրություններով: Սկզբնաղբյուրների շարքում ներկայացված են XV-XVII դարերի փառեզրություններ, ժամանակագրություններ, դրանց հեղինակները: Ուշադրություն է գրավում Երեմիա Քեռնուրճյանի փառքեր աշխատությունների՝ Ա. Խառապյանի մանրամասն քննարկումները և փնտռված գնահատականները: Դրանք խորացնում են ընթերցողների գիտելիքների շրջանակը: Նեղիմակը մեծ բարեխղճությամբ, գիտնականին վայել բժախնդրությամբ հեղափոխում է գնահատում է նաև ուսումնասիրվող հարցի վերաբերյալ XIX-XX դարերի գիտնականների աշխատությունները: Ընթերցողին հայտնի է դառնում Կ. Պոլսի հայ գաղթօջախի

տարբեր հարցեր ուսումնասիրած գիտնականների մի պատկանելի փաղանգ, որի մեջ արժանի տեղ են գրավում Մխիթարյան միաբնակության անդամները, սվիտցերահայ նշանավոր հեղափոխողները, դրանց հետ նաև խորհրդահայ գիտնականները իրենց արժեքավոր աշխատություններով: Գիտական բարձր մակարդակով գրված այդ առաջաբանը կարող էր լինել հարցի պատմագիտությանը նվիրված առանձին աշխատություն:

Բուն աշխատությունն սկսվում է օսմանյան մայրաքաղաքում հայ գաղթօջախի կազմավորման պատմությամբ: Ժամանակի գործիչների վկայություններով, փաստերով ցույց է տրվում հայ համայնքի գոյությունը և նրա գործունեության տարբեր կողմերը դեռևս Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կ. Պոլսում: Նիշվում են բաղաձայն թուրքերի կողմից գրավելուց դեռևս 146 տարի առաջ այնպեղ գրավող հայ հոգևորականների անուններ, որոնք մասնակցել են 1307 թ. Սսի եկեղեցական ժողովին: Ներառված փաստեր են բերվում թուրքական ներխուժման ժամանակ Կ. Պոլսի պաշտպանների շարքում հայերի ներկայության և նրանց գոհվելու մասին: Փաստի հավաստիությունն ապացուցվում է դեպքերի ափսոսանքով տարեգիր Նեստոր Իսկանդերի աշխատության մեջ:

Ժամանակի հայ և օտարագրի տարեգիրների օգնությամբ (օգտագործումով) հեղինակը ներկայացնում է թուրքական տարբեր սուլթանների գործադրած սահմանեցուցիչ իրադարձությունները, նվաճված, հպարտակ ժողովուրդներով մայրաքաղաքը բնակեցնելու, նրանց ունեցվածքը թալանելու, դիմադրական հնարավորությունները ջլատելու, նրանց միջոցներով բաղաձայն վերաշինելու ջանքերը: Կ. Պոլսում արտակարգ բռնություններով վերաբնակեցվել են Արևմտյան և Արևելյան Նայասարանի տարբեր վայրերից՝ հրով ու սրով, «սյուրգյունի» միջոցով բռնագաղթված հայ բնակչություն (Աեսարիայից, Պրուսիայից, Ադրիանուպոլսից, Մամուռից, Թոքատից, Ալեքսից և այլ վայրերից): Այդ բռնագաղթերը ներկայացվում են հեղափոխական մանրամասներով: Նախապես ալիք բացահայտվում է տարբեր վայրերից բռնագաղթված համայնքներն ինչպես և որպես էին վերաբնակեցվում, հարկադրական ինչ միջոցներ էին օգտագործվում, ինչպես էին թուրքական սուլթաններն օգտագործում քրիստոնյա համայնքների նկատմամբ մարտիկի և «սիրաշահելու» (որոշ «արտոնություններ» շնորհելու) քաղաքականությունը, ինչպես հայ և հույն հարուստ գաղթական վերաբնակների ունեցվածքն օգտագործելու և մայրաքաղաքը վերակառուցելու քայլերին գուգահեռ, չունենալով դասի նկատմամբ կիրառվում էր գերեվարելու, գերեվաճառության և նրանց միջոցով ենթերիական գործատուներ համարելու քաղաքականություն:

Ամեն մի սուլթան (Մեհմեդ, Բայազետ, Մելիմ Ա, Սուլեյման Ա և նրանց հաջորդները) իրականացնում էր բռնության, դաժանության, հաշվեհարդարի, զանգվածային ջարդերի իր գործունեությունն ու մարտավարությունը: Մայրաքաղաք Կ. Պոլիս-«Սպանպոլիս» վերաշինելու համար մարդաթափ էր լինում գավառական տարածքը՝ Արևմտյան Նայասարան: Գրքում արտակարգ բարեխղճությամբ, գիտական բարձր մակարդակով քննարկվում է օսմանյան մայրաքաղաքում հույն, հայ և հրեա ազգաբնակչության միլիոնների համակարգի մեջ բնազդվելու գործընթացը, նաև հոգևոր-կրոնական կյանքը օսմանյան վարչակարգին ենթարկելու, պարբերական միջոցով հայ հանրության կյանքը դեկավարելու խնդիրը: Այդ երևույթի վրա բացահայտվում է օսմանյան հարկային համակարգում հայ պարբերա-

ների (հոգևոր առաջնորդների) դերի գերակայությունը և դրան ուղիղ համեմատական Էջմիածնի կաթողիկոսությունից նրա անկախանալու հանգամանքը:

